Ամուսնական և ընտանեկան հարաբերություններ

Մասնակիցների ուսումնական ուղեցույց

Ամուսնական և ընտանեկան հարաբերություններ

Մասնակիցների ուսումնական ուղեցույց

Տպագրված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողություններ և առաջարկություններ

Այս ուսումնական ուղեցույցի վերաբերյալ ձեր դիտողություններն ու առաջարկությունները ողջունելի են: Խնդրում ենք դրանք ներկայացնել.

Curriculum Planning
50 East North Temple Street, Floor 24
Salt Lake City, UT 84150-3200
USA

Էլ-փոստ. cur-development@ldschurch.org

Խնդրում ենք տպել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Մի մոռացեք ներառել ձեր ուսումնական ուղեցույցի անվանումը: Այնուհետև գրեք ձեր դիտողություններն ու առաջարկությունները ուսումնական ուղեցույցի ուժեղ կողմերի և բարելավման կարիք ունեցող կողմերի վերաբերյալ:

© 2007 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Printed in the United States of America

Անգլերենի հաստատումը. 8/97
Թարգմանության հաստատումը. 8/97
Marriage and Family Relations: Participant's Study Guide-ի թարգմանությունը:
Armenian

Բովանդակություն

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» iv
Ներածություն v
Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների դասընթացի ակնարկ vii

Մաս Ա. Ամրացնել ամուսնությունը

1. «Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում» 3
2. Միասնություն զարգացնել ամուսնության մեջ 7
3. Սնուցել սեր և ընկերություն ամուսնության մեջ 11
4. Արձագանքել ամուսնական խնդիրներին 15
5. Արձագանքել խնդիրներին դրական հաղորդակցման միջոցով 17
6. Ամրացնել ամուսնությունը հավատքի և աղոթքի միջոցով 20
7. Ներման բուժող զորությունը 24
8. Կառավարել ընտանիքի ֆինանսները 27

Մաս Բ. Ծնողների պարտականությունները ընտանիքն ամրացնելու գործում

9. «Երեխաները Տիրոջ ժառանգությունն են» 35
10. Հայրերի և մայրերի սուրբ դերերը (Մաս 1. Հայրերի դերը) 39
11. Հայրերի և մայրերի սուրբ դերերը (Մաս 2. Մայրերի դերը) 43
12. Ուսուցանել երեխաներին օրինակով և հրահանգով 48
13. Ուսուցանել ավետարանի սկզբունքները երեխաներին (Մաս 1) 54
14. Ուսուցանել ավետարանի սկզբունքները երեխաներին (Մաս 2) 58
15. Առաջնորդել երեխաներին որոշումներ կայացնելիս 64
16. Ընտանեկան աղոթք, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրություն և ընտանեկան երեկո 68

ԸՆՏԱՆԻՔ՝

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Խորհուրդ

ՄԵՆՔ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷԱԿՆԵՐԸ՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի:

ՆԱԽԱԵՐԿՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը:

ԱԴԱՄԻՆ և ԵՎԱՅԻՆ Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

ՄԵՆՔ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

ԱՄՈՒՍԻՆԸ և ԿԻՆԸ սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղ. ՃԻԷ.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար:

ԸՆՏԱՆԻՔԸ հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով: Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրավիճակները կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը:

ՄԵՆՔ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆՔ, որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների հանդեպ, կամ թերանում են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները:

ՄԵՆՔ ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը:

Որպես իր ուղերձի մի մաս՝ այս հայտարարությունը կարդացվել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից Կանանց Սփոփող Միության գերագույն ժողովին 1995թ. սեպտեմբերի 23-ին, Սոլթ Լեյք Սիթիում:

© 2000 by Intellectual Reserve Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in Germany. Անգլերենի հաստատումը՝ 10/95: Թարգմանության հաստատումը՝ 3/06: *Family Proclamation*-ի թարգմանությունը: Armenian. 35602 201

Ներածություն

Այս դասընթացի նպատակը

Ամուսնական և ընտանեկան հարաբերություններ դասընթացը նախատեսված է օգնելու Եկեղեցու անդամներին՝ ամրացնել ամուսնությունները և ընտանիքները և ուրախություն գտնել ընտանեկան հարաբերություններում: Այն բաղկացած է երկու մասից. Մաս Ա՝ «Ամրացնել ամուսնությունը», որը հատկապես օգտակար է ամուսնացած զույգերի և այն անդամների համար, որոնք պատրաստվում են ամուսնանալ: Մաս Բ՝ «Ծնողների պարտականությունները ընտանիքն ամրացնելու գործում», որն օգնում է ծնողներին և տատիկներին ու պապիկներին իրենց ջանքերում՝ «մեծացնելու նրանց խրատով և Տիրոջ ուսմունքով» (Եփեսացիս Զ.4):

Դասընթացը հիմնված է այն վարդապետությունների և սկզբունքների վրա, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների և առաքյալների կողմից: Այն հատուկ շեշտադրում է կատարում «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրի վրա, որն ընդգրկված է այս ուղեցույցի iv էջի վրա:

Դասընթացի ակնարկը տրված է vii–viii էջերի վրա: Հաճախ անդրադարձեք այդ ակնարկին վերանայելու համար սովորած վարդապետությունները և պատրաստվելու համար հետագա դասերին:

Հաճախեք դասընթացին ըստ ձեր կարիքների

Դուք հնարավորություն ունեք հաճախել այս դասընթացին ըստ ձեր անհատական կարիքների: Օրինակ, եթե ամուսնացած եք, բայց երեխաներ չունեք, կարող եք հաճախել առաջին ութ դասերին, բայց ոչ վերջին ութ դասերին: Եթե դուք միայնակ ծնող եք, դուք կարող եք հաճախել միայն մաս Բ-ի դասերին:

Դասընթացին մասնակցելը

Որոշելով մասնակցել այս դասընթացին, դուք ցանկություն եք դրսևորում՝ ամրապնդել ձեր ընտանիքը: Դասընթացից լիարժեք օգուտ քաղելու համար դուք պետք է մասնակցեք դասարանի քննարկումներին, օգտագործեք ուսումնական ուղեցույցը և աշխատեք կիրառել ձեր սովորած վարդապետություններն ու սկզբունքները:

Մասնակցել դասարանի քննարկումներին

Մասնակցելով դասարանի քննարկումներին, դուք և դասարանի մյուս անդամները կկարողանան հրավիրել Սուրբ Հոգու ազդեցությունը և ուսուցանել ու կրթել միմյանց: Տերն ասել է. «Ուսուցիչ նշանակեք ձեր մեջ, և թող բոլորը միանգամից խոսնակ չլինեն. այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և թող բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ, և որ ամեն մարդ ունենա հավասար արտոնություն» (ՎԿՈ 88.122):

Բոլորը, ովքեր մասնակցում են դասընթացին, կարող են սովորել միմյանցից, անկախ իրենց ամուսնական և երեխաներ մեծացնելու փորձից: Ձեր փորձը դասարանում առավել օգտակար կլինի, եթե կիսվեք դասին վերաբերող ձեր փորձով և հարգանքով լսեք մյուսներին: Վկայելով քննարկվող ճշմարտությունների մասին, դուք կարող եք ամրացնել ձեր և մյուսների վկայությունը: Սակայն, պետք է ուշադիր լինեք և չքննարկեք անձնական կամ սուրբ փորձը, որը պատշաճ չէ քննարկել դասարանում: Դուք պետք է նաև տեղյակ լինեք դասի ժամանակի սահմանափակումներին և մտածեք ուսուցչի և մյուս մասնակիցների մասին:

Ինչպես օգտագործել այս ուսումնական ուղեցույցը

Ամեն դասին հաջորդող շաբաթվա ընթացքում օգտագործեք ուսումնական այս ուղեցույցը կրկնելու համար ձեր սովորածը: Ուսումնական ուղեցույցը պարունակում է «Մտքեր կիրառման համար», որոնք առաջարկություններ են ձեզ օգնելու համար ապրել համաձայն ձեր սովորած վարդապետությունների և սկզբունքների, որոնք դուք սովորում եք ամեն դասի ժամանակ: Բացի դա ամեն դասի հետ տրվում են մեկ կամ երկու հոդված Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունների կողմից: Եթե դուք ամուսնացած եք, ապա մեծ օգուտ կարող եք քաղել կարդալով և քննարկելով հոդվածները ձեր ամուսնու հետ:

Որոշ հոդվածներ նախկինում տրվել են որպես գերագույն համաժողովների և այլ հավաքների ելույթներ, մյուսները գրվել են Եկեղեցու ամսագրերի համար: Քանի որ դրանք վերցվել են տարբեր հրատարակումներից, փոքր փոփոխություններ են անհրաժեշտ այս ուսումնական ուղեցույցի ֆորմատին համապատասխանեցնելու համար: Օրինակ, ներածական որոշ խոսքեր հանվել են գերագույն համաժողովների ելույթներից, և որոշ գլխագրեր և մեջբերումներ փոխվել են: Ուսմունքները չեն փոփոխվել:

Կիրառել ձեր սովորած վարդապետություններն ու սկզբունքները

Բավական չէ պարզապես սովորել ավետարանը: Որպեսզի ավետարանը արդյունավետ լինի ձեր կյանքում, դուք պետք է ապրեք նրանով, ինչ սովորում եք: Նախագահ Հարոլդ Բ. Լիին, Եկեղեցու 11-րդ Նախագահը, խորհուրդ է տվել.

«Ավետարանի բոլոր սկզբունքները և ծեսերը ինչ-որ իմաստով հրավեր են սովորելու ավետարանը՝ կիրառելով դրա ուսմունքները: Ոչ ոք չի իմանա տասանորդի սկզբունքը, մինչև չվճարի տասանորդը: Ոչ ոք չի իմանա Իմաստության Խոսքի սկզբունքը, մինչև չպահի Իմաստության Խոսքը: Այսպիսով, երեխաները, կամ մեծերը չեն վճարի տասանորդ, պահի Իմաստության Խոսքը, Կիրակին, կամ աղոթի միայն լսելով, թե ինչպես են խոսում այդ սկզբունքների մասին: Մենք սովորում ենք ավետարանը՝ ապրելով դրանով: . . .

. . . Մենք երբեք ոչինչ չենք իմանում ավետարանի մասին, մինչև չենք ունենում այն օրհնությունները, որոնք գալիս են յուրաքանչյուր սկզբունքով ապրելու արդյունքում» (*Stand Ye in Holy Places* [1974], 215):

Լրացուցիչ աղբյուրներ

Եկեղեցու կողմից թողարկված հետևյալ նյութերը լրացուցիչ տեղեկություն են տալիս այս դասընթացի ժամանակ քննարկվող թեմաների շուրջ: Դրանք մատչելի են Եկեղեցու բաշխման կենտրոններից: Կարող եք ձեռք բերել այդ աշխատությունները և օգտագործել դրանք ձեր տներում:

- *Ընտանեկան Ուղեցույց* (31180 201): Այս ուղեցույցը նկարագրում է ընտանիքի կառուցվածքը, տեղեկություն է տալիս տանը ավետարանն ուսուցանելու մասին, և նախանշում է քահանայության արարողությունների ու օրհնությունների կարգը:
- Ամուսնության և ընտանիքի մասին հոդվածներ Եկեղեցու ամսագրերում:
- *Family Home Evening Resource Book* (31106). Այս գիրքն օգնում է ծնողներին և երեխաներին դասեր պատրաստել ընտանեկան երեկոյի համար (էջեր 3–160, 173–232): Այն մտքեր է պարունակում ընտանեկան երեկոն հաջող անցկացնելու համար (էջեր 163–170) և ներառում է առաջարկություններ երեխաներին որոշակի սկզբունքներ և պարտականություններ սովորեցնելու վերաբերյալ (էջեր 235–62): Այն նաև պարունակում է մտքեր ընտանեկան միջոցառումների համար (էջեր 265–340):
- *Teaching, No Greater Call* (36123). Այս նյութը պարունակում է սկզբունքներ և գործնական առաջարկություններ, որոնք օգնում են Եկեղեցու անդամներին կատարելագործվել որպես ավետարանի ուսուցիչներ: Մաս Դ, “Teaching in the Home” (էջեր 125–148), հատկապես օգտակար է ծնողների համար:
- *Ուսուցման ուղեցույց* (34595 201): Այս ուղեցույցը առաջարկություններ է տալիս ավետարանի ուսուցումն ու ուսումնասիրությունը բարելավելու համար:
- *Երիտասարդներին զորացնելու համար* (34285 201): Այս գրքույկը տալիս է Եկեղեցու չափանիշները ժամադրության, հագնվելու, հարդարվելու, ընկերություն անելու, ազնվության, խոսելաոճի, լրատվամիջոցների, մտավոր և ֆիզիկական առողջության, երաժշտության և պարի, սեռական մաքրության, Կիրակի օրվա պահվածքի, ապաշխարության, արժանավորության և ծառայության վերաբերյալ:
- *A Parent’s Guide* (31125). Այս ձեռնարկը պարունակում է առաջարկություններ, որոնք օգնում են ծնողներին սովորեցնել իրենց երեխաներին ֆիզիկական մերձեցման մասին:
- *Guidebook for Parents and Guardians of Handicapped Children* (31123). Այս ուղեցույցը խորհուրդ է տալիս հաշմանդամ երեխաներ ունեցող ծնողներին: Այն նաև տեղեկություն է պարունակում Եկեղեցու կողմից թողարկված նյութերի մասին, որոնք օգնում են ծնողներին և ուրիշներին, ովքեր ուսուցանում են հաշմանդամներին:
- *Cornerstones of a Happy Home* (33108). Այս գրքույկը պարունակում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուղերձը, երբ նա ծառայում էր որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:
- *Being a Righteous Husband and Father* (35402). Այս գրքույկը պարունակում է Եկեղեցու 14-րդ Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ուղերձը:
- *One for the Money: Guide to Family Finance* (33293). Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մարվին Ջ. Էշտոնի կողմից գրված այս գրքույկը գործնական առաջարկություններ է պարունակում ընտանիքի ֆինանսները կառավարելու վերաբերյալ:

Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների դասընթացի ակնարկ

Մաս Ա. Ամրացնել ամուսնությունը

Դաս 1. «Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում»

Վերջին օրերի մարգարեները հայտարարել են ամուսնության և ընտանիքի հավերժական կարևորության մասին:

Հավերժական ամուսնությունը կարող է ուրախություն և մեծ օրհնություններ բերել այս կյանքում և հավերժության մեջ:

Ամուսնություն և Ընտանեկան Հարաբերություններ դասընթացը նախատեսված է օգնելու մեզ գտնել ուրախություն մեր ընտանեկան հարաբերություններում:

Մեր տները կարող են դառնալ «երկնքի մի կտոր», եթե մենք կառուցենք «մեր Քավիչի վեմի վրա»:

Դաս 2. Միասնություն զարգացնել ամուսնության մեջ

Տերը ամուսիններին և կանանց պատվիրել է լինել մեկ:

Ամուսիններն ու կանայք պետք է գնահատեն միմյանց որպես հավասար ընկերներ:

Ամուսիններն ու կանայք պետք է թույլ տան, որպեսզի իրենց անհատական հատկանիշներն ու ունակությունները լրացնեն միմյանց:

Ամուսիններն ու կանայք պետք է հավատարիմ լինեն միմյանց:

Դաս 3. Սնուցել սեր և ընկերություն ամուսնության մեջ

Ամուսիններն ու կանայք պետք է սնուցեն միմյանց հանդեպ ունեցած իրենց սերը:

Սիրալիրության և բարության արտահայտումները կենդանի են պահում սերն ու ընկերությունը ամուսնության մեջ:

Ամուսնության մեջ պատշաճ ինտիմ հարաբերությունները սիրո արտահայտում են:

Ամուսնացած զույգերը պետք է աշխատեն ունենալ գթություն, Քրիստոսի մաքուր սերը:

Դաս 4. Արձագանքել ամուսնական խնդիրներին

Բոլոր ամուսնացած զույգերը խնդիրների կհանդիպեն:

Ամուսիններն ու կանայք կարող են աշխատել միասին հաղթահարելու ցանկացած դժվարություն, եթե վերաբերվեն իրենց ամուսնությանը որպես ուխտյալ հարաբերություն:

Երբ դժվարություններ են առաջանում, մենք կարող ենք արձագանքել համբերատարությամբ և սիրով, ոչ թե անհանգստությամբ կամ զայրույթով:

Դաս 5. Արձագանքել խնդիրներին դրական հաղորդակցման միջոցով

Յուրաքանչյուր ամուսնացած զույգ կարծիքների տարբերություններ կունենա:

Ամուսիններն ու կանայք պետք է միմյանց մեջ գտնեն այնպիսի հատկանիշներ, որոնցով կարող են հիանալ:

Դրական հաղորդակցումը կարող է կանխել և շտկել դժվարությունները:

Դաս 6. Ամրացնել ամուսնությունը հավատքի և աղոթքի միջոցով

Ամուսիններն ու կանայք պետք է միասին աշխատեն, որպեսզի մեծացնեն Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը:

Ամուսիններն ու կանայք օրհնվում են, երբ միասին աղոթում են:

Դաս 7. Ներման բուժող զորությունը

Ամուսնու և կնոջ միջև ներողամտության ոգին օգնում է խաղաղություն և վստահության ու ապահովության զգացում ստեղծել:

Ամուսիններն ու կանայք պետք է հայցեն միմյանց ներողամտությունը իրենց թերությունների համար և անկեղծ ջանքեր գործադրեն կատարելագործվելու համար:

Ամուսիններն ու կանայք պետք է աշխատեն ներել միմյանց:

Դաս 8. Կառավարել ընտանիքի ֆինանսները

Պատշաճ ֆինանսական կառավարումը կարևոր է երջանիկ ամուսնության համար:

Ամուսիններն ու կանայք պետք է աշխատեն միասին, որպեսզի հետևեն դրամի կառավարման հիմնական սկզբունքներին:

Դաս 9. «Երեխաները Տիրոջ ժառանգությունն են»

Երկնային Հայրը վստահում է Իր հոգևոր զավակներին երկրային ծնողներին:

Ծնողները պետք է աշխատեն բավարարել յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքները:

Երեխաները արժանի են սիրող հարաբերություններ ունենալու իրենց ծնողների հետ:

Բռնությունը երեխայի հանդեպ վիրավորանք է Աստծո համար:

Երեխաները մեծ ուրախություն են բերում ծնողների կյանքը:

Դաս 10. Հայրերի և մայրերի սուրբ դերերը (Մաս 1. Հայրերի դերը)

Հայրերն ու մայրերը պետք է միասին աշխատեն, որպեսզի յուրաքանչյուր երեխայի հավատքի վահանով ապահովեն:

Հայրերը պետք է նախագահեն սիրով և արդարակեցությամբ:

Հայրերը պետք է ապահովեն իրենց ընտանիքների կենսական կարիքները և պաշտպանություն՝ տանը:

Դաս 11. Հայրերի և մայրերի սուրբ դերերը (Մաս 2. Մայրերի դերը)

Մայրերը մասնակցում են Աստծո աշխատանքի մեջ:

Մայրերը առաջնային պարտականություն են կրում իրենց երեխաներին մեծացնելու համար:

Հայրերն ու մայրերը պետք է օգնեն միմյանց որպես հավասար գործընկերներ:

Դաս 12. Ուսուցանել երեխաներին օրինակի և հրահանգի միջոցով

Ծնողները պատասխանատու են իրենց երեխաներին սովորեցնելու համար:

Ծնողները ոգեշնչում կարող են ստանալ իրենց երեխաներին սովորեցնելիս:

Ծնողները սովորեցնում են օրինակի և հրահանգի միջոցով:

Դաս 13. Ուսուցանել ավետարանի սկզբունքները երեխաներին (Մաս 1)

Ծնողների ուսմունքները կարող են օգնել երեխաներին ամուր մնալ հավատքի մեջ:

Ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն ավետարանի առաջին սկզբունքներն ու ծեսերը:

Ծնողները պետք է «սովորեցնեն իրենց երեխաներին աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ»:

Դաս 14. Ուսուցանել է ավետարանի սկզբունքները երեխաներին (Մաս 2)

Ծնողները սեր են ցուցաբերում իրենց երեխաների հանդեպ, երբ սովորեցնում են նրանց:

Ծնողները պետք է երեխաներին կարեկցանք և ծառայություն սովորեցնեն:

Ծնողները պետք է երեխաներին ազնվություն և ուրիշների սեփականության հանդեպ հարգանք սովորեցնեն:

Ծնողները պետք է երեխաներին սովորեցնեն ազնիվ աշխատանքը հատուցման մասին:

Ծնողները երեխաներին բարոյական մաքրություն պետք է սովորեցնեն:

Դաս 15. Առաջնորդել երեխաներին որոշումներ կայացնելիս

Երեխաներն առաջնորդության կարիք ունեն, երբ որոշումներ են ընդունում:

Ծնողները կարող են օգնել երեխաներին արդար ձևով օգտագործել ընտրության ազատության իրենց իրավունքը:

Ծնողները պետք է թույլ տան երեխաներին սովորել ոչ իմաստուն որոշումների հետևանքների հիման վրա:

Ծնողները հաստատուն սեր պետք է ցուցաբերեն այն երեխաների հանդեպ, որոնք շեղվում են ուղուց:

Դաս 16. Ընտանեկան աղոթք, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրություն և ընտանեկան երեկո

Ընտանեկան աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը և ընտանեկան երեկոն պետք է առաջնահերթություն լինեն յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի ընտանիքի համար:

Ընտանիքները մեծ օրհնություններ են ստանում, երբ միասին աղոթում են:

Ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրությունը օգնում է ընտանիքներին մոտենալ Աստծուն:

Ընտանեկան երեկոն օգնում է ընտանիքներին ամրանալ աշխարհիկ ազդեցությունների դեմ:

Մաս Ա
Ամրացնել ամուսնությունը



«Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում» 1

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Վերանայեք «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» (էջ iv): Որոշեք այն ճանապարհները, որոնցով ավելի լավ կարող եք հետևել այս մարգարեական խորհրդին:
- Ձեռք բերեք «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» պաստառը (35602 կամ 35538) Եկեղեցու բաշխման կենտրոնից: Այն մշտապես ցուցադրեք ձեր տանը:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու հետ:

Ժամանակի և ողջ հավերժության համար

Երեց Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորում

Երջանկության մեծ ծրագիրը

Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, սուրբ գրությունները և առաքյալների ու մարգարեների ուսմունքները խոսում են մեր մասին որպես նախաերկրային կյանքում Աստծո որդիներ և դուստրեր, Նրա հոգևոր զավակներ:[1] Սեռը գոյություն է ունեցել մինչ այդ և չի առաջացել մահկանացու կյանքում:[2]

Երկնքի մեծ խորհրդի ժամանակ[3] ներկայացվեց Աստծո ծրագիրը.[4] փրկության ծրագիրը,[5] քավության ծրագիրը,[6] երջանկության մեծ ծրագիրը:[7] Ծրագիրը փորձվելու հնարավորություն է տալիս. բոլորը պետք է ընտրեն չարի ու բարու միջև:[8] Նրա ծրագիրը տալիս է Քավիչ, քավություն, Հարություն և, եթե մենք հնազանդվենք, կվերադառնանք Աստծո մոտ:

Թշնամին ապստամբեց և ընդունեց իր սեփական ծրագիրը:[9] Նրանք, ովքեր հետևեցին նրան, զրկվեցին մահկանացու մարմին ունենալու իրավունքից:[10] Այստեղ մեր ներկայությունը հաստատում է, որ մենք ընդունել ենք մեր Հոր ծրագիրը:[11]

Լյուցիֆերի միակ նպատակն էր հակադրվել երջանկության մեծ ծրագրին, ապականել կյանքի ամենամաքուր, ամենասքանչելի և հետաքրքիր փորձառությունները. սիրահարվելը, սերը, ամուսնությունը և ծնող լինելը:[12] Սրտի ցավի ու մեղավորության զգացումները[13] միշտ ուղեկցում են նրան: Միայն ապաշխարությունը կարող է բուժել այն, ինչ նա վնասել է:

Աստծո ծրագիրը պահանջում է ամուսնություն և ընտանիք

Երջանկության ծրագիրը պահանջում է, որպեսզի տեղի ունենա կնոջ ու տղամարդու արդար միությունը:[14] Վարդապետությունները մեզ սովորեցնում են, թե ինչպես պետք է արձագանքել ճնշող բնական մղումներին, որոնք հաճախ որոշում են մեր պահելաձևը:

Աստծո պատկերով մարմին ստեղծվեց Ադամի համար,[15] և նա դրվեց Պարտեզում:[16] Սկզբում Ադամը միայնակ էր: Նա քահանայություն էր կրում,[17] սակայն միայնակ նա չէր կարող իրականացնել իր արարման նպատակը:[18]

Ոչ ոք չէր կարող: Ոչ մենակ, ոչ էլ որևէ այլ տղամարդու հետ Ադամը չէր կարող զարգանալ: Ոչ էլ Եվան կարող էր զարգանալ մեկ այլ կնոջ հետ: Այդպես էր այն ժամանակ: Այդպես է այսօր:

Եվան՝ օգնական ստեղծվեց: Ամուսնությունը հիմնվեց:[19] Ադամին պատվիրվեց հարել իր *կնոջը* (ոչ թե պարզապես մի *կնոջ*) և ուրիշ ոչ մեկին:[20]

Կարելի է ասել, ընտրություն տրվեց Եվային:[21] Նա գովասանքի է արժանի իր որոշման համար: Ապա «Ադամն ընկավ, որպեսզի մարդկությունը լինի»:[22]

Երեց Օրսոն Ֆ. Վիթնին նկարագրեց Անկումը որպես «երկկողմանի ուղղություն ունեցող երևույթ՝ դեպի ներքև, սակայն դեպի վերև: Այն մարդուն բերեց աշխարհ և դրեց նրա ոտքը զարգացման ճանապարհին»:[23]

Աստված օրհնեց Ադամին և Եվային «և ասաց նրանց. պտղաբեր եղեք և բազմացեք»:[24] Եվ այդպիսով հիմնվեց ընտանիքը:

Աստված հավասար է գնահատում տղամարդուն և կնոջը

Հայտնությունների մեջ չկա ոչ մի ակնարկ այն մասին, որ Աստծո աչքում տղամարդն ավելի մեծ տեղ ունի, քան կինը, կամ որ Նա ավելի մեծ արժեք է գտնում որդիների, քան դուստրերի մեջ:

Սուրբ գրություններում թվարկված բոլոր արժանիքները՝ սերը, ուրախությունը, խաղաղությունը, հավատքը, աստվածայնությունը, գթությունը, կիսվում են տղամարդու և կնոջ կողմից,[25] և մահկանացու կյանքի քահանայական

ամենաբարձր արարողությունը տրվում է տղամարդուն և կնոջը միասին:[26]

Անկումից հետո բնական օրենքը բավականին մեծ իշխանություն ունի մահկանացու ծննդի վրա: Ինչպես ասել է Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը, դրանք բնության «կատակներն են»,[27] որոնք առաջացնում են անհամապատասխանություններ, շեղումներ և խեղաթյուրումներ: Որքան էլ անարդար դրանք թվան մարդու տրամաբանությանը, դրանք ինչ-որ ձևով ծառայում են մարդկության համար Տիրոջ նպատակներին:

Ամեն արժանի բնազդին հետևելը, ամեն արդար մղմանն արձագանքելը, մարդկային ամեն վեհ հարաբերություն ստեղծելը, ընդունվում և հաստատվում է Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունների մեջ և պաշտպանվում Իր Եկեղեցուն հայտնված պատվիրաններով:

Տղամարդկանց և կանանց դերերը

Եթե Ադամն ու Եվան իրենց բնությամբ տարբեր չլինեին, նրանք չէին կարող բազմանալ և լցնել երկիրը:[28] Լրացնող տարբերությունները երջանկության ծրագրի ամենակարևոր մասն են:

Որոշ դերեր իրենց էությամբ ավելի հարմար են տղամարդկանց, մյուսները՝ կանանց: Եվ սուրբ գրությունները և բնության ուղիները տղամարդուն տալիս են պաշտպանի և ապահովողի դերը:[29]

Քահանայության այն պարտականությունները, որոնք կապված են Եկեղեցու կառավարման հետ, անհրաժեշտ է կատարել տնից դուրս: Աստվածային որոշմամբ, դրանք տրվել են տղամարդկանց: Դա այդպես է եղել ամենասկզբից, քանզի Տերը հայտնել է, որ «այս քահանայության կարգը հաստատվել է, որ անցնի հորից որդուն: . . . Այս կարգը հաստատվել է Ադամի օրերին»:[30]

Քահանայություն կրող տղամարդը ոչ մի առավելություն չունի կնոջ հանդեպ վեհացում ունենալու հարցում: Կինը, իր էությամբ, նույնպես համա-ստեղծող է Աստծո հետ և երեխաների հիմնական մեծացնողը: Այն արժանիքները և հատկանիշները, որոնցից կախված է կատարելագործումն ու վեհացումը, բնականորեն տրվել են կնոջը և կատարելագործվում են ամուսնության և մայրության շնորհիվ:

Քահանայությունը շնորհվում է միայն արժանի տղամարդկանց, որպեսզի համապատասխան լինի Հոր երջանկության ծրագրին: Ներդաշնակությամբ աշխատող բնության օրենքներով և հայտնությամբ տրված Աստծո խոսքով, դա լավագույնս է աշխատում այդ ճանապարհով:

Դրա հետ մեկտեղ քահանայությունը վիթխարի պատասխանատվություն է պարունակում: «Ոչ մի զորություն կամ ազդեցություն *չի կարող* կամ չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ, անկեղծ սիրով, բարությամբ և մաքուր գիտելիքով»:[31]

Եթե տղամարդը «գործադրի հսկողություն, կամ իշխանություն, կամ ճնշում . . . որևէ աստիճանի անիրավություն»,[32] ապա նա խախտում է «երդումն ու ուխտը, որը պատկանում է քահանայությանը»:[33] Այդ ժամանակ «երկինքը կհեռանա, Տիրոջ Հոգին կսգա»:[34] Եթե նա չապաշխարի, կկորցնի իր օրհնությունները:

Մինչ տղամարդու և կնոջ տարբեր դերերը նախանշվել են վեհ սելեստիալ հայտարարագրերով, դրանք լավագույնս արտահայտվում են ընտանեկան կյանքի ամենագործնական, սովորական, երկրային փորձառությունների մեջ:

Վերջերս ես լսեցի, ինչպես հաղորդության ժողովի մի խոսնակ բողոքում էր, որ չէր հասկանում, թե ինչու են նրա թոռները միշտ խոսում *Տատիկի*, ոչ թե Պապիկի տուն գնալու մասին: Ես նրան բացատրեցի այդ մեծ գաղտնիքը. Պապիկները կարկանդակներ չեն թխում:

Բնական և հոգևոր օրենքները հավերժական են

Կյանքը ղեկավարող բնական և հոգևոր օրենքները գործել են աշխարհի հիմնադրումից ի վեր:[35] Դրանք հավերժական են, ինչպես նաև՝ դրանց հետևելու կամ չհետևելու հետևանքները: Դրանք հիմնված չեն հասարակական կամ քաղաքական ենթադրությունների վրա: Դրանք չեն կարող փոփոխվել: Ոչ մի ճնշում, ոչ մի բողոք, ոչ մի օրենսդրություն չի կարող փոխել դրանք:

Տարիներ առաջ ես վերահսկում էի Հնդկական սեմինարիաները: Երբ այցելեցի դպրոց Ալբուքերքում, տնօրենը ինձ պատմեց մի միջադեպի մասին, որը տեղի էր ունեցել առաջին դասարաններից մեկում:

Դասի ժամանակ կատվի մի ձագ մտավ սենյակ և սկսեց շեղել աշակերտների ուշադրությունը: Նրան բերեցին սենյակի դիմացի մասը, որպեսզի բոլորը տեսնեին նրան:

Աշակերտներից մեկը հարցրեց. «Սա տղա փիսիկ է, թե աղջիկ»:

Նման քննարկմանն անպատրաստ ուսուցիչն ասաց. «Դա կարևոր չէ, սա պարզապես փիսիկ է»:

Բայց երեխաները պնդեցին, և մի փոքրիկ տղա ասաց. «Ես գիտեմ, ինչպես մենք կարող ենք իմանալ տղա է, թե աղջիկ»:

Ուսուցիչը ճարահատված ասաց. «Լավ, ասա մեզ, թե ինչպես մենք կարող ենք որոշել, տղա փիսիկ է, թե աղջիկ»:

Տղան պատասխանեց. «Մենք կարող ենք քվեարկել»:

Որոշ բաներ հնարավոր չէ փոխել: Վարդապետությունը չի կարելի փոխել:

«Սկզբունքները, որոնք հայտնությամբ տրվել են մարդկանց զավակների փրկության և վեհացման համար, - ասել է Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը, - սկզբունքներ են, որոնք դուք չեք կարող վերացնել: *Դրանք սկզբունքներ են, որոնք տղամարդկանց [կամ կանանց] ոչ մի խումբ չի կարող ոչնչացնել:* Դրանք սկզբունքներ են, որոնք երբեք չեն մեռնում: . . . Դրանք մարդիկ ի զորու չեն հաղթել կամ ոչնչացնել: . . . Ողջ աշխարհի զորությունը միասին վերցրած չի կարող ոչնչացնել այդ սկզբունքները: . . . Այդ սկզբունքների ոչ մի փշուր կամ նշույլ երբեք չի կարող ոչնչացվել»:[36]

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ տղամարդիկ կանչվեցին պատերազմ: Այդ արտակարգ իրավիճակում կանայք և մայրերը ամբողջ աշխարհում համալրեցին աշխատուժի շարքերը: Պատերազմի ամենա-

կործանարար ազդեցությունը ընտանիքի վրա էր: Դա մնաց այս սերնդի ուսերին:

Բազմացեք և լցրեք երկիրը

1942 թվի հոկտեմբերի գերագույն համաժողովին Առաջին Նախագահությունը ուղերձ հղեց «Սրբերին բոլոր երկրներում և գոտիներում». «Որպես Եկեղեցու Առաջին Նախագահություն մեզ շնորհված իշխանության զորությամբ մենք նախազգուշացնում ենք մեր ժողովրդին»:

Եվ նրանք ասացին. «Ադամին ու Եվային տված Իր առաջին պատվիրանների մեջ Տերն ասաց. «Բազմացեք և լցրեք երկիրը»: Նա կրկնում է այդ պատվիրանը մեր օրերին: Նա կրկին հայտնել է այս, վերջին տնտեսության մեջ, ամուսնության ուխտի հավերժության սկզբունքը: . . .

Տերը մեզ ասել է, որ յուրաքանչյուր ամուսնու և կնոջ պարտքն է հնազանդվել բազմանալու և երկիրը լցնելու Ադամին տրված պատվիրանին, որպեսզի ընտրված հոգիների բանակները, որոնք սպասում են իրենց մարմնական տաղավարներին, կարողանան գալ այստեղ և առաջ գնալ Աստծո մեծ նախաձեռնության մեջ, դառնալու կատարյալ հոգիներ, քանզի առանց այդ մարմնական տաղավարների նրանք չեն կարող զարգանալ և հասնել Աստծո կողմից ծրագրած իրենց ճակատագրին: Այսպիսով, ամեն ամուսին և կին պետք է դառնա հայր և մայր Իսրայելում՝ սուրբ հավերժական ուխտի տակ ծնված զավակների համար:

Այդ ընտրյալ հոգիներին երկիր բերելով ամեն հայր և ամեն մայր մարմնի մեջ մտած հոգու և հենց Իրեն՝ Տիրոջ առաջ, օգտվելով Նրա առաջարկած հնարավորությունից ամենասրբազան տեսակի պատասխանատվություն է ստանձնում, քանզի այդ հոգու ճակատագիրը հավերժությունների մեջ, օրհնությունները կամ պատիժները, որոնք սպասում են հետագայում, կախված են, հիմնականում, այն խնամքից, ուսմունքներից, ուսուցումից, որ ծնողները պետք է տան այդ հոգուն:

Ոչ մի ծնող չի կարող խուսափել այդ պարտականությունից և այդ պատասխանատվությունից, և այսպիսով, համապատասխանորեն, Տերը խիստ պատասխանատվության մեզ կկանչի: Սրանից մեծ պարտականություն չի կարող լինել մահկանացուների համար»:

Մայրությունը սուրբ կոչում է

Խոսելով մայրերի մասին Առաջին Նախագահությունն ասել է. «Այսպիսով, մայրությունը դառնում է սուրբ կոչում, սրբազան նվիրում առաջ տանելու համար Տիրոջ ծրագրերը, նվիրաբերում՝ մեծացնելու և դաստիարակելու, սնուցելու մարմինը, միտքը և հոգին նրանց, ովքեր պահել են իրենց առաջին վիճակը և եկել են երկիր երկրորդ վիճակի համար, «տեսնելու, թե արդյոք նրանք կանեն այն բոլոր բաները, որոնք Տերը՝ իրենց Աստվածը պատվիրել է իրենց» (Աբրահամ 3.25): Մայրության աշխատանքն է օգնել նրանց՝ պահել իրենց երկրորդ վիճակը, և «նրանք, ովքեր կպահեն իրենց երկրորդ վիճակը, փառք կունենան իրենց գլխներին ընդմիշտ ու ընդմիշտ» [Աբրահամ 3.26]

Մայրության այս աստվածային ծառայությունը կարող են մատուցել միայն մայրերը: Այն չի կարող փոխանցվել ուրիշներին: Դայակները չեն կարող անել դա, մանկապարտեզները չեն կարող անել դա, վարձու աշխատողները չեն կարող անել դա. միայն մայրը, որքան որ հնարավոր է օգնություն ստանալով սիրող հորից, եղբայրներից և քույրերից, կարող է տալ լիարժեք խնամքի անհրաժեշտ ողջ բաժինը»:

Առաջին Նախագահությունը խորհուրդ է տալիս, որ «մայրը, որը վստահում է իր երեխային ուրիշների խնամքին, որպեսզի կատարի ոչ մայրական աշխատանքը, լինի դա ոսկու, փառքի, թե քաղաքացիական ծառայության համար, պետք է հիշի, որ «ինքն իրեն թողնված երեխան ամոթ է բերում մորը» (Առակաց 29.15): Մեր օրերին Տերն ասել է, որ եթե ծնողները իրենց երեխաներին չսովորեցնեն Եկեղեցու վարդապետությունները, «մեղքը կլինի ծնողների գլխին» (ՎԿՈ 68.25):

«Մայրությունը մոտ է աստվածայնությանը: Դա ամենաբարձր, ամենասուրբ կոչումն է մարդկության համար: Նա, ով պատվում է այդ սուրբ կոչումն ու ծառայությունը, դասվում է հրեշտակների շարքին»:[37]

Առաջին Նախագահության այդ ուղերձը այսօր նույնքան արդիական է, որքան այն ժամանակ, երբ այն տրվեց: Եվ վարչական ոչ մի մակարդակի Եկեղեցու ոչ մի այլ կազմակերպության ձայնը չի հավասարվի Առաջին Նախագահության ձայնին:[38]

Բոլոր հոգիները, որոնք բնության կամ հանգամանքների բերումով, չեն կարող օգտվել ամուսնության կամ ծնող լինելու օրհնությունից, կամ ովքեր առանց իրենց մեղքի պետք է միայնակ գործեն, մեծացնելով երեխաներին և օգնելով նրանց, չեն զրկվի որևէ օրհնությունից հավերժությունների մեջ, եթե պահեն պատվիրանները:[39] Ինչպես խոստացել է Լորենզո Սնոուն. «Դա հաստատ է ու դրական»:[40]

Գանձարանի և բանալիների առակը

Ես ավարտում եմ առակով:

Մի մարդ երկու բանալի է ժառանգություն ստանում: Նրան ասվում է, որ առաջին բանալին բացում է մի պահոց, որը նա պետք է ամեն գնով պաշտպանի: Երկրորդ բանալին պահոցում գտնվող պահարանից էր, որտեղ անգին գանձ էր դրված: Նա պետք է բացեր այդ պահարանը և ազատորեն օգտագործեր այն անգին բաները, որ այնտեղ պահված էին: Նրան զգուշացրեցին, որ շատերը կձգտեն թալանել իր ժառանգությունը: Նրան խոստում տրվեց, որ եթե նա արժանի ձևով օգտագործի գանձը, ապա այն նորից կլցվի և երբեք չի վերջանա, ողջ հավերժության մեջ: Նա կփորձվի: Եթե նա այն օգտագործեր ուրիշների օգտի համար, իր սեփական օրհնությունները և ուրախությունը կմեծանար:

Մարդը մենակ գնաց պահոց: Նրա առաջին բանալին բացեց դուռը: Նա փորձեց բացել գանձապահարանը մյուս բանալիով, սակայն չկարողացավ, քանի որ պահարանի վրա երկու կողպեք կար: Միայն իր բանալիով այն չէր բացվում: Նա շփոթության մեջ էր: Նրան տվել էին բանալիները: Նա գիտեր, որ գանձի իրավունքն իրենն էր: Նա հնազանդվեց հրահանգներին, սակայն չկարողացավ բացել պահարանը:

Այդ ժամանակ պահոց մի կին մտավ: Նա նույնպես բանալի ուներ: Այն նկատելիորեն տարբերվում էր տղամարդու բանալիից: Կնոջ բանալին համապատասխանում էր մյուս կողպեքին: Դա խոնարհեցրեց տղամարդուն, և նա իմացավ, որ չի կարող ձեռքբերել իր ժառանգությունն առանց կնոջ:

Նրանք ուխտ կապեցին, որ միասին կբացեն գանձարանը, և, ինչպես հրահանգվել են, տղամարդը կհետևի պահոցին և կպաշտպանի այն, իսկ կինը կհետևի գանձին: Կնոջը չէր մտահոգում այն փաստը, որ որպես պահոցի պահապան տղամարդը երկու բանալի ուներ, որպեսզի լիարժեք կարողանար կատարել իր նպատակը, այսինքն՝ ապահովել կնոջ անվտանգությունը, որն իր հերթին պահում էր այն, ինչն առավել արժեքավոր էր երկուսի համար: Միասին նրանք բացեցին գանձարանը և վերցրեցին իրենց ժառանգությունը: Նրանք ուրախացան, քանզի այն նորից համալրվեց, ինչպես խոստացված էր:

Մեծ ուրախությամբ նրանք հայտնաբերեցին, որ կարող էին փոխանցել գանձը իրենց զավակներին, յուրաքանչյուրը կարող էր լրիվ բաժին ստանալ, առանց պակասորդի՝ մինչև վերջին սերունդը:

Միգուցե իրենց սերունդներից ոմանք չկարողանան գտնել իրենց ընկերոջը, որն ունի լրացուցիչ բանալին, կամ որն արժանի է և ցանկանում է պահել գանձին վերաբերող ուխտերը: Ինչևէ, եթե նրանք պահեին պատվիրանները, նրանք չէին զրկվի անգամ ամենափոքր օրհնությունից:

Քանի որ ոմանք նրանց գայթակղում էին սխալ օգտագործել իրենց գանձը, նրանք սովորեցրեցին իրենց երեխաներին բանալիների և ուխտերի մասին:

Ապա, երբ եկավ ժամանակը, սերունդների մեջ հայտնվեցին ոմանք, ովքեր խաբվեցին, կամ նախանձ ունեցան, կամ եսասեր էին, քանի որ մեկին տրվեց երկու բանալի, մյուսին՝ միայն մեկ: «Ինչո՞ւ, - ասաց եսասերը, - գանձը չի կարող լինել միայն իմը»:

Ոմանք փորձեցին տաշել բանալին մյուսին նմանակելու համար: Միգուցե նրանք կարծում էին այն կարող էր բացել երկու կողպեքները: Բայց գանձարանը փակ էր նրանց համար: Նրանց տաշած բանալիներն անօգուտ էին, և նրանց ժառանգությունը կորած էր:

Նրանք, ովքեր երախտագիտությամբ ընդունեցին բանալիները և պահեցին դրանց վերաբերող օրենքները, անսահման ուրախություն ունեցան ժամանակի և ողջ հավերժության մեջ:

Ես վկայություն եմ բերում մեր Երկնային Հոր երջանկության ծրագրի մասին, և բերում եմ վկայությունը Նրա անունով, ով իրականացրեց Քավությունը, որպեսզի այն լինի:

1993 թվականի հոկտեմբերի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Փաքերի ուղերձից (see Conference Report, Oct. 1993, 27–31; or *Ensign,* Nov. 1993, 21–24):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.24; տես նաև Թվոց ԺԶ.22; Եբրայեցիս ԺԲ.9:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.63; First Presidency, "The Origin of Man" (Nov. 1909), in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:203; see also Spencer W. Kimball, "The Blessings and Responsibilities of Womanhood," *Ensign,* Mar. 1976, 71; Gordon B. Hinckley, in Conference Report, Oct. 1983, 115; or *Ensign,* Nov. 1983, 83.
3. Տես *Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith (1976), 348–49, 357, 365.
4. Տես Աբրահամ 3.24—27:
5. Տես Հարոմ 1.2; Ալմա 24.14; 42.5; Մովսես 6.62:
6. Տես Հակոբ 6.8; Ալմա 12.25–36; 17.16; 18.39; 22.13–14; 39.18; 42.11, 13.
7. Ալմա 42.8
8. Տես Ալմա 42.2–5:
9. Տես 2 Նեփի 9.28; Ալմա 12.4–5; Հելաման 2.8; 3 Նեփի 1.16; Վարդապետություն և Ուխտեր 10.12, 23; Մովսես 4.3.
10. Տես *Teachings of the Prophet Joseph Smith,* 181, 297.
11. Տես *Teachings of the Prophet Joseph Smith,* 181.
12. Տես 2 Նեփի 2.18; 28.20:
13. Տես Ալմա 39.5; Մորոնի 9.9:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.2; 131.2; Ա Կորնթացիս ԺԱ.11; Եփեսացիս Ե.31:
15. Տես Մովսես 6.8–9.
16. Տես Մովսես 3.8
17. Տես Մովսես 6.67
18. Տես Մովսես 3.18
19. Տես Մովսես 3.23–24
20. Վարդապետություն և Ուխտեր 42.22
21. Տե՛ս Մովսես 4.7–12:
22. 2 Նեփի 2.25
23. *Cowley and Whitney on Doctrine,* comp. Forace Green (1963), 287.
24. Մովսես 2.28; տես նաև Ծննդոց Ա.28; Թ.1:
25. Տես Գաղատացիս Ե.22–23; Տես Վարդապետություն և Ուխտեր 4.5–6; Ալմա 7.23–24:
26. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.2:
27. See "Our Wives and Our Mothers in the Eternal Plan" (address given in general Relief Society conference, 3 Oct. 1946), in *J. Reuben Clark: Selected Papers on Religion, Education, and Youth,* ed. David H. Yarn Jr. (1984), 62.
28. Տես Ծննդոց Ա.28, note 28c.
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 75.28; Ա Տիմոթեոս Ե.8:
30. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.40–41; տե՛ս նաև Վարդապետություն և Ուխտեր 84.14–16:
31. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.41–42; շեղագիրն ավելացված է:
32. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.37:
33. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.39:
34. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.37:
35. See *Teachings of the Prophet Joseph Smith,* 308, 367.
36. *The Discourses of Wilford Woodruff,* sel. G. Homer Durham (1946), 25–26; italics added.
37. In Conference Report, Oct. 1942, 7, 11–12:
38. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.8–9, 22, 91:
39. Տես Վարդապետություն և Ուխտեր 137.7–9:
40. "Discourse by President Lorenzo Snow," *Millennial Star,* 31 Aug. 1899, 547.

Միասնություն զարգացնել ամուսնության մեջ

2

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Կարդացեք միասնության մասին սուրբ գրությունների հետևյալ հատվածները. Ա Կորնթացիս Ա.9–10; Փիլիպպեցիս Ա.27; Մոսիա 18.21; Վարդապետություն և Ուխտեր 38.27: Խորհեք այն մասին, թե ինչպես այս հատվածները կարող են կիրառելի լինել ամուսնու և կնոջ հարաբերությունների համար:
- Ձեր ամուսնու հետ միասին քննարկեք ձեր երկուսի պահանջները ժամանակի առումով, ներառյալ հասարակական, աշխատանքային, համայնքային և Եկեղեցու հետ կապված գործերը: Ժամանակ հատկացրեք, որպեսզի հասկանաք միմյանց կարիքները, և հետևեք, որպեսզի ձեր մյուս պարտավորությունները չվնասեն միմյանց հանդեպ ձեր վերաբերմունքին:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, հոդվածը կարդացեք և քննարկեք ձեր ամուսնու հետ:

Որպեսզի մենք մեկ լինենք

Երեց Հենրի Բ. Այրինգ
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»

Աշխարհի Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ասել է նրանց, ովքեր կլինեն Իր Եկեղեցու մասը. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք» (ՎԱՈՒ 38.27): Եվ տղամարդու և կնոջ արարման ժամանակ ամուսնությունը ոչ թե տրվել է որպես հույս, այլ որպես պատգամ: «Սորա համար մարդը կթողնէ իր հայրը և իր մայրը, և կիարի իր կնոջը. և մեկ մարմին կլինեն» (Ծննդոց Բ.24): Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որպեսզի մեր սրտերը հյուսված լինեն միասին: Սիրո այդ միասնությունը իդեալ չէ: Դա անհրաժեշտություն է:

Մեկ լինելու պահանջը միայն այս կյանքի համար չէ: Այն պետք է լինի անվերջ: Առաջին ամուսնությունը կատարվեց Աստծո կողմից պարտեզում, երբ Ադամն ու Եվան անմահ էին: Ամենասկզբից Նա տղամարդու և կնոջ մեջ ցանկություն դրեց հավերժ միանալու որպես ամուսին և կին և ապրել ընտանիքով կատարյալ ու արդար միասնության մեջ: Նա Իր զավակների մեջ ցանկություն դրեց խաղաղությամբ ապրելու իրենց շրջապատի մարդկանց հետ:

Սակայն Անկման հետ ակնհայտ դարձավ, որ միասնության մեջ ապրելը հեշտ չի լինի: Ողբերգությունները շուտ սկսեցին: Կայենը սպանեց Աբելին՝ իր եղբորը: Ադամի ու Եվայի զավակները ենթարկվեցին Սատանայի գայթակղություններին: Ճարպկությամբ, ատելությամբ և խորամանկությամբ Սատանան հետապնդում էր իր նպատակները: Դրանք հակասում են մեր Երկնային Հոր և Փրկչի նպատակներին: Դրանք մեզ տալիս են կատարյալ միասնություն և հավերժական երջանկություն: Սատանան, նրանց ու մեր թշնամին, գիտեր փրկության ծրագրի մասին դեռ Արարումից առաջ: Նա գիտի, որ միայն հավերժական կյանքում կարող են գոյատևել ընտանիքների սուրբ և ուրախ միությունները: Սատանան մեզ կհեռացնի մեր սիրելիներից և մեզ թշվառ կդարձնի: Եվ դա նա է, ով հակառակություն է սերմանում մարդկանց սրտերում այն հույսով, որ մենք բաժանվենք ու առանձնանանք:

Մենք բոլորս էլ զգացել ենք ինչպես միասնություն, այնպես էլ բաժանում: Երբեմն ընտանիքներում և մի գուցե այլ իրավիճակներում մենք ականատես ենք եղել, ինչպես մեկը ուրիշի շահերը իրենից բարձր է դասում՝ սիրով և զոհաբերությամբ: Եվ մենք բոլորս գիտենք բաժանված և մենակ լինելու տխրության ու միայնակության զգացումը: Կարիք չկա, որ մեզ ասեն, թե ինչը մենք պետք է ընտրենք: Մենք գիտենք: Բայց մեզ պետք է հույս, որպեսզի կարողանանք միասնություն ունենալ այս կյանքում և արժանանալ դրան ընդմիշտ գալիք աշխարհում: Եվ մենք պետք է իմանանք, թե ինչպես է գալու այդ մեծ օրհնությունը, որպեսզի իմանանք, թե ինչ մենք պետք է անենք:

Փրկիչը միասնությունը հնարավոր է դարձնում

Աշխարհի Փրկիչը խոսել է այդ միասնության մասին և այն մասին, թե ինչպես մենք պետք է փոխենք մեր էությունը՝ դա հնարավոր դարձնելու համար: Նա դա հստակ սովորեցրել է աղոթքում, որն ասաց Իր մահից առաջ Իր Առաքյալների հետ վերջին հանդիպման ժամանակ: Այդ վերին աստիճանի սքանչելի աղոթքը գրի է առնված Հովհաննեսի գրքում: Նա շուտով պետք է անչափ մեծ զոհաբերություն կատարեր մեր բոլորի համար, ինչը հավերժական կյանքը հնարավոր պետք է դարձներ: Նա շուտով պետք է լքեր Առաքյալներին, որոնց ձեռնադրել էր, որոնց սիրում էր և որոնց հետ պետք է թողներ Իր Եկեղեցին ղեկավարելու բանալիները: Եվ Նա աղոթեց Իր Հորը,

կատարյալ Որդին կատարյալ Ծնողին: Նրա խոսքերում մենք տեսնում ենք, թե ինչպես են ընտանիքները մեկ լինում, ինչպես կլինեն մեր Երկնային Հոր բոլոր զավակները, որոնք հետևում են Փրկչին ու Նրա ծառաներին.

«Ինչպես դու ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նորանց ուղարկեցի աշխարհք:

Եվ ես նորանց համար իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտությունով սրբված լինեն:

Բայց ոչ միայն նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար էլ, որ նորանց խոսքովը կհավատան ինձ:

Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մեկ լինեն. որ աշխարհքը հավատայ, թե դու ուղարկեցիր ինձ» (Հովհաննես ԺԷ.18–21):

Այս մի քանի խոսքերով Նա հստակ ցույց է տալիս, թե ինչպես կարող է Հիսուս Քրիստոսի ավետարանը թույլ տալ, որ սրտերը մեկ լինեն: Նրանք, ովքեր կհավատան Նրա սովորեցրած ճշմարտությանը, կարող են ընդունել արարողությունները և ուխտերը, որոնք առաջարկում են Նրա լիազորված ծառաները: Ապա այդ արարողություններին և ուխտերին հնազանդ լինելով նրանց էությունները կփոխվեն: Այդ եղանակով Փրկչի Քավությունը մեզ հնարավորություն է տալիս մաքրվել: Այդ ժամանակ մենք կարող ենք ապրել միասնության մեջ, ինչպես նաև պետք է ունենանք խաղաղություն այս կյանքում և ապրենք Հոր և Նրա Որդու հետ հավերժության մեջ:

Ինչպես այսօր, այդ օրերին առաքյալների և մարգարեների ծառայությունն էր՝ բերել Ադամի ու Եվայի զավակներին Հիսուս Քրիստոսի հանդեպ միասնական հավատքի: Նրանց սովորեցրածի, և մեր սովորեցրածի, ամենամեծ նպատակն է՝ միավորել ընտանիքները՝ ամուսիններին, կանանց, երեխաներին, թոռներին, ծոռներին, նախնիներին և, վերջապես, Ադամի ու Եվայի ողջ ընտանիքին, ովքեր կընտրեն դա:

Հոգին տանում է դեպի միասնությունը մյուսների հետ

Դուք հիշում եք, ինչպես էր Փրկիչն աղոթում. «Եվ ես նորանց համար իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտությունով սրբված լինեն» (Հովհաննես 17:19). Սուրբ Հոգին է մաքրողը: Մենք կարող ենք ունենալ նրան որպես մեր ուղեկից, որովհետև Տերը վերականգնեց Մելքիսեդեկյան Քահանայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Այդ քահանայության բանալիներն այսօր երկրի վրա են: Դրա զորությամբ մենք կարող ենք ուխտեր կապել, որոնք մեզ թույլ են տալիս անընդհատ մեզ հետ ունենալ Սուրբ Հոգին:

Երբ մարդիկ իրենց հետ են ունենում այդ Հոգին, մենք կարող ենք ներդաշնակություն ակնկալել: Հոգին ճշմարտության մասին վկայությունը դնում է մեր սրտերի մեջ, և այն միավորում է նրանց, ովքեր կիսում են այդ վկայությունը: Աստծո Հոգին երբեք հակառակություն չի առաջացնում (տե՛ս 3 Նեփի 11.29): Այն երբեք տարաձայնություններ չի առաջացնում մարդկանց մեջ, տանելով դեպի հակասություն (see Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. [1939], 131): Այն տանում է անձնական խաղաղության և մյուսների հետ միասնության: Այն միավորում է հոգիները: Միավորված ընտանիքը, միավորված Եկեղեցին և խաղաղության մեջ գտնվող աշխարհը կախված է միավորված հոգիներից:

Պահել հաղորդության աղոթքի ժամանակ տված խոստումները

Անգամ երեխան կարող է հասկանալ, թե ինչ պետք է անել Սուրբ Հոգին ուղեկից ունենալու համար: Հաղորդության աղոթքն ասում է մեզ: Մենք լսում ենք այն ամեն շաբաթ, երբ հաճախում ենք մեր հաղորդության ժողովներին: Այդ սուրբ պահերին մենք նորոգում ենք մկրտության ժամանակ կապած ուխտերը: Եվ Տերը հիշեցնում է մեզ այն խոստումը, որը մենք ստացանք, երբ հաստատվեցինք որպես Եկեղեցու անդամներ՝ Սուրբ Հոգին ստանալու խոստումը: Ահա հաղորդության աղոթքի խոսքերը. «Նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց. որպեսզի նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան» (ՎԱՈ 20.77):

Մենք կարող ենք ունենալ Նրա Հոգին, պահելով այդ ուխտը: Առաջին, մենք խոստանում ենք վերցնել Նրա անունը մեզ վրա: Դա նշանակում է, որ մենք պետք է մեզ համարենք Իրենը: Մենք Նրան առաջինը կդնենք մեր կյանքում: Մենք կցանկանանք այն, ինչ Նա է ցանկանում, ոչ թե այն, ինչ ինքներս ենք ցանկանում կամ ինչ աշխարհն է մեզ սովորեցնում: Քանի դեռ մենք աշխարհի բաներն առաջինը սիրենք, մեր մեջ խաղաղություն չի լինի: Ընտանիքի կամ ազգի բարեկեցությունը նյութականի միջոցով պահելու նպատակը, ի վերջո, կբաժանի դրանք իրարից (տե՛ս Harold B. Lee, *Stand Ye in Holy Places* [1974], 97): Միմյանց համար անելով այն, ինչ Տերը կցանկանար, որ մենք անեինք, ինչը բնականորեն հետևում է Նրա անունը մեզ վրա վերցնելուց, կարող է մեզ տանել մի հոգևոր մակարդակի, որը երկնքի մասնիկ է երկրի վրա:

Երկրորդ, մենք խոստանում ենք միշտ հիշել Նրան: Մենք դա անում ենք ամեն անգամ, երբ աղոթում ենք Նրա անունով: Հատկապես մենք հիշում ենք Նրան, երբ խնդրում ենք Նրա ներողամտությունը, ինչը մենք հաճախ պետք է անենք: Այդ պահին մենք հիշում ենք Նրա զոհաբերությունը, որը ապաշխարությունն ու ներումը հնարավոր է դարձնում: Երբ մենք խնդրում ենք, մենք Նրան հիշում ենք որպես Հոր առաջ մեր Բարեխոսի: Երբ գալիս են ներման և խաղաղության զգացումները, մենք հիշում ենք Նրա համբերատարությունը և Նրա անսահման սերը: Դա հիշելով մեր սրտերը սիրով են լցվում:

Մենք նաև պահում ենք Նրան հիշելու մեր խոստումը, երբ ընտանիքներով միասին աղոթում ենք և կարդում սուրբ գրությունները: Նախաճաշի սեղանի շուրջ ընտանեկան աղոթքի ժամանակ մի երեխա կարող է աղոթել, որ մյուսը օրհնվի, եթե քննություն կամ ելույթ ունի: Երբ օրհնություններ գան, օրհնված երեխան կհիշի առավոտվա սերը և Բարեխոսի բարությունը, ում անունով աղոթքը ասվեց: Սրտերը սիրո օղակով կմիանան:

Մենք պահում ենք Նրան հիշելու մեր ուխտը՝ ամեն անգամ ընտանիքով հավաքվելով և սուրբ գրությունները

կարդալով: Նրանք վկայում են Տեր Հիսուս Քրիստոսի մասին, քանզի դա է մարգարեների ուղերձը և միշտ կլինի: Անգամ երբ երեխաները չեն հիշում խոսքերը, նրանք կհիշեն իսկական Հեղինակին, որը Հիսուս Քրիստոսն է:

Հնազանդվեք բոլոր պատվիրաններին

Երրորդ, երբ մենք մասնակցում ենք հաղորդությանը, մենք խոստանում ենք պահել Նրա պատվիրանները՝ բոլորը: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկը, բազմիցս գերագույն համաժողովներին աղերսել է միասնական լինելու մասին, մեզ նախազգուշացրել է ընտրովի չմոտենալ նրան, ինչին պետք է հնազանդվենք: Նա այսպես է ասել. «Տերը մեզ չի տվել ոչ մի բան, որը անպետք կամ անօգուտ լինի: Նա լցրել է Սուրբ Գրությունները այն ամենով, ինչ մենք պետք է անենք, որպեսզի փրկություն ունենանք»:

Նախագահ Քլարկը շարունակել է. «Երբ մենք ճաշակում ենք Հաղորդությունից, մենք ուխտ ենք կապում հնազանդվել նրա պատվիրաններին և պահել դրանք: Չկա ոչ մի բացառություն: Չկա ոչ մի խտրություն, և ոչ մի տարբերություն» (in Conference Report, Apr. 1955, 10–11): Նախագահ Քլարկը սովորեցնում է, որ երբ մենք ապաշխարում ենք բոլոր մեղքերից, ոչ թե պարզապես մեկ մեղքից, մենք երդվում ենք պահել բոլոր պատվիրանները: Որքան էլ բարդ հնչի, դա այնքան էլ դժվար չէ: Մենք պարզապես մեզ հանձնում ենք Փրկչի իշխանությանը և խոստանում ենք հնազանդ լինել այն ամենին, ինչ Նա պատվիրում է (տե՛ս Մոսիա 3.19): Հիսուս Քրիստոսին անձնատուր լինելը մեզ թույլ կտա միավորվել որպես ընտանիք, Եկեղեցի և մեր Երկնային Հոր զավակներ:

Տերը այդ իշխանությունը Իր մարգարեի միջոցով փոխանցում է Իր խոնարհ ծառաներին: Այդ հավատքը տնային կամ այցելող ուսուցչի մեր կոչումը դարձնում է Տիրոջ աշխատանք: Մենք գնում ենք Նրա համար, ինչպես Նա է պատվիրում: Սովորական մարդը և դեռահաս պատանին գնում են տները, ակնկալելով, որ երկնքի զորությունները կօգնեն իրենց հաստատել, որ ընտանիքները միավորված են, և որ չկա ոչ մի կոպտություն, սուտ, բամբասանք, ոչ էլ չարախոսություն: Այդ հավատքը, որ Տերը կանչում է Իր ծառաներին, կօգնի մեզ անտեսել նրանց սահմանափակումները, երբ նրանք քննադատեն մեզ: Մենք ավելի հստակ կտեսնենք նրանց բարի միտումները, ոչ թե նրանց մարդկային սահմափակումները: Մենք ավելի քիչ մեզ վիրավորված կզգանք, և ավելի մեծ երախտագիտություն կզգանք դեպի Վարդապետը, որը կանչել է նրանց:

Գթությունը կարևոր է միասնության համար

Կան որոշ պատվիրաններ, որոնք, եթե չպահվեն, կործանում են միությունը: Որոշները կապված են մեր ասածների, մյուսները ուրիշների ասածներին մեր արձագանքելու հետ: Մենք պետք է ոչ ոքի մասին վատ չխոսենք: Մենք պետք է բարին տեսնենք միմյանց մեջ և լավ խոսենք միմյանց մասին, երբ կարող ենք (տե՛ս David O. McKay, in Conference Report, Oct. 1967, 4–11):

Միևնույն ժամանակ մենք պետք է դեմ կանգնենք նրանց, ովքեր արհամարհական են խոսում սուրբ բաների մասին, որովհետև այդ վիրավորանքի որոշ մասը բաժին է ընկնում Հոգուն և այդպիսով հակառակություն ու հակասություն է ստեղծում: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը ցույց է տվել առանց հակառակվելու դիմակայելու ուղին, երբ հիվանդանոցում պառկած է եղել և խնդրել է բուժաշխատողին, որը վախի պահի տակ անտեղի օգտագործել է Տիրոջ անունը. «Խնդրո՞ւմ եմ, խնդրո՞ւմ եմ. Դա իմ Տերն է, ում անունը դու վիրավորում ես»: Մի պահ տիրել էր խոր լռություն, ապա ցածր ձայնը շշնջացել էր. «Ներողություն» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [1982], 198): Ոգեշնչված սիրով արված նախատինքը կարող է միության հրավեր լինել: Եթե Սուրբ Հոգու հուշումով այն չարվի, ապա հակասություն կառաջացնի:

Եթե մենք ուզում ենք միություն պահպանել, կան պատվիրաններ զգացումների հետ կապված, որոնք մենք պետք է պահենք: Մենք պետք է ներենք և ոխ չպահենք նրանց հանդեպ, ովքեր վիրավորում են մեզ: Փրկիչը օրինակ է ցույց տվել խաչի վրա. «Հայր, թողիր դորանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկաս ԻԳ.34): Մենք չգիտենք նրանց սրտերը, ովքեր վիրավորում են մեզ: Ոչ էլ գիտենք մեր սեփական զայրույթի և ցավի բոլոր աղբյուրները: Պողոս Առաքյալը մեզ ասում էր, թե ինչպես պետք է սիրել անկատար մարդկանց աշխարհում, որոնց մեջ նաև մենք ենք. «Սերը երկայնամիտ է՝ քաղցր է. խերը չէ նախանձվում, չէ գոռոզանում, չէ հպարտանում: Չէ լրբանում, իրենը չէ որոնում, չէ գրգռվում, չարը չէ մտածում» (Ա Կորնթացիս ԺԳ.4–5): Ապա նա լուրջ նախազգուշացում տվեց այն մասին, թե ինչպես մենք պետք է արձագանքենք ուրիշների սխալներին և մոռանանք մերը. «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ դեմադեմ. հիմա փոքր ի շատ եմ տեղյակ, բայց այն ժամանակն այնպես կգիտենամ՝ ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթացիս ԺԳ.12):

Մնացեք մաքուր և ազատ հպարտությունից

Հաղորդության աղոթքն ամեն շաբաթ մեզ կարող է հիշեցնել այն մասին, թե ինչպես է միության պարգևը տրվում Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին և արարողություններին հնազանդվելու միջոցով: Երբ մենք պահում ենք Նրա անունը մեզ վրա վերցնելու, Նրան միշտ հիշելու և Նրա բոլոր պատվիրանները պահելու մեր ուխտերը, մենք կստանանք Նրա Հոգին որպես մեր ուղեկից: Դա կփափկացնի մեր սրտերը և կմիավորի մեզ: Սակայն կան երկու նախազգուշացումներ, որոնք գալիս են այդ խոստման հետ:

Առաջին, Սուրբ Հոգին մեզ հետ է մնում, միայն եթե մենք մաքուր ենք և ազատ ենք աշխարհի բաները սիրելուց: Անմաքուր լինելու ընտրությունը կվանի Սուրբ Հոգին: Հոգին բնակվում է միայն նրանց հետ, ովքեր ընտրում են Տիրոջը, ոչ թե՝ աշխարհը: «Եղեք մաքուր» (3 Նեփի 20.41; տե՛ս ՎԿՈ 38.42) և սիրեք Աստծուն ձեր ողջ սրտով, ուժով, մտքով և զրությամբ (տե՛ս ՎԿՈ 59.5), առաջարկություններ չեն, այլ պատվիրաններ: Եվ դրանք անհրաժեշտ են Հոգու ուղեկցությունն ունենալու համար, առանց որի մենք չենք կարող մեկ լինել:

Մյուս նախազգուշացումը հպարտությունից ազատ լինելն է: Հոգու ազդեցությամբ փափկած ընտանիքի կամ մարդկանց միությունը մեծ զորություն կպարգևի: Այդ զորության հետ կգա ճանաչումը աշխարհի կողմից: Անկախ նրանից, թե այդ ճանաչումը մեզ գովք, թե նախանձ կբերի, այն կարող է տանել դեպի հպարտություն: Դա կվիրավորի Հոգուն: Կա պաշտպանություն հպարտության դեմ, միության քայքայման այդ աղբյուրի դեմ: Դա տեսնելն է այն օրհնությունները, որոնք Աստված լցնում է մեզ վրա ոչ միայն որպես Իր բարեհաճության նշան, այլ հնարավորություն միավորվելու մեր կողքինների հետ ավելի մեծ ծառայության մեջ: Տղամարդն ու կինը սովորում են մեկ լինել, օգտագործելով նմանությունները միմյանց հասկանալու համար, և տարբերությունները միմյանց լրացնելու համար՝ ծառայելով միմյանց և իրենց շրջապատողներին: Նույն ձևով մենք կարող ենք միավորվել նրանց հետ, ովքեր չեն ընդունում մեր վարդապետությունը, սակայն կիսում են մեր Երկնային Հոր զավակներին օրհնելու մեր ցանկությունը:

Մենք կարող ենք խաղաղարարներ դառնալ, արժանի՝ կոչվելու օրհնված և Աստծո զավակներ (տե՛ս Մատթեոս Ե.9):

Աստված մեր Երկնային Հայրն ապրում է: Նրա սիրելի Որդին, Հիսուս Քրիստոսը, այս Եկեղեցու գլուխն է, և Նա բոլոր նրանց, ովքեր կընդունեն դա, Նա խաղաղության դրոշ է առաջարկում:

1998 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Այրինգի ուղերձից (see Conference Report, Apr. 1998, 85–89; or *Ensign*, May 1998, 66–68):

Սնուցել սեր և ընկերություն ամուսնության մեջ

3

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Ուսումնասիրեք Մորոնի 7.45–48: Գրեք գթության հետ կապված հատկանիշների ցուցակը, որոնք նշված են այս հատվածում: Որոշում կայացրեք զարգացնել այդ հատկանիշները ձեր կյանքում: Մտածեք, թե ինչ ճանապարհներով այդ հատկանիշները կարող են օգնել ամուսիններին և կանանց սնուցել իրենց սերն ու ընկերությունը:
- Ձեր ամուսնու հետ պլանավորեք ամեն շաբաթ առանձին ժամանակ անցկացնել: Անհրաժեշտ կլինի այդ ժամանակը պլանավորել, հիշեցումներ գրելով օրացույցի կամ տետրի մեջ:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե դուք ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու հետ:

Մեկ լինել ամուսնության մեջ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ
Եկեղեցու 12-րդ Նախագահ

Պատվարժան, երջանիկ և հաջողակ ամուսնությունը յուրաքանչյուր նորմալ մարդու հիմնական նպատակն է: Ամուսնությունը գրեթե ամենակարևորն է բոլոր որոշումներից և ունի հեռու գնացող ազդեցություն, քանի որ այն ոչ միայն անմիջական երջանկություն է պարգևում, այլ նաև հավերժական ուրախություն: Այն ազդում է ոչ միայն երկու մարդու վրա, որոնք ամուսնացած են, այլև նրանց ընտանիքների և հատկապես երեխաների և երեխաների երեխաների վրա՝ մի քանի սերունդների ընթացքում:

Կյանքի և հավերժության համար ընկեր ընտրելիս անշուշտ պետք է մանրամասն պլանավորել ու մտածել, աղոթել ու ծոմ պահել, որպեսզի բոլոր որոշումներից այս մեկը սխալ չկատարել: Իսկական ամուսնության մեջ պետք է լինի մտքերի, ինչպես նաև սրտերի միասնություն: Զգացմունքները չպետք է լիովին կառավարեն որոշումները, այլ միտքն ու սիրտը, ծոմի ու աղոթքի և լուրջ մտածելու օգնությամբ, կպարգևեն ամուսնական երջանկության առավելագույն հնարավորությունը: Այն իր հետ զոհաբերություն, նվիրում և անեսասեր լինելու մեծ պահանջ է բերում:

Հեռուստատեսային շատ ֆիլմեր և գրականության մեջ շատ պատմություններ ամուսնությամբ են ավարտվում. «Եվ նրանք ապրեցին երջանիկ»: Մենք հասկանում ենք, որ արարողության սոսկ կատարումը չի բերում երջանկություն և հաջող ամուսնություն: Երջանկությունը չի գալիս կոճակը սեղմելով, ինչպես էլեկտրական լույսը, երջանկությունը մտքի վիճակ է և գալիս է ներսից: Այն պետք է վաստակել: Այն չի կարելի գնել փողով, այն չի կարելի ինչ որ բանով փոխել:

Ոմանք երջանկության մասին մտածում են որպես հեշտ, շքեղ և անընդհատ հետաքրքրություններով լի կյանքի մասին, սակայն իսկական ամուսնությունը հիմնված է երջանկության վրա, որն ավելին է, որը գալիս է տալուց, ծառայելուց, կիսելուց, զոհաբերելուց և անեսասեր լինելուց:

Արարողությունից ոչ շատ ժամանակ անց տարբեր անցյալ ունեցող երկու անձինք հասկանում են, որ դժվարություններ կան: Չկա այլևս պատրանքների կամ հեքիաթների կյանք, մենք պետք է իջնենք ամպերից և մեր ոտքը հաստատուն դնենք գետնին: Պատասխանատվություններ պետք է ստանձնել և նոր պարտավորություններ ընդունել: Անձնական որոշ ազատություններից պետք է հրաժարվել և բազմաթիվ հարմարեցումներ, անեսասեր հարմարեցումներ, կատարել:

Ամուսնությունից հետո շուտով մարդ հասկանում է, որ ամուսինը կամ կինը թերություններ ունի, որոնք նախկինում չէին երևացել կամ հայտնաբերվել: Միրահետման ժամանակ անընդհատ մեծացող հատկանիշները այժմ ավելի դանդաղ են մեծանում, իսկ թերությունները, որոնք այդքան փոքր ու աննկատ էին թվում, այժմ մեծ քայլերով են մեծանում: Գալիս է ժամը հասկացող սրտերի, ինքնագնահատման, խելամտության, տրամաբանության և պլանավորման համար: Տարիների սովորությունները այժմ զգացնել են տալիս իրենց, ամուսինը կամ կինը կարող է լինել ժլատ կամ վատնող, ծույլ կամ աշխատասեր, հոգևոր կամ անհավատ, նա կարող է լինել բարի և համագործակցող կամ նյարդային ու շուտ բռնկվող, պահանջկոտ կամ տվող, եսասեր կամ անձնանվեր: Առաջ է գալիս ծնողների խնդիրը, և մեծանում է նրանց հետ ամուսինների հարաբերությունների դերը:

Հաճախ ցանկություն չի լինում հանդարտվել և ընդունել անմիջապես բաժին ընկած ծանր պատասխանատվությունները: Խնայողությունը դժվարությամբ է փոխարինում ճոխ ապրելակերպը, և երիտասարդները հաճախ մեծ ցանկություն են ունենում «ոտք մեկնել Ջոնսերի հետ»: Շատ

հաճախ ցանկություն չի լինում կատարել անհրաժեշտ ֆինանսական փոփոխությունները: Երիտասարդ կանայք հաճախ պահանջում են, որ իրենց հաջողակ հայրերի բարգավաճ տներում նախկինում վայելած բոլոր շքեղությունները շարունակվեն իրենց տներում: Նրանցից ոմանք պատրաստ են օգնել վաստակել այդ շքեղ կյանքը, ամուսնությունից հետո անընդհատ աշխատելու միջոցով: Նրանք անընդհատ թողնում են իրենց տները, որտեղ իրականում սպասում են նրանց պարտականությունները, մասնագիտական կամ գործարարական նպատակներ հետապնդելով, այսպիսով հիմնելով այնպիսի տնտեսություն, որ շատ դժվար է դառնում վերադառնալ նորմալ ընտանեկան կյանքի: Երբ ամուսիններից երկուսն էլ աշխատում են, ընտանիք է մուտք գործում ոչ թե համագործակցությունը, այլ մրցակցությունը: Երկու ուժասպառ աշխատող վերադառնում են տուն լարված նյարդերով, անհատական հպարտությամբ, մեծացած անկախությամբ, և այստեղ առաջանում է անհասկացողությունը: Փոքր լարումները կուտակվում են, դառնալով մեծ խնդիր:

Թեև ամուսնությունը դժվար է, իսկ անհամապատասխան ու անհաջող ամուսնությունները տարածված են, տնական երջանկությունը հնարավոր է, և ամուսնությունը կարող է լինել ավելի մեծ երջանկություն, քան մարդկային միտքը կարող է ընկալել: Դա յուրաքանչյուր զույգի, յուրաքանչյուր անձի ձեռքում է: «Իրար համար ստեղծված հոգիները» հորինվածք է և պատրանք, և որքան էլ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդ կամ կին փնտրի իր ողջ ուժերով ու աղոթքով մեկին, ում հետ կյանքն առավել հարմար և սքանչելի կլինի, ինչևէ, յուրաքանչյուր լավ տղամարդ և լավ կին կարող են երջանկություն և հաջող ամուսնություն ունենալ, եթե երկուսն էլ պատրաստ են վճարել գինը:

Կա երբեք չփոփոխվող բանաձև, որը յուրաքանչյուր զույգին կապահովի երջանիկ և հավերժական ամուսնություն, սակայն ինչպես բոլոր բանաձևերը, հիմնական բաղադրիչները չպետք է դուրս թողնվեն, պակասեցվեն կամ սահմանափակվեն: Սիրահետելուց առաջ ընտրություն կատարելը և ամուսնությունից հետո շարունակել սիրահետելը հավասարապես կարևոր են, սակայն ինքնին ամուսնությունից ավելի կարևոր չէ, որի հաջողությունը կախված է երկու անհատներից՝ ոչ թե մեկից, այլ երկուսից:

Նշված խելամիտ չափանիշներով սկսված և այդպիսի չափանիշների վրա հիմնված ամուսնության մեջ չկա ուժի այնպիսի համակցություն, որը կարող է ոչնչացնել այդ ամուսնությունը, բացի այն ուժից, որը կա ամուսիններից մեկի կամ երկուսի մեջ: Եվ նրանք պետք է ընդունեն ընդհանուր պարտականություններ: Այլ մարդիկ կամ գործակալություններ կարող են լավ կամ վատ ազդեցություն ունենալ: Ֆինանսական, հասարակական, քաղաքական կամ այլ իրավիճակներ կարող են դժվար թվալ, սակայն ամուսնությունը նախևառաջ և ընդմիշտ կախված է երկու ամուսիններից, որոնք միշտ կարող են իրենց ամուսնությունը հաջող և երջանիկ դարձնել, եթե նրանք վճռական են, անեսասեր և արդար:

Բանաձևը հասարակ է, բաղադրիչները քիչ, թեև ամեն մեկի մեջ շատ տարրեր կան:

Առաջին, ամուսնության հանդեպ պետք է պատշաճ մոտեցում լինի, ինչը ենթադրում է այնպիսի ամուսնու ընտրություն, որը որքան հնարավոր է մոտ է կատարելությանը բոլոր հարցերում, որոնք կարևոր են այդ անձանց համար: Եվ ապա այդ երկու կողմերը պետք է գան տաճարի սեղանի դիմաց, հասկանալով, որ իրենք պետք է շատ աշխատեն իրենց հաջող միասնական կյանքի համար:

Երկրորդ, պետք է առկա լինի մեծ անձնազոհություն, ինքնամոռացություն և ցանկություն՝ ուղղորդելու ընտանեկան ողջ կյանքը և դրա հետ կապված ամեն ինչը դեպի ընտանիքի օգուտը, հաղթահարելով եսը:

Երրորդ, պետք է միշտ լինի շարունակական սիրահետում և հիացմունքի, բարության արտահայտում և սերը կենդանի ու աճող պահելու միտում:

Չորրորդ, պետք է լիովին ապրել Տիրոջ պատվիրաններով, ինչպես սահմանված է Հիսուս Քրիստոսի ավետարանում:

Եթե այդ բաղադրիչները ճիշտ ձևով խառնվեն և միշտ գործի մեջ պահվեն, հնարավոր չէ, որ երջանկություն չլինի, անհասկացողությունը շարունակվի կամ բաժանումներ լինեն: Ապահարզանի գծով դատապաշտպանները ստիպված կլինեն տեղափոխվել այլ բնագավառներ, իսկ ապահարզանի դատարանները կփակվեն:

Ամուսնության սեղանին մոտեցող երկու անձնինք պետք է հասկանան, որ երջանիկ ամուսնություն ունենալու համար, որի համար նրանք հույս են տածում, պետք է իմանան, որ ամուսնությունը ոչ թե իրավական գործողություն է, այլ այն նշանակում է զոհաբերություն, նվիրում և անգամ անձնական որոշ ազատություններից հրաժարում: Այն նշանակում է երկարատև և դժվար խնայողություն: Այն նշանակում է երեխաներ, որոնք իրենց հետ ֆինանսական, ծառայության, խնամքի և մտահոգությունների բեռներ են բերում, սակայն այն նաև նշանակում է ամենախորը և ամենաքաղցր զգացմունքները:

Ամուսնությունից առաջ յուրաքանչյուր անհատ ազատ է գնալու ու գալու, ինչպես իրեն է հաճելի, կազմակերպելու և անցկացնելու իր կյանքը, ինչպես ցանկանում է, կայացնելու բոլոր որոշումները ինքնուրույն: Սիրահարները միմյանց երդում տալուց առաջ պետք է հասկանան, որ յուրաքանչյուրը բառացիորեն և լիովին պետք է ընդունի, որ փոքրիկ նոր ընտանիքի բարեկեցությունը պետք է լինի ավելին, քան յուրաքանչյուր ամուսնու առանձին բարեկեցությունը: Յուրաքանչյուր կողմ պետք է վերացնի «ես» և «իմ» արտահայտությունները և փոխարինի դրանք «մենք» և «մեր» արտահայտություններով: Ամեն որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվի, որ այն ազդում է երկու կամ ավելի մարդկանց վրա: Կարևոր որոշումների դիմաց կանգնած կինը պետք է մտածի, թե ինչպես դրանք կազդեն ծնողների, երեխաների, տան և իրենց հոգևոր կյանքի վրա: Տղամարդու ընտրությունները աշխատանքի, հասարակական կյանքի, ընկերների, հետաքրքրությունների մեջ պետք է դիտվեն այս տեսանկյունից, որ նա միայն ընտանիքի մաս է, և պետք է հաշվի առնել ողջ խմբի կարիքները:

Ամուսնությունը չի կարող միշտ լինել հարթ և առանց միջադեպերի, սակայն այն կարող է լինել մեծ խաղաղու-

թյան մեջ: Զույգը կարող է լինել աղքատության, հիվանդության, հիասթափության, անհաջողությունների մեջ, տեսնել մահ ընտանիքում, սակայն անգամ այդ ամենը չի կարող վերցնել նրանցից խաղաղությունը: Ամուսնությունը հաջողակ կլինի, քանի դեռ եսասիրությունը մուտք չի գործել այնտեղ: Մտահոգությունները և խնդիրները ծնողներին կմոտեցնեն միմյանց, ստեղծելով անկոտրում միություններ, եթե եսասիրությունը ի սպառ բացակայում է: 1930-ականների ճգնաժամի ժամանակ նկատվեց ապահարզանների թվի որոշակի անկում: Աղքատությունը, անհաջողությունները, հիասթափությունը միմյանց կապեցին ծնողներին: Դժվարությունները կարող են ամրացնել հարաբերությունները, իսկ բարգավաճումը կարող է ոչնչացնել դրանք:

Եսասիրության վրա հիմնված ամուսնությունը ենթակա է տապալման: Նա, ով ամուսնանում է հարստության կամ համբավի, կամ հասարակական դիրքի համար, անշուշտ հիասթափվելու է: Նա, ով ամուսնանում է, բավարարելու համար իր ինքնասիրությունն ու հպարտությունը, կամ ինչոր մեկին հակառակ կամ ցուցադրելու համար, խաբում է ինքն իրեն: Բայց նա, ով ամուսնանում է երջանկություն տալու և ստանալու, ծառայություն մատուցելու և ստանալու համար, և ով մտածում է երկուսի և ապա ընտանիքի շահերի մասին, լավ հնարավորություններ ունի երջանիկ ամուսնություն ունենալու համար:

Սերը նման է ծաղկի, և մարմնի պես այն անընդհատ սնուցման կարիք ունի: Մահկանացու մարմինը շուտով կթուլանա և կմահանա, եթե չստանա անընդհատ սնուցում: Նուրբ ծաղիկը կթառամի և կմահանա առանց սննդի ու ջրի: Նույնը սերը, չի կարող տևել հավերժ, եթե անընդհատ չսնուցվի սիրո բաժիններով, գնահատանքի ու հիացմունքի արտահայտումներով, երախտագիտության և անձնազոհության դրսևորումներով:

Լիովին անձնազոհ լինելը անշուշտ մեկ այլ կարևոր գործոն է հաջողակ ամուսնության համար: Եթե որևէ մեկը անընդհատ ձգտում է ապահովել մյուսի շահերը, հարմարավետությունը և երջանկությունը, սիրահետման մեջ գտած և ամուսնությամբ ամրացված սերը մեծ քայլերով կաճի: Շատ զույգեր թույլ են տալիս, որ իրենց ամուսնությունը հնանա, իսկ սերը սառչի, ինչպես հնացած հացը կամ մաշված կատակները կամ սառը սոուսը: Անշուշտ սիրո ամենակենդանի սնունդը հոգատարությունն է, բարությունը, հասկացողությունը, մտահոգությունը, նվիրումը, գնահատանքը, հիացմունքը, հպարտությունը, ընկերակցությունը, վստահությունը, հավատը, ընկերությունը, հավասարությունը և փոխադարձ կախվածությունը:

Ամուսնության մեջ իսկապես երջանիկ լինելու համար պետք է անընդհատ հավատքով պահել Տիրոջ պատվիրանները: Ոչ ոք՝ լինի ամուրի, թե ամուսնացած, չի եղել իսկապես երջանիկ, եթե արդարակյաց չի ապրել: Կան ժամանակավոր բավարարվածություններ և պահի թաքնված իրավիճակներ, սակայն մշտական լիարժեք երջանկությունը կարող է գալ միայն մաքուր և արժանի լինելու արդյունքում: Նա, ով հավատացյալի կյանքով է ապրում և կրոնական խորը համոզմունքներ ունի, երբեք չի կարող երջանիկ լինել ոչ ակտիվ կյանք ապրելով: Խիղճը կշարունակի անհանգստացնել, մինչև որ բթանա, ինչի դեպքում ամուսնությունը արդեն վտանգի տակ կլինի: Տանջող խիղճը կյանքն անտանելի կդարձնի: Ոչ ակտիվ կյանքը կործանիչ է ամուսնություն համար, հատկապես, երբ կողմերը տարբեր չափով են ոչ ակտիվ:

Կրոնական տարբերությունները ամենաբարդն են և ամենադժվար լուծելին:

Ամուսնությունը կարգված է Աստծո կողմից: Դա սոսկ հասարակական ավանդույթ չէ: Առանց պատշաճ և հաջող ամուսնության, ոչ ոք երբեք չի վեհացվի: Կարդացեք ձեր Տիրոջ խոսքերն այն մասին, որ ամուսնանալը ճիշտ է և պետք:

Մտածող և խելացի Վերջին Օրերի Սուրբը խնամքով կպլանավորի իր կյանքը, որպեսզի իր ճանապարհին խոչընդոտներ չլինեն: Մեկ լուրջ սխալ կատարելու դեպքում, կարելի է այնպիսի խոչընդոտներ դնել ճանապարհին, որոնք երբեք հնարավոր չի լինի վերացնել և որոնք կփակեն հավերժական կյանք և աստվածություն, այսինքն՝ դեպի մեր վերջնական ճակատագիրը տանող ճանապարհը: Եթե երկու մարդ սիրում են Տիրոջը ավելի, քան իրենց սեփական կյանքը, լիարժեք ներդաշնակության մեջ աշխատելով միասին ավետարանի ծրագրի հետ, որն իրենց հիմնական կառուցվածքն է, նրանք անշուշտ կունենան այդ մեծ երջանկությունը: Երբ ամուսինն ու կինը հաճախ են միասին գնում սուրբ տաճար, ծնկի իջնում միասին աղոթքի մեջ տանը, ընտանիքի հետ, ձեռք-ձեռքի տված գնում են իրենց կրոնական հավաքներին, իրենց կյանքը լիովին մաքուր են պահում, և մտավոր, և ֆիզիկական առումով, այնպես որ իրենց բոլոր մտքերը ու ցանկությունները, և սերը կենտրոնացած լինեն մեկ էակի՝ իրենց զուգընկերոջ շուրջ, և երկուսն էլ միասին աշխատում են Աստծո արքայությունը կառուցելու համար, ապա երջանկությունն իր գագաթնակետին է հասնում:

Երբեմն ամուսնության մեջ կան այլ շերտեր, չնայած որ Տերն ասել է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի» (տե՛ս ՎԿՈ 42.22):

Դա լիովին նշանակում է, որ դու պետք է սիրես ամուսնուդ քո ողջ սրտով և հարես նրան և ուրիշ ոչ մեկի: Հաճախ մարդիկ շարունակում են կառչել իրենց մայրերից և հայրերից, կամ ընկերներից: Երբեմն մայրերը չեն հրաժարվում իրենց երեխաների վրա ունեցած իրենց ազդեցությունից, և ամուսինները, ինչպես նաև կանայք վերադառնում են իրենց մայրերի ու հայրերի մոտ խորհուրդ և վստահություն ստանալու համար, թեև հարելը պետք է լինի ամուսնուն գրեթե բոլոր բաներում, և բոլոր անձնական հարցերը պետք է պահվեն գաղտնի և հեռու մյուսներից:

Զույգերը պետք է անմիջապես գտնեն իրենց առանձին տունը, առանձին ծնողներից: Տունը կարող է լինել շատ համեստ և չճչացող, բայց այն անկախ բնակավայր է: Ձեր ամուսնական կյանքը պետք է անկախ լինի կնոջ և ամուսնու հարազատներից: Դուք նրանց շատ եք սիրում, դուք գնահատում եք նրանց խորհուրդը, դուք հասկանում եք նրանց հոգատարությունը, բայց դուք ձեր կյանքն եք ապրում, ձեր սեփական որոշումներով, աղոթքով մտածելով նրանից հետո,

երբ խորհուրդ եք ստանում նրանցից, ովքեր պետք է տան այն: Հարել չի նշանակում պարզապես զբաղեցնել նույն տունը, դա նշանակում է լինել մոտ, կպչել միմյանց:

«Ուստի, օրինական է, որ . . . երկուսով լինեն մեկ մարմին, և այս բոլորը, որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը.

Եվ որպեսզի այն լրացնի մարդկանց քանակը, աշխարհի արարումից առաջ նրանց ստեղծման համաձայն» (ՎԿՈ 49:16–17):

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, թույլ տվեք ասել, որ սա Տիրոջ խոսքն է: Դա շատ, շատ լուրջ է և չկա ինչ-որ մեկը, որը կարող է հակադրվել Տիրոջը: Նա է ստեղծել երկիրը, Նա է ստեղծել մարդկանց: Նա գիտի պայմանները: Նա կազմել է ծրագիրը, իսկ մենք բավականին խելացի չենք, որպեսզի կարողանանք վիճել նրա հետ այդ կարևոր հարցերում: Նա գիտի, թե ինչն է ճիշտ ու ճշմարիտ:

Մենք ձեզ խնդրում ենք մտածել այս բաների մասին: Համոզվեք, որ ձեր ամուսնությունը ճիշտ է: Համոզվեք, որ ձեր կյանքը ճիշտ է: Համոզվեք, որ ամուսնության ձեր մասը ճիշտ ուղղությամբ եք տանում:

From the March 1977 *Ensign,* pages 3–5.

Արձագանքել ամուսնական խնդիրներին

4

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ մի քանիսին:

- Ստորև տրված ընթերցման հանձնարարության մեջ Երեց Լին Գ. Ռոբինսը տալիս է «աղետի բաղադրատոմսը»: Կարդացեք այս էջի վրա տրված նրա նկարագրությունը: Ապա բաղադրատոմս հնարեք տան ներդաշնակության համար: Որոշեք, թե ինչ բաղադրիչներ դուք պետք է ընդգրկեք այդ բաղադրատոմսի մեջ:
- Պարտավորվեք խնդիրներին արձագանքել համբերատարությամբ և սիրով, ոչ թե զայրույթով: Որոշեք, ինչ կարող եք անել, որը ձեզ հաճախ կհիշեցնի ձեր որոշման մասին: Օրինակ, դուք կարող եք մետաղադրամ կամ որևէ այլ փոքր իր դնել ձեր կոշիկի մեջ կամ ձեզ համար թղթի վրա գրել հիշեցում և պահել գրպանում:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու հետ:

Ընտրության ազատություն և զայրույթ

Երեց Լին Գ. Ռոբինս
Յոթանասունական

Սատանան ընտանիքներում զայրույթ է բորբոքում

«Ես ընտանիք ունեմ այստեղ երկրի վրա: *Նրանք այնքան բարի են իմ հանդեպ»:* Դա ամեն երեխայի հույսն է, որ արտահայտված է մեր օրհներգերից մեկում (“Families Can Be Together Forever,” *Hymns,* no. 300; italics added):

Ընտանիքի մասին հայտարարության մեջ մենք կարդում ենք, որ «ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում», և որ «ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց համար» և «դաստիարակելու երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102):

Ընտանիքը նաև Սատանայի առաջնային թիրախն է: Նա պատերազմ է առաջացնում ընտանիքում: Նրա նախագծերից մեկով նա ստով և խորամանկությամբ ներթափանցում է թշնամու դիրքերը և մտնում մեր տուն և կյանք:

Նա վնասում և հաճախ քայքայում է ընտանիքները մեր սեփական տների ներսում: Նրա ռազմավարությունն է *զայրույթ* առաջացնել ընտանիքի անդամների մոտ: Սատանան հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ» (3 Նեփի 11.29; շեղագիրն ավելացված է): *Դրդել* բառը հնչում է ինչպես աղետի բաղադրատոմս: Դրեք զգացմունքները դանդաղ կրակի վրա, խառնեք մի քանի ընտրված խոսքեր, և հասցրեք մինչև եռման աստիճան, շարունակեք խառնել, մինչև պնդանալը, սառեցրեք, մի քանի օր զգացմունքները սառը թողեք, մատուցեք սառը վիճակում, լիքը մնացորդներ կլինեն:

Մենք կարող ենք որոշել չզայրանալ

Նրա ռազմավարության խորամանկ մասն է առանձնացնել զայրույթը ընտրության իրավունքից, մեզ ստիպելով հավատալ, որ մենք այնպիսի զգացմունքի զոհ ենք, որը չենք կարող կառավարել: Մենք լսում ենք. «Ես կորցրեցի իմ համբերությունը»: Համբերություն կորցնելը խոսքերի հետաքրքիր ընտրություն է, որը շատ տարածված օգտագործում ունեցող արտահայտություն է դարձել: «Ինչ-որ բան կորցնել» նշանակում է անել «առանց միտումի», «պատահաբար», «ոչ կամավոր», «անպատասխանատու», մի գուցե «անզգույշ, ոչ թե անպատասխանատու»:

«Նա ինձ կատաղեցրեց»: Սա մեկ այլ արտահայտություն է, որը մենք լսում ենք, որը նույնպես նշանակում է ինքնատիրապետման կամ ազատության կորուստ: Սա հորինվածք է, որը պետք է ջրի երես հանվի: Ոչ ոք մեզ չի կարող կատաղեցնել: Ուրիշները մեզ չեն կատաղեցնում: Այստեղ չկա որևէ այլ արտաքին ուժ: Զայրանալը բանական ընտրություն է, որոշում, այսպիսով, մենք կարող ենք որոշել չզայրանալ: *Մենք* ենք ընտրում:

Նրանց, ովքեր ասում են. «Բայց ես չեմ կարող», հեղինակ Վիլիամ Վիլբանկսը պատասխանում է. «Անհեթեթություն»:

«Ագրեսիան, . . . զայրույթը զսպելը, դրա մասին խոսելը, գոռալն ու բղավելը», զայրույթը հաղթահարելու ձեռքբերված եղանակներ են: «Մենք *ընտրում* ենք այն, որը արդյունավետ է եղել մեզ համար անցյալում: Երբևէ նկատե՞լ եք, թե որքան հազվադեպ ենք մենք կորցնում ինքնատիրապետումը, երբ ղեկավարն է ճնշում, և որքան հաճախ, երբ նյարդայնացնում են ընկերները կամ ընտանիքի անդամները» (“The New Obscenity,” *Reader’s Digest,* Dec. 1988, 24; italics added):

Իր պատանի տարիներին Վիլբանկսը փորձեց խաղալ դպրոցի բարձր դասարանների բասկետբոլի թիմում և արեց դա: Պարապմունքների առաջին օրը մարզիչը նրան խնդրեց

մենակ խաղալ, մինչև ողջ թիմը դիտում էր: Երբ նա չկարողացավ գցել մի հեշտ գնդակ, զայրացավ, ոտքերը խփեց գետնին և տրտնջաց: Մարզիչը մոտեցավ նրան և ասաց. «Եթե դու մեկ էլ նման տեսարան սարքես, երբեք չես խաղա իմ թիմում»: Հաջորդ երեք տարիների ընթացքում նա երբեք այլևս չկորցրեց ինքնատիրապետումը: Տարիներ անց, հիշելով այդ միջադեպը, նա հասկացավ, որ մարզիչն այդ օրը նրան կյանքը փոխող սկզբունք էր սովորեցրել՝ զայրույթը կարելի է կառավարել (see "The New Obscenity," 24):

Տիրոջ ուսմունքները

Եփեսացիս Դ.26-ի Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ Պողոսը հարց է տալիս. «Կարո՞ղ ես դու զայրանալ ու մեղք չգործել»: Տերը հստակ ասել է այս հարցի վերաբերյալ.

«Նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ:

Ահա, սա իմ վարդապետությունը չէ՝ բարկության դրդել մարդկանց սրտերը մեկմեկու դեմ. այլ այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պետք է վերացվեն» (3 Նեփի 11.29–30):

Տիրոջից ստացած այդ վարդապետությունն ու պատգամը ենթադրում է, որ ընտրության ազատությունը և բանական միտքը պետք է օգտագործել որոշում կայացնելիս: Տերն ակնկալում է, որ մենք որոշում կայացնենք *չզայրանալ*:

Ոչ էլ զայրանալն է արդարացվում: Մատթեոս Ե.22-ում Տերն ասում է. «Բայց ես ասում եմ ձեզ թե ամեն ով որ *զուր տեղը* բարկանա իր եղբորը, պարտական կլինի դատաստանին» (շեղագիրն ավելացված է): Որքան հետաքրքիր է, որ «զուր տեղը» արտահայտությունը բացակայում է Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված Թարգմանության մեջ (տե՛ս Մաթեոս Ե.24), ինչպես նաև 3 Նեփի 12.22 տարբերակում: Երբ Տերը հանում է «զուր տեղը» արտահայտությունը, Նա մեզ ներում չի թողնում: «Այլ այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պետք է վերացվեն» (3 Նեփի 11.30): Մենք կարող ենք «վերացնել» բարկությունը, քանզի Նա այդպես է մեզ սովորեցրել և պատվիրել:

Զայրույթը տեղի է տալիս Սատանայի ազդեցությանը

Զայրույթը տեղի է տալիս Սատանայի ազդեցությանը, քանի որ զրկում է ինքնատիրապետումից: Մտքով գործված մեղքն է, որ տանում է դեպի թշնամական զգացմունքների կամ պահելաձևի: Դա պայթուցիկ նյութն է մայրուղիներին բարկանալու, սպորտային արենայում ինքնատիրապետումը կորցնելու և տանը բռնություն գործադրելու համար:

Առանց հսկողության զայրույթը կարող է դաժան խոսքերի կամ զգացմունքային բռնության այլ ձևերի արագ պայթյուն առաջացնել, ինչը կարող է վիրավորել նուրբ սիրտը: Ոչ թե բերանը մտնողն է պղծում մարդին, այլ բերանիցը դուրս եկողը՝ նա է պղծում մարդին» (Մատթեոս ԺԵ.11):

Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Թող որ ամուսինն ու կինը երբեք բարձր տոնով չխոսեն իրար հետ, եթե միայն «տունը հրեղեհի մեջ չէ»» (*Stepping Stones to an Abundant Life*, comp. Llewelyn R. McKay [1971], 294):

Ֆիզիկական բռնությունը հսկողությունից դուրս եկած զայրույթ է և երբեք չի կարող արդարացվել կամ արդար լինել:

Զայրույթը մեկ ուրիշին մեղավոր ճանաչելու կամ նրան կոպիտ ճանապարհով ուղղելու ոչ քաղաքավարի փորձ է: Այն հաճախ սխալ կոչվում է պատիժ, սակայն միշտ հակառակ արդյունքն է տալիս: Դրա համար են տրված սուրբ գրությունների նախազգուշացումները: «Մարդիկ, սիրեցեք ձեր կանանցը, և դառն մի լինիք նորանց դեմ» և «Հայրեր մի զայրացնեք ձեր որդկանցը, որ չվհատին» (Կողոսացիս Գ.19, 21):

«Ես երբեք այլևս չեմ զայրանա»

Ընտրությունն ու պատասխանատվությունը անբաժանելի սկզբունքներ են: Քանի որ զայրույթը ընտրություն է, գոյություն ունի զորեղ նախազգուշացում հայտարարության մեջ, «որ անհատները . . . որոնք բռնանում են կնոջը, կամ երեխաներին, . . . մի օր պատասխան կտան Աստծո առաջ»:

Ընտրության ազատության և զայրույթի միջև կապը հասկանալով կարելի է զայրույթը վերացնել մեր կյանքից: Մենք կարող ենք որոշել չզայրանալ: Եվ մենք կարող ենք ընդունել այդ որոշումն այսօր, հենց հիմա. «Ես երբեք այլևս չեմ զայրանա»: Խորհեք այս որոշման շուրջ:

Վարդապետություն և Ուխտեր 121-րդ բաժինը ղեկավարման ճիշտ սկզբունքները սովորելու լավագույն աղբյուրներից է մեզ համար: Միգուցե 121-րդ բաժնի առավել կարևոր կիրառումը ամուսինների և ծնողների համար է: Մենք պետք է ղեկավարենք մեր ընտանիքները համոզումով, համբերատարությամբ, մեղմությամբ, բարությամբ և խոնարհությամբ և անկեղծ սիրով (տե՛ս ՎԿՈ 121.41–42):

Թող որ այստեղ երկրի վրա լավ ընտանիք ունենալու յուրաքանչյուր երեխայի երազանքն իրականանա:

1998 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Ռոբինսի ուղերձից (see Conference Report, Apr. 1998, 105–6; or *Ensign*, May 1998, 80–81):

Արձագանքել խնդիրներին դրական հաղորդակցման միջոցով

5

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Ստորև տրված ընթերցման հանձնարարության մեջ Երեց Ջո Ջ. Քրիսչենսենը նկատում է. «Շատ քչերն են փոխվում շարունակ քննադատության կամ տրտջնջոցի արդյունքում: Եթե մենք զգույշ չլինենք, ապա այն, ինչ մենք կոչում ենք *կառուցողական* քննադատություն, իրականում կարող է *քայքայող* լինել: Երբեմն ավելի լավ է որոշ բաներ չասված մնան» (տես էջ 19): Հաջորդ շաբաթ մեծ ուշադրություն դարձրեք այն ամենին, ինչ մտածում կամ ասում եք ուրիշների մասին: Աշխատեք այն ամենում, ինչ ասում եք, լինել բարի և ոգևորող:
- Հիացմունքի արժանի հատկանիշներ գտեք ձեր ամուսնու մեջ: Կազմեք այդ հատկանիշների ցանկը և կիսվեք դրանով ձեր ամուսնու հետ:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ամուսնությունը և Երջանկության Մեծ Ծրագիրը

Երեց Ջո Ջ. Քրիսչենսեն
Յոթանասունական

Ես և Բարբարան օրհնված ենք վեց զավակներով: Մի քանի տարի առաջ, երբ մենք նրանց բոլորին տարանք տատիկի ու պապիկի մոտ, հայրս ասաց. «Ջո, կարծում եմ դու և Բարբարան սկսել եք մի բան ու չեք կարողանում կանգ առնել»:

Ջատկի այս ժամանակ մենք ողջ աշխարհին հայտարարում ենք, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Նրա սուրբ քահանայության և կնքող զորության միջոցով ամուսնություններն ու ընտանիքները երբեք չպետք է կանգ առնեն, երբեք չպետք է վերջին հասնեն:

Այսօր ես ցանկանում եմ ձեր բոլորիդ հետ խոսել մեր ամուսնությունների մասին: Ահա ութ գործնական խորհուրդ, որոնք, հուսով եմ, արժեքավոր կլինեն այժմ և ապագայում ձեր ամուսնությունները ամրացնելու համար:

Հիշեք ամուսնության կարևորությունը

1. Հիշեք ձեր ամուսնության կարևորության մասին: Լսեք Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի այս խոսքերը՝ մեր Երկնային Հոր «երջանկության մեծ ծրագրում» ամուսնության կարևորության մասին (Ալմա 42.8):

«Ծննդյան պահից սկսած մինչև այն ժամանակ, երբ մենք ամուսնանում ենք տաճարում, այն ամենը, ինչ մենք ունենք ավետարանի ողջ համակարգում նախապատրաստում և արժանացնում է մեզ մտնելու այդ սուրբ կարգի դաշինքի մեջ, որը մեզ ամուսին և կին է դարձնում այս կյանքում և գալիք աշխարհում . . .

Չկա այս աշխարհում ավելի կարևոր բան, քան ընտանեկան միավորների ստեղծումն ու կատարելագործումը» (“Salvation Is a Family Affair,” *Improvement Era,* June 1970, 43–44):

Աղոթեք ձեր ամուսնության հաջողության համար

2. Աղոթեք ձեր ամուսնության հաջողության համար: Տարիներ առաջ, երբ Բարձրագույն Իշխանությունները սովորություն ունեին շրջագայել միսիայով և զրուցել բոլոր միսիոներների հետ, Երեց Սպենսեր Վ. Քիմբալը, որն այդ ժամանակ Տասներկուսի Քվորումի անդամ էր, այցելել էր մի երեցի, որը շուտով ավարտում էր իր միսիան:

«Երբ դուք ազատվեք, երե՛ց, ի՞նչ ծրագրեր ունեք»

«Օ՜, ես պատրաստվում եմ վերադառնալ քոլեջ»: Ապա ժպիտը դեմքին ավելացրեց. «Ապա ես հույս ունեմ սիրահարվել և ամուսնանալ»:

Երեց Քիմբալը տվեց այս իմաստուն խորհուրդը. «Լավ, բայց մի աղոթիր միայն նրա համար, որ ամուսնանաս նրա հետ, ում սիրում ես: *Փոխարենը աղոթիր նրա համար, որ սիրես նրան, ում հետ ամուսնանում ես»:*

Մենք պետք է աղոթենք, որպեսզի դառնանք ավելի բարի, բարեկիրթ, խոնարհ, համբերատար, ներող, և *հատկապես*, ավելի քիչ եսասեր:

Մեր անհատական խնդիրները կամ թերությունները հասկանալու համար, որոնք խանգարում են մեզ ավելի լավ ամուսնական գործընկերներ դառնալուց, մենք պետք է գանք Տիրոջ մոտ աղոթքի մեջ և օգտվենք Մորմոնի Գրքի այս զորեղ խոստման առավելություններից. «Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: . . . եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև,

և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

Այդպես էլ աղոթելու կարիքն է: Եկեղեցու շատ ղեկավարներ և ամուսնական խորհրդատուներ նշել են, որ չեն տեսել որևէ ամուսնական զույգի լուրջ խնդիրների մեջ, քանի դեռ զույգը միասին ամեն օր աղոթում է: Երբ խնդիրներ են առաջանում և ամուսնությունները վտանգի տակ են լինում, միասին աղոթելը կարող է ամենակարևոր բուժումը լինել:

Լսեք ձեր ամուսնուն

3. Լսեք: Ժամանակ տրամադրեք ձեր ամուսնուն լսելու համար, անգամ կարող եք պլանավորել դա պարբերաբար: Նստեք միմյանց հետ և գնահատեք ձեր ամուսնական կյանքը:

Եղբայր Բրենտ Բարլոուն քահանայության եղբայրների մի խմբի հարց է տվել. «Ձեզանից քանի՞սը կցանկանային հայտնություն ստանալ»: Բոլոր ձեռքերը վեր բարձրացան: Ապա նա առաջարկեց, որ նրանք բոլորը գնան տուն և հարցնեն իրենց կանանց, թե ինչպես կարող են ավելի լավ ամուսիններ լինել: Նա ավելացրեց. «Ես հետևեցի իմ սեփական խորհրդին և ցերեկը մոտ մեկ ժամ տևողությամբ շատ օգտակար զրույց ունեցա իմ կնոջ՝ Սյուզանի հետ» (“To Build a Better Marriage,” *Ensign,* Sept. 1992, 7): Նման զրույցը կարող է հայտնություն լինել մեզանից յուրաքանչյուրի համար:

Եղբայրնե՛ր, ձեզանից ոմանք, լսե՞լ են արդյոք ձեր կանանցից նման մի բան, ինչը ես վերջերս լսեցի. «Ջո, դու լսո՞ւմ ես ինձ»: Նա միակը չէր, որ հարցնում էր, թե արդյոք ես լսում էի: Որոշ ժամանակ առաջ ես քնած էի և մեր փոքրիկ թոռնիկը՝ Էլիսոնը, եկավ և բարձրացրեց իմ աչքերից մեկի կոպը և ասաց. «Պապի՛կ, դու այստե՞ղ ես»: Մենք պետք է «տեղում» լինենք և արձագանքենք մեր զուգընկերոջը:

Խուսափեք անվերջ բողոքելուց

4. Խուսափեք անվերջ բողոքելուց: Շատ մի քննադատեք մեկդ մյուսի սխալները: Ընդունեք, որ մեզանից ոչ ոք կատարյալ չէ: Մենք բոլորս երկար ճանապարհ ունենք անցնելու, որպեսզի Քրիստոսանման դառնանք, ինչպես մեր ղեկավարներն են մեզ կոչ անում:

Անվերջ բողոքելը, ինչպես այն կոչում է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը, կարող է քայքայել գրեթե ցանկացած ամուսնություն (“Marriage and Divorce,” *1976 Devotional Speeches of the Year* [1977], 148): Ընդհանուր առմամբ մենք բոլորս տեղյակ ենք մեր սեփական թերություններից, և կարիք չունենք հաճախակի հիշեցումների: Շատ քչերն են փոխվում շարունակ քննադատության կամ տրտնջոցի արդյունքում: Եթե մենք զգույշ չլինենք, ապա այն, ինչ մենք կոչում ենք *կառուցողական* քննադատություն, իրականում կարող է *քայքայող* լինել:

Երբեմն ավելի լավ է որոշ բաներ չասված մնան: Լինելով նորապսակ Քույր Լոլա Վոլթերսը մի ամսագրի մեջ կարդում է, որ ամուսնությունը ամրացնելու համար զույգերը պետք է պարբերաբար ու անկեղծ զրույցներ ունենան, որոնց ժամանակ պետք է թվարկեն բոլոր շարժուձևերը, որոնք նյարդայնացնող են իրենց համար: Նա գրում է.

«Մենք պետք է նշեինք հինգ բան, որոնք նյարդայնացնող էին, և ես սկսեցի: . . . Ես նրան ասացի, որ չեմ սիրում, թե ինչպես է նա գրեյպֆրուտ ուտում: Նա մաքրում և ուտում է այն նարնջի նման: Ես երբևիցե չեմ տեսել, որ որևէ մեկն այդպես ուտի գրեյպֆրուտը: Կարո՞ղ է արդյոք որևէ աղջիկ անցկացնի իր ողջ կյանքը, անգամ հավերժությունը, մի մարդու հետ, որն ուտում է գրեյպֆրուտը նարնջի նման: . . .

Երբ ես ավարտեցի, նրա հերթն էր ասել այն, ինչը նրա դուրը չէր գալիս իմ մեջ: Նա ասաց. «Դե, ճիշտն ասած, չկա մի բան, որ ես քո մեջ չսիրեմ, սիրելիս»:

Ես ապշել էի:

Ես արագ շրջվեցի, որովհետև չգիտեի, թե ինչպես բացատրել այն արցունքները, որ լցրեցին աչքերս և հոսում էին իմ դեմքով»:

Քույր Վոլթերսը այսպես է ավարտում. «Երբ ես լսում եմ անհամապատասխան ամուսնական զույգերի մասին, միշտ մտածում եմ, թե արդյոք նրանք չե՞ն տառապում Գրեյպֆրուտի Սինդրոմով, ինչպես ես դա այժմ կոչում եմ» (“The Grapefruit Syndrome,” *Ensign,* Apr. 1993, 13):

Այո, երբեմն, ավելի լավ է որոշ բաներ չասված մնան:

Կենդանի պահեք ձեր սիրահետումը

5. Կենդանի պահեք ձեր սիրահետումը: Ժամանակ գտեք միասին ինչ-որ բան անելու, միայն դուք երկուսով: Որքան էլ որ կարևոր է ընտանիքով երեխաների հետ միասին լինելը, դուք շաբաթական ժամանակ պետք է տրամադրեք երկուսով մենակ լինելու համար: Դա պլանավորելը թույլ կտա ձեր երեխաներին հասկանալ, որ ձեր ամուսնությունը կարևոր է ձեզ համար և դուք պետք է սնեք այն: Դա պահանջում է որոշում, պլանավորում և ծրագրում:

Դա պարտադիր չէ, որ թանկ լինի: Միասին անցկացրած ժամանակը ամենակարևոր տարրն է:

Մի անգամ, երբ աներս ճաշից հետո դուրս էր գալիս տնից, որ դաշտ գնա, զոքանջս ասաց. «Ալբե՛րտ, հենց հիմա վերադարձի և ասա, որ սիրում ես ինձ»: Նա քմծիծաղ տվեց ու կատակով ասաց. «Էլի՛ս, երբ մենք ամուսնանում էինք, ես ասացի, որ սիրում եմ քեզ, իսկ եթե դա երբևիցե փոխվի, ես քեզ կասեմ: Հնարավոր չէ չափից շատ օգտագործել «Ես սիրում եմ քեզ» արտահայտությունը»: Օգտագործեք այն ամեն օր:

Շտապեք ասել՝ «կներես»

6. Շտապեք ասել՝ «կներես»: Որքան էլ դժվար լինի կապել իրար բառերը, շտապեք ասել՝ «Ես ներողություն եմ խնդրում, և խնդրում եմ ներիր ինձ», նույնիսկ եթե դուք լիովին մեղավոր չեք: Ճշմարիտ սերը զարգանում է նրանց մոտ, ովքեր պատրաստ են ընդունել սեփական սխալները և վիրավորանքները:

Երբ դժվարություններ են առաջանում, կարևոր է կարողանալ քննարկել և լուծել դրանք, սակայն կան դեպքեր, երբ պարզապես ժամանակ է հարկավոր: Լեզուն կծելը և

մինչև տասը, կամ անգամ հարյուրը հաշվելը, կարևոր է: Իսկ երբեմն, եթե թույլ տաք, որ ձեր զայրույթի հետ արևը մայր մտնի, ապա առավոտյան կվերադառնաք խնդրին ավելի հանգստացած, խաղաղ և լուծման ավելի մեծ հավանականությամբ:

Երբեմն մենք լսում ենք. «Ինչո՞ւ: Մենք ամուսնացած ենք եղել հիսուն տարի և երբեք տարբեր կարծիքներ չենք ունեցել»: Եթե դա իսկապես այդպես է, ապա զույգերից մեկը իշխել է մյուսի վրա, կամ, ինչպես ինչ-որ մեկն ասել է, օտարական է ճշմարտության համար: Ցանկացած խելացի զույգ կարծիքների տարբերություն կունենա: Մեր խնդիրն է իմանալը, թե ինչպես լուծել այն: Դա լավ ամուսնությունն ավելի լավ դարձնելու գործընթացի մասն է:

Սովորեք ապրել ձեր միջոցների սահմաններում

7. Սովորեք ապրել ձեր միջոցների սահմաններում: Ամուսնության ամենաբարդ խնդիրներն առաջանում են ֆինանսների բնագավառում: «Ամերիքն Բար Ասոսիեյշնը . . . նշել է, որ բոլոր ապահարզանների 89 տոկոսը կապված է փողի շուրջ վեճերի և մեղադրանքների հետ» (Marvin J. Ashton, “One for the Money,” *Ensign,* July 1975, 72): Պատրաստ եղեք հետաձգել կամ հրաժարվել որոշ գնումներից, որպեսզի մնաք ձեր բյուջեի սահմաններում: Նախ վճարեք ձեր տասանորդը, և որքան հնարավոր է խուսափեք պարտքից: Հիշեք, որ ամսեկան ստացածից հիսուն դոլար պակաս ծախսելը հավասար է երջանկության, իսկ հիսուն դոլար ավել ծախսելը հավասար է թշվառության: Միգուցե եկել է ժամանակը վերցնել մկրատը և ձեր կրեդիտ քարտերը և, ինչպես Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն է կոչում, կատարել «պլաստիկ վիրահատություն» (“Things We Have Learned—Together,” *Ensign,* June 1986, 30):

Կիսեք տան և ընտանեկան պարտականությունները

8. Եղեք իսկական գործընկեր տան և ընտանեկան պարտականությունների մեջ: Մի՛ նմանվեք ամուսնու, որը նստած է տանը և ակնկալում է, որ իրեն սպասարկեն, կարծելով, որ փող վաստակելը իր միակ գործն է, իսկ կինը միայնակ պարտավոր է պահել տունը և խնամել երեխաներին: Տուն պահելը և երեխաներին խնամելը մեկ հոգու գործ չէ:

Հիշեք, որ դուք միասին եք այս գործի մեջ: Ես և Բարբարան հայտնաբերել ենք, որ մենք կարող ենք ամեն առավոտ հավաքել մեր անկողինը մեկ րոպեում, և դա բավական է ողջ օրվա համար: Նա ասում է, որ թույլ է տալիս ինձ դա անել, որպեսզի ես ինձ լավ զգամ ամբողջ օրը, կարծում եմ դրա մեջ ինչ-որ բան կա:

Ժամանակ գտեք միասին ուսումնասիրելու սուրբ գրությունները և հետևելու Նախագահ Քիմբալի այս լուրջ խորհրդին. «Երբ ամուսինն ու կինը հաճախ են միասին գնում սուրբ տաճար, ծնկի իջնում միասին աղոթքի մեջ տանը, ընտանիքի հետ, ձեռք-ձեռքի տված գնում են իրենց կրոնական հավաքներին, իրենց կյանքը լիովին մաքուր են պահում, և մտավոր, և ֆիզիկական առումով, այնպես որ իրենց բոլոր մտքերը ու ցանկությունները, և սերը կենտրոնացած լինեն մեկ էակի՝ իրենց զուգընկերոջ շուրջ, և երկուսն էլ միասին աշխատում են Աստծո արքայությունը կառուցելու համար, ապա երջանկությունն իր գագաթնակետին է հասնում» (*Marriage and Divorce* [1976], 24):

Ամփոփելով.

- Հիշեք ձեր ամուսնության կարևորությունը:
- Աղոթեք դրա հաջողության համար:
- Լսեք:
- Խուսափեք անվերջ բողոքելուց:
- Կենդանի պահեք ձեր սիրահետումը:
- Շտապեք ասել՝ «կներես»:
- Սովորեք ապրել ձեր միջոցների սահմաններում:
- Եղեք իսկական գործընկեր տան և ընտանեկան պարտականությունների մեջ:

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, որ գերեզմանը դատարկ էր երրորդ օրը, և որ «քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (Ա Կորնթացիս ԺԵ.22): Այսպիսով Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի կնքող ուժի հանդեպ երախտագիտություն տածելով ես կարող եմ վստահությամբ ասել բանաստեղծի հետ. «Ես քեզ ավելի շատ կսիրեմ մահից հետո» (Elizabeth Barrett Browning, *Sonnets from the Portuguese,* no. 43, line 14):

1995 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Քրիսչենսենի ուղերձից (տե՛ս Conference Report, Apr. 1995, 84–87; or *Ensign*, May 1995, 64–66):

Ամրացնել ամուսնությունը հավատքի և աղոթքի միջոցով

6

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Որոշեք անել մի բան, որը կամրացնի ձեր հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Ամեն օր ժամ նշանակեք ձեր ամուսնու կամ կնոջ հետ աղոթելու համար:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ուրախություն գտնել կյանքում

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորում

Բազմազանություն և մշտականություն

Վերջերս լուսադեմին ես կանգնած էի Խաղաղ օվկիանոսյան սքանչելի մի կղզու հյուսիսային ափին և նայում էի ծովին: Ես զարմացած էի, թե ինչպիսի պարբերականությամբ էին հսկա ալիքները առաջ մղվում, որպեսզի հարվեին ափին: Դա ինձ հիշեցրեց Տիրոջ ծրագրի մշտականության մասին, իր անփոփոխ հավերժական օրենքով, և համբերատար արդարադատության ու ողորմածության մեղմության մասին, որը ձեռք է բերվում հնազանդության միջոցով: Ես նկատեցի, որ բոլոր ալիքները հորիզոնի վրա տարբեր բարձրության են բարձրանում, որպեսզի գտնեն դեպի ափ տանող իրենց ուրույն ճանապարհը: Նրանք սահում են խոնավ ավազի վրա չարաճճի փրփուրոտ ծայրերով, ապա պղպջակներով և պտույտներով հետ քաշվում:

Ես մտածեցի այն անհամար հնարավորությունների մասին, որ Տերը տվել է մեզ: Մենք այնքան շատ ազատություն ունենք, այնքան շատ հնարավորություններ զարգացնելու մեր յուրահատուկ անհատականություններն ու տաղանդները, մեր անձնական հիշողությունները, մեր անձնական ներդրումները: Քանի որ այլևս չէի ունենալու այդ զարմանահրաշ ծովին նայելու հնարավորությունը, ես փորձեցի պատկերացնել այն փառավոր տեսարանը, որը կբացվեր փայլող արևի հետ միասին: Երբ ես ակնածանքով դիտում էի այդ հիասքանչ տեսարանը, ամպերում մի պատուհան առաջացավ, բարձրացող արևի փայլուն շողերը ներխուժեցին մռայլ երկնքից, ամեն ինչ փոխելով իր լույսով, իր գույնով, իր կյանքով: Կարծես Տերը ցանկանում էր մի լրացուցիչ օրհնություն կիսել, Իր ուսմունքների լույսի խորհրդանիշը, որը պայծառություն և հույս է տալիս յուրաքանչյուրին, ում դիպչում է: Երախտագիտության արցունքները նվիրված էին այդ չքնաղ աշխարհի համար, որում մենք ապրում ենք, այն արտասովոր գեղեցկության համար, որը մեր Երկնային Հայրն այդպես ազատորեն կիսում է բոլոր նրանց հետ, ովքեր ցանկանում են տեսնել: Իսկապես որ կյանքը սքանչելի է:

Գնահատեք կյանքի գեղեցկությունը

Արդյո՞ք դուք ժամանակ եք գտնում ամեն օր հայտնաբերելու համար, թե որքան սքանչելի կարող է լինել ձեր կյանքը: Ե՞րբ եք վերջին անգամ դուք հիացել մայրամուտով, երբ անհետացող շողերը համբյուրում և բարի գիշեր են մաղթում ամպերին, ծառերին, լեռներին ու հովիտներին, երբեմն խաղաղ, երբեմն գույնի և ձևի արտառոց արտահայտումներով:

Ինչպե՞ս է պարզ գիշերվա հրաշքը, երբ Տերը բացում է Իր երկնքի զարմանալիքները՝ շողացող աստղերը, լուսնի շողերը, բռնկում Նրա մեծության և փառքի մասին մեր պատկերացումը:

Որքա՜ն հրապուրիչ է հետևել, թե ինչպես է բերրի հողի մեջ ցանված սերմը ծլում, ուժ հավաքում և դառնում բարակ, կարծես թե աննշան մի ցողուն: Համբերությամբ այն շարունակում է աճել և զարգացնել իր ուրույն բնավորությունը, ղեկավարվելով գենետիկական այն կոդով, որը Տերը տվել է իր զարգացման համար: Խնամքի շնորհիվ այն կհասնի իր ճակատագրին, դառնալով շուշան, պսակված նրբագեղությամբ և գեղեցկությամբ, բուրող անանուխի բույս, դեղձ, ավոկադո, կամ արտասովոր համի, գույնի և բուրմունքի մի սքանչելի բողբոջ:

Ե՞րբ եք վերջին անգամ դուք դիտել, թե ինչպես է ձևավորվում փոքրիկ վարդի ծաղիկը: Ամեն օր այն նոր և տպավորիչ բնավորություն է զարգացնում, ավելի խոստումնալից ու գեղեցիկ, մինչև որ դառնում է հրաշագեղ վարդ:

Դուք Աստծո ազնվագույն արարումներից մեկն եք: Նրա նպատակն է, որ ձեր կյանքը լինի փառահեղ սքանչելի՝ անկախ ձեր հանգամանքներից: Եթե դուք երախտապարտ եք և հնազանդ, դուք կարող եք դառնալ այն, ինչ Աստված ցանկանում է, որ դառնաք:

Ուրախությունը կյանքում կախված է Աստծո հանդեպ վստահությունից

Տխրությունը, հիասթափությունը և դաժան դժվարությունները *իրադարձություններ են* կյանքում, ոչ թե կյանքն են: Ես չեմ թերագնահատում այդ իրադարձություններից ոմանց բարդությունը: Դրանք կարող են տևել երկար ժամանակ, սակայն դրանք չպետք է դառնան որոշիչ առանցքն այն ամենի, ինչ դուք անում եք: Տերը Լեքինն ոգեշնչեց հայտարարել մի հիմնարար ճշմարտություն. «Մարդիկ կան, որ կարողանան ունենալ ուրախություն»:[1] Դա պայմանական արտահայտություն է. «նրանք *կարող են* ունենալ ուրախություն»: Դա պայմանական չէ Տիրոջ համար: Նրա նպատակն է, որ մեզանից յուրաքանչյուրը ուրախություն գտնի: Ձեր համար այն պայմանական չի լինի, եթե դուք հնազանդվեք պատվիրաններին, հավատ ունենաք Վարդապետի հանդեպ, և անեք այն, ինչ անհրաժեշտ է երկրի վրա ուրախություն ունենալու համար:

Ձեր ուրախությունը կյանքում կախված է Երկնային Հոր ու Նրա սուրբ Որդու հանդեպ ձեր վստահությունից, ձեր համոզմունքից, որ երջանկության նրանց ծրագիրը իսկապես ձեզ կարող են ուրախություն պարգևել: Նրանց վարդապետությունների շուրջ խորհելը ձեզ թույլ կտա վայելել այս երկրագնդի գեղեցկությունները և հարստացնել ուրիշների հետ ձեր հարաբերությունները: Դա ձեզ կտանի դեպի մխիթարող և զորացնող փորձառությունները, որոնք գալիս են Երկնային Հորն ուղղված աղոթքներից և Նրա պատասխաններից:

Նպատակ և համբերություն

Աչքին մոտ պահած քարը հսկա խոչընդոտ է թվում: Երբ այն գցում ես գետնին, տեսնում ես ընդհանուր տեսադաշտում: Նմանապես, մեր կյանքի խնդիրներն ու փորձությունները կարելի է դիտել սուրբ գրությունների տեսակետից: Այլապես դրանք հեշտությամբ կարող են խլել մեր տեսողությունը, կլանել մեր էներգիան և զրկել մեզ այն ուրախությունից և գեղեցիկից, որ Տերը նպատակ ունի, որպեսզի մենք ստանանք այստեղ երկրի վրա: Որոշ մարդիկ նման են խնդիրների ծովը գցված քարերի: Դրանց պատճառով նրանք խորասուզվում են: Եղեք լողուն: Երբ խորասուզվում եք խնդրի մեջ, պայքարեք, որպեսզի ազատվեք և ցատկեք դուրս նորից երջանկությամբ ծառայելու համար:

Դուք այստեղ եք՝ երկրի վրա, աստվածային նպատակով: Սա անվերջ զվարճանալու կամ անընդմեջ լիարժեք հաճույք փնտրելու համար չէ: Դուք այստեղ եք փորձվելու, ձեզ արդարացնելու համար, որպեսզի կարողանաք Աստծուց ձեզ համար լրացուցիչ օրհնություններ ստանալ:[2] Դրա համար պահանջվում են համբերության ահռելի ջանքեր:[3] Որոշ օրհնություններ կարող են տրվել այս կյանքում, մյուսները՝ վարագույրի այն կողմում:

Տերը հետաքրքրված է ձեր անձնական աճով ու զարգացումով: Այդ զարգացումը արագանում է, երբ դուք պատրաստակամ թույլ եք տալիս Նրան առաջնորդել ձեզ աճի բոլոր փորձառությունների մեջ, որոնցով անցնում եք, լինի դա ի սկզբանե ձեր ցանկությունը, թե ոչ: Երբ դուք ապավինում եք Տիրոջը, երբ դուք պատրաստ եք թույլ տալ, որ ձեր սիրտն ու ձեր միտքը կենտրոնանան Նրա կամքի շուրջ, երբ դուք խնդրում եք, որ Հոգին առաջնորդի ձեզ կատարելու Նրա կամքը, դուք ապահովված եք այդ ճանապարհի ընթացքում ստանալու մեծագույն երջանկությունը և ամենալիարժեք նվաճումը այս մահկանացու փորձառության մեջ: Եթե դուք հարցադրումով եք մոտենում այն ամենին, ինչ ձեզանից խնդրում են անել, կամ խորանում եք ամեն խնդրի մեջ, որը ձեզ հաճելի չէ, դուք դժվարացնում եք Ձեզ օրհնելու Տիրոջ գործը:[4]

Ազատ ընտրության, որոշումներ կայացնելու ձեր իրավունքը տրված չէ նրա համար, որ դուք անեք այն, ինչ ցանկանում եք: Աստվածային այս պարգևը տրված է նրա համար, որպեսզի դուք ընտրեք այն, ինչ ձեր Երկնային Հայրն է ցանկանում, որ դուք անեք: Այդպես Նա կարող է ձեզ օգնել դառնալ այն, ինչ Նա է ցանկանում, որ դառնաք:[5] Այդ ուղին տանում է դեպի փառահեղ ուրախություն և երջանկություն:

Ապրեք ուրախությամբ դժվարությունների մեջ

Սովորեք ոգեշնչող անհատներից, որոնք իրենց խնդիրներում խաղաղություն են գտել և ուրախությամբ են ապրում դժվարությունների մեջ: Մի սքանչելի կին, որը մահացու դաժան հիվանդությամբ էր տառապում, շարունակաբար ուրախություն էր գտնում կյանքում: Նա հասկացել էր երջանկության ծրագիրը, ստացել էր տաճարային արարողությունները և անում էր ինչ կարող էր խոստացված օրհնություններին արժանի լինելու համար: Նրա անձնական օրագրի գրառումներից.

«Հրաշալի աշնանային օր է: Ես վերցրեցի նամակները և նստեցի ճոճանակին: Ես այնքան երջանիկ և գոհ էի տաք արևի տակ, զգալով բնության և իմ շուրջը ծառերի քաղցր բուրմունքը: Ես նստեցի և փառավորեցի այն փաստը, որ ես դեռ կենդանի եմ այս գեղեցիկ երկրագնդի վրա: . . . Տերն այնքան բարի է իմ հանդեպ: Ինչպես ես շնորհակալություն հայտնեմ նրան, որ դեռ այստեղ եմ և այսքան լավ եմ ինձ զգում: Ես այնքա՞ն երջանիկ եմ: Ես ուզում եմ բացականչել և պարել այս սքանչելի տան մեջ, մինչ արևի շողերը թափանցում են մեծ պատուհաններից: Ինձ դուր է գալիս կենդանի լինել»:

Մի խիզախ մայր, որը քաջությամբ պայքարում էր անտանելի մի հիվանդության դեմ, անվերջ ժամեր էր անցկացնում, ձգտելով ավարտել մի մեծ ու բարդ ասեղնագործություն: Դա նվեր էր դժվարությունների մեջ գտնվող մի զույգի համար: Այդ զույգի համար դա մի անգին գանձ է, մշտական հիշեցում դժվարության պահին վճռական ջանքի թանկարժեք պտղի մասին, հույսի տևական ուղերձ, որը հյուսված է մաքուր սիրո և պատրաստակամ ծառայության մեջ:

Ուրախություն գտեք նրա մեջ, ինչ դուք *ունեք*

Երեխաները մեզ սովորեցնում են, ինչպես ուրախություն գտնել անգամ ամենադժվար հանգամանքներում: Երեխաները դեռ չեն սովորել ճնշվել, կենտրոնանալով այն բաների վրա, որոնք չունեն: Նրանք ուրախություն են գտնում այն ամենում, ինչ ունեն: Ես հիշում եմ, ինչպես մի

փոքր տղա խաղ էր անում գետի ափին: Նա ձկան թել էր կապել երկու դատարկ թիթեղյա շշերի միջև: Նա զգում էր թելը ոտքին, ապա մի շիշը ջրով լցնում, ու թողնում, որ այն իջնի: Առաջին շիշը իր քաշի շնորհիվ քաշում էր երկրորդը, որը բարձրանում էր վեր և ընկնում: Նա ծիծաղում էր և հրճվանքից պարում:

Հասարակ և թարմացնող փորձառությունները շրջապատում են մեզ: Դրանք կարող են ապահովիչներ լինել, որոնք լարումը ցածր են պահում, իսկ հզորությունը բարձր: Մի կենտրոնացեք նրա վրա, ինչը դուք չունեք կամ կորցրել եք: Տերը խոստացել է կիսվել հնազանդների հետ այն ամենով, ինչ ունի: Դուք կարող եք ժամանակավորապես ինչ-որ բանի պակաս ունենալ այստեղ, բայց հաջորդ կյանքում, եթե ձեզ արդարացնեք, լինելով արժանի և խիզախ ապրելով, լիությունը կլինի ձեր օրհնությունը:

Հատուցող օրհնություններ գտեք ձեր կյանքում, երբ Իր իմաստությամբ Տերը չի տալիս ձեզ այն, ինչը դուք շատ եք ցանկանում: Տեսողության և լսողության խնդիրներ ունեցողների համար նա սրում է մյուս զգայարանները: Հիվանդներին Նա տալիս է համբերություն, հասկացողություն և մեծ գնահատանք ուրիշների բարության համար: Հարազատի կորստի հետ Նա ամրացնում է սիրո կապերը, հարստացնում հիշողությունները և հույս վառում ապագա վերամիավորման համար: Դուք հատուցող օրհնություններ կհայտնաբերեք, եթե պատրաստակամորեն ընդունեք Տիրոջ կամքը և օգտագործեք Նրա հանդեպ ձեր հավատը:[6]

Ալմայի տանջված ժողովրդին Տերն ասաց.

«Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, . . . որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին . . . , և սա ես կանեմ, որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ:

Եվ . . . բեռները թեթևացան.այո, Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:[7]

Ստեղծագործ լինելը կօգնի ձեզ վայելել կյանքը

Աշխատեք ստեղծագործ լինել, քանի որ այն ուրախություն է բերում: Նրանից հետո, երբ իրենց ազնվաբարո ամուսինները կանչվեցին տուն, Կամիլլա Քիմբալ, Ամելիա ՄակՔոնկի և Հելեն Ռիչարդս Քույրերը սովորեցին նկարել: Նրանք ոչ միայն արվեստի ժառանգություն են թողնում, այլ երբեք այլևս չեն տեսնի մայրամուտը, դեմքը կամ ծառը այնպես, ինչպես առաջ: Այժմ նրանք ըմբռնում են գույնի և ձևի նուրբ երանգները և հիանում իրենց շրջապատող առատ գեղեցկությամբ:

Ընտրեք որևէ ոլորտ, օրինակ երաժշտություն, պար, քանդակագործություն կամ պոեզիա: Ստեղծագործ լինելը կօգնի ձեզ հաճույք ստանալ կյանքում: Այն խորացնում է երախտագիտության ոգին: Այն զարգացնում է թաքնված տաղանդը, սրում է տրամաբանելու, գործելու և կյանքում նպատակ գտնելու ձեր ունակությունը: Այն վերացնում է միայնակությունն ու սրտի ցավը: Այն թարմություն, խանդավառության կայծ և կյանքի ցանկություն է առաջացնում:

Ծառայություն՝ երջանկության բանալի

Ուրիշներին պատրաստակամորեն ծառայելը տևական երջանկության բանալին է: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Աստված նկատում է մեզ, և նա հետևում է մեզ: Բայց սովորաբար մեկ այլ մահկանացու մարդու միջոցով է, որ նա բավարարում է մեր կարիքները: Հետևաբար, շատ կարևոր է, որ մենք ծառայենք միմյանց»:[8]

Ես ճանաչում եմ մի կնոջ, որը ուրախ ու երջանիկ է: Ամեն առավոտ նա իր Երկնային Հորը խնդրում էր առաջնորդել իրեն մեկի մոտ, ում նա կարող էր օգնել: Այդ անկեղծ աղոթքն ամեն անգամ պատասխան էր ստանում: Շատերի բեռը թեթևացավ, և նրանց կյանքերը պայծառացան: Նա շարունակ օրհնվել է, լինելով գործիք Տիրոջ ձեռքում:

Դժվարությունը կարող է վերածվել աճի

Ես գիտեմ , որ կյանքում հանդիպող ցանկացած դժվարություն, անգամ նրանք, որ մեր անուշադրության կամ անգամ մեղսագործության պատճառով են առաջ գալիս, Տիրոջ կողմից կարող են փոխվել, դառնալով զարգացման փորձառություն, իրական աստիճան դեպի վեր:[9] Ես անշուշտ չեմ առաջարկում մեղսագործությունը որպես զարգացման ուղի: Այն ցավալի է, դժվար և ամենևին էլ ոչ անհրաժեշտ: Շատ ավելի իմաստուն և շատ ավելի հեշտ է առաջ շարժվել արդարակեցությամբ: Սակայն ճիշտ ապաշխարության, Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի և Նրա պատվիրաններին հնազանդվելու միջոցով անգամ մեղսագործության հետևանքով առաջացած հիասթափությունը կարող է վերածվել վերադարձի՝ դեպի երջանկություն:

Կազմեք այն ամենի ցանկը, որը դուք կարող եք անել երջանիկ լինելու համար, օրինակ.

- Խորհեք սուրբ գրությունների շուրջ երջանկության ծրագիրը հասկանալու համար:
- Առ Հիսուս Քրիստոս հավատքով աղոթեք:
- Սիրեք և ծառայեք ուրիշներին:
- Ստացեք տաճարային արարողությունները: Վերադարձեք ուրիշներին օրհնելու համար:
- Լսեք մարգարեին և հնազանդվեք նրա խորհրդին:
- Երախտապարտ եղեք այն ամենի համար, ինչ ունեք:
- Հաճախ ժպտացեք:

Ձեր ցուցակը բավարարվածության և ուրախության բանալիներ ձեզ կպարգևի:

Դժվարությունը ժամանակավոր է, իսկ երջանկությունը՝ հավերժ

Բրազիլական հանրաճանաչ մի երգ կրկնում է մի սուտ, որին շատերը հավատում են. տխրությունը երբեք չի վերջանում, իսկ երջանկությունը վերջանում է: Ես վկայում եմ,

որ Փրկչի հանդեպ հավատքի և Նրա ուսմունքներին հնազանդվելու արդյունքում երջանկությունը երբեք չի վերջանա, իսկ տխրությունը կվերջանա:

Կարևոր չէ, թե որքան դժվար է այն, ինչը դուք կամ ձեր սիրած մարդը հանդիպում եք, այն չպետք է կլանի ձեր ողջ կյանքը և դառնա ձեր բոլոր հետաքրքրությունների կենտրոնը: Դժվարությունները զարգացման փորձառություններ են, ժամանակավոր դրվագներ, որոնք պետք է խաղալ հաճելի կյանքի ետևում: Մի կլանվեք առանձին որևէ միջադեպով, որպեսզի չկարողանաք մտածել որևէ այլ բանի մասին, կամ հոգ տանել ձեր կամ ձեզանից կախվածների մասին: Հիշեք, ինչպես մարմնի ապաքինումը, այնպես էլ հոգևոր և զգացմունքային որոշ խնդիրների բուժումը ժամանակ է պահանջում:

Տերն ասել է. «Համբերող եղիր չարչարանքներում, քանզի դու շատ կունենաս. բայց դիմացիր դիմացիր դրանց, քանի որ, տես, ես քեզ հետ եմ, մինչև քո օրերի վերջը»:[10] Եթե համբերատար լինեք, ապա կհասկանաք, թե ինչ է նշանակում. «Ես ձեզ հետ եմ» արտահայտությունը: Աստծո սերը խաղաղություն և ուրախություն է բերում:

Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքը կյանքին երկարատև իմաստ է հաղորդում: Հիշեք, որ դուք դեպի վեհացում տանող ճանապարհին եք: Երբեմն դուք երջանիկ, երբեմն ոչ այդքան երջանիկ փորձառություններ եք ունենում, բայց դրանք բոլորը նպատակ ունեն Տիրոջ մոտ:[11]

Որպես Փրկչի վկա ես հորդորում եմ ձեզ ներել նրանց, ովքեր ձեզ վիրավորել են: Եթե մեղսագործություն կա, ապաշխարեք, որպեսզի Վարդապետը կարողանա բուժել ձեզ:

Շնորհակալություն հայտնեք ձեր Երկնային Հորը և Նրա Սիրեցյալ Որդուն երջանկության ծրագրի և ավետարանի սկզբունքների համար, որոնց վրա այն հիմնված է: Երախտապարտ եղեք դրանց հետ կապված արարողությունների և ուխտերի համար: Ես լրջորեն վկայում եմ, որ դրանք զորություն ունեն պսակելու ձեր կյանքը խաղաղությամբ և ուրախությամբ, նպատակ և իմաստ հաղորդելու կյանքին: Դուք կսովորեք, որ տխրությունն ու հիասթափությունը ժամանակավոր են: Երջանկությունը հավիտենական է Հիսուս Քրիստոսի շնորհիվ: Ես լրջորեն վկայում եմ, որ Նա ապրում է, որ Նա սիրում է ձեզ, և որ Նա կօգնի ձեզ:

1998 թ. ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Սքոթի ուղերձից (see Conference Report, Apr. 1996, 31–35; or *Ensign*, May 1996, 24–26):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2 Նեփի 2.25
2. Տես Աբրահամ 3.25:
3. Տես Մոսիա 3.19:
4. Տես 1 Նեփի 3.7:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.26–32:
6. Տես Orson F. Whitney, quoted in Spencer W. Kimball, *Faith Precedes the Miracle* (1972), 98.
7. Մոսիա 24.14–15:
8. *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 252.
9. Տես Եսայիա 40.31:
10. Վարդապետություն և Ուխտեր 24.8:
11. See Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 177.

Ներման բուժող զորությունը

7

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Ուսումնասիրեք ներման օրինակները հետևյալ սուրբ գրություններում. Ղուկաս ԻԳ.33–34; Գործք Է.58–60; 1 Նեփի 7.8–21:
- Որոշում կայացրեք ավելի ներողամիտ լինել և արժանի մյուսների ներողամտությանը:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

«Ձեզանից պահանջվում է ներել»

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Ներման ոգին և մեզ վիրավորողների հանդեպ սիրո և կարեկցանքի արտահայտումը Հիսուս Քրիստոսի ավետարանի էությունն է: Մեզանից յուրաքանչյուրն այդ ոգու կարիքն ունի: Ողջ աշխարհը դրա կարիքն ունի: Տերն է սովորեցրել դա: Նա մարմնավորել է դա այնպես, ինչպես ոչ ոք չէր կարող մարմնավորել:

Գագաթի խաչի վրա Իր հոգևարքի մեջ, երբ Իր առաջ էին չար ու դաժան մեղադրողները, որոնք բերեցին Իրեն այս զարհուրելի խաչմանը, Նա բացականչեց. «Հայր, թողիր դորանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկաս ԻԳ.34):

Մեզանից ոչ ոքից չի պահանջվում նման մեծահոգաբար ներում, սակայն մեզանից յուրաքանչյուրը աստվածային պարտականություն է կրում վերաբերվել մյուսներին ներողամտությամբ և գթությամբ: Տերը հայտարարել է հայտնության խոսքերով.«Իմ աշակերտները, հին օրերում, մեղադրանք էին փնտրում մեկ-մեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում. և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն խրատվեցին:

Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում:

Ես՝ Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց:

Եվ դուք պետք է ասեք ձեր սրտերում. Թող Աստված դատի իմ և քո միջև, և հատուցի քեզ՝ քո գործերի համեմատ» (ՎԿՈՒ 64.8–11):

Որքա՜ն շատ մենք ունենք Աստվածատուր այս և դրա անբաժան ուղեկից սկզբունքի՝ ապաշխարության, կիրառման կարիքը: Մենք տեսնում ենք դրա կարիքը մարդկանց տներում, որտեղ միմյանց չհասկանալու չնչին փշուրը վերածվում է վեճերի սարերի: Մենք տեսնում ենք դա հարևանների մեջ, երբ աննշան տարբերությունները բերում են անվերջ դառնություն: Մենք տեսնում ենք դա գործընկերների շրջապատում, որոնք վիճում են և հրաժարվում փոխզիջման գնալ, երբ, հիմնականում, եթե լինի միասին նստելու և հանգիստ միմյանց հետ խոսելու ցանկություն, ապա խնդիրը կարող է լուծվել ի օրհնություն բոլորի: Փոխարենը, նրանք իրենց օրերն անց են կացնում սնուցելով վիրավորանքը և պլանավորելով հատուցումը:

Եկեղեցու կազմակերպման այդ առաջին տարին, երբ Նախագահ Ջոզեֆ Սմիթը պարբերաբար ձերբակալվում էր և կեղծ մեղադրանքներ ստանում նրանց կողմից, ովքեր փորձում էին վնասել իրեն, Տերը հայտնության միջոցով ասաց նրան. «Եվ ով որ օրենք բերի քո վրա՝ օրենքով պիտի անիծվի» (ՎԿՈՒ 24.17): Ես դա տեսել եմ մեր ժամանակներում նրանց մեջ, ովքեր չարամտորեն սնել են իրենց վիրավորանքը: Անգամ նրանք, ովքեր հաղթել են այդ մրցույթում, մտքի շատ քիչ խաղաղություն են ստանում, և եթե նրանք դոլարներ են շահել, ապա կորցրել են ավելի թանկ բան:

Խուսափեք դառնությունից

Ֆրանսիացի գրող Գի դը Մոպասանը պատմում է շուկայի օրը գյուղի շուկա եկած մի գյուղացու մասին, որի անունն է Հոչքոմ: Հրապարակում զբոսնելիս նա քարերին ընկած կաշվե պարանի մի կտոր նկատեց: Նա վերցրեց և դրեց այն գրպանը: Դա նկատեց գյուղի ձիերի լուծ պատրաստողը, որի հետ նա քիչ առաջ վիճել էր:

Ավելի ուշ հայտնեցին կաշվե պայուսակի կորստի մասին: Հոչքոմը ձեռբակալվեց լուծ պատրաստողի մեղադրանքով: Նրան տարան քաղաքապետի մոտ, որի առաջ նա փորձեց պաշտպանել իր անմեղությունը, ցույց տալով պարանի կտորը, որը վերցրել էր: Սակայն նրան չհավատացին և ծիծաղեցին:

Հաջորդ օրը պայուսակը գտնվեց և Հոչքոմը ազատվեց բոլոր մեղադրանքներից: Սակայն, վիրավորված լինելով

անհարգալից վերաբերմունքից, որին արժանացավ կեղծ մեղադրանքի պատճառով, նա դառնացավ և թույլ չտվեց, որ հարցը մոռացվեր: Չցանկանալով ներել և մոռանալ, նա մտածում և խոսում էր: Նա անտեսել էր իր ֆերման: Ուր որ նա գնում էր, ում որ տեսնում էր, պատմում էր անարդարության մասին: Օր ու գիշեր նա մտահոգված էր: Իր վշտով տարված նա հուսահատությունից հիվանդացավ և մահացավ: Մահվան հոգևարքի մեջ անգամ նա անընդհատ կրկնում էր. «Կաշվե պարանը, կաշվե պարանը» (*The Works of Guy de Maupassant* [n.d.], 34–38):

Տարբեր հերոսներով և պայմաններով այս պատմությունը կարելի է կրկնել մեր օրերում: Որքան դժվար է մեզանից յուրաքանչյուրի համար ներել նրանց, ովքեր վնասել են մեզ: Մենք բոլորս կառչում ենք այն չարից, որն արվել է մեր հանդեպ: Այդ մտածմունքները դառնում են անհանգստացնող և քայքայող չարիք: Կա արդյո՞ք ավելի մեծ արժանիք, որն անհրաժեշտ է կիրառել մեր ժամանակներում, քան ներելն ու մոռանալն է: Կան մարդիկ, որոնք դրան կնայեն որպես թուլության նշան: Արդյո՞ք դա այդպես է: Ես վստահեցնում եմ, որ սխալ մեղադրանքների պատճառով զայրույթից կառչելը, կյանքը դաժանությամբ ապրելը, ամբողջ էներգիան վրեժխնդրություն պլանավորելու վրա ծախսելը ոչ ուժ, ոչ էլ խելք է պահանջում: Չկա խաղաղություն՝ դառնություն սնուցելու մեջ: Չկա երջանկություն, եթե ապրում ես այն օրվա համար, երբ «կիատուցես»:

Պողոսը խոսում է մեր կյանքի «տկար և աղքատ սկզբունքները» (տե՛ս Գաղատացիս Դ.9): Կա արդյո՞ք ավելի տկար կամ աղքատ, քան վատնելը կյանքը դառը մտքերի անվերջ հոսքի մեջ, կամ ծրագրեր կազմելով նրանց հանդեպ, ովքեր վնասել են մեզ:

Ջոզեֆ Ֆ. Սմիթը նախագահում էր Եկեղեցին, երբ մեծ դաժանություն էր տիրում մեր ժողովրդի հանդեպ: Անգամ իր համայնքում նա անարդար մեղադրանքների, խմբագիրների քննադատության սաստիկ հարձակումների թիրախ էր: Նրա վրա ծիծաղում էին, ծաղրանկարներ նկարում և ծաղրում: Լսեք նրա պատասխանը նրանց, ովքեր իրեն անարգելը զբաղմունք էին դարձրել. «Հանգիստ թողեք նրանց: Թողեք, թող գնան: Նրանց տվեք իրենց ուզած խոսքի ազատությունը: Թող նրանք պատմեն իրենց պատմությունը, և գրեն իրենց սեփական ճակատագիրը» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 339): Ապա, ներելու և մոռանալու ազնվաբարո ոգով նա առաջ գնաց Եկեղեցին ղեկավարելու մեծ և դրական աշխատանքով՝ դեպի նոր զարգացում և վիթխարի նվաճումներ : Նրա մահվան ժամանակ նրանցից շատերը, ովքեր ծաղրում էին նրան, գովքի խոսքեր էին գրում նրա մասին:

Ես հիշում եմ, ինչպես էի լսում մի զույգի, որն իմ առաջ նստած էր նստարանին: Նրանց միջև դառնություն կար: Ես գիտեի, որ կար ժամանակ, երբ նրանց սերը խորն էր և ճշմարիտ: Սակայն, ամեն մեկը մյուսի սխալների մասին խոսելու սովորույթ էր զարգացրել: Չցանկանալով ներել այն սխալները, որ մենք բոլորս էլ կատարում ենք, և չցանկանալով մոռանալ դրանք և ապրել դրանցից վեր, նրանք այնքան էին հոգնեցրել միմյանց, որ ժամանակին եղած սերը ջնջվել էր: Այն վեր էր ածվել մոխիրների, հասնելով այսպես կոչված «ոչ ոքի մեղքով» ապահարզանի: Այժմ կար միայն միայնակություն և մեղադրանք: Ես բավարարված եմ, որ կար մի փոքր ապաշխարություն և ներում, որ նրանք դեռ կարող էին միասին լինել, վայելելով ընկերակցությունը, որն այդքան առատորեն օրհնել է նրանց անցած տարիները:

Խաղաղություն ներման միջոցով

Եթե կան մարդիկ, որոնք իրենց սրտերում ինչ-որ մեկի հանդեպ թունավոր թշնամության ոգին են սնուցում, ես աղերսում եմ ձեզ, խնդրել Տիրոջը ներելու ուժ տալ ձեզ: Ցանկության այս դրսևորումը կլինի ձեր ապաշխարության էությունը: Դա կարող է հեշտ չլինել, և այն կարող է արագ չստացվել: Սակայն եթե դուք փնտրեք դա անկեղծությամբ և զարգացնեք, այն կգա: Եվ եթե անգամ նա, ում դուք ներել եք, շարունակի հետապնդել և սպառնալ ձեզ, դուք կիմանաք, որ արել եք ամեն ինչ հաշտեցման համար: Այդ ժամանակ ձեր սիրտ կներխուժի խաղաղություն, որն այլապես հնարավոր չէր ձեռք բերել: Այդ խաղաղությունը կլինի Նրա խաղաղությունը, ով ասել է.

«Որովհետև եթե դուք մարդկանց իրանց հանցանքները թողեք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կթողէ:

Իսկ եթե դուք մարդկանց չեք թողիլ նորանց հանցանքները, ձեր Հայրն էլ չի թողիլ ձեր հանցանքները» (Մաթևոս Զ.14–15):

Անառակ Որդին

Ողջ գրականության մեջ ես չգիտեմ ավելի սքանչելի պատմություն, քան այն, որ գտնվում է Ղուկասի տասնհինգերորդ գլխում: Դա ապաշխարող որդու և ներող հոր պատմությունն է: Դա պատմություն է մի որդու մասին, որը վատնել էր իր ժառանգությունը անառակ ապրելաձևով, մերժելով իր հոր խորհուրդը, հրաժարվելով նրանցից, ովքեր սիրում էին իրեն: Երբ ծախսեց ամեն բան, նա քաղցած և լքված էր, և երբ «ինքն իրան գալով» (Ղուկաս ԺԵ.17), նա շրջվեց դեպի իր հայրը, որը, հեռվից նրան տեսնելով «վազեց՝ նորա վզովն ընկավ, և համբուրեց նորան» (Ղուկաս ԺԵ.20):

Ես ձեզ խնդրում եմ կարդալ այդ պատմությունը: Ամեն ծնող պետք է կրկին ու կրկին այն կարդա: Այն բավականին մեծ է, որպեսզի ներառի ամեն տուն, և ավելի մեծ, որպեսզի ներառի ողջ մարդկությունը, քանզի արդյո՞ք մենք բոլորս անառակ որդիներ և դուստրեր չենք, որոնք կարիք ունեն ապաշխարելու և ճաշակելու մեր Երկնային Հոր ներող ողորմությունը, ապա հետևելու Նրա օրինակին:

Նրա Սիրեցյալ Որդին, մեր Քավիչը, հասնում է մեզ ներումով և ողորմությամբ, սակայն դա անելիս Նա ապաշխարություն է պատվիրում: Ներման ճշմարիտ և արդար ոգին կդառնա այդ պահանջվող ապաշխարության արտահայտումը: Տերն ասել է, և ես մեջբերում եմ Մարգարե Ջոզեֆին տրված հայտնությունից.

«Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ՝ ապաշխարել, - ապաշխարիր, չլինի թե քեզ զարկեմ իմ բերանի գավազանով և իմ ցասումով և իմ բարկությամբ, և քո տառապանք-

ները լինեն դառը, - որքան դառը, դու չգիտես, որքան սուր, դու չգիտես, այո, որքան ծանր՝ տանելու, դու չգիտես:

«Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով . . .

Սովորիր ինձանից և լսիր իմ խոսքերը. քայլիր իմ հոգու հեզությամբ, և դու խաղաղություն կունենաս ինձանում» (ՎԿՈ 19.15–18, 23):

Այսպիսին է պատվիրանը, և այսպիսին է Նրա խոստումը, ով Իր մեծ օրինակելի աղոթքում, խնդրել է. «Հայր, . . . թող մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ թողում ենք մեր պարտականներին» (Մատթեոս Զ.9, 12):

«Կապենք . . . վերքերը»

Արդյո՞ք գեղեցիկ չեն Աբրահամ Լինկոլնի խոսքերը, որոնք նա ասաց քաղաքացիական զարհուրելի պատերազմի ողբերգության մասին. «Չարությամբ դեպի ոչ ոք, գթությամբ դեպի բոլորը, . . . եկեք . . . մենք կապենք . . . վերքերը» (in John Bartlett, *Familiar Quotations* [1968], 640):

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք կապենք վերքերը, Օ՜, այն բազմաթիվ վերքերը, որոնք առաջացել են կտրող խոսքերից, համառ մեղադրանքներից, վրեժ լուծելու ծրագրերից, նրանց հանդեպ, ովքեր վատ են վարվել մեզ հետ: Մենք բոլորս մի փոքր ունենք վրիժառության ոգուց: Բարեբախտաբար, մենք բոլորս ուժ ունենք բարձրանալու այդ ամենից, եթե «ձեր վրա հագնեք գթության կապը, ինչպես մի թիկնոց, որը կատարելության և խաղաղության կապն է» (ՎԿՈ 88.125):

«Սխալվելը մարդկային է, ներելը՝ աստվածային» (Alexander Pope, *An Essay on Criticism,* 2:1711): Չկա խաղաղություն հին վերքերի ցավը հիշելու մեջ: Խաղաղություն կա միայն ապաշխարության և ներման մեջ: Դա Քրիստոսի քաղցր խաղաղությունն է, որն ասել է. «Երանի խաղաղություն անողներին, որ նորանք Աստծո որդիք կկոչվին» (Մատթեոս Զ.9):

1991 հունիսի *Ensign,* էջեր 2–5:

Կառավարել ընտանիքի ֆինանսները

8

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Կազմեք վերջերս գնված ապրանքների ցանկը: Գրեք *Պ* տառը այն ապրանքների դիմաց, որոնք պարտադիր էին և որոնց կարիքը ունեիք: Գրեք *Ց* տառը այն ապրանքների դիմաց, որոնք ցանկանում էիք, սակայն որոնց կարիքը չկար: Օգտվեք այս ցանկից գնումներ կատարելու ձեր սովորույթները գնահատելու համար: Եթե դուք շատ եք ծախսում այն բաների վրա, որոնք պարտադիր չեն, մտածեք, թե ինչպես կարող եք ձեր փողն ավելի իմաստուն օգտագործել:
- Ձեր ամուսնու կամ կնոջ հետ բյուջե գրեք գալիք ժամանակահատվածի՝ մեկ կամ երկու շաբաթների համար: Որպես ուղեցույց կարող եք օգտվել էջ 32-ի վրա տրված օրինակից: Միասին աշխատեք, որպեսզի ապրեք ձեր գրած բյուջեի սահմանների:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Կայունություն փոփոխության մեջ

Նախագահ Ն. Էլդոն Թաններ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Այսօր ես կուզենայի կիսվել ձեզ հետ իմ դիտարկումներով մշտական և հիմնարար սկզբունքների մասին, որոնք, եթե դրանց հետևում ես, ֆինասական ապահովություն և խաղաղություն են բերում տնտեսական *ցանկացած* իրավիճակում:

«Նախ Աստծո արքայությունը փնտրեք»

Նախ, ես ուզում եմ հիմք կառուցել և պատկերացում կազմել տնտեսական այդ սկզբունքների կիրառման համար:

Մի օր իմ թոռն ինձ ասաց. «Ես հետևել եմ քեզ և այլ հաջողակ մարդկանց և որոշել եմ ինձ համար, որ ուզում եմ հաջողակ լինել իմ կյանքում: Ես ուզում եմ հարցազրույց անցկացնել որքան որ հնարավոր է շատ հաջողակ մարդկանց հետ, որպեսզի հասկանամ, թե ինչն է նրանց հաջողակ դարձրել: Այսպիսով, ելնելով քո փորձից, պապի՛կ, ո՞րն է քո կարծիքով հաջողության ամենակարևոր տարրը»:

Ես նրան ասացի, որ Տերն է տվել ամենամեծ հաջողության բանաձևը, որը ես գիտեմ. «Սակայն առաջ Աստծո արքայությունը և նորա արդարությունը խնդրեցեք. և այդ ամենքը կտրվի ձեզ» (Մատթեոս Զ.33):

Ոմանք հակաճառում են, որ որոշ մարդիկ ֆինանսապես բարգավաճում են առանց նախնառաջ արքայությունը փնտրելու: Դա ճիշտ է: Սակայն Տերը խոստանում է ոչ միայն նյութական հարստություն, եթե մենք նախ փնտրենք արքայությունը: Իմ անձնական փորձից ես գիտեմ, որ դա այդպես չէ: Հենրիկ Իբսենի խոսքերով. «Փողը կարող է լինել շատ բաների կեղևը, բայց ոչ կորիզը: Այն ձեզ տալիս է սնունդ, բայց ոչ ախորժակ, դեղամիջոց, բայց ոչ առողջություն, ծանոթություններ, բայց ոչ ընկերներ, ծառաներ, բայց ոչ հավատարմություն, ուրախ օրեր, բայց ոչ խաղաղություն կամ երջանկություն» (in *The Forbes Scrapbook of Thoughts on the Business of Life* [1968], 88):

Նյութական օրհնություններն ավետարանի մասն են, եթե ճիշտ ճանապարհով և արդար նպատակով են ձեռք բերվում: Ես հիշում եմ Նախագահ Հյու Բ. Բրաունի փորձառությունը: Լինելով պատանի զինվոր Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ նա այցելեց հիվանդանոցում իր ծեր ընկերոջը: Այդ ընկերը միլիոնատեր էր, որն այժմ ութսուն տարեկան հասակում պառկած էր մահամերձ: Ոչ նրանից բաժանված կինը, ոչ էլ նրա հինգ երեխաներից որևէ մեկը չեկան տեսնելու նրան հիվանդանոցում: Մտածելով այն ամենի մասին, ինչ իր ընկերը կորցրել էր, «ինչ փողը չէր կարող գնել, և տեսնում էր նրա ողբերգական վիճակը և թշվառության աստիճանը», Նախագահ Բրաունը հարցրել էր, թե ինչ նա կփոխեր իր կյանքում, եթե նորից ապրեր:

Ծեր պարոնը, որը մի քանի օր անց մահացավ, ասել էր. «Երբ մտածում եմ անցած կյանքիս մասին, ամենակարևոր և ամենաարժեքավոր բանը, որը ես կարող էի ունենալ, սակայն որը կորցրեցի իմ միլիոնները կուտակելու ընթացքում, դա *հասարակ հավատքն էր, որն իմ մայրն ուներ Աստծո և հոգու անմահության հանդեպ:*

«. . . Դու հարցրեցիր ինձ, որն է ամենաարժեքավոր բանը կյանքում: Ես չեմ կարող պատասխանել քեզ ավելի լավ խոսքերով, քան պոետը»: Նա Նախագահ Բրաունին խնդրեց իր պայուսակից հանել մի փոքր գրքույկ, որից կարդաց «Ես օտարական եմ» բանաստեղծությունը:

Ես օտարական եմ մորս սովորեցրած հավատքին,
Ես օտար եմ Աստծուն, որ լսում էր մորս լացելիս,

Ես օտար եմ այն սփոփանքին, որ հորս խոսքերը բերեցին,
Երբ հավերժության բազուկները նրան պահել էին մահվան պահին:
Երբ մեծ աշխարհը կանչեց ինձ, ես լքեցի ամեն ինչ ու գնացի,
Իմ կուրության մեջ չտեսա, որ ձեռքս դուրս եկավ Նրա ձեռքից,
Իմ թշվառության մեջ չտեսա, որ դատարկ է փառքը փրփուռի,
Որ ոսկու փայլը կեղծ է, այժմ ես դա լավ գիտեմ:
Ողջ կյանքում փնտրեցի այն, ինչը հետո դեն էի գցում,
Պայքարում էի և հաղթում շատ հաղթական դեպքերում,
Բայց *ողջ* փառքն ու հաջողությունը կտայի միայն այն *հավատի* համար,
Որն իմ մորը դարձրեց այն կինը, որ նա կար:

«Սա մեռնող վկայությունն էր մի մարդու, որը ծնվել էր Եկեղեցում և հեռացել նրանից: Սա սիրտը կեղեքող միայնակության ճիչն էր մի մարդու, որը կարող էր ունենալ այն ամենը, ինչ փողը կարող էր գնել, սակայն որը կորցրել էր կյանքի ամենակարևոր բաները աշխարհիկ այդ բարիքները կուտակելու համար» (*Continuing the Quest* [1961], 32–35; italics added):

Մորմոնի Գրքում Հակոբ մարգարեն այս հարցի վերաբերյալ կարևոր խորհուրդ է մեզ տալիս.

«Բայց նախքան հարստություններ փնտրելը, փնտրեք Աստծո արքայությունը:

Եվ սրանից հետո, երբ դուք հույս ձեռք բերեք Քրիստոսում, դուք ձեռք կբերեք հարստություններ, *եթե փնտրեք*. և դուք պետք է փնտրեք դրանք բարիք անելու մտադրությամբ՝ հագցնելու մերկերին, կերակրելու սովածներին, ազատելու գերյալներին և սփոփելու հիվանդներին ու չարչարվածներին» (Հակոբ 2.18–19; շեղագիրն ավելացված է):

Այսպիսով, հիմքն ու պատկերացումը հետևյալն են. մենք նախ պետք է փնտրենք արքայությունը, աշխատենք, պլանավորենք ապագայի համար, ծախսենք իմաստուն ձևով և օգտագործենք այն հարստությունը, որով օրհնված ենք, օգնելու համար կառուցել այդ արքայությունը: Եթե առաջնորդվենք այս հավերժական մտածելակերպով և կառուցենք այս հաստատուն հիմքի վրա, մենք կարող ենք վստահությամբ կատարել մեր առօրյա գործերը և մեր կյանքի գործը, որը պետք է խնամքով պլանավորել և ջանասիրաբար իրականացնել:

Այս հիմքի վրա եմ ես ցանկանում բացատրել տնտեսական կայունության հինգ սկզբունքները:

Վճարեք ազնիվ տասանորդ

Կայունություն #1. Վճարեք ազնիվ տասանորդ: Ես հաճախ մտածում եմ, արդյո՞ք մենք հասկանում ենք, որ մեր տասանորդը վճարելը իրենից չի ներկայանում Տիրոջը և Եկեղեցուն նվեր տալը: Տասանորդ վճարելը Տիրոջը պարտքը վերադարձնելն է: Տերն է մեր օրհնությունների աղբյուրը, ներառյալ կյանքի աղբյուրը:

Տասանորդի վճարումը պատվիրան է, պատվիրան խոստումով: Եթե մենք հնազանդվենք այս պատվիրանին, մենք խոստում ունենք, որ «կբարգավաճենք երկրում»: Այս բարգավաճումը ավելին է, քան նյութական բարիքները, այն կարող է ներառել լավ առողջությունը և մտքի պարզությունը: Այն ներառում է ընտանեկան միասնությունը և հոգևոր աճը: Ես հուսով եմ, որ նրանք, ովքեր չեն վճարում իրենց լրիվ տասանորդը, հավատք և ուժ կփնտրեն դա անելու համար: Եթե փոխհատուցեք ձեր Վարդապետի հանդեպ այս պարտքը, ապա դուք կգտնեք մեծ, մեծ երջանկություն, որը կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր հավատարիմ են այս պատվիրանին:

Ապրեք խնայողաբար

Կայունություն #2. Ապրեք ավելի քչով, քան վաստակում եք: Ես հասկացել եմ, որ հնարավոր չէ վաստակել ավելին, քան կարելի է ծախսել: Ես համոզված եմ, որ գումարի չափը չէ, որ մտքին խաղաղություն է պարգևում, այլ փողի ճիշտ տիրապետումը: Փողը կարող է լինել հնազանդ ծառա և խիստ տեր: Նրանք, ովքեր այնպես են կառուցում իրենց ապրելաձևը, որպեսզի մի փոքր ավելցուկ ունենան, վերահսկում են իրենց պայմանները: Նրանք, ովքեր ծախսում են մի փոքր ավել, քան վաստակում են, վերահսկվում են պայմանների կողմից: Նրանք գերության մեջ են: Նախագահ Հեբեր Ջ. Գրանտն ասել է. «Եթե կա մի բան, որը խաղաղություն և գոհություն կբերի մարդու սրտին և ընտանիքին, դա մեր միջոցների սահմաններում ապրելն է: Եվ եթե կա մի բան, որը քայքայում է, հուսահատում է և հուսալքում, դա պարտքեր և պարտավորություններ ունենալն է, որոնք չես կարողանում վերադարձնել» (*Gospel Standards,* comp. G. Homer Durham [1941], 111):

Վաստակելուց քիչ ծախսելու բանալին պարզ է. այն կոչվում է զսպվածություն: Վաղ, թե ուշ կյանքում մենք բոլորս պետք է սովորենք զսպել մեզ, մեր ախորժակները և մեր տնտեսական ցանկությունները: Որքան օրհնված է նա, ով սովորում է ծախսել ավելի քիչ, քան վաստակում է, և մի կողմ է դնում վատ օրվա համար:

Տարբերեք կարիքները և ցանկությունները

Կայունություն #3. Սովորեք տարբերել կարիքները ցանկություններից: Հաճախորդների ցանկությունները հորինվում են մարդկանց կողմից: Մեր ազատ մրցունակ ձեռնարկատիրական համակարգն անսահման ապրանքներ և ծառայություններ է առաջարկում խթանելու համար ավելի շատ հարմարավետություն և շքեղություն ունենալու մեր ցանկությունը: Ես չեմ քննադատում համակարգը կամ այդ ապրանքների ու ծառայությունների առկայությունը: Ես միայն մտահոգվում եմ մեր ժողովրդի առողջ դատողության համար իրենց գնումներն անելիս: Մենք պետք է սովորենք, որ զոհաբերությունը մեր հավերժական կարգապահության կարևոր մասն է:

Այս և շատ այլ երկրներում Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո ծնված շատ ծնողներ և երեխաներ միայն բարգավաճ պայմաններ են տեսել: Շատերը միայն վերելք են ապրել: Աշխատանքի բազմաթիվ հնարավորություններ կային բոլոր նրանց համար, ովքեր ընդունակ էին

աշխատելու: Շատերի համար երեկվա շքեղությունները համարվում են այսօրվա անհրաժեշտությունները:

Սա լավ երևում է երիտասարդ զույգերի օրինակի վրա, որոնք ակնկալում են կահավորել իրենց տունը և ապահովել իրենց բոլոր շքեղություններով, երբ նոր են սկսում իրենց ամուսնությունը, ինչը իրենց ծնողները կարողացել են ձեռք բերել պայքարի և զոհաբերության տարիների ընթացքում: Շատ արագ շատ բան ցանկանալով երիտասարդ զույգերը կարող են տրվել հեշտ կրեդիտ ծրագրերին, խրվելով պարտքի մեջ: Դա նրանց թույլ չի տա ունենալ ֆինասական միջոցներ անելու այն, ինչ առաջարկում է Եկեղեցին՝ մթերք պահեստավորելու և ապահովության այլ ծրագրեր իրականացնելու համար:

Ագահությունը և դրամի վատ տնօրինումը ծանր սպի է ամուսնական հարաբերությունների համար: Ամուսնական խնդիրների մեծ մասը, թվում է թե տնտեսական արմատներ ունեն՝ կամ անբավարար եկամուտ ընտանիքը պահելու համար կամ վաստակած դրամի սխալ տնօրինում:

Մի երիտասարդ հայր եկավ իր եպիսկոպոսի մոտ ֆինանսական խորհրդատվության համար և պատմեց շատ տարածված մի պատմություն. «Եպիսկոպոս, ես լավ պատրաստված ինժեներ եմ, և ես լավ աշխատավարձ եմ ստանում: Թվում է, թե ինստիտուտում ինձ լավ սովորեցրել են, ինչպես փող վաստակեմ, սակայն, չեն սովորեցրել ինչպես տնօրինել փողը»:

Թեև մենք հավատացած ենք, որ յուրաքանչյուր ուսանողի համար կարևոր է հաճախորդների սպասարկման մասին կրթությունը, հիմնական կրթությունը ծնողների պարտականությունն է: Ծնողները չեն կարող այս կարևոր կրթությունը թողնել պատահականության վրա կամ թողնել այդ պատասխանատվությունը մեր հասարակական դպրոցների և համալսարանների վրա:

Այս ուսուցման կարևոր մասը պետք է լինի պարտքի բացատրությունը: Մեզանից մեծ մասի համար կան ֆինանսական պարտքի երկու տեսակներ՝ հաճախորդի պարտք և ներդրումային կամ գործարարական պարտք: Հաճախորդի պարտքը կապված է ապառիկով ապրանքների գնման հետ, որոնք մենք օգտագործում ենք ամեն օր: Օրինակ՝ հագուստի, տան ապրանքների, կահույքի գնումը և այլն: Հաճախորդի պարտքը ապահովվում է մեր ապագա եկամուտները գրավ դնելով: Սա կարող է շատ վտանգավոր լինել: Եթե մենք կորցնենք աշխատանքը, հաշմանդամ դառնանք կամ լուրջ ծայրահեղ վիճակում հայտնվենք, դժվարություններ կունենանք մեր պարտքերը մարելու հարցում: Ապառիկը գնման ամենաթանկ եղանակն է: Մեր գնված ապրանքների արժեքին մենք պետք է ավելացնենք տոկոսավճարը և սպասարկման վարձերը:

Ես հասկանում եմ, որ երիտասարդ ընտանիքները երբեմն անհրաժեշտություն ունեն ապառիկով գնումներ կատարելու: Բայց մենք նախազգուշացնում ենք ձեզ չգնել ավելին, քան իրականում անհրաժեշտ է, և վճարել ձեր պարտքերը որքան հնարավոր է արագ: Երբ դրամը չի բավականացնում, խուսափեք հավելյալ տոկոսավճարների լրացուցիչ բեռից:

Ներդրումային պարտքը պետք է ամբողջովին ապահովված լինի, որպեսզի վտանգի տակ չդնի ընտանիքի ապահովությունը: Ներդրում մի կատարեք խարդախ ձեռնարկումների մեջ: Խարդախության ոգին կարող է վարակիչ դառնալ: Շատ հարստություններ կորել են ավելի ու ավելի շատ կուտակելու անվերահսկելի ցանկության հետևանքով: Եկեք սովորենք անցյալի սխալներից և գերի չդարձնենք մեր ժամանակը, էներգիան և ընդհանուր առողջությունը ավելի շատ նյութական բարիքներ ձեռք բերելու ագահ ցանկությանը:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը տվել է խորհելու տեղիք տվող հետևյալ խորհուրդը.

«Տերը օրհնել է մեզ որպես ժողովրդի այնպիսի բարգավաճումով, որն երբեք չի եղել անցյալում: Մեր իշխանության տակ եղած միջոցները լավն են և անհրաժեշտ այստեղ երկրի վրա մեր աշխատանքի համար: Սակայն ես վախենում եմ, որ մեզանից շատերը գերհագեցել են հոտերով, հեկտարներով, հարստությամբ և սկսել են երկրպագել դրանց որպես կեղծ աստվածների, և նրանք իշխանություն ունեն մեզ վրա: Արդյո՞ք մենք ավելի շատ ունենք այդ լավ բաներից, քան մեր հավատքը կարող է դիմանալ: Շատ մարդիկ ծախսում են իրենց ժամանակի մեծ մասը իրենց արտաքին համբավի վրա աշխատելով, որը ներառում է՝ բավականաչափ փող, պարտատոմսեր, ներդրումային գործիքներ, սեփականություն, կրեդիտ քարտեր, կահույք, մեքենաներ և նման բաներ, ապահովելու համար աշխարհիկ անվտանգությունը ակնկալվող երկար և երջանիկ կյանքի համար: Մոռացվում է այն փաստը, որ մեր հանձնարարականն է օգտագործել այդ բազմաթիվ միջոցները մեր ընտանիքներում և քվորումներում Աստծո արքայությունը կառուցելու համար» (“The False Gods We Worship,” *Ensign*, June 1976, 4):

Վկայության տեսքով թույլ տվեք ավելացնել Նախագահ Քիմբալի խոսքերին: Ես չգիտեմ ոչ մի դեպք, երբ երջանկությունն ու մտքի խաղաղությունը ավելացել են ընտանիքի խելամիտ ցանկություններից և կարիքներից դուրս սեփականության ավելացման հետևանքով:

Վարեք իմաստուն բյուջե

Կայունություն #4. Մշակեք բյուջե և ապրեք դրա սահմաններում: Իմ ընկերներից մեկի դուստրը ԲՅՀ-ում սովորելիս մեկնեց մեկ կիսամյակ արտասահմանում սովորելու: Նա անընդհատ տուն էր գրում, ավելի շատ գումար խնդրելով: Ընկերոջս մտահոգությունն այնքան խորացավ, որ նա զանգահարեց արտասահմանում գտնվող իր դստերը և հարցրեց, թե որն է լրացուցիչ ֆոնդերի անհրաժեշտությունը: Զրույցի ժամանակ դուստրը բացատրեց. «Բայց հայրիկ, ես կարող եմ քեզ ասել, թե ինչպես է ծախսվել քո ուղարկած յուրաքանչյուր կոպեկը»:

Նա պատասխանեց. «Դու, կարծես, չես հասկանում: Ինձ հետաքրքրում է բյուջեն՝ ծախսերի պլանը, ոչ թե ուր են գնում փողերը»:

Միգուցե ծնողները պետք է ավելի շատ նման լինեն այս հորը, որին իր որդին հեռագրել է. «Ոչ փող, ոչ ուրախություն, քո որդի»: Հայրը հեռագրեց. «Տխուր է, վատ է, քո հայրը»:

Շատ մարդկանց հետ հարցազրույց անցկացնելու արդյունքում ես եկել եմ այն եզրակացության, որ շատ-շատերը չունեն աշխատող բյուջե և չեն ստիպում իրենց հետևել դրան: Շատ մարդիկ մտածում են, թե բյուջեն խլում է իրենցից իրենց ազատությունը: Ընդհակառակը, հաջողակ մարդիկ հասկացել են, որ բյուջեն իրական տնտեսական ազատություն է պարգևում:

Բյուջե կազմելը և ֆինանսական կառավարումը չպետք է լինի շատ բարդ կամ ժամանակ խլող գործընթաց: Գաղթական մի հոր մասին պատմությունը պատմում է, թե ինչպես էր նա պահում իր կրեդիտորական պարտքերը կոշիկի տուփի մեջ, դեբիտորական պարտքերը սռնու վրա, իսկ կանխիկ փողը՝ դրամարկղում:

«Ես չեմ հասկանում, թե ինչպես դու կարող ես վարել քո գործն այսպես», - ասում էր նրա որդին: -Ինչպե՞ս ես դու իմանում, թե որքան է քո շահույթը:

«Որդիս, - պատասխանեց գործարարը, - երբ իջա նավից, ունեի միայն մեկ տաբատ, որը հագիս էր: Այսօր, քո քույրը արվետսի ուսուցչուհի է, քո եղբայրը բժիշկ է, իսկ դու՝ հաշվապահ: Ես ունեմ մեքենա, տուն և լավ գործ: Ամեն ինչի համար վճարված է: Այնպես որ գումարի այդ ամենն իրար, հանի տաբատների արժեքը, և կստանաս իմ շահույթը»:

Ֆինանսական իմաստուն խորհրդատուները սովորեցնում են, որ յուրաքանչյուր լավ բյուջե ունի չորս տարբեր տարրեր: *Առաջին* տարրերը պետք է լինեն հիմնական գործող կարիքները, ինչպիսիք են՝ սնունդը, հագուստը, և այլն, *երկրորդը*՝ տան գումարը, *երրորդը*՝ ծայրահեղ իրավիճակների համար նախատեսված գումարը, ինչպիսիք են՝ խնայողությունները, առողջության և կյանքի ապահովագրությունը, և *չորրորդը*՝ իմաստուն ներդրում և պահեստավորման ծրագիր ապագայի համար:

Թույլ տվեք մեկնաբանել այդ տարրերից երկուսը: Չկա ավելի որոշակի բան կյանքում, քան չնախատեսված բաները: Աճող բժշկական գների պայմաններում առողջական ապահովագրությունը միակ եղանակն է, որով շատ ընտանիքներ կարող են հոգալ լուրջ պատահարի, հիվանդության, ծննդաբերության, հատկապես վաղ ծննդաբերության հետ կապված, ծախսերը: Կյանքի ապահովագրությունը եկամտի շարունակելիություն է ապահովում վաստակողի վաղահաս մահվան դեպքում: Ամեն ընտանիք պետք է կետ հատկացնի առողջության և կյանքի պատշաճ ապահովագրության համար:

Այս հիմնական կարիքները հոգալուց հետո մենք պետք է խնայողաբար ֆոնդեր ստեղծենք ներդրումների համար: Ես նկատել եմ, որ այն մարդիկ, ովքեր կանոնավոր ձևով չեն մշակել խնայելու սովորույթ, չեն կարողացել հաջող ներդրում կատարել: Սա կարգապահություն և ընտրության դատողություն է պահանջում: Կան ներդրումներ կատարելու շատ ճանապարհներ: Իմ միակ խորհուրդն է իմաստուն ձևով ընտրել ներդրումային խորհրդատուներին: Հավաստիացեք, որ նրանք գնահատում են ձեր վստահությունը, ունենալով ներդրումային հաջող փորձ:

Եղեք ազնիվ

Կայունություն #5. Եղեք ազնիվ ձեր բոլոր ֆինանսական գործարքներում: Ազնվության իդեալը երբեք չի հնանում: Դա վերաբերում է այն ամենին, ինչ մենք անում ենք: Որպես Եկեղեցու ղեկավարներ և անդամներ, մենք պետք է լինենք ազնվության մարմնավորում:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, այս հինգ սկզբունքների միջոցով ես փորձեցի նախանշել այն, ինչը կարող է բնութագրվել որպես ֆինանսների և միջոցների կառավարման ճիշտ եղանակ:

Ես հուսով եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է օգուտ քաղել այն կիրառելուց: Ես բերում եմ իմ վկայությունը, որ դրանք ճշմարիտ են, և որ Եկեղեցին և այն աշխատանքը, որի մեջ մենք ներգրավված ենք, ճշմարիտ են:

1979 թ. հոկտեմբերի Եկեղեցու գերագույն համաժողովի բարօրության նիստին Նախագահ Թաների ելույթից (see Conference Report, Oct. 1979, 117–21; or *Ensign,* Nov. 1979, 80–82):

Բյուջե _____ **-ից մինչև** _____
ամսաթիվ ամսաթիվ

ԵԿԱՄՈՒՏ	ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ	ԻՐԱԿԱՆ
Եկամուտներ կան աշխատավարձ հարկումից հետո		
Այլ եկամուտ		
Ընդհանուր եկամուտ		

ԾԱԽՍԵՐ	ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ	ԻՐԱԿԱՆ
Տասանորդ		
Եկեղեցու այլ նվիրատվություններ		
Երկարաժամկետ խնայողություններ		
Խնայողություններ ծայրահեղ իրավիճակների համար		
Սնունդ		
Տան վճար կամ վարձ		
Կոմունալ ծախսեր		
Տրանսպորտ		
Պարտքի դիմաց վճարումներ		
Ապահովագրություն		
Բժշկական ծախսեր		
Հագուստ		
Այլ		
Այլ		
Այլ		
Ընդհանուր ծախսեր		

ՄԱՍ Բ
ԾՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ



«Երեխաները Տիրոջ ժառանգություն են»

9

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Պարտավորություն ստանձնեք առանձին ժամանակ հատկացնել ձեր երեխաներից յուրաքանչյուրի կամ ձեր բարեկամների երեխաներից մեկի հետ: Երեխայի հետ խոսելիս աշխատեք ինչ-որ նոր բան սովորել նրա հետաքրքրությունների, կարիքների և խնդիրների մասին:
- Ժամանակ հատկացրեք ձեր ամուսնու կամ կնոջ հետ ձեր երեխաների մասին խոսելու համար: Մտածեք յուրաքանչյուր երեխայի ուժեղ կողմերի և խնդիրների մասին: Մտածեք, թե ինչ կարող եք անել յուրաքանչյուր երեխայի կարիքները բավարարելու համար:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Թանկարժեք երեխաներ՝ պարգև Աստծուց

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Մատթեոսի գրքից մենք իմանում ենք, որ նրանից հետո, երբ Հիսուսը ու Նրա աշակերտները իջան Փոխակերպման Սարից, նրանք մնացին Գալիլեայում, ապա եկան Կափառնայում: Աշակերտները Հիսուսին հարցրեցին. «Ո՞վ է ամենամեծը երկնքի արքայությունում»:

«Եվ Հիսուսն իր մոտ մի երեխա կանչելով, նորան կանգնեցրեց նորանց մեջտեղը.

Եվ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե դարձի չգաք և չլինիք երեխաների նման, չեք մտնիլ երկնքի արքայությունը:

Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնէ, նա է մեծ երկնքի արքայության մեջ:

Եվ ով որ մի այսպիսի երեխայի ընդունի իմ անունովը, ինձ է ընդունում:

Եվ ով որ գայթակղեցնէ այս փոքրներից մեկին, որ հավատում են ինձ, ավելի լավ է նորան, որ մի էշի ջաղացի քար նորա վզիցը կախվի, և նա ծովի անդունդում ընկղմվի»:[1]

Կարծում եմ, շատ կարևոր է, որ Հիսուսը սիրում էր այդ փոքրիկներին, որոնք միայն վերջերս էին հեռացել նախաերկրային կյանքից և եկել երկիր: Երեխաներն այն ժամանակ և այսօր օրհնում են մեր կյանքը, վառում են մեր սերը և լավ արարքների մեզ դրդում:

Զարմանալի չէ այն, ինչ բանաստեղծ Վորդսվորթը ասում է մեր ծննդի մասին. «Փառքի ամպերից ենք մենք գալիս, Աստծո մոտից, որը մեր տունն է»:[2]

Այս փոքրիկներից շատերը գալիս են ծնողների մոտ, որոնք անհամբեր սպասում են նրանց ժամանմանը, մայրերի ու հայրերի մոտ, ովքեր ուրախանում են, լինելով այդ հրաշքի մասը, որը մենք կոչում ենք ծնունդ: Չկա ավելի մեծ զոհաբերություն, ավելի խորը ցավ, ավելի երկար սպասելիք:

Զարմանալի չէ, որ մենք ապշում ենք, երբ Ամերիկայի քաղաքներից մեկից լսում ենք պատմություն այն մասին, որ «նորածին աղջնակը, փաթաթված թղթե պարկի մեջ և գցված աղբարկղը, գտնվում է բժիշկների խիստ հսկողության տակ հիվանդանոցում: Երեխան իրեն լավ է զգում: «Նա գեղեցիկ, առողջ երեխա է», - ասաց հիվանդանոցի խոսնակը չորեքշաբթի օրը: Ոստիկանությունն ասաց, որ երեխան հայտնաբերվեց, երբ աղբահանողը դատարկելով աղբարկղը աղբի մեքենայի մեջ տեսավ, ինչպես ինչ-որ բան շարժվեց աղբի մեջ: Իշխանությունները փնտրում են մորը»:

Մեր լուրջ պարտականությունն է, մեր թանկ արտոնությունը, անգամ մեր սուրբ հնարավորությունը, ողջունել մեր տներում և մեր սրտերում երեխաներին, որոնք զարդարում են մեր կյանքը:

Մեր երեխաները ունեն սովորելու երեք լսարան, որոնք բավականին տարբերվում են միմյանցից: Ես խոսում եմ դպրոցի լսարանի, եկեղեցու լսարանի և տուն կոչվող լսարանի մասին:

Դպրոցի լսարանը

Եկեղեցին միշտ մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հասարակական կրթության հանդեպ և խրախուսել է իր անդամներին մասնակցել ծնող-ուսուցիչ և այլ միջոցառումներին մեր երիտասարդների կրթությունը բարելավելու նպատակով:

Հասարակական կրթության մեջ չկա ավելի կարևոր գործոն, քան ուսուցիչը, որը հնարավորություն ունի սիրելու, ուսուցանելու և ոգեշնչելու առույգ տղաներին և աղջիկներին և երիտասարդներին: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Ուսուցանելը աշխարհի ազնվագույն մասնագիտությունն է: Երիտասարդների պատշաճ ուսու-

ցումից կախված է տան կայունությունն ու մաքրությունը, ազգի անվտանգությունը և շարունակելիությունը: Ծնողը երեխային հնարավորություն է տալիս ապրելու, ուսուցիչը երեխային հնարավորություն է տալիս լավ ապրելու»[3]: Ես համոզված եմ, որ մենք պետք է հասկանանք նրանց կարևորությունը և նրանց կենսական առաքելությունը, տրամադրելով համապատասխան տարածքներ, լավագույն գրքեր և աշխատավարձ, որը կդրսևորի մեր երախտագիտությունն ու վստահությունը:

Մեզանից յուրաքանչյուրը սիրով է հիշում պատանեկության ուսուցիչներին: Կարծում եմ, հետաքրքիր է, որ իմ տարրական դասարանների երաժշտության ուսուցչուհու անունը Օրիորդ Շարփ էր: Նա ունակություն ուներ իր աշակերտների մեջ ներարկել սեր դեպի երաժշտություն և սովորեցնում էր մեզ տարբերել երաժշտական գործիքները ու նրանց հնչյունները: Ես լավ եմ հիշում Օրիորդ Ռութ Քրոուի ազդեցությունը, որը առողջապահություն էր ուսուցանում: Թեև Ճգնաժամի տարիներ էին, նա հետևում էր, որ վեցերորդ դասարանի յուրաքանչյուր աշակերտ ունենար ատամնաբուժական աղյուսակ: Նա անձամբ էր ստուգում ամեն աշակերտի ատամների վիճակը և հետևում, որպեսզի հանրային կամ մասնավոր միջոցներով յուրաքանչյուր երեխա ատամնաբուժական օգնություն ստանա: Երբ Օրիորդ Բակհաուզը, որն աշխարհագրություն էր դասավանդում, բացում էր աշխարհի քարտեզները, և իր ցուցափայտով նշում երկրների մայրաքաղաքները և ամեն երկրի առանձնահատկությունները, լեզուն և մշակույթը, ես չէի էլ երազում, որ մի օր կկարողանամ այցելել այդ երկրները և այդ ժողովուրդներին:

Օ՜, որքան կարևոր են մեր երեխաների կյանքում ուսուցիչները, որոնք բարձրացնում են նրանց հոգիները, զարգացնում ուղեղը և ոգեշնչում նրանց կյանքերը:

Լսարանը Եկեղեցում

Լսարանը եկեղեցում կենսական լրացում է ամեն երեխայի և պատանու կրթությանը: Այս միջավայրում ամեն ուսուցիչ կարող է մեծ աճ հաղորդել նրանց, ովքեր լսում են նրա դասերը և զգում են նրա վկայության ազդեցությունը: Երեխաների խմբում, Կիրակնօրյա Դպրոցում, Երիտասարդ Կանանց և Ահարոնյան Քահանայության ժողովներին Տիրոջ ներշնչմամբ կանչված լավ պատրաստված ուսուցիչները կարող են ազդել յորաքանչյուր երեխայի և պատանու վրա, և հուշել բոլորին «փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»:[4] Խրախուսանքի մի խոսք կամ հոգևոր միտք կարող է ազդել թանկարժեք կյանքի վրա և անջնջելի հետք թողնել անմահ հոգու վրա:

Շատ տարիներ առաջ Եկեղեցու ամսագրի մրցանակաբաշխության հանդիսավոր ճաշկերույթին մենք նստած էինք Նախագահ և Քույր Հարլոդ Բ. Լիերի կողքին: Նախագահ Լին մեր դեռահաս դստերը, Աննային, ասաց. «Տերը քեզ օրհնել է սքանչելի դեմքով և մարմնով: Պահիր ներսն այնքան գեղեցիկ, որքան արտաքինն է, և դու կօրհնվես իրական երջանկությամբ»: Այս վարպետ ուսուցիչը Աննային ոգեշնչված ուղեցույց տվեց՝ դեպի մեր Երկնային Հոր սելեստիալ արքայություն տանող:

Եկեղեցու դասարանում խոնարհ և ոգեշնչող ուսուցիչը կարող է աշակերտների մոտ սեր առաջացնել սուրբ գրությունների հանդեպ: Ինչու չէ, ուսուցիչը ոչ միայն կարող է հին ժամանակների Առաքյալներին և աշխարհի Փրկչին բերել դասարան, այլ նաև մեր երեխաների սրտերը, մտքերը և հոգիները:

Լսարան, որը կոչվում է տուն

Հավանաբար բոլոր լսարաններից ամենակարևորը տուն կոչված լսարանն է: Տանն է, որ մենք ձևավորում ենք մեր մտածելակերպը, մեր խորը համոզմունքները: Տանն է, որ սնուցվում կամ ոչնչացվում է հույսը: Մեր տները մեր կյանքի լաբորատորիաներն են: Այն, ինչ մենք անում ենք այնտեղ, որոշում է մեր կյանքի ուղին, երբ մենք հեռանում ենք տնից: Դոկտոր Ստուարտ Ե. Ռոզենբերգն իր *Ճանապարհ դեպի Վստահություն* գրքում գրել է. «Չնայած բոլոր նոր հայտնագործությունների և արդի նախագծերի, ոչ ոք դեռ չի հնարել, և երբեք չի հնարի, ընտանիքին հավասար փոխարինում»:[5]

Երջանիկ տունը ոչ այլ ինչ է, քան վաղաժամ երկնային վայր: Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը հարցրել է. «Ուզո՞ւմ ենք մենք արդյոք, որ մեր տները երջանիկ լինեն: Եթե այո, ապա թող դրանք լինեն աղոթքի, գոհության և երախտագիտության մշտական վայրեր»:[6]

Լինում են դեպքեր, երբ երեխաները մահկանացու կյանք են գալիս ֆիզիկական կամ մտավոր թերություններով: Փորձեք ինչպես մենք, երբեք հնարավոր չէ իմանալ, թե ինչու և ինչպես են այս դեպքերը պատահում: Ես ողջունում եմ այն ծնողներին, որոնք առանց տրտնջալու վերցնում են այդ երեխային իրենց գիրքը և իրենց կյանքը և Երկնային Հոր զավակներից մեկին տալիս այդ լրացուցիչ զոհաբերությունը և սերը:

Մի ամառ Ասպեն Գրով Ֆամիլի Ճամբարում ես հետևում էի մի մոր, որը համբերատար կերակրում էր իր դեռահաս դստերը, որը վնասվածք էր ստացել ծնվելիս և ամբողջովին կախված էր իր մորից: Մայրը գդալ-գդալ տալիս էր ուտելիքն ու ջուրը, անշարժ պահելով իր դստեր գլուխն ու պարանոցը: Մտքում ես մտածեցի, *17 տարի մայրը այս և այլ ծառայություններ է մատուցում իր դստերը, երբեք չմտածելով իր հարմարավետության, իր հաճույքի, իր սննդի մասին:* Թող Տերն օրհնի այսպիսի մայրերին, հայրերին, երեխաներին: Եվ Նա կօրհնի:

Երեխաների անմեղությունը

Ծնողներն ամենուրեք հասկանում են, որ աշխարհում զգացմունքների ամենահզոր համակցումը չի առաջանում որևէ մեծ տիեզերական միջադեպի արդյունքում, ոչ էլ այն կարելի է գտնել վեպերի կամ պատմական գրքերի մեջ, այլ պարզապես այն ծնողի մեջ, որը նայում է իր քնած երեխային:

Այդ ժամանակ միտքս են գալիս Չարլզ Մ. Դիքինսոնի խոսքերը.

Նրանք սրտերի և տների պաշտամունքներն են,
Նրանք Աստծո թաքնված հրեշտակներն են,
Արևի շողերը դեռ ննջում են նրանց մազերին,
Նրա փառքը դեռ շողում է նրանց աչքերում,

Եկած տնից և երկնքից
Դարձնում են ինձ ավելի մեղմ ու բարի,
Եվ այժմ հասկանում եմ, թե Հիսուսն ինչու
Աստծո արքայության հետ մանկանն է համեմատում:[7]

Երեխաների հետ մեր առօրյա փորձառություններում մենք հայտնաբերում ենք ամենախորը և հաճախ ամենալիարժեք ճշմարտությունները: *Սուրբ Ծննդյան Հեքիաթը* դասականի հեղինակ Չարլս Դիքենսը ցուցադրել է այս փաստը, երբ նկարագրել է, թե ինչպես էր խոնարհ Բոբ Քրատչիտի ընտանիքը հավաքվում սեղանի շուրջ ավելի շուտ խղճուկ ճաշի, քան երկար սպասված Սուրբ Ծննդյան ընթրիքի: Բոբը՝ հայրը, տուն էր վերադառնում իր թույլ որդուն Փոքրիկ Թիմին ուսերին դրած: Փոքրիկ Թիմը փոքր հենակ ուներ, և նրա ոտքերը երկաթե շրջանակի վրա էին հենվում»: Բոբ կինը հարցրեց. «Եվ ինչպե՞ս էր իրեն պահում փոքրիկ Թիմը»:

«Ոսկու նման, - ասաց Բոբը, - անգամ ավելի լավ: Երբեմն նա այնքան է մենակ նստում ու մտածում, որ այնպիսի տարօրինակ բաներ է մտածում, ինչը երբեք չես լսի: Տուն գալուց նա ինձ ասաց, որ հուսով է, մարդիկ տեսան իրեն եկեղեցում, որովհետև նա հաշմանդամ էր, և երևի հաճելի էր նրանց համար Սուրբ Ծննդյան Օրը հիշել, թե ով բուժեց կաղերին և կույրերին»:[8]

Թարլզ Դիքենսն ինքն ասում է. «Ես սիրում եմ այս փոքրիկ մարդուկներին, և դա քիչ բան չէ, որ նրանք, ովքեր նոր են եկել Աստծո մոտից, սիրում են մեզ»:

Երեխաները արտահայտում են իրենց սերը յուրահատուկ և նորարար եղանակներով: Որոշ ժամանակ առաջ իմ ծննդյան օրը մի թանկարժեք փոքրիկ աղջնակ նվիրեց իր պատրաստած ծննդյան քարտը և ծրարի մեջ դրեց մի փոքրիկ խաղալիք կողպեք, որը սիրում էր, և կարծում էր, ինձ էլ դուր կգա դա նվեր ստանալ:

«Աշխարհի ամենասիրված տեսարաններից ոչինչ այնքան գեղեցիկ չէ, որքան երբ երեխան նվիրում է ինչ-որ բան: Որքան էլ փոքր բան դա լինի, երեխան ձեզ տալիս է ողջ աշխարհը: Այն բացում է ձեզ համար աշխարհն այնպես, կարծես դա գիրք լինի, որը դուք երբեք չեք կարողացել կարդալ: Բայց երբ նվերը գտնում ես, այն միշտ ինչ-որ անհասկանալի փոքր իր է, ներկված փորագրված . . . ծաղրածուի տեսք ունեցող հրեշտակ: Երեխան այնքան քիչ բան ունի տալու, որովհետև երբեք չգիտի, որ տվել է ձեզ ամեն ինչը»:[9]

Այդպիսին էր Ջեննիի նվերը ինձ համար:

Երեխաները կարծես կայուն հավատք ունեն իրենց Երկնային Հոր հանդեպ, իրենց քաղցր աղոթքներին պատասխանելու Նրա ունակության և ցանկության հանդեպ: Իմ անձնական փորձից ես գիտեմ, որ երբ երեխան աղոթում է, Աստված լսում է:

Թույլ տվեք ձեզ հետ կիսվել Բարի Բոնելի և Դեյլ Մարֆիի փորձով, որոնք նախկինում Ատլանտա Բրեյվս բեյսբորի ակումբի լավ հայտնի բեյսբոլ խաղացողներ են: Երկուսն էլ նորադարձ են Եկեղեցում, Դեյլ Մարֆին մկրտվել է Բարի Բոնելի կողմից:

«Մի դեպք տեղի ունեցավ 1978 թվին, որը Բարին նկարագրեց որպես «կյանքը փոխող»: Նա ահավոր տառապում էր, որ չէր կարողանում գնդակ խփել: Իր վատ խաղալու պատճառով նա մեղադրում էր իրեն և թշվառ զգում: Նա իսկապես չէր ցանկանում գնալ, երբ Դեյլ Մարֆին խնդրեց նրան միասին գնալ հիվանդանոց, սակայն ի վերջո գնաց: Այնտեղ նա հանդիպեց Ռիքի Լիթլին, Ատլանտա Բրեյվսի աննկուն սիրահարին, սակայն պատանին սակավարյունության էր հիվանդ: Ակնհայտ էր, որ Ռիքին մահամերձ էր: Բարին խոր ցանկություն ունեցավ ասելու որևէ մխիթարող բան, սակայն կարծես ոչինչ պատշաճ չգտավ: Վերջապես նա հարցրեց, թե արդյո՞ք կարող է ինչ-որ բան անել: Պատանին մի պահ տատանվեց, ապա ասաց, կարո՞ղ են արդյոք ամենքը հաջորդ խաղի ժամանակ հարվածել նշանակետին: Բարին [ավելի ուշ] ասաց. «Այդ խնդրանքը այդքան բարդ չէր Դեյլի համար, որը երկու անգամ ճիշտ հարվածեց այդ երեկո, սակայն ես տանջվեցի ողջ տարի և այդպես էլ չկարողացա ճիշտ հարվածել: Ապա ես մի ջերմ զգացում ունեցա և ասացի Ռիքիին, որ կարող է վստահ լինել ինձ վրա»: Այդ երեկո Բարին առաջին անգամ տարվա մեջ ճիշտ հարվածեց:[10] Երեխայի աղոթքը ստացավ իր պատասխանը, երեխայի ցանկությունը կատարվեց:

Անվտանգության կարիք

Եթե միայն բոլոր երեխաները ունենային սիրող ծնողներ, ապահով տներ և հոգ տանող ընկերներ, որքան սքանչելի կլիներ նրանց աշխարհը: Դժբախտաբար, ոչ բոլոր երեխաներն են այդքան առատորեն օրհնված: Կան երեխաներ, որոնք ականատես են լինում, ինչպես են իրենց հայրերը ծեծում մայրերին, մյուսները այդ բռնության իրենց բաժինն են ստանում: Ինչպիսի անիրավություն, ինչպիսի անբարոյականություն, ինչպիսի ամոթ:

Ամենուրեք տեղական հիվանդանոցներ են հասցնում այդ փոքրիկներին, վնասված ու ծեծված, ուղեկցվելով անամոթ ստերով այն մասին, որ երեխան «վազել և խփվել է դռանը» կամ «ընկել է աստիճաններից»: Ստախոսները, երեխաների վրա բռնացողները մի օր կքաղեն իրենց կեղտոտ արարքների փոթորիկը: Լուռ, վնասված, բռնության զոհ դարձած վիրավորված երեխան պետք է օգնություն ստանա:

Ինձ ուղղված նամակում շրջանային մի դատավոր գրել է. «Երեխաների սեռական բռնությունը քաղաքակիրթ հասարակության ամենակեղտոտ, ամենակործանիչ և ամենաանբարոյական հանցագործություններից է: Ահազանգող աճ է նկատվում երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության հաղորդվող դեպքերի առումով: Մեր դատարանները լցված են այս զարհուրելի գործերով»:

Եկեղեցին չի անտեսում նման անառակ և ցածր պահվածքը: Ընդհակառակը, մենք ամենախիստ ձևով մեղադրում ենք նման վերաբերմունքը Աստծո թանկարժեք երեխաների հանդեպ: Թող որ երեխան փրկվի, սնուցվի, սիրվի և բուժվի: Թող մեղավորը իր արարքների համար բերվի արդարադատության առաջ, պատասխանատվության և մասնագիտական օգնություն ստանա այդ անբարո

և դիվային վարքը կանխելու համար: Եթե դուք և ես իմանում ենք նման պահվածքի մասին և ոչինչ չենք ձեռնարկում, մենք դառնում ենք խնդրի մի մասը: Մենք կիսում ենք մեղքի մասը: Մենք զգում ենք պատժի մասը:

Ես հուսով եմ, որ շատ խիստ չեմ խոսում, սակայն ես սիրում եմ այդ փոքրիկներին և գիտեմ, որ Տերը նույնպես սիրում է նրանց: Երևի թե չկա այս սիրո ավելի հուզիչ պատմություն, քան մանուկներին օրհնություն տվող Հիսուսի մասին պատմությունը, որը նկարագրվում է 3 Նեփի-ում: Այն պատմում է Հիսուսի մասին, որը բուժում է հիվանդներին, ուսուցանում է մարդկանց և նրանց համար աղոթում է Երկնային Հորը: Ապա թույլ տվեք ինձ մեջբերել թանկարժեք խոսքերը.

«[Հիսուսը] վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

Եվ երբ նա արեց այս, նա կրկին արտասվեց.

Եվ նա խոսեց բազմության հետ, և ասաց նրանց. Նայեք ձեր փոքրիկներին:

Եվ երբ նրանք նայեցին տեսնելու համար, նրանք գցեցին իրենց աչքերը դեպի երկինք, և նրանք տեսան երկինքները բաց, և նրանք տեսան հրեշտակներ՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին. . . և հրեշտակները սպասավորում էին նրանց»:[1]

Դուք կարող եք հարցնել. *Արդյո՞ք նման բաներ կատարվում են անգամ այսօր:* Թույլ տվեք ձեզ հետ կիսվել տատիկի ու պապիկի մասին մի հիանալի պատմությամբ, որոնք տարիներ առաջ ծառայում էին միսիայում, և որոնց թոռնիկը զարմանալի ձևով օրհնվեց: Միսիոներ պապիկը գրում է.

«Կինս, Դիանան, և ես այժմ ծառայում ենք միսիայում Ջեքսոնում, Օհայո: Միսիայի կանչը ընդունելիս մեր մեծ մտավախություններից մեկը մեր ընտանիքն էր: Մենք չէինք լինի իրենց կողքին, երբ նրանք խնդիրներ ունենային:

Միսիա գնալուց առաջ մեր թոռնիկը, Ռ. Ջ., որը երկուս ու կես տարեկան էր, պետք է աչքի վիարահատության ենթարկվեր: Նրա մայրը ինձ խնդրեց իրենց հետ գնալ, քանի որ ես և Ռ.Ջ. իսկական ընկերներ ենք: Վիրահատությունը լավ անցավ, բայց Ռ. Ջ.-ն լաց էր լինում վիրահատությունից առաջ և հետո, որովհետև ընտանիքի ոչ մի անդամ չէր կարող մտնել վիրահատության սենյակ, իսկ նա վախենում էր:

Մոտ վեց ամիս անց, երբ մենք դեռ միսիայում էինք, Ռ. Ջ.-ն պետք է անցներ մյուս աչքի վիրահատությունը: Նրա մայրը զանգահարեց և ցանկություն հայտնեց, որ ես իրենց հետ լինեի երկրորդ վիրահատության ժամանակ: Իհարկե, հեռավորությունը և միսիան թույլ չէին տալիս, որ ես լինեի նրանց հետ: Ես և Դիանան ծոմ պահեցինք և աղոթեցինք Տիրոջը վիրահատության ժամանակ նրա հանգստության համար:

Վիրահատության ավարտից մի փոքր անց մենք զանգահարեցինք և իմացանք, որ Ռ. Ջ.-ն հիշում էր նախկին փորձը և չէր ուզում, որ ծնողները մենակ թողնեին իրեն: Սակայն, երբ մտավ վիրահատության սենյակ, նա հանգստացավ: Նա պառկեց վիրահատության սեղանին, հանեց իր ակնոցները և հանգիստ հոգով անցավ վիրահատությունը: Մենք շատ շնորհակալ էինք, մեր աղոթքները ստացան իրենց պատասխանները:

Մի քանի օր անց մենք զանգահարեցինք մեր դստերը և հարցրեցինք Ռ. Ջ.-ի մասին: Նա լավ էր իրեն զգում, և դուստրս դա կապեց մեզ հետ. Վիրահատությունից հետո Ռ.Ջ.-ն արթնացրեց մայրիկին և ասաց, որ պապիկը վիրահատության ժամանակ այնտեղ էր: Նա ասաց. «Պապիկը այնտեղ էր, և նա ամեն ինչ լավ դարձրեց»: Տեսնում եք, Տերն այնպես արեց, որ անեստեզիոլոգը նմանվեց պապիկին, և փոքրիկ տղան կարծում էր, թե դա իր պապիկն է, բայց նրա տատիկն ու պապիկը միսիայում էին 1,800 մղոն հեռու»:

Պապիկը մի գուցե քո անկողնու կողքին չէր, Ռ.Ջ., բայց դու նրա աղոթքների ու մտքերի մեջ էիր: Դու Տիրոջ ձեռքի մեջ էիր և օրհնվեցիր մեր բոլորի Հոր կողմից:

Իմ սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, թող երեխաների ծիծաղը ուրախությամբ լցնի ձեր սրտերը: Թող երեխաների հավատքը հանգստացնի մեր հոգիները: Թող երեխաների սերը մեր գործերի հղումը լինի: «Երեխաները Տիրոջ ժառանգությունն են»:[12] Թող մեր Երկնային Հայրը միշտ օրհնի այս քաղցր հոգիներին, Վարդապետի այդ հատուկ ընկերներին:

From the June 2000 *Ensign,* pages 2–5.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Մատթեոս ԺԸ.1–6
2. "Ode: Intimations of Immortality from Recollections of Early Childhood."
3. *Gospel Ideals* (1954), 436.
4. Վարդապետություն և Ուխտեր 88.118
5. *The Road to Confidence* (1959), 121.
6. In Conference Report, Apr. 1944, 32.
7. From *The Children,* in Jack M. Lyon and others, eds., *Best-Loved Poems of the LDS People* (1996), 21.
8. *A Christmas Carol and Cricket on the Hearth* (n.d.), 50–51.
9. Margaret Lee Runbeck, *Bits & Pieces,* 20 Sept. 1990.
10. James L. Ison, *Mormons in the Major Leagues* (1991), 21.
11. 3 Նեփի 17.21–24
12. Սաղմոս ՃԻԷ.3

Հայրերի և մայրերի սուրբ դերերը

10

Մաս 1. Հայրերի դերը

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Վերանայեք հայրերի և մայրերի դերերը, ինչպես տրված է «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» յոթերորդ պարբերությունում (տե՛ս էջ iv): Աղոթքով որոշեք, թե ինչպես է այդ խորհուրդը կիրառելի ձեր տանը և ինչ դուք կանեք դրան հետևելու համար:
- Նամակ գրեք ձեր հորը կամ պապիկին:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Իսրայելի հայրերին

Նախագահ Էզրա Թավտ Բենսոն
Եկեղեցու 13-րդ Նախագահ

Իմ սիրելի եղբայրնե՛ր, ես շնորհակալ եմ, որ այստեղ եմ ձեզ հետ Աստծո քահանայության այս փառահեղ հավաքին: Ես աղոթում եմ, որպեսզի Տիրոջ Հոգին լինի ինձ հետ և ձեզ հետ, երբ ես կխոսեմ ձեզ հետ այս կարևոր թեմայի շուրջ: Այս երեկո ես կցանկանայի խոսել հայրերի հետ, որոնք հավաքվել են այստեղ և ողջ Եկեղեցում, իրենց սուրբ կոչումների մասին:

Ես հուսով եմ երիտասարդները նույնպես ուշադիր կլսեն, քանի որ դուք այժմ պատրաստվում եք դառնալ Եկեղեցու ապագա հայրերը:

Հավերժական կոչում

Հայրե՛ր, դուք ունեք հավերժական կոչում, որից երբեք չեք ազատվի: Եկեղեցու կոչումները, որքան էլ կարևոր լինեն, իրենց էությամբ որոշ ժամանակահատվածի համար են, այնուհետև տեղի է ունենում պատշաճ ազատումը: Սակայն հոր կոչումը հավերժական է, և դրա կարևորությունը ժամանակից դուրս է: Այն կոչում է ժամանակի և հավերժության համար:

Նախագահ Հարոլդ Բ. Լին ճշմարտացիորեն ասել է, որ «Տիրոջ աշխատանքից ամենակարևորը, որը դուք հայրե՛ր երբևէ կանեք, դա ձեր սեփական տան պատերի ներսում կատարած աշխատանքն է: Տնային ուսուցումը, եպիսկոպոսության աշխատանքը և Եկեղեցու այլ պարտականությունները բոլորը կարևոր են, սակայն ամենակարևոր աշխատանքը ձեր տան պատերի ներսում է» (*Strengthening the Home* [pamphlet, 1973], 7):

Ո՞րն է այդ դեպքում հոր հատուկ պարտականությունը իր տան պատերի ներսում: Թույլ տվեք նշեմ Իսրայելի յուրաքանչյուր հոր հիմնական պարտականությունները:

Ապահովել նյութական կարիքները

Առաջին, դուք սուրբ պարտականություն ունեք ապահովելու ձեր ընտանիքի նյութական կարիքները:

Տերը հստակ սահմանել է արդարակյաց սերունդ մեծացնելու և այն ապահովելու դերերը: Սկզբում, Ադամը, ոչ թե Եվան, հրահանգ ստացավ հաց վաստակել իր քրտինքով:

Պողոս Առաքյալը ամուսիններին և հայրերին խորհուրդ է տալիս. «Բայց եթե մեկը իրանների և մանավանդ ընտանիքների համար խնամք չտանի, նա հավատքիցն ուրացած է և անհավատից էլ չար է» (Ա Տիմոթեոս Ե.8):

Վերականգնված Եկեղեցու վաղ շրջանում Տերը հատկապես կոչ է արել տղամարդկանց կատարել իրենց կանանց և ընտանիքին ապահովելու պարտականությունը: 1832թ. հունվարին Նա ասել է. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ամեն տղամարդ, ով պարտավոր է ապահովել իր սեփական ընտանիքը, թող ապահովի այն, և ոչ մի դեպքում նա չի կորցնի իր պսակը» (ՎԱՈՒ 75.28): Երեք ամիս անց Տերը կրկին ասել է. «Կանայք իրենց ապրուստի համար իրավունք ունեն աջակցվելու իրենց ամուսինների կողմից, քանի դեռ նրանց ամուսինները չեն վերցվել» (ՎԱՈ 83.2): Սա կնոջ և մոր աստվածային իրավունքն է: Մինչ կինը խնամում և մեծացնում է իր երեխաներին տանը, նրա ամուսինը վաստակում է ընտանիքի համար որպեսզի կնոջ գործը հնարավոր լինի:

Տանը, որտեղ կա աշխատունակ ամուսին, նա պետք է լինի հացով ապահովողը: Երբեմն մենք լսում ենք, որ ամուսինները տնտեսական պայմանների պատճառով կորցրել են իրենց աշխատանքը և սպասում են, որ իրենց կանայք կգնան դուրս և կաշխատեն, թեև իրենք դեռ ի վիճակի են ապահովել իրենց ընտանիքը: Այս դեպքերում, մենք կոչ ենք անում ամուսնուն անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի կինը մնա տանը և խնամի երեխաներին, մինչ նա կշարունակի ապահովել իր ընտանիքը ինչպես կարող է, թեև աշխատանքը, որը նա կունենա, կարող է չլինել կատարյալ և ընտանիքի բյուջեն զուսպ կլինի:

Նաև, կրթության կամ նյութական իրերի կարիքը չպետք է պատճառ լինի առայժմ երեխաներ չունենալու համար, որպեսզի կինը շարունակի լինել ընտանիքի ապահովողը:

Նախագահ Քիմբալի խորհուրդը

Ես հիշում եմ մեր սիրված մարգարե Սպենսեր Վ. Քիմբալի խորհուրդը ուղղված ամուսնացած ուսանողներին: Նա ասաց. «Ես տասնյակ հազարավոր երիտասարդների ասել եմ, որ երբ նրանք ամուսնանում են, չպետք է հետաձգեն երեխա ունենալը, քանի դեռ չեն ավարտել ինստիտուտը կամ կատարել իրենց ֆինանսական ցանկությունները: . . . Նրանք պետք է նորմալ ձևով միասին ապրեն և թույլ տան երեխաներին գալ աշխարհ . . .

Ես չգիտեմ որևէ դեպք սուրբ գրություններում, - շարունակեց Նախագահ Քիմբալը, - երբ երիտասարդ կանանց թույլատրվում է չկատարել իրենց ընտանեկան պարտականությունները և գնալ աշխատելու, որպեսզի իրենց ամուսինները սովորեն: Հազարավոր ամուսիններ ինքնուրույն ընդունվում են սովորելու և միևնույն ժամանակ ընտանիք են պահում» (“Marriage Is Honorable,” in *Speeches of the Year, 1973* [1974], 263):

Մոր դերը տանը

Քահանայության եղբայրնե՛ր, ես շարունակում եմ շեշտել տանը մնալու մայրերի կարևորությունը, որպեսզի նրանք սնեն, խնամեն և ուսուցանեն իրենց երեխաներին արդարակեցության սկզբունքներով:

Երբ ես ճանապարհորդում էի Եկեղեցով, զգացի որ Վերջին Օրերի Սուրբ մայրերի մեծ մասը ցանկանում է հետևել այս խորհրդին: Սակայն մենք գիտենք, որ երբեմն մայրը աշխատում է տնից դուրս իր ամուսնու խրախուսանքով, անգամ պնդմամբ: Դա ամուսինն է, որ ցանկանում է ունենալ հարմարավետության պարագաներ, որոնք կարելի է գնել լրացուցիչ փողով: Այդ դեպքերում ոչ միայն կտուժի ընտանիքը, եղբայրնե՛ր, այլ ձեր անձնական հոգևոր աճը և զարգացումը կխափանվի: Ես ասում եմ ձեզ բոլորիդ, Տերը մարդկանց պատասխանատվություն է տվել ապահովել իրենց ընտանիքներն այնպես, որպեսզի կինը կարողանա կատարել տանը մոր դերը:

Ընտանեկան պատրաստվածությունը ավելի հրատապ է այսօր

Հայրե՛ր, ձեր ընտանիքի նյութական կարիքները ապահովելու մեկ այլ կարևոր ոլորտ է այն, որ դուք պետք է ապահովեք ձեր ընտանիքը մթերքով ծայրահեղ իրավիճակների համար: Ընտանիքի պատրաստվածությունը բարօրության վաղուց հիմնված սկզբունք է: Դա անգամ ավելի հրատապ է այսօր:

Ես ձեզ անկեղծ հարցնում են, ապահովե՞լ եք դուք ձեր ընտանիքի մեկ տարվա մթերքի, հագուստի, եթե հնարավոր է, վառելիքի պաշարը: Մթերք պատրաստելու կամ պահեստավորելու հայտնությունը կարող է այսօր մեր ժամանակավոր բարօրության համար լինել նույնքան կարևոր, որքան մարդկանց համար տապանը Նոյի օրերին:

Նաև, արդյո՞ք դուք ապրում եք ձեր եկամտի սահմաններում և մի փոքր տնտեսում եք:

Արդյո՞ք դուք ազնիվ եք Տիրոջ հետ՝ տասանորդ վճարելիս: Այս աստվածային օրենքով ապրելը կբերի և՛ հոգևոր և՛ նյութական օրհնություններ:

Այո, եղբայրնե՛ր, որպես Իսրայելի հայրեր դուք մեծ պատասխանատվություն եք կրում ապահովելու ձեր ընտանիքի կարիքները և անհրաժեշտ պաշարներ ունենալու ծայրահեղ իրավիճակների համար:

Ապահովեք հոգևոր ղեկավարում

Երկրորդ, դուք սուրբ պարտականություն ունեք ապահովելու ձեր ընտանիքի հոգևոր ղեկավարումը:

Տարիներ առաջ Տասներկուսի Խորհրդի կողմից տպագրված գրքույկում մենք ասացինք հետևյալը. «Հայր լինելը ղեկավարում է՝ ղեկավարման ամենակարևոր տեսակը: Դա միշտ այդպես է եղել, դա միշտ այդպես կլինի: Հա՛յր, քո հավերժական ընկերակցի օգնությամբ և խորհրդով, դու ղեկավարում ես տունը» (*Father, Consider Your Ways* [pamphlet, 1973], 4–5):

Ինչևէ, այդ նախագահող դիրքի հետ գալիս են նաև կարևոր պարտականություններ: Երբեմն մենք լսում ենք, թե ինչպես են տղամարդիկ, անգամ Եկեղեցում, մտածում, թե տան ղեկավար լինելը նշանակում է իրենք ավելի բարձր դեր ունեն և թույլ է տալիս թելադրել և պահանջներ դնել ընտանիքի առաջ:

Պողոս Առաքյալը շեշտել է, որ «Մարդը կնոջ գլուխն է՝ *ինչպես* Քրիստոս էլ եկեղեցու գլուխը» (Եփեսացիս Ե.23; շեղագիրն ավելացված է): Դա է ղեկավարման ձևը, որին մենք պետք է հետևենք տանը նախագահելու մեր դերը կատարելիս: Մենք չենք գտնում, որ Փրկիչը ղեկավարել է Եկեղեցին կոպիտ կամ դաժան ձեռքով: Մենք չենք գտնում, որ Փրկիչը Իր Եկեղեցուն վերաբերվել է անհարգալից կամ արհամարհական ձևով: Մենք չենք տեսել, որ Փրկիչը ուժ կամ ճնշում գործադրի Իր նպատակներին հասնելու համար: Ոչ էլ մենք տեսել ենք, որ Փրկիչը ինչ-որ այլ բան անի, բացի խրատելուց, բարձրացնելուց, մխիթարելուց և վեհացնելուց Եկեղեցին: Եղբայրնե՛ր, ես ամենայն լրջությամբ եմ ձեզ ասում, Նա է օրինակը, որին մենք պետք է հետևենք մեր ընտանիքներում հոգևոր ղեկավարումը ստանձնելիս:

Հատկապես սա վերաբերում է ձեր կնոջ հետ ձեր հարաբերություններին:

Սիրեք ձեր կնոջը

Ահա կրկին Պողոս Առաքյալի խորհուրդը, հիանալի և դիպուկ: Նա պարզ ասել է. «Մարդիկ, սիրեցեք ձեր կանանցը, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն» (Եփեսացիս Ե.25):

Վերջին օրերի հայտնության մեջ Տերը կրկին խոսում է այս պարտականության մասին: Նա ասել է. «Սիրիր կնոջդ քո ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկին» (ՎԱՈ 42.22): Ըստ իմ գիտելիքի, կա միայն մի բան բոլոր սուրբ գրություններում, որը մեզ պատվիրվել է սիրել մեր ողջ

սրտով, և դա Ինքը Աստվածն է: Մտածեք, թե ինչ է դա նշանակում:

Սիրո այս տեսակը կարող եք դրսևորել ձեր կանանց հանդեպ տարբեր ձևերով: Առաջինը և ամենակարևորը, բացի Աստծուց, չպետք է ձեր կնոջից ավելի կարևոր համարվի ձեր կյանքում՝ ոչ աշխատանքը, ոչ զվարճանքը, ոչ հետաքրքրությունները: Ձեր կինը ձեր թանկագին հավերժական օգնականն է, ձեր գործընկերը:

Ի՞նչ է նշանակում սիրել մեկին ողջ սրտով: Դա նշանակում է սիրել ձեր ողջ զգացմունքներով և ողջ նվիրումով: Իհարկե, երբ դուք սիրում եք ձեր կնոջը ձեր ողջ սրտով, դուք չեք կարող նվաստացնել, քննադատել նրան, սխալներ գտնել, վիրավորել խոսքով, պահվածքով կամ գործով:

Ի՞նչ է նշանակում «հարել նրան»: Դա նշանակում է մոտ մնալ նրան, նվիրված ու հավատարիմ լինել նրան, հաղորդակցվել նրա հետ և արտահայտել նրան ձեր սերը:

Սիրել նշանակում է լինել զգայուն նրա զգացմունքների և կարիքների նկատմամբ: Նա ուզում է լինել նկատված և գնահատված: Նա ուզում է, որ դուք վերաբերվեք իրեն որպես սիրելի, հմայիչ և ձեզ համար կարևոր էակ: Սիրել նշանակում է ձեր կյանքում նրա բարօրությունն ու ինքնասիրությունը առաջնային տեղում դնել:

Դուք պետք է շնորհակալ լինեք, որ նա ձեր երեխաների մայրն է և ձեր տան թագուհին, շնորհակալ, որ նա որոշել է զբաղվել տնով և մայրությամբ, ունենալու, մեծացնելու, սնուցելու, սիրելու և ուսուցանելու ձեր երեխաներին, ինչը ամենաազնվաբարո կոչումն է:

Ամուսիննե՛ր, գնահատեք ձեր կնոջ խելամտությունը և ձեզ հետ խորհրդակցելու նրա ունակությունը, որպես իսկական գործընկեր ձեր ընտանեկան ծրագրերի, ընտանեկան միջոցառումների և ընտանեկան բյուջեի վերաբերյալ: Մի խնայեք ձեր ժամանակը կամ ձեր միջոցները:

Նրան հնարավորություն տվեք ապրել իմաստության, էմոցիոնալ, հասարակական, ինչպես նաև հոգևոր զարգացում:

Հիշեք, եղբայրնե՛ր, սերը կարելի է սնուցել և աճեցնել փոքր մասնիկներով: Հատուկ դեպքերի համար ծաղիկները հիանալի են, սակայն նույնը պետք է լինի նրան օգնելու ձեր ցանկությունը՝ լվանալ սպասքը, փոխել երեխայի տակաշորերը, գիշերն արթնանալ լաց լինող երեխայի համար և թողնել հեռուստացույցը կամ թերթը ճաշի պատրաստություններին օգնելու համար: Սրանք են լուռ եղանակները գործով ասելու՝ «Ես սիրում եմ քեզ»: Դրանք փոքր ջանքերով մեծ հատուցումներ են բերում:

Սիրող քահանայության ղեկավարման այս տեսակը վերաբերվում է ինչպես ձեր կնոջը, այնպես էլ երեխաներին:

Հոր դերը տան մեջ

Մայրերը կարևոր դեր են խաղում, լինելով տան սիրտը, սակայն սա ոչ մի կերպ չի պակասեցնում հայրերի հավասարապես կարևոր դերը որպես տան գլուխ, իրենց երեխաներին կերակրելու, ուսուցանելու և սիրելու գործում:

Որպես ձեր տան հայրապետ դուք լուրջ պատասխանատվություն եք կրում ձեր երեխաների հետ աշխատելիս ղեկավարումը ձեզ վրա վերցնելու: Դուք պետք է օգնեք ստեղծել այնպիսի տուն, որտեղ կարող է բնակվել Տիրոջ Հոգին: Ձեր դերն է ղեկավարել ընտանիքի ողջ կյանքը: Դուք պետք է ակտիվ դեր խաղաք ընտանեկան կանոնները և կարգապահությունը հիմնելու գործում:

Ձեր տները պետք է լինեն ձեր ընտանիքի համար խաղաղության և ուրախության երկինքը: Անշուշտ, ոչ մի երեխա չպետք է վախենա իր հորից, հատկապես, քահանայություն կրող հորից: Հոր պարտականությունն է իր տունը դարձնել երջանկության և ուրախության վայր: Նա չի կարող դա անել, երբ առկա է քննադատությունը, հակառակությունը կամ անարդար պահվածքը: Օրինակ ծառայելու, կարգապահություն հիմնելու և ուսուցանելու, սնուցելու և սիրելու գործում արդար հայրերի հզոր ազդեցությունը կենսական է նրա զավակների հոգևոր բարօրության համար:

Հոգևոր ղեկավարում

Իսրայելի հայրերի հանդեպ իմ սրտում լցված սիրով, թույլ տվեք առաջարկել տաս հատուկ եղանակ, որոնցով հայրերը կարող են հոգևոր ղեկավարում առաջարկել իրենց զավակներին.

1. Հայրական օրհնություն տվեք ձեր երեխաներին: Մկրտեք և հաստատեք ձեր երեխաներին: Կարգեք ձեր որդիներին քահանայությանը: Սրանք հոգևոր վառ պահեր կլինեն ձեր երեխաների կյանքում:

2. Անձամբ ղեկավարեք ընտանեկան աղոթքները, սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը և ամենշաբաթյա ընտանեկան երեկոները: Ձեր անձնական ներգրավումը ցույց կտա ձեր երեխաներին, թե որքան կարևոր են իրականում այս միջոցառումները:

3. Երբ հնարավոր է, հաճախեք Եկեղեցու ժողովներին ամբողջ ընտանիքով: Ընտանեկան երկրպագությունը ձեր ղեկավարմամբ էական է ձեր երեխաների հոգևոր բարօրության համար:

4. Ձեր երեխաների հետ այցելեք հայրիկ-դուստր և հայրիկ-և-որդիներ միջոցառումներին: Ընտանիքով գնացեք արշավների և բնության գիրկ, խաղերի և պարապմունքների, դպրոցական ծրագրերի և այլն: Երբ հայրիկն այնտեղ է, ամբողջովին ուրիշ է:

5. Ընտանեկան արձակուրդները, ճանապարհորդությունները և քաղաքից դուրս զբոսնելը ավանդույթ դարձրեք: Այդ հիշողությունները ձեր երեխաները երբեք չեն մոռանա:

6. Ձեր երեխաների հետ պարբերաբար առանձին հանդիպեք: Նրանց թույլ տվեք խոսել այն բաների մասին, ինչ ցանկանում են: Ուսուցանեք նրանց ավետարանի սկզբունքները: Ուսուցանեք նրանց ճշմարիտ սկզբունքները: Ասացեք, որ սիրում եք իրենց: Երեխաների հետ անցկացրած անձնական ժամանակը խոսում է հայրիկի առաջնահերթությունների մասին:

7. Ձեր երեխաներին սովորեցրեք աշխատել և ցույց տվեք նրանց արժանի նպատակի համար աշխատելու

արժեքը: Միսիայի և կրթության ֆոնդեր ձեր երեխաների համար հիմնելը ցույց կտա նրանց, թե ինչն է հայրիկը կարևոր համարում:

8. Ձեր տներում խրախուսեք լավ երաժշտությունը, արվեստը և գրականությունը: Այն տները, որտեղ տիրում է նրբագեղության և գեղեցկության ոգին, ընդմիշտ կօրհնեն ձեր երեխաների կյանքը:

9. Եթե տարածությունները թույլ են տալիս, պարբերաբար այցելեք տաճար ձեր կնոջ հետ: Այդ ժամանակ ձեր երեխաները ավելի լավ կհասկանան տաճարային ամուսնության և տաճարային երդումների ու հավերժական ընտանեկան միավորի կարևորությունը:

10. Թույլ տվեք, որպեսզի ձեր երեխաները տեսնեն ձեր ուրախությունը և բավարարվածությունը Եկեղեցում ծառայելիս: Սա նրանց համար կարող է վարակիչ լինել, և նրանք նույնպես կարող են ցանկանալ ծառայել Եկեղեցում և կսիրեն արքայությունը:

Ձեր ամենակարևոր կոչումը

Օ՜, Իսրայելի ամուսիններ և հայրեր, դուք այնքան շատ բան կարող եք անել ձեր ընտանիքների փրկության և վեհացման համար: Ձեր պարտականություններն այնքան կարևոր են:

Հիշեք որպես Իսրայելի հայր ձեր սուրբ կոչման մասին, որն ամենակարևոր կոչումն է ժամանակի և հավերժության մեջ, կոչում, որից դուք երբեք չեք ազատվի:

Թող որ դուք միշտ կարողանաք ապահովել ձեր ընտանիքի նյութական կարիքները և ձեր հավերժական գործընկերը ձեր կողքին, թող որ դուք կատարեք ձեր տանը սուրբ ղեկավարում ապահովելու ձեր սուրբ պարտականությունը:

1987 թվականի հոկտեմբերին Եկեղեցու գերագույն համաժողովի քահանայության նիստին Նախագահ Բենսոնի ուղերձից (see Conference Report, Oct. 1987, 59–63; or *Ensign*, Nov. 1987, 48–51):

Հայրերի և մայրերի սուրբ դերերը

11

Մաս 2. Մայրերի դերը

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Ընտանիքի մասին հայտարարության մեջ մեզ խորհուրդ է տրվում, որ հայրերը և մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ (տե՛ս այս ուսումնական ուղեցույցի էջ iv): Ձեր ամուսնու կամ կնոջ հետ վերանայեք այս ուսումնական ուղեցույցի 41–42 էջերի վրա հայրերին տրվող, և 45–47 էջերի վրա մայրերին տրվող Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի 10 առաջարկությունները: Քննարկեք, թե ինչ եղանակներով դուք կարող եք միասին աշխատել և միմյանց աջակցել այդ պարտականություններում:
- Նամակ գրեք ձեր մորը կամ տատիկին:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածները: Եթե դուք ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածները ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

«Որովհետև նա մայր է»

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Հարգանքի տուրք մայրերին

Մի քանի տող Վիկտոր Հյուգոյից, որը գրել է.

«Նա հացը երկու մասի բաժանեց և տվեց դրանք իր երեխաներին, որոնք անհամբերությամբ կերան այն: Նա իրեն ոչինչ չպահեց», - մրթմրթաց սերժանտը:

«Որովհետև նա քաղցած չէ», - ասաց զինվորը:

«Ոչ, - ասաց սերժանտը, - որովհետև նա մայր է»:

Այս տարի, երբ մենք նշում ենք նրանց հավատքն ու քաջությունը, ովքեր կատարեցին այդ ճանապարհորդությունը Այովայի, Նեբրասկայի և Վայոմինգի միջով, ես ցանկանում եմ հարգանքի տուրք մատուցել այն պիոներ մայրերի ժամանակակից գործընկերներին, որոնք խնամել են իրենց զավակներին, աղոթել են նրանց համար և շատ հաճախ թաղել իրենց մանուկներին այդ երկար ճանապարհին: Իմ ձայնի ողջ զորությամբ այն կանանց, ովքեր շատ են ուզում մայր լինել, սակայն չեն կարող, ես ասում եմ ձեր և մեր արցունքների ներքո, որ Աստված, առջևում ընկած օրերին, հույս կբերի հուսահատված սրտին:[1] Ինչպես այս ամբիոնից մարգարեները շարունակաբար սովորեցրել են, ոչ մի օրհնություն ետ չի պահվի հավատարիմներից, անգամ եթե այդ օրհնությունները անմիջապես չեն գալիս:[2] Միևնույն ժամանակ մենք ուրախանում ենք, որ մեծացնելու կոչը չի սահմանափակվում մեր սեփական մարմնով և արյունով:

Մայրերի մասին խոսելիս, ես չեմ անտեսում հայրերի կարևորագույն և պարտադիր դերը, հատկապես, երբ հոր պակասը ժամանակակից տներում համարվում է ոմանց կողմից «մեր ժամանակների ամենակենտրոնական սոցիալական խնդիրը»:[3] Իսկապես, հոր պակասը կարող է խնդիր լինել նաև այն տներում, որտեղ հայր կա, որը ուտում և քնում է, այսինքն՝ «հեռակա ապրում է»: Սակայն սա մեկ այլ օրվա քահանայության ուղերձ է: Այսօր ես ցանկանում են փառաբանել այն մայրերի ձեռքերը, ովքեր ճոճել են մանկան օրորոցը և արդարությամբ սովորեցրել են իրենց երեխաներին, ինչը մեզ համար մահկանացու կյանքում Տիրոջ նպատակների առանցքն է:

Այս ասելիս ես արձագանքում եմ Պողոսին, որը փառաբանելով Տիմոթեոսի «անկեղծ հավատքը», ասում է. «որ առաջ քո Լոիդա տատումը և քո Եվնիկե մորումը»:[4] Պողոսն ասում է. «Որ մանկությունից սուրբ գրքերը գիտես»:[5] Մենք շնորհակալություն ենք հայտնում բոլոր մայրերին և տատիկներին, որոնցից սովորել ենք վաղ տարիքից:

Երիտասարդ մայրերի զոհաբերությունները

Ընդհանրապես, մայրերի մասին խոսելիս, ես հատկապես ցանկանում եմ գովել և քաջալերել *երիտասարդ* մայրերին: Մոր գործը ծանր է, շատ հաճախ աննկատ: Երիտասարդ տարիներին ամուսինը կամ կինը, կամ երկուսն էլ, դեռ կարող են կրթությունը շարունակել, կամ դրանք վաղ և նեղ տարիներն են, երբ ամուսինը զարգացնում է հաց վաստակելու իր ունակությունները: Ֆինանսները ամեն օր տատանվում են ցածրի և գոյատևման համար անբավարար մակարդակների միջև: Բնակարանը սովորաբար զարդարված է երկու խելացի նկարներից մեկով՝ Դեզերետ Ինդասթրիսի գյուղը կամ վաղ Մայր Հաբբարդը: Մեքենան, եթե կա, հարթ անվադողերով և դատարկ բաքով է: Բայց գիշերային կերակրումները և ատամ հանելը երբեմն ամենածանր խնդիրներն են, քանի որ երիտասարդ մայրերը պարզապես ուժասպառ են լինում: Այդ տարիներին մայրերը ավելի քիչ են քնում և ավելի շատ տալիս են ուրիշներին առանց վերականգնվելու,

իմ իմացած խմբերից ոչ մեկը դա չի անում իր կյանքի որևէ շրջանում: Զարմանալի չէ, երբ նրանց աչքերի տակի փոսերը երբեմն նմանվում են Ռոդ Այլենդ նահանգի ուրվագծին:

Հեգնանք է հնչում այն փաստը, որ հաճախ մենք ուզում ենք կամ ստիպված ենք ծխի և ցցի օժանդակ կազմակերպությունում ծառայության կանչել քրոջ: Դա հասկանալի է: Ո՞վ չի ուզենա ունենալ այդ երիտասարդ մայրերի օրինակելի ազդեցությունը: Բոլորդ, իմաստուն եղեք: Հիշեք, որ ընտանիքն ամենամեծ առաջնահերթությունն է, հատկապես այս որոշիչ տարիներին: Ինչևէ, երիտասարդ մայրերը միևնույն է զարմանալի եղանակներ են գտնում հավատարիմ ծառայելու Եկեղեցում, ինչպես ուրիշներն են ծառայում և ամրացնում իրենց և իրենց ընտանիքները նույն ձևով:

Արեք ինչ կարող եք այս տարիներին, սակայն ինչ էլ որ անեք, փայփայեք այն դերը, որը առանձնատուկ է ձեզ համար և որի համար երկինքը հրեշտակներ է ուղարկում, որ նայեն ձեզ և ձեր փոքրիկներին: Ամուսիննե՛ր, հատկապես ամուսիններ, ինչպես նաև Եկեղեցու ղեկավարնե՛ր և ընկերնե՛ր, բոլոր ուղղություններով օգտակար, զգայուն և իմաստուն եղեք: Հիշեք. «Ամեն բանի համար կա իր ժամանակը, իսկ ամեն նպատակի ժամանակը երկնքի տակ է»:[6]

Մայրե՛ր, մենք հարգում և գնահատում ենք ձեր հավատքը ամեն ձեր քայլի մեջ: Խնդրում ենք, իմացեք, որ դա մեծ արժեք ուներ այն ժամանակ, ունի այժմ և կունենա միշտ: Եվ, եթե որևէ պատճառով, դուք այս խիզախ ջանքը միայնակ եք կատարում, առանց ձեր կողքին ամուսին ունենալու, ապա մեր աղոթքներն էլ ավելի ուժգին կլինեն ձեզ համար, և օգնող ձեռք մեկնելու մեր որոշումն ավելի վճռական:

Մայրերը կատարում են Աստծո աշխատանքը

Մի երիտասարդ մայր ինձ վերջերս գրել է, որ իր մտահոգությունները երեք աղբյուրներից են բխում: Մեկն այն է, որ երբ նա լսում է ելույթներ ՎՕՍ-ի մայրության վերաբերյալ, նա մտահոգվում է, որովհետև զգում է, որ չի համապատասխանում կամ ինչ-որ կերպ հավասար չէ հանձնարարությանը: Երկրորդ, նա զգում է, կարծես, աշխարհն ակնկալում է իրենից սովորեցնել իր երեխաներին կարդալ, գրել, ներքին ձևավորում, լատիներեն, հանրահաշիվ և Ինտերնետ, այդ ամենը նրանից առաջ, երբ երեխան կասի «գու-գու»: Երրորդ, նա հաճախ զգում էր, որ մարդիկ երբեմն թերագնահատում են իրեն, թեև առանց դիտավորության, որովհետև խորհուրդը, որը նա ստանում էր, կամ անգամ գովասանքի բառերը, կարծես չէին շեշտում ոչ մի մտավոր աշխատանքի առկայություն, հոգևոր և էմոցիոնալ նվիրում, երկար գիշերվա, երկար օրվա, մշտական պարտականություններ, որոնք երբեմն պահանջվում են լինելու համար այնպիսի մայր, ինչպիսին Աստված է ակնկալում:

Սակայն մի բան, որը նա ասաց, իրեն ուժ էր տալիս. «Այս ամենի վատի ու լավի մեջ, և երբեմն թափվող արցունքների մեջ, *ես իմ հոգու խորքում գիտեմ, որ անում եմ Աստծո աշխատանքը:* Ես գիտեմ, որ մայր լինելով ես հավերժական գործընկեր եմ Նրա հետ: Ես խորապես հուզված եմ, որ Աստված ծնող լինելու մեջ մեծագույն նպատակ և իմաստ է գտնում, անգամ, եթե Իր զավակներից ոմանք ստիպում են Իրեն արտասվել:

«Սա հասկանալով, - ասում է նա, - ես հիշում եմ այն ծայրահեղ ծանր օրերը, երբ այդ ամենը փոքր-ինչ գերծանր էր: Միգուցե դա մեր ունակության պակասն ու մտահոգվածությունն է, որ ստիպում է մեզ դիմել Նրան և մեծացնել մեզ հասնելու Նրա ունակությունը: Միգուցե Նա գաղտնաբար հույս է տածում, որ մենք մտահոգված կլինենք և կդիմենք Իր օգնությանը: Այդ ժամանակ, ես հավատացած եմ, Նա կարող է անմիջապես ուսուցանել այդ երեխաներին, մեր միջոցով, սակայն առանց խոչընդոտների: Ինձ դուր է գալիս այդ միտքը», - ավարտում է նա: «Այն ինձ հույս է տալիս: Եթե ես կարողանամ ինձ բերել Երկնային Հոր առաջ, միգուցե մեր զավակներին տրված Նրա առաջնորդությունը ուղղակի լինի: Միգուցե դա լինի *Նրա* աշխատանքը ու *Նրա* փառքը ամենաբառացի իմաստով»:[7]

Ձեր զավակները ձեզ օրհնված կհամարեն

Այդ արտահայտության տեսանկյունից, պարզ է, որ Ռոդ Այլենդի ձևն ունեցող այդ փոսերը առաջանում են ոչ միայն տակաշորեր փոխելու, այլ նաև մի շարք անքուն գիշերների արդյունքում, երբ քնում ես հոգին, երբ քո մեջ հուսահատ ուժեր ես փնտրում մեծացնելու համար այդ երեխաներին այնպես, ինչպես նրանց ուզում է տեսնել Աստված: Նման նվիրումով և վճռականությամբ շարժվելով, թույլ տվեք ասել բոլոր մայրերին, Տիրոջ անունով, դուք զարմանահրաշ եք: Դուք անչափ լավ եք կատարում ձեր աշխատանքը: Միայն այն փաստը, որ ձեզ նման պատասխանատվություն է տրվել, հավերժական վկայությունն է նրա, որ Երկնային Հայրը մեծ վստահություն է տածում ձեր հանդեպ: Նա գիտի, որ միայն երեխա ծնելը ձեզ անմիջապես չի ընդգրկում ամենագետների շրջանի մեջ: Եթե դուք և ձեր ամուսինն աշխատեք սիրել Աստծուն և ինքներդ ապրեք ավետարանով, եթե դուք հայցեք այդ առաջնորդությունը և մխիթարությունը, որը հավատարիմներին խոստացված Սուրբ Հոգին է, եթե դուք տաճար գնաք սուրբ ուխտերի խոստումները անելու և ստանալու համար, ամենասուրբ ուխտերի, որոնք կինը կամ տղամարդը կարող են կապել այս աշխարհում, եթե դուք մյուսների, ներառյալ ձեր երեխաների հանդեպ, դրսևորեք միևնույն հոգատարությունը, սերը, ներող սիրտը, որը որ ուզում եք, որ երկինքը ցույց տա ձեր հանդեպ, եթե դուք աշխատեք որքան հնարավոր է լավ ծնող լինել, ապա կանեք այն ամենը, ինչ մարդկային էակը կարող է անել, և այն ամենը, ինչ Աստված ակնկալում է ձեզանից:

Երբեմն երեխայի կամ թոռան որոշումը կկոտրի ձեր սիրտը: Երբեմն սպասումները անմիջապես չեն իրականանա: Ամեն հայր և մայր մտահոգվում է դրա մասին: Անգամ սիրված և հիանալիորեն հաջողակ ծնող Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը աղերսել է. «Օ՜, Աստված, թույլ մի տուր, որ ես կորցնեմ յուրայիններին»:[8] Սա ամեն մի ծնողի աղերսանքն է և դրա մեջ ամեն ծնողի վախն է: Սակայն ոչ ոք չի ձախողվել, ով շարունակել է աշխատել և աղոթել: Դուք ունեք ամեն մի իրավունքը ստանալու խրախուսանք և իմանալու, որ վերջում ձեր երեխաները կկոչեն ձեզ օրհնված, ինչպես ձեզանից առաջ այն մայրերի սերունդները, որոնք ունեցել են նույն հույսերը և նույն վախերը:

Ձերն է Եվայի մեծ ավանդույթը, ով մարդկային ողջ ընտանիքի մայրն է, նա ով հասկացավ, որ ինքն ու Ադամը պետք է ընկնեն, որպեսզի «մարդիկ լինեն»,[9] և որ կլինի ուրախություն: Ձերն է Սարայի, Ռեբեկայի և Ռաքելի մեծ ավանդույթը, առանց որոնց չէին կարող լինել Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված այդ զարմանալի հայրապետական խոստումները, որ օրհնում եմ մեզ բոլորիս: Ձերն է Լոիս և Իունիս մայրերի և 2000 պատանի զինվորների մայրերի ավանդույթը: Ձերն է Մարիամի մեծ ավանդույթը, որն ընտրվել և նախապես կարգվել էր այս աշխարհից առաջ ունենալու և մեծացնելու Աստծո Որդուն: Մենք շնորհակալ ենք ձեզ բոլորիդ, ներառյալ մեր մայրերին, և ասում ենք ձեզ, որ չկա այս աշխարհում ավելի կարևոր բան, քան այսքան ուղղակիորեն մասնակցել Աստծո աշխատանքի և փառքի մեջ, որն է մահկանացու և երկրային կյանք տալը Նրա դուստրերին և որդիներին, որպեսզի անմահությունն ու հավերժական կյանքը լինեն նրանցը սելեստիալ ապարանքներում՝ երկնքի:

Միշտ ապավինեք Փրկչին

Երբ դուք սրտի խոնարհությամբ և հնազանդությամբ գալիս եք Տիրոջ մոտ, և, ինչպես ասել է մի մայր, «կոտրում եք երկնքի դռները խնդրելու, աղաչելու, պահանջելու ուղղություն և իմաստություն և օգնություն այս հրաշալի աշխատանքի համար», այդ դուռը լայնորեն բացվում է ձեր առաջ՝ տալու համար ողջ հավերժության ազդեցությունն ու օգնությունը: Պահանջեք աշխարհի Փրկչի խոստումները: Խնդրեք Քավության բուժող դեղը այն ամենի համար, ինչն անհանգստացնում է ձեզ կամ ձեր երեխաներին: Հիշեք, որ հավատքով ամեն ինչ ավելի ճիշտ կարվի, անկախ ձեզանից, կամ ավելի ճիշտ, ձեր պատճառով:

Դուք հնարավոր է դա նաև մենակ անեք, սակայն դուք *ունեք* օգնություն: Երկնքի և Երկրի Վարդապետն այստեղ է ձեզ օրհնելու համար, Նա, ով վճռականորեն գնում է կորած ոչխարի ետևից, սպասում է, որ գտնի կորած մետաղադրամը, մշտապես սպասում է անառակ որդու վերադարձին: Ձերն է փրկության աշխատանքը, և այդպիսով դուք կփառավորվեք, կհատուցվեք, կլինեք ավելի ու ավելի լավը, քան երբևէ եղել եք, եթե ազնիվ ջանք գործադրեք, որքան էլ թույլ ձեզ երբեմն զգաք:

Հիշե՛ք, հիշե՛ք ձեր մայրության բոլոր օրերը. «Դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ հավատքով նրա հանդեպ, ամբողջովին ապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս»:[10]

Ապավինեք Նրան: Մեծապես ապավինեք Նրան: Մշտապես ապավինեք Նրան: Եվ «առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն»:[11] Դուք անում եք Աստծո աշխատանքը: Դուք այն հիանալիորեն լավ եք անում: Նա օրհնում է ձեզ, և Նա կօրհնի ձեզ, անգամ, ոչ, *հատկապես*, երբ ձեր օրերն ու գիշերները լինեն առավել ծանր: Ինչպես այն կնոջը, որը գաղտնաբար, խոնարհաբար, միգուցե տարակուսանքով և որոշ ամոթով, ներխուժեց ամբոխի մեջ միայն դիպչելու համար Վարդապետի հագուստի փեշին, այդպես էլ Քրիստոսը կասի այն կանանց, ովքեր մտահոգվում են և զարմանում, և երբեմն լաց լինում որպես մայրեր իրենց պարտականության համար. «Քաջացիր, դուստր, քո հավատքը քեզ ապրեցրեց»:[12] Եվ դա ձեր երեխաներին նույնպես կապրեցնի:

1997 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Հոլլանդի ուղերձից (տե՛ս Conference Report, Apr. 1997, 46–49; or *Ensign*, May 1997, 35–37):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Փրկիչն Իսրայելի», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 5, տես նաև 3 Նեփի 22.1: 6; see also.
2. See Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2:76; Harold B. Lee, *Ye Are the Light of the World: Selected Sermons and Writings of President Harold B. Lee* (1974), 292; and Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1991, 94.
3. Tom Lowe, "Fatherlessness: The Central Social Problem of Our Time," Claremont Institute Home Page Editorial, Jan. 1996.
4. Բ Տիմոթեոս Ա.5
5. Բ Տիմոթեոս Գ.15
6. Ժողովող Գ.1
7. Անձնական նամակագրություն
8. Joseph F. Smith, *Gospel Doctrine*, 5th ed. (1939), 462.
9. 2 Նեփի 2.25
10. 2 Նեփի 31.19
11. 2 Նեփի 31.20
12. Մատթեոս Թ.22

Ուղղված է Սիոնի մայրերին

Նախագահ Էզրա Թավտ Բենսոն
Եկեղեցու 13-րդ Նախագահ

Սիոնի մայրե՛ր, ձեր Աստվածատուր դերերն այնքան կարևոր են ձեր անձնական և ձեր ընտանիքի փրկության և վեհացման համար: Երեխան ավելի շատ մոր կարիք ունի, քան որևէ այլ բանի, որը կարելի է գնել փողով: Ձեր երեխաների հետ ժամանակ անցկացնելն ամենամեծ պարգևն է:

Սիոնի մայրերի հանդեպ իմ սրտում սեր ունենալով ես այժմ ցանկանում եմ առաջարկել տաս որոշակի եղանակ, որոնցով մեր մայրերը կարող են արդյունավետ ժամանակ անցկացնել իրենց երեխաների հետ:

Եղեք խաչմերուկներին: Առաջինը, միշտ եղեք խաչմերուկներին, երբ ձեր երեխաները գնում կամ գալիս են՝ երբ նրանք հեռանում կամ վերադառնում են դպրոցից, ժամադրությունից, երբ ընկերներ են բերում տուն: Եղեք խաչմերուկներին, լինի ձեր երեխան վեց, թե տասնվեց տարեկան: Առակացում մենք կարդում ենք. «Ինքն իրեն թողնված երեխան ամոթ է բերում իր մորը» (Առակաց ԻԹ.15): Մեր

հասարակության ամենամեծ մտավախությունը այն միլիոնավոր իրենք իրենց թողնված երեխաներն են, որ գալիս են դատարկ տուն, առանց աշխատող ծնողների հսկողության:

Եղեք իսկական ընկեր: Երկրորդը, մայրե՛ր, ժամանակ ունեցեք իսկական ընկեր լինելու ձեր երեխաների համար: Լսեք ձեր երեխաներին, իսկապես լսեք: Խոսեք նրանց հետ, ծիծաղեք և կատակեք նրանց հետ, երգեք նրանց հետ, խաղացեք նրանց հետ, լաց եղեք նրանց հետ, գրկեք նրանց, ազնվորեն գովեք նրանց: Այո, պարբերաբար առանց շտապելու ժամանակ անցկացրեք ամեն երեխայի հետ առանձին: Իսկական ընկեր եղեք ձեր երեխայի համար:

Կարդացեք ձեր երեխաների համար: Երրորդը, մայրե՛ր, ժամանակ գտեք կարդալու ձեր երեխաների համար: Օրորոցից սկսած կարդացեք ձեր որդիների ու դուստրերի համար: Հիշեք, ինչ է ասել բանաստեղծը.

Դու միգուցե հարստություն ունես անհամար,
Բայց ինձանից հարուստ երբեք չես լինի,
Ես մայր ունեմ, որը կարդում է ինձ համար:
(Strickland Gillilan, “The Reading Mother.”)

Եթե կանոնավոր կերպով կարդաք ձեր երեխաների համար, ապա լավ գրականության և սուրբ գրությունների հանդեպ իսկական սեր կսերմանեք նրանց մեջ:

Աղոթեք ձեր երեխաների հետ: Չորրորդը, ժամանակ հատկացրեք ձեր երեխաների հետ աղոթելուն: Հոր ղեկավարության ներքո, ընտանեկան աղոթքները պետք է ասվեն առավոտյան և երեկոյան: Ձեր երեխաներին թույլ տվեք զգալ ձեր սերը, երբ նրանց համար երկնքի օրհնություններն եք խնդրում: Հակոբի խոսքերը ձևափոխելով. «Շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով» (Հակոբոս Ե.16): Թող ձեր երեխաները մասնակցեն ընտանեկան և անձնական աղոթքներին, և ուրախանան իրենց Երկնային Հորն ասված իրենց քաղցր խոսքերով:

Ամեն շաբաթ ընտանեկան երեկո անցկացրեք: Հինգերորդը, ժամանակ հատկացրեք իմաստալից ընտանեկան երեկո անցկացնելու համար: Ձեր ամուսնու նախագահությամբ մասնակցեք ամենշաբաթյա հոգևոր և վեհացնող ընտանեկան երեկոյի: Թույլ տվեք, որ ձեր երեխաները ակտիվորեն ներգրավվեն: Նրանց սովորեցրեք ճիշտ սկզբունքները: Սա դարձրեք ձեր ընտանեկան մեծ ավանդույթներից մեկը: Հիշեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի հրաշալի խոստումը, երբ ընտանեկան երեկոն առաջին անգամ ներկայացվեց Եկեղեցում. «Եթե Սրբերը հետևեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ արդյունքում մեծ օրհնություններ կստացվեն: Սերը տանը և հնազանդությունը ծնողներին կավելանան: Հավատք կզարգանա Իսրայելի երիտասարդների սրտում, և նրանք ուժ կստանան պայքարելու իրենց շրջապատող չար ազդեցության և գայթակղությունների դեմ» (in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. [1965–75], 4:339): Այս հիանալի խոստումը այսօր դեռ ուժի մեջ է:

Միասին եղեք ճաշի ժամերին: Վեցերորդը, ժամանակ գտեք որքան որ հնարավոր է հաճախ միասին լինել ուտելիս: Սա դժվար է, երբ երեխաները մեծանում են և կյանքը ավելի զբաղված է դառնում: Սակայն երջանիկ զրույցը, օրվա ծրագրերով և միջոցառումներով կիսվելը, և ուսուցողական հատուկ պահերը ուտելու ժամանակ են առաջանում, որովհետև մայրերը, հայրերը և երեխաները աշխատում են այդ ուղղությամբ:

Ամեն օր կարդացեք սուրբ գրությունները: Յոթերորդը, ժամանակ հատկացրեք ամեն օր ընտանիքով սուրբ գրությունները կարդալուն: Սուրբ գրությունների անհատական ընթերցանությունը կարևոր է, սակայն ընտանիքով կարդալը կենսական է: Մորմոնի Գիրքը ընտանիքով կարդալը հատկապես կմեծացնի ձեր տան հոգևոր վիճակը և ծնողներին ու երեխաներին ուժ կտա դիմակայելու գայթակղություններին, ինչպես նաև թույլ կտա ունենալ Սուրբ Հոգին որպես մշտական ուղեկից: Ես ձեզ խոստանում եմ, որ Մորմոնի Գիրքը կփոխի ձեր ընտանիքի կյանքը:

Ընտանիքով գործեր արեք: Ութերորդը, ժամանակ գտեք ընտանիքով միասին գործեր կատարելու համար: Ընտանիքով դուրս գալը, բնության գրկում նախաճաշելը, ծնունդները տոնելը և ուղևորությունները դարձրեք հատուկ պահեր և հիշողություններ: Երբ հնարավոր է, ընտանիքով ներկա եղեք այն միջոցառումներին, որին մասնակցում է ընտանիքի անդամներից մեկը, օրինակ դպրոցական ներկայացումներին, ֆուտբոլի խաղերին, ելույթներին կամ պարապմունքներին: Միասին հաճախեք Եկեղեցու հավաքներին և ընտանիքով միասին նստեք, եթե հնարավոր է: Այն մայրերը, որոնք օգնում են ընտանիքներին աղոթել և խաղալ միասին, կմնան միասին և ընդմիշտ կօրհնեն իրենց երեխաների կյանքը:

Ուսուցանեք ձեր երեխաներին: Իններորդը, մայրե՛ր, ժամանակ հատկացրեք ձեր երեխաներին ուսուցանելու համար: Որսացեք ուսուցանման պահերը: Սա կարելի է անել օրվա ընթացքում ցանկացած ժամանակ՝ ճաշելիս, պատահական հավաքվելիս կամ միասին հատուկ հավաքվելու ու նստելու ժամանակ, քնելու գնալիս կամ վաղ առավոտյան միասին զբոսնելիս: Մայրե՛ր, դուք ձեր երեխաների լավագույն ուսուցիչն եք: Մի՛ զցեք այս թանկ պատասխանատվությունը մանկապարտեզների կամ դայակների վրա: Իր երեխաների հանդեպ մոր սերն ու աղոթալից հոգատարությունը նրանց սովորեցնելու ամենակարևոր տարրերն են:

Երեխաներին ավետարանի սկզբունքները սովորեցրեք: Նրանց սովորեցրեք, որ բարի լինելը հատուցվում է: Նրանց սովորեցրեք, որ մեղքի մեջ ոչ մի ապահովություն չկա: Նրանց ուսուցանեք սեր Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ և վկայություն դրա աստվածայնության մասին:

Ձեր որդիներին և դուստրերին սովորեցրեք համեստ լինել, հարգել արիությունն ու կանացիությունը: Սովորեցրեք ձեր երեխաներին սեռական մաքրություն, ժամադրվելու ճիշտ չափանիշներ, տաճարային ամուսնություն, միսիոներական ծառայություն, և Եկեղեցու կոչումները ընդունելու և փառավորելու կարևորություն:

Ուսուցանեք նրանց սեր դեպի աշխատանքը և լավ կրթություն ձեռք բերելու արժեքը:

Սովորեցրեք նրանց ճիշտ զվարճանքի կարևորությունը, ներառյալ պատշաճ ֆիլմերը և տեսաֆիլմերը, գրքերը և ամսագրերը: Քննարկեք պոռնոգրաֆիայի և թմրանյութերի

մեջ պարունակվող չարիքը, և սովորեցրեք նրանց մաքուր կյանքով ապրելու արժեքը:

Այո, մայրե՛ր, ձեր երեխաներին ավետարանը սովորեցրեք ձեր իսկ տանը, ձեր հավաքույթին: Սա ամենաարդյունավետ ուսուցումն է, որ ձեր երեխաները երբևէ կարող են ստանալ: Սա Տիրոջ ուսուցանման եղանակն է: Եկեղեցին չի կարող ուսուցանել այնպես, ինչպես դուք կարող եք: Դպրոցը չի կարող: Մանկապարտեզը չի կարող: Բայց դուք կարող եք, և Տերը կաջակցի ձեզ: Ձեր երեխաները ձեր ուսուցանումը ընդմիշտ կհիշեն, և երբ նրանք մեծանան, դրանք կմնան նրանց հետ: Նրանք ձեզ օրհնված կկոչեն՝ իրենց իսկական հրեշտակ մորը:

Մայրե՛ր, երկնային, մայրական այս ուսուցումը ժամանակ է պահանջում, շատ ժամանակ: Այն չի կարող արդյունավետ կատարվել կես դրույքով: Այն պետք է արվի ամբողջ ժամանակ, որպեսզի փրկի և վեհացնի ձեր երեխաներին: Սա ձեր աստվածային կոչումն է:

Անկեղծ սիրեք ձեր երեխաներին: Տասերորդը և վերջինը, մայրեր ժամանակ հատկացրեք ձեր երեխաներին անկեղծ սիրելուն: Մոր անսահման սերը նման է Քրիստոսի սիրուն:

Ահա հարգանքի մի սքանչելի տուրք որդուց իր մորը. «Ես շատ բան չեմ հիշում քվերակության վերաբերյալ նրա հայացքների կամ հասարակական նրա դիրքի մասին, կամ որոնք էին նրա մտքերը երեխաներին ուսուցանելու, դիետայի կամ երեխա մեծացնելու հարցերում, ես չեմ հիշում: Ամենակարևոր բանը, որը ետ է արձագանքում այսօր բազմաթիվ տարիների միջից, այն է, որ նա սիրում էր ինձ: Նա սիրում էր ինձ հետ պառկել խոտի վրա և հեքիթաներ պատմել, կամ պահմտոցի խաղալ մեզ հետ: Նա միշտ գրկում էր ինձ: Եվ դա ինձ դուր էր գալիս: Նա շողացող դեմք ուներ: Ինձ համար դա նման էր Աստծուն, և այն բոլոր սքանչելի բաներին, որ սրբերը պատմում են Նրա մասին: Եվ երգելը: Իմ կյանքի բոլոր ամենահաճելի իրադարձություններից ոչ մեկը չէր կարող համեմատվել այն պահի հետ, երբ ես բարձրանում էի նրա գիրկը քնելու, մինչ նա ճոճվելով իր ճոճվող բազկաթոռի վրա երգում էր: Խորհելով այս մասին, ես մտածում եմ, թե արդյոք այսօրվա կինը, իր ահռելի մղումներով և ծրագրերով, հասկանում է, թե որքան հզոր գործոն է հանդիսանում իր երեխայի բարեկեցությունը կամ դժբախտությունը ձևավորելու գործում: Ես մտածում եմ, թե արդյոք նա հասկանում է, թե որքան կարևոր է իր երեխայի կյանքում իր սերն ու ուշադրությունը»:

Մայրե՛ր, ձեր դեռահաս երեխաները նույնպես այդ նույն սիրո և ուշադրության կարիքն ունեն: Թվում է, թե շատ մայրերի ու հայրերի համար ավելի հեշտ է արտահայտել և ցույց տալ երեխաների հանդեպ իրենց սերը, երբ նրանք փոքր են, սակայն ավելի դժվար է, երբ երեխաները մեծ են: Աղոթքով աշխատեք այդ ուղղությամբ: Չպետք է լինի սերունդների տարբերություն: Իսկ բանալին սերն է: Մեր երիտասարդները սիրո և ուշադրության, ոչ թե շքեղությունների կարիքն ունեն: Նրանց մայրերից և հայրերից հարկավոր է կարեկցանք և հասկացողություն, ոչ թե անտարբերություն: Նրանց հարկավոր է ծնողների ժամանակը: Դեռահաս որդու կամ դստեր հանդեպ ցուցաբերած մոր բարի ուսուցանումը, սերը և վստահությունը բառացիորեն կարող է փրկել նրան ամբարիշտ աշխարհից:

1987 թվականի փետրվարի 22-ին ծնողների համար կազմակերպված հավաքին նախագահ Բենսոնի ուղերձից:

Ուսուցանել երեխաներին օրինակով և հրահանգով

12

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Խորհեք ձեր երեխաների և թոռների, զարմիկների և ձեզ ծանոթ մյուս երեխաների կարիքների մասին: Մտածեք, թե ինչ հնարավորություններ կան այդ երեխաներին ձեր գործերով և խոսքերով սովորեցնելու համար:
- Վերանայեք ընտանիքում ուսուցանելու վերաբերյալ նյութը, որը տրված է *Teaching, No Greater Call* (36123), էջեր 127–43, և *Ընտանեկան Ուղեցույց* (31180), էջեր 4–10: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք այս նյութը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածները ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Աշխարհի ամենամեծ խնդիրը՝ լավ ծնող լինելը

Երեց Ջեյմս Է. Ֆաուստ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ծնող լինելը աստվածային կոչում է

Ես հուզված եմ այժմ խոսելու այն թեմայի շուրջ, որն ես կոչում եմ աշխարհի ամենամեծ խնդիրը: Այն կապված է լավ ծնողներ լինելու արտոնության և պատասխանատվության հետ: Այս առարկայի շուրջ գոյություն ունեն այնքան կարծիքներ, որքան գոյություն ունեն ծնողներ, սակայն քչերն են ընդունում, որ ունեն բոլոր պատասխանները: Ես անշուշտ նրանցից մեկը չեմ:

Ես զգում եմ, որ ներկայումս մեր ժողովրդի մեջ կան ավելի շատ ակնառու երիտասարդ տղամարդիկ և կանայք, քան երբևէ եղել են իմ կյանքի որևէ այլ ժամանակաշրջանում: Սա ենթադրում է, որ այս հիանալի երիտասարդներից շատերը դուրս են եկել լավ տներից և ունեն նվիրված ու հոգատար ծնողներ: Այնուամենայնիվ, ամենաջանասեր ծնողները զգում են, որ որոշ սխալներ են կատարել: Մի անգամ, երբ ես անմիտ մի բան արեցի, հիշում եմ մորս բացականչությունը. «Ի՞նչն եմ ես սխալ արել»:

Տերն ուսուցանել է. «Մեծացրեք ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ» (ՎԱՈՒ 93.40): Ինձ համար գոյություն չունի մարդկային ավելի կարևոր ջանք:

Հայր կամ մայր լինելը ոչ միայն մեծ խնդիր է, այն աստվածային կոչում է: Այն նվիրում պահանջող ջանք է: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է, որ ծնող լինելը «մեծագույն վստահությունն է, որը տրվել է մարդկային էակներին» (*The Responsibility of Parents to Their Children* [pamphlet, n.d.], 1):

Ստեղծել հաջողակ տներ

Մինչ գոյություն ունեն քիչ դժվարություններ, որոնք մարդու համար ավելի մեծ են, քան ծնող լինելը, ավելի մեծ ուրախություն ստանալու հնարավորությունները քիչ են: Անշուշտ, չկա ավելի կարևոր աշխատանք այս աշխարհում, քան պատրաստելը մեր երեխաներին լինելու Աստվածավախ, երջանիկ, ազնվաբարո և արդյունավետ: Ծնողները չեն գտնի ավելի լիարժեք երջանկություն, քան, երբ իրենց երեխաները հարգում են իրենց և իրենց ուսմունքները: Դա ծնող լինելու փառքն է: Հովհաննեսը վկայել է. «Սրանից ավելի մեծ ուրախություն չունիմ, որ լսում եմ թե իմ որդիները ճշմարտության մեջ են գնում» (Գ Հովհաննես Ա.4): Իմ կարծիքով, երեխաներին ուսուցանելը, դաստիարակելը և սովորեցնելը պահանջում է ավելի շատ խելք, բնազդային հասկացողություն, խոնարհություն, ուժ, իմաստություն, հոգևորություն, զսպվածություն և ծանր աշխատանք, քան որևէ այլ աշխատանք, որը մենք կարող ենք ունենալ կյանքում: Սա հատկապես ճշմարիտ է, երբ ազնվության և արժանապատվության բարոյական հիմքերը մեր շուրջը քայքայվում են: Հաջողակ տներ ունենալու համար արժեքներ պետք է ուսուցանվեն, և պետք է լինեն կանոններ, պետք է լինեն չափանիշներ, և պետք է լինեն բացարձակ ճշմարտություններ: Շատ հասարակարգեր ծնողներին քիչ աջակցություն են ցուցաբերում, որպեսզի նրանք սովորեցնեն և հարգեն բարոյական արժեքները: Որոշ երկրներ դառնում են հատկապես արժեքազուրկ, և այդ հասարակություններում երիտասարդները դառնում են անպատկառ:

Քանի որ ամբողջ հասարակություններ քայքայվում են և կորցնում իրենց բարոյական ինքնությունը, և այդքան շատ տներ կոտրվում են, մեծագույն հույսն է ավելի մեծ ուշադրություն դարձնել և ջանքեր գործադրել հաջորդ սերնդին՝ մեր երեխաներին ուսուցանելուն: Սա անելու համար մենք նախ պետք է ամրացնենք երեխաների առաջին ուսուցիչներին: Նրանց մեջ առաջիններն են ծնողները և ընտանիքի մյուս անդամները, և լավագույն միջավայրը պետք է լինի

տունը: Ինչ-որ ձևով մենք պետք է շատ աշխատենք մեր տներն ամրացնելու համար, որպեսզի դրանք լինեն սրբարաններ կանգնած մեր շուրջը տարածված անազնիվ ու կործանիչ բարոյական քայքայման դեմ: Տան մեջ տիրող ներդաշնակությունը, երջանկությունը, խաղաղությունը և սերը կարող են օգնել երեխաներին տալ պահանջվող ներքին ուժը կյանքի խնդիրներին դիմակայելու համար: Միացյալ Նահանգների Նախագահ Ջորջ Բուշի կինը, Բարբարա Բուշը, մի քանի ամիս առաջ Վելսլի Քոլեջի շրջանավարտներին ասաց.

«Սակայն, ինչպիսին էլ լինի դարը, ինչպիսին էլ լինեն ժամանակները, մի բան երբեք չի փոխվի. Հայրեր և մայրեր, եթե դուք երեխաներ ունեք, ապա նրանք պետք է առաջինը լինեն: Դուք պետք է կարդաք ձեր երեխաների համար և դուք պետք է գրկեք ձեր երեխաներին և դուք պետք է սիրեք ձեր երեխաներին: Որպես ընտանիք ձեր հաջողությունը, որպես հասարակություն մեր հաջողությունը կախված է ոչ թե նրանից, թե ինչ է տեղի ունենում Սպիտակ Տանը, այլ նրանից, ինչ տեղի է ունենում ձեր տան ներսում» (*Washington Post,* 2 June 1990, 2):

Լավ հայր և մայր լինելը պահանջում է, որպեսզի ծնողները հրաժարվեն իրենց սեփական շատ կարիքներից և ցանկություններից իրենց երեխաների կարիքները բավարարելու համար: Այս զոհաբերության հետևանքով ուշադիր ծնողները զարգացնում են ազնվաբարո բնավորություն և սովորում են գործի մեջ դնել այն անձնատուր ճշմարտությունները, որոնք սովորեցրել է Ինքը Փրկիչը:

Ես մեծագույն հարգանք եմ տածում միայնակ ծնողների հանդեպ, որոնք պայքարում և զոհաբերում են, գերմարդկային ջանքեր գործադրելով ընտանիքն ամբողջական պահելու համար: Նրանց պետք է հարգել և օգնել իրենց հերոսական ջանքերում: Բայց ցանկացած մոր կամ հոր գործն ավելի հեշտ է, երբ տանը կան երկու գործունյա ծնողներ: Երեխաները հաճախ փորձում են երկու ծնողների ուժն ու իմաստությունը:

Որքա՞ն հաճախ եք դուք ընտանեկան աղոթք ասում

Մի քանի տարի առաջ Եպիսկոպոս Սթենլի Սմութը հարցազրույց էր անցնում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի մոտ: Նախագահ Քիմբալը հարցրեց. «Որքա՞ն հաճախ եք դուք ընտանեկան աղոթք ասում»:

Եպիսկոպոս Սմութը պատասխանեց. Մենք աշխատում ենք օրական երկու անգամ ընտանեկան աղոթք ասել, սակայն միջինում մեկ անգամ է ստացվում»:

Նախագահ Քիմբալը պատասխանեց. «Անցյալում օրական մեկ անգամ ընտանեկան աղոթքը միգուցե բավարար էր: Սակայն ապագայում դա բավական չի լինի, եթե մենք ուզում ենք փրկել մեր ընտանիքները»:

Ես մտածում եմ, թե արդյոք հասարակ և ոչ հաճախակի ընտանեկան երեկոն ապագայում բավական կլինի մեր երեխաներին ամրացնելու և նրանց բարոյական բավարար ուժ տալու համար: Ապագայում, սուրբ գրությունների ոչ հաճախակի ուսումնասիրությունը կարող է բավարար չլինել մեր երեխաներին զինելու համար այն արժանիքներով, որոնք անհրաժեշտ են դիմակայելու համար այն միջավայրի բարոյական քայքայմանը, որի մեջ մենք ապրում ենք: Որտե՞ղ աշխարհում մեր երեխաները կարող են սովորել առաքինություն, բարոյականություն, ազնվություն և հասարակ մարդկային արժանապատվություն, եթե ոչ տանը: Այս արժեքները, անշուշտ, կամրացվեն եկեղեցում, սակայն ծնողների ուսուցանումն ավելի կայուն է:

Ծնողները պետք է օրինակ ծառայեն

Երբ ծնողները փորձում են սովորեցնել իրենց երեխաներին խուսափել վտանգից, ապա նրանք չեն կարող պատասխանել երեխաներին այսպես. «Մենք փորձված և իմաստուն ենք աշխարհի ճանապարհներում, և կարող ենք ավելի մոտ կանգնել անդունդի ծայրին, քան դուք»: Ծնողական մեծամտությունը երեխաներին կարող է ցինիկ և անհավատ դարձնել այն ամենի հանդեպ, ինչ նրանք սովորում են տանը: Օրինակ, երբ ծնողները հաճախում են այնպիսի ֆիլմերի, որոնք իրենց երեխաներին արգելում են դիտել, ծնողական վստահությունը նվազում է: Եթե երեխաներից ակնկալվում է ազնիվ լինել, ապա ծնողները պետք է ազնիվ լինեն: Եթե երեխաներից ակնկալվում է առաքինի լինել, ապա ծնողները պետք է առաքինի լինեն: Եթե դուք սպասում եք, որ ձեր երեխաները պատվարժան լինեն, դուք պետք է պատվարժան լինեք:

Բացի մնացած բոլոր արժեքներից, որոնք պետք է սովորեցնել երեխաներին, մյուսների հանդեպ հարգանքն է, սկսած երեխայի ծնողներից և ընտանիքից, ներառյալ հարգանքն ուրիշների հավատքի խորհրդանիշների և հայրենասիրական համոզմունքների հանդեպ, հարգանքն օրենքի և կարգուկանոնի հանդեպ, հարգանքն ուրիշների սեփականության հանդեպ, հարգանքն իշխանության հանդեպ: Պողոսը մեզ հիշեցնում է, որ երեխաները պետք է «առաջ սովորեն իրանց ընտանիքումը որդիական սեր ցույց տալ» (Ա Տիմոթեոս Ե.4):

Ինչպես պատժել երեխաներին

Ծնողների ամենադժվար խնդիրներից մեկը երեխաներին ճիշտ ձևով պատժելն է: Երեխա մեծացնելն այնքան անհատական է: Ամեն երեխա տարբեր է և յուրահատուկ: Այն, ինչ կազդի մեկի վրա, կարող է չազդել մյուսի վրա: Ես չգիտեմ, թե կա արդյոք ավելի իմաստուն մարդ, որը կարող է ասել, թե որ պատիժն է շատ խիստ կամ շատ թեթև, քան երեխաների ծնողները, որոնք նրանց ամենաշատն են սիրում: Սա ծնողների համար աղոթքով հասկանալու հարց է: Անշուշտ, գերիշխող և կարևորագույն սկզբունքն այն է, որ երեխաների մեջ կարգապահություն դաստիարակելն ավելի շատ պետք է խրախուսվի սիրով, քան պատժով: Բրիգամ Յանգը խորհուրդ է տվել. «Եթե դուք ստիպված լինեք երբևէ պատժել որևէ մեկին, երբեք մի պատժեք այնքան, որպեսզի ձեր ունեցած դեղը չկարողանա բուժել նրան» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [1954], 278): Ինչևէ, ուղղություն տալն ու պատժելը անշուշտ երեխա մեծացնելու անբաժանելի մասն է: Եթե ծնողները չպատժեն իրենց երեխաներին, ապա հասարակությունը կպատժի նրանց այնպես, որ ծնողների դուրը չի գա: Առանց կարգապահության երե-

խաները չեն հարգի ոչ տան, ոչ էլ հասարակության կանոնները:

Կարգապահության հիմնական նպատակը հնազանդություն սովորեցնելն է: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Այն ծնողները, ովքեր իրենց երեխաներին հնազանդություն չեն սովորեցնում, եթե նրանց տները չեն զարգացնում հնազանդություն, ապա հասարակությունը կպահանջի և կստանա այն: Այսպիսով, ավելի լավ է, որպեսզի տունը, իր բարությամբ, կարեկցանքով և հասկացողությամբ սովորեցնի երեխաներին հնազանդությունը, քան թողնի նրան հասարակության դաժան և կոպիտ պատժին, եթե տունը չի կատարել իր պարտականությունը» (*The Responsibility of Parents to Their Children,* 3):

Սովորեցնել երեխաներին աշխատել

Սովորեցնելով երեխաներին լինել կարգապահ և պատասխանատու, կարևոր է սովորեցնել նրանց աշխատել: Երբ մենք մեծանում ենք, շատերս նմանվում ենք մի մարդու, որն ասել է. «Ես սիրում եմ աշխատանքը, այն հիացնում է ինձ: Ես կարող եմ ժամերով նստել և նայել դրան» (Jerome Klapka Jerome, in *The International Dictionary of Thoughts,* comp. John P. Bradley, Leo F. Daniels, and Thomas C. Jones [1969], 782): Կրկին, աշխատանքի սկզբունքի լավագույն ուսուցիչները ծնողներն են: Ինձ համար աշխատանքը հաճույք դարձավ, երբ ես առաջին անգամ աշխատեցի իմ հոր, պապի, քեռիների և եղբայրների հետ: Ես վստահ եմ, որ ավելի հաճախ բեռ էի, քան օգնություն, բայց հիշողությունները քաղցր են, իսկ սովորած դասերը՝ արժեքավոր: Երեխաները պետք է պատասխանատվություն և անկախություն սովորեն: Արդյո՞ք ծնողներն անձամբ ժամանակ են տրամադրում, որպեսզի ցույց տան, ցուցադրեն և բացատրեն, որպեսզի երեխաները կարողանան, ինչպես սովորեցրել է Լեքին, «գործել ինքնուրույն և չներգործվել» (2 Նեփի 2.26):

Լյութեր Բըբանկը, աշխարհի մեծագույն այգեգործներից մեկը, ասել է. «Եթե մենք ավելի շատ ուշադրություն չդարձնենք մեր բույսերին, քան մեր երեխաներին, ապա այժմ կապրեինք մոլախոտերի ջունգլիներում» (in *Elbert Hubbard's Scrap Book* [1923], 227):

Ծնողների հատուկ խնդիրները

Երեխաները նաև այն բարոյական ազատության օգտվողներն են, որով մենք բոլորս հնարավորություն ունենք զարգանալու, աճելու և առաջընթաց ապրելու: Այդ ազատությունը երեխաներին թույլ է տալիս նաև այլ բան նախընտրել եսասիրությանը, վատնողականությանը, ինքնագիջմանը և ինքնակործանմանը: Երեխաները հաճախ են օգտագործում այդ իրավունքը, երբ փոքր են:

Թող այն ծնողները, ովքեր եղել են հոգատար, սիրող և մտահոգ և ապրել են արդարակեցության սկզբունքներով, լավագույնս մխիթարվեն, իմանալով, որ լավ ծնողներ են, չնայած իրենց երեխաների որոշ արարքներին: Երեխաները պատասխանատվություն են կրում լսելու, հնազանդվելու, ուսուցանվելու և սովորելու: Ծնողները չեն կարող միշտ պատասխանել իրենց բոլոր երեխաների սխալ վարքի համար, որովհետև նրանք չեն կարող ապահովել երեխաների լավ պահվածքը: Որոշ երեխաների կարող է չդիմանալ անգամ Սողոմոնի իմաստությունը և Հոբի համբերատարությունը:

Հաճախ հատուկ խնդիր գոյություն ունի այն ծնողների համար, ովքեր հարուստ են կամ չափից շատ զիջող: Որոշ առումով նման իրավիճակում հայտնված երեխաները պատանդ են պահում իրենց ծնողներին, չենթարկվելով ծնողների կանոններին, մինչև որ ծնողները չեն բավարարում իրենց պահանջները: Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Նրանք, ովքեր իրենց երեխաների համար չափազանց շատ են անում, շուտով կհայտնաբերեն, որ ոչինչ չեն կարող անել իրենց երեխաների հետ: Այնքան շատ երեխաների համար այնքան շատ բան է արվել, որ այլևս բան չկա անելու» (in Conference Report, Apr. 1975, 150; or *Ensign,* May 1975, 101): Կարծես մարդու էությունն է լիովին չգնահատել այն նյութական բաները, որոնք ինքը չի վաստակել:

Հետաքրքիր է այն փաստը, որ որոշ ծնողներ այնքան են անհանգստանում հասակակիցների կողմից իրենց երեխաների ընդունված և սիրված լինելու մասին, բայց միևնույն ժամանակ վախենում են, որ իրենց երեխաները կարող են անել այն բաները, որ անում են նրանց հասակակիցները:

Օգնել երեխաներին արժեքներ արմատավորել

Սովորաբար, այն երեխաները, որոնք որոշում են կայացնում և վճռականորեն հրաժարվում են թմրանյութերից, ալկոհոլից և անօրինական սեռական հարաբերություններից, որդեգրել են այդ ամուր արժեքները իրենց ծնողներից: Դժվար որոշումների պահին նրանք հավանաբար կհետևեն իրենց ծնողների ուսմունքներին, ոչ թե հասակակիցների օրինակին կամ խորամանկ լրատվամիջոցներին, որոնք գովազդում են ալկոհոլի օգտագործումը, անօրինական սեքսը, անհավարմությունը, անազնվությունը և այլ չարիքներ: Նրանք նման են Հելամանի երկու հազար պատանիներին, ովքեր «սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց» մահից (Ալմա 56.47): «Եվ նրանք կրկնեցին . . . իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 56.48):

Այն, ինչ կարծես օգնում է ծնողների ուսուցանածը ամուր սերմանել երեխաների կյանքի մեջ, Աստվածության հանդեպ հաստատուն հավատքն է: Երբ այս հավատքը դառնում է նրանց հոգիների մասը, նրանք ներքին ուժ են ձեռք բերում: Այսպիսով, այդ ամենից ի՞նչ է ամենակարևորը, որ ծնողները պետք է սովորեցնեն: Սուրբ գրությունները մեզ ասում են, որ ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն հավատք առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը և ապաշխարության վարդապետությունը (տե՛ս ՎԱՈ 68.25): Այս ճշմարտությունները պետք է ուսուցանվեն տանը: Դրանք չեն կարող սովորեցվել հասարակական դպրոցներում, ոչ էլ կառավարության կամ հասարակության կողմից: Իհարկե, Եկեղեցու ծրագրերը կարող են օգնել, սակայն ամենաարդյունավետ ուսուցումը տեղի է ունենում տանը:

Սիրո հազարավոր թելեր

Ծնողների ուսուցման պահերը պարտադիր չէ որ լինեն մեծ, տպավորիչ, կամ հզոր: Մենք սա սովորում ենք Մեծ Վարդապետից: Չարլս Հենրի Փարկհըրստն ասել է.

«Քրիստոսի կյանքի լիարժեք գեղեցկությունը հավաքական գումարն է գեղեցկության աննկատ փոքր արարքների, որոնք են ջրհորի մոտ կնոջ հետ խոսելը, . . . երիտասարդ իրավագետին իր սրտի ծածուկ փառասիրությունը ցույց տալը, որը նրան հեռու էր պահում Երկնային արքայությունից, . . . հետևորդների փոքր խմբին ցույց տալը, ինչպես աղոթել, . . . կրակ վառելը և ձուկ պատրաստելը, որպեսզի աշակերտները պատրաստ նախաճաշ ունենան, երբ մրսած, հոգնած և հուսալքված վերադառնան գիշերվա ձկնորսությունից: Այս բոլոր բաները, ինչպես տեսնում եք, մեզ հեշտությամբ ցույց են տալիս Քրիստոսի շահերի իրական որակը և երանգը, այնքան որոշակի, այնքան մանրակրկիտ, շեշտելով այն, ինչը փոքր է, այն, ինչը պահ է» (“Kindness and Love,” in *Leaves of Gold* [1938], 177):

Նույնը վերաբերում է ծնող լինելուն: Փոքր բաները մեծ բաներ են, որ հյուսվում են ընտանեկան գորգի մեջ սիրո, հավատքի, կարգապահության, զոհաբերության, համբերատարության և աշխատանքի հազարավոր թելերով:

Ուխտի զավակները

Կան մի քանի մեծ հոգևոր խոստումներ, որոնք կարող են օգնել այս եկեղեցու հավատարիմ ծնողներին: Հավերժական կնքումների զավակները իրենց հետ ունեն աստվածային խոստումները, որոնք տրվել են իրենց ազնվաբարո նախնիներին իրենց ուխտերը պահելու համար: Ծնողների կողմից հիշվող ուխտերը կհիշվեն Աստծո կողմից: Այսպիսով, զավակները կարող են դառնալ այս մեծ ուխտերից և խոստումներից օգտնվողները և ժառանգորդները: Եվ դա, որովհետև նրանք ուխտի զավակներ են (see Orson F. Whitney, in Conference Report, Apr. 1929, 110–11):

Աստված օրհնում է այս աշխարհի պայքարող, զոհաբերող, պատվավոր ծնողներին: Թող նա հատկապես օրհնի ուխտերը, որ պահում են մեր ժողովրդի հավատարիմ ծնողները, և պահպանի ուխտի այդ զավակներին:

1990 թվականի հոկտեմբերի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Ֆաուստի ելույթից (see Conference Report, Oct. 1990, 39–43; or *Ensign*, Nov. 1990, 32–35):

Սիրով շրջապատված սեղանը

Երեց Լեգրանդ Ռ. Կուրտիս
Յոթանասունական

Շատ բան է գրվել տան կարևորության մասին: Երեց Մէրիոն Գ. Ռոմնին մեզ ասել է, որ «հասարակության մահացու հիվանդության պատճառը ընտանիքի անկայունությունն է»: Մենք հասկանում ենք, որ որոշ տներ մեծ են, գեղեցիկ, անգամ շքեղ: Մյուսները ավելի փոքր ու համեստ են, սակավ կահավորված: Բայց ամեն «տուն կարող է երկինք լինել երկրի վրա, լցված սիրով, որտեղ մենք ուզում ենք ապրել», ինչպես հիշեցվում է մեր սիրված օրհներգերից մեկում:[2]

Կահավորանքի ամենակարևոր պարագաներից, որը կարելի է գտնել գրեթե բոլոր տներում, դա խոհանոցի սեղանն է: Այն կարող է լինել փոքր, կամ մեծ, կամ ոչ այնքան ազատ մակերսով, որտեղ քիչ տեղ կա ուտելիք և սպասք դնելու համար: Դրա հիմնական դերը կարծես այն տեղը լինելն է, որտեղ ընտանիքի տարբեր անդամները սնուցում են ստանում:

Այս հատուկ առիթն օգտագործելով, ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը բևեռել խոհանոցի սեղանի ավելի խորը և ավելի կարևոր դերակատարության վրա, որի շուրջ մենք կարող ենք ստանալ շատ ավելին, քան մեր ֆիզիկական կարիքների բավարարումը:

Ավետարանի քննարկումները սեղանի շուրջ

Ընտանիքը սովորաբար տարբեր տարիքի երկու կամ ավելի անդամ ունի, բայց ընտանիքը կարիք ունի հանդիպելու, ոչ միայն ուտելու, այլ աղոթելու, խոսելու, լսելու, պատմելու և միասին աճելու: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին այնքան լավ է ասել այս մասին.

«Իմ աղերսանքն է, և ես ցանկանում եմ, որ այն լսելի լինի, երեխաներին փրկելու աղերսանքն է: Նրանցից շատ շատերն են քայլում ցավով և վախով, միայնակության և հուսահատության մեջ: Երեխաներն արևի լույսի կարիք ունեն: Նրանք երջանկության կարիք ունեն: Նրանք սիրո և սնուցման կարիք ունեն: Նրանք բարության, թարմության և սրտացավության կարիք ունեն: Ամեն տուն, անկախ շենքի արժեքից, կարող է սիրո միջավայր ստեղծել, որը կլինի փրկության միջավայր»:[3]

Ընտանիքի անդամների մեծ մասը ենթարկվում են տնից դուրս աշխարհի բազմաթիվ ուժերի ազդեցությանը, ինչպես նաև հզոր ռադիոյի, հեռուստատեսության, տեսաֆիլմերի և շատ այլ երևույթների ազդեցությանը, որոնք մենք բերում ենք մեր տներ:

Պատկերացրեք մի ընտանիք, որը հավաքվում է սեղանի շուրջ, միգուցե խոհանոցի սեղանի շուրջ, և խոսում է ավետարանի մասին, հաղորդության ժողովի մասին, ուղերձների, *Ensign* և *New Era*-ի նոր համարների, դպրոցի և դրա ողջ ազդեցությունների, գերագույն համաժողովի, Կիրակնօրյա Դպրոցի դասերի մասին, լսում է լավ երաժշտություն, խոսում է Հիսուս Քրիստոսի ու Նրա ուսմունքների մասին: Այս ցանկը կարելի է շարունակել: Ոչ միայն ծնողները, բայց ընտանիքի բոլոր անդամները կարող են իմաստուն լինել, որպեսզի յուրաքանչյուրին հնարավորություն տան խոսելու և մասնակցելու:

Ընտանեկան աղոթք սեղանի շուրջ

Մտածեք այն ընտանիքի ներուժի մասին, որը ծնկի է իջնում սեղանի շուրջ (առանց հեռուստատեսության), աղո-

թելու, օգնություն խնդրելու, շնորհակալություն հայտնելու Երկնային Հորը օրհնությունների համար, բոլոր տարիքի մարդկանց ուսուցանելու սիրող Երկնային Հոր կարևորության մասին: Փոքրերի հետ ընտանեկան աղոթքը կարող է զարգացնել մեծերին, որոնք մի օր կաղոթեն իրենց ընտանիքների հետ:

Երեց Թոմաս Ս. Մոնսոնը ասել է.

«Տերը հրահանգել է, որ մենք ընտանեկան աղոթք ասենք, երբ ասել է. «Աղոթեք Հորը ձեր ընտանիքներում, միշտ իմ անունով, որպեսզի ձեր կանայք և ձեր զավակները կարողանան օրհնվել» (3 Նեփի 18.21:)

Եկեք միասին դիտենք, ինչպես է Վերջին Օրերի օրինակելի ընտանիքն աղոթք ասում Տիրոջը: Հայրը, մայրը և բոլոր երեխաները ծնկի են իջնում, խոնարհում իրենց գլուխները և փակում աչքերը: Սիրո, միության և խաղաղության քաղցր մի զգացում է լցնում տունը: Երբ հայրը լսում է, թե ինչպես է իր փոքր տղան աղոթում Աստծուն, որպեսզի հայրիկը ճիշտ բաներ անի և հնազանդ լինի Տիրոջը, ի՞նչ եք կարծում, այդ հոր համար դժվար կլինի հարգել իր թանկարժեք տղայի աղոթքը: Դեռահաս աղջիկը լսում է, ինչպես է թանկագին մայրիկը խնդրում Տիրոջը օգնել իր դստերը ճիշտ ընկերներ գտնել, որպեսզի իրեն պատրաստի տաճարային ամուսնությանը: Չե՞ք կարծում, որ այդպիսի աղջիկը կձգտի հարգել իր մայրիկի այս խոնարհ խնդրանքը, որին խորապես սիրում է: Երբ հայրը, մայրը և երեխաներից յուրաքանչյուրն անկեղծ աղոթում են ընտանիքի այդ հիանալի որդիների համար, որպեսզի նրանք արժանի ապրեն, որպեսզի երբ գա ժամանակը, կանչվեն ծառայելու որպես Տիրոջ դեսպաններ Եկեղեցու միսիայի դաշտերում, չե՞ք տեսնում արդյոք, թե ինչպես են այդ որդիները մեծանում, դառնալով երիտասարդ տղամարդիկ որպես միսիոներներ ծառայելու մեծագույն ցանկություն ունենալով»:[4]

Ինչպես շատերն ասել են. «Ինչպե՞ս դուք կարող եք ուղարկել ձեր ծնողներին և ձեր երեխաներին ամեն օր աշխարհ՝ առանց միասին հավաքվելու և Տիրոջ հետ խոսելու»: Իմաստուն ծնողները կքննեն օրվա ծրագրերը և օրական առնվազն մեկ անգամ կհավաքեն ընտանիքը միասին օրհնությունների և աղոթքի համար: Շատ շուտով երիտասարդ անդամները կսովորեն, թե ինչպես աղոթել իրենց հերթին և սովորել ընտանեկան աղոթքի թանկարժեք հատկությունները:

Տունը երջանիկ վայր դարձրեք

Ես նախկինում ասել եմ, որ «տունը պետք է երջանիկ վայր լինի, որովհետև բոլորը աշխատում են այդպես դա պահել: Ասվել է, որ երջանկությունը տանն է պատրաստվում, և մենք պետք է ձգտենք մեր տները երջանիկ և հաճելի վայր դարձնել մեր և մեր երեխաների համար: Երջանիկ տունը կենտրոնանում է ավետարանի ուսմունքների շուրջ: Սա կենտրոնանալու անընդհատ և մանրակրկիտ ջանքեր է պահանջում բոլորից»:[5]

Մի մեծ ընտանիքի զբաղված մի դեռահաս բողոքում էր, նշելով թե որքան ժամանակ է վերցնում ընտանեկան աղոթքը: Երբ իմաստուն մայրը հաջորդ օրն աղոթում էր, նա միտումնավոր այդ պատանուն դուրս թողեց աղոթքից: Երբ աղոթքն ավարտվեց, զբաղված տղան ասաց. «Մայրի՛կ, դու ինձ մոռացար»: Սիրող մայրը բացատրեց, որ միայն պատասխանում էր տղայի բողոքին: Զբաղված տղան բողոքեց. «Ինձ մի մոռացիր»:

Սուրբ գրությունների ուսումնասիրությունը սեղանի շուրջ

Պատկերացրեք մի ընտանիք, որը բացած սուրբ գրություններով նստած է սեղանի շուրջը և քննարկում է բազմաթիվ ճշմարտություններ և դասեր: Սա իսկապես սիրով հարստացած սեղան է:

Կրթության մասնագետները համաձայնվում են, որ երեխաները շատ ավելի կարդում են դպրոցից դուրս: Մենք կարող ենք օրհնել մեր երեխաներին, եթե ամեն օր նրանց հետ սուրբ գրություններ կարդանք խոհանոցի սեղանի շուրջ:

Խոհանոցի սեղանի շուրջը ընտանիքը հավաքելու համար ժամանակ տրամադրելը կարող է մեծ փոփոխություններ և մանրակրկիտ պլանավորում պահանջել, սակայն շատ կարևոր է ընտանիքի միության համար, ընտանիքի հոգևոր աճի համար, այն կամուրջների համար, որոնք կառուցվում են ընտանիքի անդամների միջև, երբ նրանք խոսում, լսում և պատասխանում են՝ շրջապատված սիրով: Մեր մեծագույն հաջողությունը պարզապես փորձելն է՝ կրկին ու կրկին:

Ամրացնել ընտանեկան կապերը

Աշխարհում կան շատ ուժեր, որոնք ձգտում են քայքայել ընտանիքը և տունը: Իմաստուն ծնողները կաշխատեն ամրացնել ընտանեկան կապերը, խորացնել տան հոգևոր վիճակը և կենտրոնանալ Հիսուս Քրիստոսի և տաճարային գործունեության վրա: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը մեզ ասել է.

«Ես աղոթում եմ, որպեսզի մենք կարողանանք միմյանց վերաբերվել ավելի շատ բարությամբ, ավելի շատ ազնվությամբ, ավելի շատ խոնարհությամբ, համբերատարությամբ և ներողամտությամբ . . .

Երկրորդը, այդ նույն ոգով ես նաև հրավիրում եմ Եկեղեցու անդամներին հիմնել Տիրոջ տաճարը որպես իրենց անդամության խորհրդանիշ և բարձրագույն միջավայր իրենց ամենասրբազան ուխտերի համար: Դա կլինի իմ սրտի ամենախորը ցանկությունը, երբ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ լինի արժանի տաճարին»:[6]

Նախագահ Հանթերին տրված ուղղությունը կարելի է խորացնել խոհանոցի սեղանի շուրջը:

Մեր տներում մենք պետք է սովորենք ինչպես վերաբերվել ուրիշներին: Ինչպես ասել է Գյոթեն. «Եթե դուք մարդուն վերաբարվեք այնպես, ինչպիսին նա կա, նա կմնա այդպիսին, սակայն եթե դուք նրան վերաբերվեք այնպես, ինչպիսին նա կարող է դառնալ, նա կդառնա այդպիսին»:[7]

Տները դարձրեք նվիրման վայրեր

Երեց Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Երկնքի որոշ բաները տուն բերելու համար պետք է այնպես անել, որ ընտանիքի անդամները նվիրված լինեն Եկեղեցու մասնակցությանը: Ընտանեկան երեկոն, անշուշտ, այս նպատակի համար է ստեղծված: Դա այն հավաքն է տանը, որը կարող է բավարարել յուրաքանչյուր կարիք, ինչպես և եկեղեցու ժողովը, որ անց է կացվում հավաքատանը»:[8]

Այս խորհուրդը համահունչ է մեզ ասված Երեց Դին Լ. Լարսենի խոսքերի հետ. «Մեր եկեղեցու շենքերը միակ վայրերը չեն, որտեղ մենք կարող ենք երկրպագել: Մեր տները պետք է նաև լինեն նվիրման վայրեր: Լավ կլիներ, եթե մենք ամեն օր կարողանայինք գնալ «տուն-եկեղեցի»: Չպետք է լինի որևէ այլ վայր, որտեղ Տիրոջ Հոգին ավելի ընդունելի լինի և ավելի հեշտ մուտք գործի, քան մեր տները»:[9]

Երբ մենք աշխատում ենք այս ամենին հասնել մեր տներում, մենք պետք է հիշենք Նախագահ Հարոլդ Բ. Լիի կարևոր խոսքերը. «Հիշեք, որ Տիրոջ աշխատանքի ամենակարևոր մասը, որը դուք և ես երբևէ կանենք, գտնվում է մեր սեփական տների պատերի ներսում»:[10]

Իմ աղերսանքն է այսօր, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը ուշադիր լինի մեր տան և խոհանոցի սեղանի նշանակության հանդեպ, և շարունակ բերի երկինքը մեր տուն ու գա դեպի Հիսուս Քրիստոսը:

1995 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Կուրտիսի ելույթից (տե՛ս Conference Report, Apr. 1995, 109–11; or *Ensign,* May 1995, 82–83):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. "Scriptures As They Relate to Family Stability," *Ensign,* Feb. 1972, 57.
2. "Home Can Be a Heaven on Earth," *Hymns,* no. 298.
3. In Conference Report, Oct. 1994, 74–75; or *Ensign,* Nov. 1994, 54.
4. *Pathways to Perfection* (1973), 26–27.
5. In Conference Report, Oct. 1990, 13; or *Ensign,* Nov. 1990, 12.
6. In "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 4–5.
7. In Emerson Roy West, *Vital Quotations* (1968), 171.
8. "Begin Where You Are—At Home," *Ensign,* Feb. 1972, 71.
9. In Conference Report, Oct. 1989, 78; or *Ensign,* Nov. 1989, 63.
10. *Strengthening the Home* (pamphlet, 1973), 7.

Ուսուցանել ավետարանի սկզբունքները երեխաներին

13

Մաս 1

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 68.25–28: Կարդալիս գտեք այն սկզբունքները և արարողությունները, որոնք Տերը պատվիրել է ծնողներին ուսուցանել իրենց զավակներին: Պլանավորեք մի քանի գործողություն, որոնց միջոցով կարող եք ուսուցանել այս սկզբունքները և արարողությունները ձեր երեխաներին կամ թոռներին, զարմիկներին և սանիկներին կամ ձեր իմացած այլ երեխաներին:
- Հետևյալ հոդվածը կարդալիս ընտրեք մեկ կամ երկու առաջարկություն, որոնք տվել է Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը: Երբ ունենաք այլ հնարավորություններ, կենտրոնացեք հոդվածի այլ առաջարկների վրա:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ամրացնել ընտանիքները՝ մեր սուրբ պարտականությունը

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հոգին ամրացնում է ընտանիքները

Ընտանիքներն ամրացնելը մեր սուրբ պարտականությունն է որպես ծնողներ, երեխաներ, բարեկամներ, ղեկավարներ, ուսուցիչներ և Եկեղեցու առանձին անդամներ:

Ընտանիքները հոգեպես ամրացնելու կարևորությունը հստակ ուսուցանվում է սուրբ գրությունների մեջ: Հայր Ադամը և Մայր Եվան իրենց որդիներին ու դուստրերին ավետարան էին սովորեցնում: Աբելի զոհաբերությունները ընդունվեցին Տիրոջ կողմից, որին նա սիրում էր: Կայենը, մյուս կողմից, Սատանային ավելի էր սիրում, քան Աստծուն և լուրջ մեղքեր էր գործել: Ադամն ու Եվան ողբացին Տիրոջ առաջ Կայենի ու նրա եղբայրների համար, սակայն նրանք երբեք չդադարեցին ուսուցանել իրենց զավակներին ավետարանը (տե՛ս Մովսես 5.12, 18, 20, 27; 6.1, 58):

Մենք պետք է հասկանանք, որ մեր երեխաներից յուրաքանչյուրը գալիս է տարբեր պարգևներով և տաղանդներով: Ոմանք, ինչպես Աբելը, կարծես ծնվելիս ստացել են հավատքի պարգևներ: Մյուսները պայքարում են իրենց կատարած ցանկացած որոշման հետ: Որպես ծնողներ մենք երբեք չպետք է թույլ տանք, որպեսզի մեր զավակների որոնումները և պայքարները սասանեն կամ ստիպեն մեզ կորցնել մեր հավատքը Տիրոջ հանդեպ:

Ալմա Կրտսերը, երբ «պրկված էր. . . և տակնուվրա եղած . . . բազում մեղքերի հիշողությունից», հիշեց իր հոր սովորեցրածը «Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ՝ քավելու համար աշխարհի մեղքերը» (Ալմա 36.17): Նրա հոր խոսքերը նրան դարձի բերեցին: Նմանապես, մեր ուսուցումն ու վկայությունը կհիշվի մեր երեխաների կողմից:

Հելամանի բանակի 2,000 պատանի զինվորները վկայել են, որ իրենց արդար մայրերը զորությամբ իրենց սովորեցրել են ավետարանի սկզբունքները (տե՛ս Ալմա 56.47–48):

Հոգևոր խորը որոնումների ժամին Ենովսն ասել է. «Խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում» (Ենովս 1.3):

Վարդապետություն և Ուխտերում Տերն ասում է, որ ծնողները պետք է սովորեցնեն իրենց զավակներին, որ «մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի. . .

Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» (ՎԿՈ 68.25, 28):

Ավետարանի ուսուցանումը ամրացնում է ընտանիքները

Երբ մենք խոսքի և օրինակի միջոցով մեր երեխաներին սովորեցնում ենք ավետարանը, մեր ընտանիքները հոգեպես ամրանում և ուժեղանում են:

Կենդանի մարգարեների խոսքերը հստակ ասում են, որ մեր ընտանիքները հոգեպես ամրացնելը մեր սուրբ պարտականությունն է: 1995 թվականին Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը հայտարարություն հղեց աշխարհին, որն ասում է, որ «ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար: . . . Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: . . . Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և

առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները» (“The Family: A Proclamation to the World,” *Ensign,* Nov. 1995, 102):

Այս տարի փետրվարին Առաջին Նախագահությունը կոչ է արել բոլոր ծնողներին «նվիրաբերել իրենց լավագույն ջանքերը իրենց զավակներին ավետարանի սկզբունքները ուսուցանելուն և այդ սկզբունքներով նրանց դաստիարակելուն, ինչը նրանց ավելի մոտ կպահի Եկեղեցուն: Տունը արդարակյաց կյանքի հիմքն է, և ոչ մի այլ գործիք չի կարող փոխարինել այն կամ կատարել դրա հիմնական ֆունկցիաները այս Աստվածատուր պարտականությունն առաջ տանելու գործում»:

Փետրվարի նամակում Առաջին Նախագահությունը սովորեցնում է, որ ուսուցանելով և դաստիարակելով երեխաներին ավետարանի սկզբունքներով, ծնողները կարող են պաշտպանել իրենց ընտանիքները քայքայիչ տարրերից: Նրանք խորհուրդ են տալիս ծնողներին և երեխաներին «մեծագույն առաջնահերթություն տալ ընտանեկան աղոթքին, ընտանեկան երեկոյին, ավետարանի ուսուցմանն ու հրահանգմանը, և ընտանեկան իմաստալից միջոցառումներին: Ինչևէ, կարող են լինել արժանի և պատշաճ այլ պահանջներ և միջոցառումներ, սակայն դրանք չպետք է փոխարինեն աստվածային ձևով տրված պարտականություններին, որոնք կարող են պատշաճ ձևով իրականացնել միայն ծնողներն ու ընտանիքները» (First Presidency letter, 11 Feb. 1999; cited in *Church News,* 27 Feb. 1999, 3):

Տիրոջ և Նրա վարդապետության օգնությամբ կարելի է հասկանալ և հաղթահարել այն դժվարությունների բոլոր ցավալի հետևանքները, որոնց ընտանիքը կարող է հանդիպել: Ինչպիսին էլ որ լինեն ընտանիքի անդամների կարիքները, մենք կարող ենք ամրացնել մեր ընտանիքները, եթե հետևենք մարգարեների խորհուրդներին:

Մեր ընտանիքներն ամրացնելու բանալին գտնվում է Տիրոջ Հոգին մեր տներում ունենալու մեջ: Մեր ընտանիքների նպատակը ուղիղ և նեղ ուղու վրա լինելն է:

Մտքեր ընտանիքներն ամրացնելու համար

Անթիվ բաներ կարելի է անել մեր տների ներսում ընտանիքն ամրացնելու համար: Թույլ տվեք կիսվել մի քանի մտքերով, որոնք կարող են օգնել գտնել այն բնագավառները, որոնք ամրացման կարիք են զգում մեր ընտանիքներում: Ես դրանք առաջարկում եմ խրախուսման ոգով, իմանալով, որ յուրաքանչյուր ընտանիք, ընտանիքի յուրաքանչյուր անդամ, առանձնահատուկ է:

Տները պետք է ապահով վայր լինեն

- Մեր տները ապահով վայր դարձրեք, որտեղ ընտանիքի յուրաքանչյուր անդամ կզգա սեր և պատկանելության զգացում կունենա: Հասկացեք, որ յուրաքանչյուր երեխա տարբեր պարգևներ և ունակություններ ունի, յուրաքանչյուրն անհատ է, որը հատուկ սեր և հոգատարություն է պահանջում:
- Հիշեք, որ փափուկ պատասխանը վանում է զայրույթը (տե՛ս Առակաց ԱԵ.1): Երբ ես իմ սիրելի մարդու հետ կնքվեցի Սոլթ Լեյքի Տաճարում, Երեց Հարոլդ Բ. Լին տվեց այս իմաստուն խորհուրդը. «Երբ դուք ձեր ձայնը բարձրացնեք զայրույթի մեջ, Հոգին կհեռանա ձեր տնից»: Մենք երբեք չպետք է, զայրույթի մեջ, փակենք մեր տան կամ մեր սրտի դուռը մեր երեխաների առաջ: Անառակ որդու նման մեր երեխաները պետք է իմանան, որ կարող են գալ մեզ մոտ սիրո և խորհրդի համար:
- Առանձին ժամանակ անցկացրեք երեխաների հետ, թույլ տալով նրանց ընտրել զբաղմունքը կամ զրույցի թեման: Վերացրեք խանգարող հանգամանքները:

Երեխաներին սովորեցրեք աղոթել, կարդալ սուրբ գրությունները և լսել արժանավայել երաժշտություն

- Խրախուսեք երեխաների անձնական կրոնական պահվածքը, ինչպիսին է՝ անձնական աղոթքը, սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունը և հատուկ կարիքների համար ծոմ պահելը: Գնահատեք նրանց հոգևոր աճը, հետևելով նրանց շարժուձևին, լեզվին և ուրիշների հանդեպ վերաբերմունքին:
- Ամեն օր աղոթեք երեխաների հետ:
- Միասին կարդացեք սուրբ գրությունները: Ես հիշում եմ, ինչպես էին իմ մայրն ու հայրը սուրբ գրություններ մեզ կարդում, երբ մենք երեխաներով նստում էինք հատակին և լսում: Երբեմն նրանք հարցնում էին. «Ի՞նչ է նշանակում այս գրությունը ձեզ համար»: Ապա նրանք լսում էին մեզ, մինչ մենք մեր բառերով պատասխանում էինք:
- Եկեղեցու ամսագրերից կարդացեք ապրող մարգարեների խոսքերը և այլ ոգեշնչող հոդվածներ երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար:
- Մենք կարող ենք լցնել մեր տներն արժանի երաժշտության հնչյուններով, եթե միասին երգենք օրհներգերից և *Մանկական Երգարանից:*

Ընտանեկան երեկոներ և ընտանեկան խորհուրդներ անցկացրեք

- Ամեն շաբաթ ընտանեկան երեկո անցկացրեք: Որպես ծնողներ մենք երբեմն ամաչում ենք սովորեցնել կամ վկայել մեր երեխաներին: Ես մեղավոր եմ ինձ զգում դրա համար իմ ամբողջ կյանքում: Մեր երեխաները պետք է տեսնեն, ինչպես ենք մենք կիսվում իրենց հետ մեր հոգևոր զգացումներով, սովորեցնում իրենց և բերում մեր վկայությունները:
- Ընտանեկան խորհուրդներ անցկացրեք ընտանիքի ծրագրերն ու մտահոգությունները քննարկելու համար: Ընտանեկան ամենաարդյունավետ խորհուրդներից ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ առանձին հանդիպելն է: Օգնեք երեխաներին իմանալ, որ իրենց մտքերը կարևոր են: Լսեք նրանց և սովորեք նրանցից:

Կիսվեք ավետարանով, աջակցեք Եկեղեցու ղեկավարներին և մասնակցեք ամբողջ ընտանիքով

- Հրավիրեք միսիոներներին տուն քիչ-ակտիվ կամ ոչ-անդամ ընկերներին սովորեցնելու համար:
- Ցույց տվեք, որ մենք հաստատում և աջակցում ենք Եկեղեցու ղեկավարներին:
- Երբ հնարավոր է, միասին ճաշեք և իմաստալից զրույցներ անցկացրեք սեղանի շուրջ:
- Ընտանիքով միասին աշխատեք, եթե անգամ ավելի արագ ու հեշտ է աշխատանքն ինքնուրույն կատարելը: Խոսեք որդիների և դուստրերի հետ, երբ միասին աշխատում եք: Ես ունեի այդ հնարավորությունն իմ հոր հետ ամեն շաբաթ օր:

Երեխաներին սովորեցրեք լավ ընկերներ լինել և նախապատրաստեք ապագայի համար

- Օգնեք երեխաներին լավ ընկերներ ունենալ և օգնեք նրանց ընկերներին ընդունված զգալ ձեր տանը: Ծանոթացեք երեխաների ընկերների ծնողների հետ:
- Օրինակով երեխաներին սովորեցրեք, ինչպես պլանավորել ժամանակը և միջոցները: Օգնեք նրանց սովորել ինքնավստահություն և ապագայի համար պատրաստվելու կարևորությունը:

Կիսվեք ժառանգությամբ և ընտանեկան ավանդույթներով

- Սովորեցրեք մեր երեխաներին մեր նախնիների և մեր ընտանիքի պատմությունը:
- Ընտանեկան ավանդույթներ կառուցեք: Միասին պլանավորեք և անցկացրեք իմաստալից արձակուրդներ, հաշվի առնելով մեր երեխաների կարիքները, տաղանդները և ունակությունները: Օգնեք նրանց ստեղծել երջանիկ հիշողություններ, խորացնել իրենց տաղանդները և ձևավորել արժանապատվության զգացում:

Ուսուցանեք պատվիրաններին հնազանդվելու և արարողությունները ստանալու կարևորությունը

- Խոսքով և օրինակով բարոյական արժեքներ և պատվիրաներին հնազանդվելու վճռականություն սովորեցրեք:
- Իմ մկրտությունից և հաստատումից հետո, մայրս ինձ մի կողմ տարավ և ասաց. «Ի՞նչ ես դու զգում»: Ես որքանով կարող էի նկարագրեցի իմ ունեցած խաղաղության, հանգստության և երջանկության այն ջերմ զգացումը: Մայրս բացատրեց, որ այն, ինչ ես զգում էի, պարգև էր, որը ես հենց նոր ստացա, Սուրբ Հոգու պարգևը: Նա ինձ ասաց, որ եթե ես արժանի ապրեմ դրան, ապա միշտ ինձ հետ կունենամ այդ պարգևը: Դա ուսուցանման պահ էր, որն ինձ հետ մնաց իմ ողջ կյանքի ընթացքում:

Երեխաներին սովորեցրեք մկրտության և հաստատման, Սուրբ Հոգին ստանալու, հաղորդությունն ընդունելու, քահանայությունը հարգելու և տաճարային ուխտեր կապելու և պահելու կարևորության մասին:Նրանք պետք է իմանան տաճարի երաշխավորագրին արժանի ապրելու և տաճարային ամուսնությանը պատրաստվելու կարևորության մասին:

- Եթե դուք դեռ չեք կնքվել տաճարում ձեր ամուսնու կամ երեխաների հետ, ընտանիքով աշխատեք ստանալ տաճարային օրհնությունները: Որպես ընտանիք ընտանեկան նպատակներ դրեք:
- Արժանի եղեք այն քահանայությանը, որը կրում եք, և օգտագործեք այն՝ ձեր ընտանիքն օրհնելու համար: . . .

Տեղյակ եղեք համայնքի, դպրոցի և Եկեղեցու իրադարձություններին

Տնից դուրս կան տարբեր միջոցներ: Նրանց իմաստուն օգտագործումը կամրացնի մեր ընտանիքները:

- Մեր երեխաներին խրախուսեք ծառայել Եկեղեցում և համայնքում:
- Զրուցեք մեր երեխաների ուսուցիչների, մարզիչների, խորհրդատուների և Եկեղեցու ղեկավարների հետ մեր երեխաների մտահոգությունների և կարիքների վերաբերյալ:
- Տեղյակ եղեք, թե ինչ են մեր երեխաներն անում ազատ ժամանակ: Ազդեք ֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի և տեսաֆիլմերի նրանց ընտրության վրա: Եթե նրանք օգտվում են Ինտերնետից, տեղյակ եղեք, թե ինչ են անում: Օգնեք նրանց հասկանալ առողջ զվարճանքի կարևորությունը:
- Խրախուսեք դպրոցական արժանավայել միջոցառումները: Իմացեք, թե ինչ են սովորում մեր երեխաները: Օգնեք նրանց կատարել տնային աշխատանքը: Օգնեք նրանց հասկանալ կրթության և աշխատանքին ու ինքնուրույն ապահովմանը պատրաստվելու կարևորությունը:
- Երիտասարդ կանա՛յք, հաճախեք Սփոփող Միության հավաքներին, երբ դառնում եք 18 տարեկան: Ձեզանից ոմանք միգուցե չցանկանան կատարել այդ անցումը: Հնարավոր է, դուք վախենաք, թե չեք համապատասխանում: Իմ երիտասարդ քույրե՛ր, դա այդպես չէ: Սփոփող Միության շարքերում շատ բան կա ձեզ համար: Դա կարող է օրհնություն լինել ձեզ համար ձեր կյանքի ողջ ընթացքում:
- Երիտասարդ տղամարդի՛կ, հարգեք Ահարոնյան Քահանայությունը: Դա նախապատրաստական Քահանայություն է, որը պատրաստում է ձեզ Մելքիսեդեկյան Քահանայությանը: Եղեք ամբողջովին ակտիվ երեցների քվորումում, երբ կարգվում եք Մելքիսեդեկյան Քահանայությանը: Եղբայրությունը, քվորումի ուսուցումը և մյուսներին ծառայելու հնարավորությունները կօրհնեն ձեզ և ձեր ընտանիքը ձեր կյանքի ընթացքում:

Հետևեք սիրո Տիրոջ օրինակին

Յուրաքանչյուր ընտանիք կարող է օրհնվել այս կամ այն ձևով, եթե Տիրոջ Հոգին բերվի մեր տները և մենք ուսուցանենք Նրա օրինակով:

- Գործեք հավատքով, մի արձագանքեք վախով: Երբ մեր դեռահասները սկսում են փորձել ընտանեկան արժեքները, ծնողները առաջնորդության համար պետք է դիմեն Տիրոջը ընտանիքի յուրաքանչյուր անդամի հատուկ կարիքների համար: Այդ ժամանակ պահանջվում է ավելի մեծ սեր և աջակցություն ընտրություններ կատարելու վերաբերյալ ձեր ուսմունքներն ամրապնդելու համար: Վախեցնում է այն, որ մեր երեխաները պետք է սովորեն իրենց սխալներից, սակայն Տիրոջ ուղին և ընտանեկան արժեքներն ընտրելու նրանց պատրաստակամությունը ավելի մեծ է, երբ ընտրությունը գալիս է իրենցից, ոչ թե, երբ մենք փորձում ենք ստիպել ընդունել այդ արժեքները: Սիրո և ընդունված լինելու Տիրոջ ուղին ավելի լավն է, քան ուժի և ստիպողականության սատանայի ճանապարհը, հատկապես երիտասարդներին մեծացնելու հարցում:
- Հիշեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը. «Ոչինչ չի կարող օգնել մարդկանց հեռանալ մեղքից, բացի նրանց ձեռքից բռնելը և մեղմությամբ նրանց հսկելը: Երբ մարդիկ փոքրագույն բարություն և սեր են արտահայտում իմ հանդեպ, Օ՜, ինչպիսի զորություն է դա տալիս մտքիս, մինչդեռ հակառակ ուղին միտում ունի արթնացնելու բոլոր վատ զգացմունքները և ճնշելու մարդու միտքը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 240):

Երեխաները, որոնք ուղուց շեղվել են, կվերադառնան

- Թեև մենք հուսահատվում ենք, երբ այն ամենից հետո, ինչ անում ենք, մեր երեխաները շեղվում են արդարակեցության ուղուց, Օրսոն Ֆ. Վիթնիի խոսքերը կարող են մխիթարել մեզ. «Թեև որոշ ոչխարներ կարող են թափառել, Հովվի աչքը նրանց վրա է, և ուշ, թե շուտ նրանք կզգան Աստվածային Նախախնամության ազդեցությունը, որը հասնում և վերադարձնում է նրանց հոտ: Նրանք ստիպված կլինեն վճարել իրենց պարտքն արդարադատությանը, նրանք կտառապեն իրենց մեղքերի համար և կարող են փշոտ ճանապարհ անցնել, սակայն եթե դա, Անառակ Որդու նման, ի վերջո տանում է իրենց սիրող և ներող [մոր և] հոր սիրտը և տունը, ապա ցավալի փորձը զուր չի լինի: Աղոթեք մեր անհոգ և անհնազանդ զավակների համար: Կառչեք նրանցից ձեր ողջ հավատքով: Հուսացե՛ք, վստահե՛ք, մինչև որ տեսնեք Աստծո փրկությունը» (quoting Joseph Smith, in Conference Report, Apr. 1929, 110):

Միայնակ մեծահասակները և բարեկամները կարող են ուժ հաղորդել

- Իսկ եթե դուք միայնակ եք կամ չեք օրհնվել զավակներով: Պե՞տք է արդյոք ձեզ վերաբերի ընտանիքներին տրված խորհուրդը: Այո՛: Դա մի բան է, որը մենք բոլորս պետք է սովորենք երկրային կյանքում: Չամուսնացած մեծահասակ անդամները հաճախ կարող են հատուկ ուժի աղբյուր հանդիսանալ ընտանիքի համար, դառնալով աջակցության, ընդունման և սիրո աղբյուր իրենց ընտանիքների և իրենց շրջապատող ընտանիքների համար:
- Չափահաս շատ անդամներ, բարեկամներ, ծնողական իրենց դերն ունեն: Տատիկներն ու պապիկները, մորաքույրներն ու քեռիները, եղբայրներն ու քույրերը, զարմիկներն ու զարմուհիները և ընտանիքի մյուս անդամները մեծ ազդեցություն են գործում ընտանիքի վրա: Ես ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել իմ բոլոր բարեկամներին, որոնք ինձ համար օրինակ և վկայություն են եղել: Երբեմն բարեկամները կարող են ասել այն բաները, որոնք, եթե ասեն ծնողները, վեճի կհանգեցնի: Իր մոր հետ երկար ու անկեղծ զրույցից հետո մի երիտասարդ աղջիկ ասաց. «Ես սաստիկ վախենում էի քեզ կամ հայրիկին ասել մի բանի մասին, որը սխալ էի արել: Բայց ավելի վատ կլիներ դա ասել Սյուզան մորաքրոջը: Ես չէի կարող նրան հուսահատեցնել»:

Չկա կատարյալ ընտանիք

Իմանալով, որ մահկանացու կյանքի ընթացքում մենք պետք է սովորենք և զարգացնենք մեր հավատը, մենք պետք է հասկանանք, որ բոլոր բաներում պետք է հակադրություն լինի: Իմ սեփական տանը ծնողական խորհրդի ժամանակ կինս ասաց. «Եթե դու մտածում ես, որ ինչ-որ մեկը կատարյալ ընտանիք ունի, ապա դու պարզապես նրանց լավ չես ճանաչում»:

Տունը և ընտանիքը կարգուկանոնի մեջ պահեք

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, որպես ծնողներ եկեք ականջ դնենք այն խրատին, անգամ նախատինքին, որը Տերը տվեց Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցու ղեկավարներին 1833 թվին «կարգուկանոն տանը հիմնելու» մասին (տե՛ս ՎԱՈ 93.43): «Ես պատվիրել եմ ձեզ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ» (ՎԱՈ 93.40): Կարգուկանոն հաստատեք տանը, և հետևեք, որպեսզի նրանք ավելի կարգապահ և հավաքված լինեն տանը, և միշտ աղոթում են, այլապես նրանք կհանվեն իրենց տեղից (տե՛ս ՎԱՈ 93.50):

Մեր օրերի մարգարեները նմանատիպ հորդոր և նախազգուշացում են տվել ծնողներին իրենց ընտանիքներում կարգուկանոն հաստատելու հարցում: Այդ ժամանակ մենք կիմանանք, որ մեր փորձությունները մեզ ավելի են մոտեցնում Տիրոջը և միմյանց: Թող որ մենք լսենք մարգարեի ձայնը և կարգուկանոն հիմնենք մեր տներում (տե՛ս ՎԱՈ 93.41–49): Ընտանիքն ամրանում է, երբ մենք ավելի ենք մոտենում Տիրոջը, և ընտանիքի յուրաքանչյուր անդամ ամրանում է, երբ մենք բարձրացնում, ամրացնում, սիրում և հոգ ենք տանում միմյանց համար: «Դու ինձ բարձրացրու, ես քեզ կբարձրացնեմ, և մենք կբարձրանանք միասին» (Քվաքեր առակ):

Թող որ մենք կարողանանք ողջունել և պահպանել Տիրոջ Հոգին մեր տներում, որպեսզի ամրացնենք մեր ընտանիքները: Իմ աղոթքն է, որ մեր ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը կարողանա կանգնել «ուղիղ ու նեղ ճանապարհի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք» (տե՛ս 2 Նեփի 31.18):

1999 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Հեյլսի (տե՛ս Conference Report, Apr. 1999, 39–44; or *Ensign,* May 1999, 32–34):

Ուսուցանել ավետարանի սկզբունքները երեխաներին

14

Մաս 2

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ մի քանիսին:

- Ընտանիքով մի միջոցառում պլանավորեք, որի ընթացքում միասին ծառայություն կկատարեք:
- Տան հետ կապված աշխատանք կատարեք ձեր երեխաներից, թոռներից, զարմիկներից մեկի կամ ընտանիքի որևէ այլ երեխայի հետ: Աշխատանքի ընթացքում խոսեք երեխայի հետ: Օգտվեք ուսուցանման հնարավորությունից, առանց քննադատելու օգնեք խրախուսելով երեխայի ջանքերը:
- Կարդացեք *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի հետևյալ բաժինները (34285). «ԶԼՄ. Կինոնկարներ, հեռուստատեսություն, ռադիո, տեսաժապավեններ, գրքեր և ամսագրեր» (էջեր 11–12), «Երաժշտություն և պար» (էջեր 13–14), և «Սեռական մաքրություն» (էջեր 14–16): Նյութը կրկնելուց հետո, որոշեք, թե ձեր երեխաներից որ մեկը օգուտ կքաղի այդ նյութը ձեզ հետ կարդալուց և քննարկելուց:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածը: Եթե դուք ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ուսուցանեք երեխաներին

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Մարդկանց այն քանակը, որ հավաքվել է այստեղ և այլ վայրերում խոսում է այն մասին, թե որքան մեծ է ճշմարտության ծարավը, որն ուղեկցում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին:

Երբ ես աղոթում էի, որպեսզի առավել օգտակար լինեի ձեզ համար, պարզվեց, որ երեք շաբաթ անց ես կնշեմ իմ 75-ամյակը և կանցնեմ, ինչպես ես դա անվանում եմ, *բարձր միջին տարիքը*:

Ես ուսուցիչ եմ եղել ավելի քան 50 տարի: Անշուշտ, որոշ բաներ, որ սովորել եմ, օգտակար կլինեն ձեզ համար:

Ես իմ փորձից սովորել եմ. կյանքը մեզ որոշ բաներ կսովորեցնի, որոնք մենք չէինք կարծում, որ կցանկանայինք իմանալ: Այդ դժվար դասերն ամենաարժեքավորը կարող են լինել:

Ես մի բան ևս սովորեցի, երբ առաջանում էի դեպի *բարձր միջին տարիքը*: Մտածեք այս զրույցի մասին, որը տեղի է ունենում բժշկի և հիվանդի միջև.

Բժիշկ. «Ինչո՞վ կարող եմ օգնել: Ի՞նչ խնդիր ունեք»:

Հիվանդ. «Դա իմ հիշողությունն է բժիշկ: Ես կարդում եմ մի բան, չեմ կարողանում հիշել: Ես չեմ կարողանում հիշել, թե ինչու մտա այդ սենյակ: Ես չեմ հիշում, թե որտեղ եմ դնում իրերը»:

Բժիշկ. «Դե, ասացեք ինձ, որքա՞ն ժամանակ է դա ձեզ անհանգստացնում»:

Հիվանդ. «Որքան ժամանակ ի՞նչն է ինձ անհանգստացնում»:

Եթե սա զվարճալի է ձեզ համար, ապա դուք կամ 60-ից ցածր եք, կամ ծիծաղում եք ինքներդ ձեզ վրա:

Ուսուցանել երեխաներին փոքր տարիքից

Երբ մեծանում եք, դուք չեք կարող սովորել և մտապահել, ինչպես պատանի հասակում: Միգուցե հենց այդ պատճառով է ասել Ալմա մարգարեն. «Սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները»:[1]

Ինձ համար ավելի ու ավելի դժվար է դառնում մտապահել սուրբ գրությունները և բանաստեղծության հատվածները: Երիտասարդ տարիներիս ես կարող էի մեկ-երկու անգամ կրկնել և հիշել դա: Եթե ես շատ անգամ կրկնեի դա, հատկապես եթե գրի առնեի, ապա դա մշտապես կգրվեր հիշողությանս մեջ:

Երիտասարդությունն է հեշտ սովորելու ժամանակը: Այդ պատճառով երեխաների և երիտասարդների ուսուցիչներն ամենասկզբից եղել են Եկեղեցու ղեկավարների հատուկ ուշադրության կենտրոնում:

Բացառիկ կարևոր է երեխաներին և երիտասարդներին սովորեցնել ավետարանը և կյանքի դասերը:

Տերն առաջնային պատասխանատվությունը դնում է ծնողների վրա և նախազգուշացնում նրանց.

«Որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում . . . որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին»:[2]

Այս Եկեղեցու հիմնական նպատակն է՝ սովորեցնել երիտասարդներին՝ նախ տանը, հետո եկեղեցում:

Հավաքել գիտելիք

Մեկ այլ բան, որն ես սովորել եմ, դա հիշելն է այն ամենը, ինչ սովորել եմ երիտասարդ տարիքում: Երիտասարդ մտքում պահած գիտելիքը կարող է երկար տարիներ սպասել այն պահին, երբ պետք կգա:

Թույլ տվեք բացատրել: Ես շատ մտահոգված եմ երիտասարդների միտումով անտեսելու եպիսկոպոսի խորհուրդը, կամ, այլ ծայրահեղություն, չափից դուրս կախված լինել նրանից:

Ես որոշեցի խոսել գերագույն համաժողովին եպիսկոպոսի մասին:

Ես աղոթքով պատրաստվեցի, ապա միտքս եկավ մի զրույց, որը տեղի էր ունեցել 50 տարի առաջ: Դա լիովին բավարարեց այն կարիքը, որն ես ունեի որպես ուսուցիչ: Ես այժմ մեջբերում եմ այդ զրույցը, ինչպես մեջբերեցի գերագույն համաժողովին.

«Տարիներ առաջ ես ծառայում էի ցցի բարձրագույն խորհրդում Էմերի Վայթի հետ: 10 տարի Էմերին ծառայեց որպես եպիսկոպոս Ռուրալ Հարպեր Ծխում: Նրա կինը, Լյուսիլը, դարձավ մեր ցցի Սփոփող Միության նախագահը:

Լյուսիլն ինձ ասաց, որ մի գարնանային առավոտ հարևանը թակեց իր դուռը և խնդրեց Էմերիին: Լյուսիլն ասաց, որ նա հող է վարում: Ապա հարևանը խորը մտահոգությամբ խոսեց. վաղ առավոտյան նա անցնում էր դաշտով և նկատեց Էմերիի ձիերին, որոնք կանգնած էին կիսավարած հատվածում, սանձերը գցած գութանի վրա: Էմերին չէր երևում: Հարևանի մտքով վատ բան չանցավ, մինչև որ ավելի ուշ նորից անցավ դաշտով, և տեսավ, որ ձիերը չեն շարժվել տեղից: Նա բարձրացավ ցանկապատով, անցավ հարևանի դաշտը և գնաց դեպի ձիերը: Էմերին ոչ մի տեղ չէր երևում: Նա շտապեց տուն Լյուսիլից մի բան իմանալու:

Լյուսիլը հանգիստ պատասխանեց. «Օ՜, մի անհանգստացեք: Անշուշտ, ինչ-որ մեկը դժվարության մեջ է եղել և եկել է եպիսկոպոսի ետևից»:

Դաշտում մի քանի ժամ կանգնած ձիերի պատկերը խորհրդանշում է Եկեղեցու եպիսկոպոսների և նրանց կողքին կանգնած խորհրդականների նվիրվածությունը: Ամեն մի եպիսկոպոս և ամեն մի խորհրդական, այսպես ասած, թողնում է իր թիմը անավարտ հատվածում, երբ ինչ-որ մեկն օգնության կարիք ունի»:[3]

Ես երբեք նախկինում չէի օգտագործել այդ փորձառությունը ելույթի ժամանակ, երբեք չէի մտածել այդ մասին:

Ես ուզում էի ամրացնել դա իմ մտքում համաժողովին խոսելուց առաջ, և ես գտա Էմերի Վայթի դստերը: Նա համաձայնվեց հանդիպել ինձ հետ իրենց հին տանը և ցույց տալ այն դաշտը, որն իր հայրը պետք է վարեր այդ օրը:

Որդիներիցս մեկը տարավ ինձ այնտեղ վաղ կիրակի առավոտյան: Նա մի քանի լուսանկար արեց:

Սքանչելի գարնանային առավոտ էր: Դաշտը նոր էր վարվել, ինչպես տարիներ առաջ: Ճայերը կերակրվում էին նոր վարած փխրուն հողից:

Մտքի այդ պայծառացումը, հիշեցնելով այդ զրույցը, անսովոր երևույթ չէ ինձ համար: Այն հաստատում է սուրբ գրություններում տված ճշմարտությունը, որը, նույնպես սովորել եմ երիտասարդ տարիներին.

«Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը»:[4]

Ապա հետևում է խոստումը նրանց, ովքեր գնահատում են գիտելիքը.

«Որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[5]

Դա լավ դաս էր ինձ համար, սակայն իմ դասը դրանով չի ավարտվում:

Երիտասարդ տարիներին ես նկարչությամբ և փայտի վրա փորագրությամբ էի զբաղվում: Ես հիմնականում ինքնուս էի: Երբ երեխաները մեծացան, իմ ժամանակը նվիրում էի նրանց սովորեցնելով այն, ինչ ինքս էի պատանի հասակում սովորել կյանքի, փորագրության և նկարչության մասին:

Երբ նրանք մեծացան, ես փորագրությամբ էի զբաղվում հանգստանալու համար: Ես թռչուններ էի փորագրում և ժամեր անցկացնում այդ զբաղմունքի շուրջ: Երբ ինձ հարցնում էին. «Քանի՞ ժամում եք փորագրել սա»: Ես միշտ պատասխանում էի. «Չգիտեմ: Եթե իմանայի, հաստատ չէի անի այս գործը»:

Այդ ժամերի ընթացքում, երբ աշխատում էի իմ ձեռքերով, խորհում էի արարման հրաշքի շուրջ, և ոգեշնչումը հետևում էր: Երբ փորագրում էի փայտի վրա, փորագրում էի ելույթներ:

Փորագրությունը հանգստություն էր ինձ համար: Երբեմն, երբ անտրամադիր կամ ճնշված եմ լինում, կինս ասում է. «Չէ, ավելի լավ է դու մի նոր բան փորագրես»:

Ես կարծում եմ, որ եթե իմ *բարձր միջին տարիքի* հիշողությունը մի փոքր կենտրոնանա, ես կկարողանայի ասել, թե այս փորագրություններից որը ինչ ելույթ է ներկայացնում: Ես սովորեցի, որ այդ խաղաղ պահերին ես կարողանում եմ երկու գործ միաժամանակ կատարել:

Բերք քաղել ուսուցումից

Ես այլևս ի վիճակի չեմ փորագրել: Այդ գործը շատ նուրբ է, որպեսզի կատարեմ իմ մատներով, որոնք կարծրացել են մանկության ժամանակ տարած պոլիոմելիտի հետևանքով: Բացի դա, իմ կոչման աճող պատասխանատվությունը սահմանափակում է այն ժամանակը, որը ես կարող եմ նվիրել փորագրությանը և ելույթներ պատրաստելուն:

Փորագրելու ունակությունը հիմնականում կորցրել եմ ինձ համար, սակայն ոչ իմ երեխաների համար: Մենք սովորեցնում էինք նրանց, երբ նրանք դեռ փոքր էին:

Այդ թիմի պատկերը, որը կանգնած էր դաշտում, մնաց ինձ հետ: Ես մտածեցի, թե միգուցե կարողանամ փորագրել եպիսկոպոսի թիմը, որը կանգնած է դաշտի մեջ սանձերը գցած գութանի վրա:

Ես տատնվեցի, քանի որ ինը տարի էր անցել, ինչ ես նկարել էի: Արտասովոր տաղանդ և ներշնչում ունեցող երկու ընկեր առաջարկեցին ինձ իրենց օգնությունը եպիսկոպոսի թիմը նկարելու գործում, իսկ հուլիսին ազատ էի ճանապարհորդություններից, այսպիսով ես սկսեցի այդ գործը:

Ես շատ բան սովորեցի այդ երկու ընկերներից, և իրականում, նրանք իմ նկարի մեջ են: Սակայն ավելի շատ օգնություն ես ստացա իմ երկու որդիներից: Որդիներիցս մեկը լուսանկարեց վարած դաշտը, քանի որ ես միշտ աշխատում եմ շատ բծախնդիր լինել, երբ պատկերում եմ ինչ-որ բան *փայտի* կամ *կտավի* վրա, կամ *խոսքերի* միջոցով:

Դա մեկ այլ դաս է: Ես կարող եմ ետ ստանալ իմ երեխաներից այն, ինչ նրանք սովորել են երիտասարդ տարիներին:

Մյուս որդիս որոշեց պատրաստել եպիսկոպոսի թիմի քանդակը բրոնզից՝ որպես լրացում իմ նկարին: Մենք արժեքավոր շատ ժամեր անցկացրեցինք միասին:

Մեր ամբարից նա վերցրեց մի զույգ հին լծասարք, որոնք ավելի քան 50 տարի անձեռնմխելի կախված էին եղել: Նա մաքրեց փոշին և տարավ դրանք տուն: Լծասարքերից մեկը նա գցեց շատ համբերատար հեծյալ մի ձիու վրա: Ձին հանգիստ կանգնած էր, մինչ նա ամրացնում էր լծասարքը և մանրամասն նկար հանեց:

Նրա հարևանը հավաքել էր մի քանի հին գութաններ: Նրանց մեջ կար համապատասխան գութան, որը նա նույնպես նկարեց:

Այսպիսով այն, ինչ մենք տվել էինք մեր որդիներին իրենց պատանի տարիքում, եկավ ետ: Ինչպես մեր մյուս երեխաները, նրանք կատարելագործել էին այն ամենը, ինչ մենք որպես ծնողներ սովորեցրել էինք նրանց, երբ դեռ նրանք շատ փոքր էին: Եվ եթե մեր օրերը երկարացվեն երկրի վրա, կլինի երկրորդ բերքահավաքը՝ մեր թոռները, միգուցե և երրորդը:

Արթնացնել թաքնված տաղանդները

Ես կրկին սովորեցի մի բան ևս: Մի անգամ նախկինում տղա հասակում նկար էի նկարել, ներշնչված լինելով որոշ նկատառումներով: Այն պատկերում էր Վիլարդի Բարձունքները: Ես հիշում եմ, որ ավելի մեծահասակ մարդիկ դրանք անվանում էին *Նախագահություն:* Այդ երեք հսկա ամուր բարձունքները, որ կանգնած էին երկնքի դիմաց, մարմնավորում էին Եկեղեցու ղեկավարներին:

Դա ինը տարի առաջ էր: Որդիս տարավ ինձ Վիլարդ, Յուտա, և լուսանկարեց բարձունքները: Մենք երկրորդ անգամ գնացինք այնտեղ՝ ավելի շատ ստվեր և երանգ գտնելու համար:

Այդ տարիներից հետո, ես պետք է արթնացնեի այն, ինչ երկար տարիներ ննջում էր: Սկզբում դա սաստիկ պայքար էր: Ես մի քանի անգամ պատրաստ էի վերջ դնելու դրան: Ընկերներիցս մեկը խրախուսում էր ինձ, ասելով. «Առաջ գնա: Ներքևում բավականին տեղ կա»:

Ես չհանձվեցի, պարզապես, որովհետև կինս թույլ չէր տալիս դա անել: Այժմ ես ուրախ եմ, որ այդպես չարեցի: Միգուցե այժմ այն, որ նորից այդ գործի մեջ մտա, կօգնի ինձ մի օր մեկ այլ նկար նկարել, ով գիտի:

Կարծում եմ նկարչությանը վերադառնալը նման է մեկին, ով տարիներ շարունակ ոչ ակտիվ էր Եկեղեցում, ապա որոշում է վերադառնալ հոտը: Դա պայքարի այն ժամանակահատվածն է, որը թույլ է տալիս զգալ, թե ինչ է ննջում, սակայն իրականում դեռ կորցված չէ: Եվ այդ ժամանակ օգնում է մեկ-երկու ընկեր ունենալը:

Դա սովորելու մեկ այլ սկզբունք է՝ դասեր քաղել կյանքի սովորական փորձից:

Եպիսկոպոսի Թիմի այդ նկարը շուտով կավարտվի: Որդուս քանդակը պատրաստ է բրոնզից ձուլելու համար:

Նրա քանդակը, բնականաբար, ավելի լավ է ստացվել, քան իմ նկարը: Այդպես էլ պետք է լիներ: Նրա երիտասարդ մատներն ու ուղեղն ավելի պատրաստակամ են արձագանքում, քան՝ իմը:

Երբ մենք մոտենում ենք *բարձր միջին տարիքին,* սովորում ենք, որ մեծացած ոսկորները հեշտությամբ չեն ծալվում, մեծացած հոդերն արագ չեն շարժվում: Այդքան էլ հեշտ չէ կապել կոշկակապերը, երբ անցնում ես 65-ից:

Կրկին գալիս է այդ դասը. «Սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները»:[6]

«Աստծո փառքը բանականություն է, կամ, այլ խոսքով, լույս և ճշմարտություն»:[7]

«Ես պատվիրել եմ ձեզ՝ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»:[8]

Սուրբ Հոգու գերագույն պարգևը շնորհվում է մեր երեխաներին, երբ նրանք միայն ութ տարեկան են:

«Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա *ամեն* բան *կսովորեցնէ* ձեզ, և *կհիշեցնէ* ձեզ *ամեն* ինչ, որ ձեզ ասեցի»:[9]

Նկատեք *սովորեցնել* և *հիշողություն* բառերը:

Երեխաներին սովորեցնելը իր հատուցումն է բերում: Դուք դեռ չե՞ք սովորել, որ երբ ուսուցանում եք, ավելի շատ դուք եք սովորում, քան ձեր երեխաները, որոնց սովորեցնում եք:

Կառուցել հոգևոր հիշողությունների շուրջ

Տարբերություն կա ժամանակավոր գիտելիք և հոգևոր գիտելիք ձեռք բերելու մեջ: Ուսանողները դա սովորում են քննության օրը: Սաստիկ դժվար է հիշել որևէ բան, որը նախապես չեք սովորել:

Դա ճիշտ է ժամանակավոր գիտելիքի վերաբերյալ, սակայն հոգևոր առումով, մենք կարող ենք օգտվել մեր հիշողությունից, որը գնում է ծննդից առաջ: Մենք կարող ենք զգայունություն ձեռք բերել այն բաների հանդեպ, որոնք լավ չէինք հասկանում, երբ երիտասարդ էինք:

Բանաստեղծ Վորդսվորթը ինչ-որ բան զգում էր նախաերկրային կյանքի մասին, երբ գրում էր.

Մեր ծնունդը միայն քուն է և մոռացություն,
Հոգին, որ արթնանում է մեզ հետ, մեր կյանքի Աստղը:
Ամենուրեք ունի իր կացարանը,
Եվ գալիս է հեռվից,
Ոչ թե լիակատար մոռացության մեջ,
Ոչ թե բացարձակ մերկության մեջ,
Այլ փառքի ամպերից ենք մենք գալիս,
Աստծո մոտից, որը մեր տունն է:[10]

Ես այս տողերը հանում եմ իմ հիշողությունից, որտեղ դրանք պահել եմ քոլեջի տարիների անգլերեն դասերի ժամանակ:

Ամենակարևոր դասերը գալիս են կյանքի սովորական իրադարձություններից:

Ոմանք սպասում են հոգևոր բուռն փորձառության, որը կհաստատի իրենց վկայությունը: Դա այդպես չի արվում: Հասարակ բաների մեղմ հուշումները և տպավորություններն են մեզ հավաստիացում տալիս այն մասին, որ մենք Աստծո զավակներն ենք: Մենք ապրում ենք մեր արտոնություններից ցածր, երբ փնտրում ենք նշաններ և սպասում ենք[11] նշանակալից հրաշալի իրադարձությունների:

Մենք Աստծո զավակներն ենք, քանզի մենք ապրել ենք Նրա հետ նախաերկրային կյանքում: Ժամանակ առ ժամանակ այդ վարագույրը բացվում է: Այդ ժամանակ մենք ստանում ենք գիտելիք մեր ով լինելու և տեղի մասին՝ հավերժական համակարգում: Ապավինեք այդ հիշողությանը կամ հոգևոր ներշնչմանը, դա այն վկայություններից մեկն է, որը խոսում է Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտացիության մասին:

Մի առիթով ես լսեցի Նախագահ Մերիոն Գ. Ռոմնիի (1897–1988) խոսքերը. «Ես միշտ գիտեմ, թե երբ եմ խոսում Սուրբ Հոգու ազդեցությամբ, քանզի ես միշտ սովորում եմ ինչ-որ բան իմ ասածից»:

Տերը երեցներին ասել է.

«Դուք առաջ եք ուղարկվել ոչ թե ուսուցանվելու, այլ ուսուցանելու մարդկանց զավակներին այն բաները, որոնք ես դրել եմ ձեր ձեռքում՝ Իմ Հոգու զորությամբ.

Եվ դուք պետք է ուսուցանվեք ի վերուստ: Սրբացրեք ձեզ, և դուք զորությամբ կօժտվեք, որ կարողանաք ուսուցանել, ճիշտ ինչպես ես ասացի»:[12]

Անգամ եթե նորադարձների թիվը սակավ է միսիոներների համար, նրանք և Եկեղեցին հոգևոր զորություն են ստանում, որովհետև նրանք սովորում են իրենց ուսուցանման արդյունքում:

Սարկավագների քվորումի նախագահը պետք է նստի խորհրդում և սովորեցնի իր սարկավագներին:[13] Երեցների քվորումի նախագահը պետք է սովորեցնի իր քվորումը համաձայն ուխտերի:[14]

Պողոսն ասել է Տիմոթեոսին. «Այն բաները որ ինձանից լսեցիր շատ վկաներով, հանձնիր հավատարիմ մարդկանց որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել»:[15]

Տաս բառով նա սովորեցրեց, թե ինչպես է ուսուցումը դառնում իր պարգևը.

«*Արդ դու՝ որ ուրիշին սովորեցնում ես, քո անձին չե՞ս սովորեցնում*. դու որ քարոզում ես չգողանալ, գողանո՞ւմ ես:

Որ ասում ես շնություն չգործել՝ շնությո՞ւն ես գործում»:[16]

Լինել պատրաստակամ սովորող

Հաջորդ օրը ես ներողության նամակ ստացա, ինչպես ստանում էի շատ առիթներով: Այն մեկից էր, որին ես չէի ճանաչում: Այդ նամակում ասվում էր, թե որքան մերժող և բարկացած էր այդ անդամն իմ հանդեպ երկար ժամանակ իմ ելույթի պատճառով: Դա ներելու խնդրանք էր:

Ես արագ եմ ներում: Ես միայն գործակալ եմ, ինչպես ելույթ ունենալուց, այնպես էլ ներելուց:

Սուրբ գրությունները շատ հղումներ են պարունակում, բացահայտելով, թե որքան դժվար էր Իսրայելացիների և Նեփիացիների համար ապրել մարգարեների և առաքյալների ուսմունքներով: Այնքան հեշտ է մերժել ուսմունքը և ուսուցչին: Ամենասկզբից կային բավականին շատ մարգարեներ և առաքյալներ:

Երանություններից մեկում սովորեցվում է.

«Երանի է ձեզ, երբոր կնախատեն ձեզ և կհալածեն և ամեն չար բան սուտ տեղը կասեն ձեր վերայ իմ պատճառովը:

Ուրախացեք և ցնծացեք, որ ձեր վարձքը շատ է երկնքումը. որովհետև այսպես հալածեցին մարգարեներին, որ ձեզանից առաջ կային»:[18]

Սովորաբար այդ ներողության նամակներում գրվում է. «Ես չէի կարող հասկանալ, թե ինչու էիք դուք կարիք զգում ինձ ստիպել զգալ այդքան անհանգիստ և մեղավոր»: Ապա, նրանց պայքարի միջից, բխում է մի ներշնչում, ոգեշնչում, պատճառների և հետևանքների հասկացողություն: Ի վերջո, նրանք տեսնում և հասկանում են, թե ինչու է ավետարանը այնպիսին, ինչպիսին որ կա:

Մի քանի թեմաների շարքում ես նշում եմ մեկը: Մի քույր վերջապես հասկացավ, թե ինչու ենք մենք կարևորում իրենց երեխաների հետ մայրերի տանը մնալու փաստը: Նա հասկացավ, որ ոչ մի ծառայություն չի հավասարվի այն վեհացնող կատարելագործմանը, որը գալիս է անեսասեր մայրությունից: Ոչ էլ նա մտավոր, մշակութային կամ հասարակական կատարելագործման կարիք ունի: Այդ բաները կգան իրենց համապատասխան ժամանակին, քանի որ դրանք գալիս են որպես հավերժ հատկանիշ երեխաներին ուսուցանելու արդյունքում:

Չկա ավելի հավասարազոր, հոգեպես ավելի հատուցող, ավելի վեհացնող ուսմունք, քան այն, որը մայրը սովորեցնում է իր երեխաներին: Մայրը կարող է անհամապատասխան իրեն զգալ սուրբ գրությունների ուսուցման գործում,

որովհետև նա զբաղված է ուսուցանելով իր ընտանիքում: Նա պակաս հատուցում չի ստանա:

Նախագահ Գրանտ Բանգերթերը վարդապետական զրույց ունեցավ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետ, որը իր միսիայի շրջանակներում շրջագայում էր Բրազիլիայով: Քույր Բանգերթերը լսեց և վերջապես ասաց. «Նախագահ Սմիթ, ես երեխաներ էի մեծացնում և ժամանակ չունեի սուրբ գրությունների մասնագետ դառնալու ձեզ նման: Արդյո՞ք ես սելեստիալ արքայություն կգնամ Գրանտի հետ»:

Նախագահ Սմիթը մի պահ լրջորեն մտածեց և ասաց. «Դե, միգուցե, եթե նրա համար խմորեղեն պատրաստեք»:

Տղամարդը պետք է շատ տքնաջան աշխատի, որպեսզի հասնի հոգևոր այն կատարելագործմանը, որը բնականորեն ստանում է իր կինը, երբ սովորեցնում է իրենց երեխաներին: Եվ եթե նա ընդհանրապես հասկանում է ավետարանը, ապա նա կիմանա, որ չի կարող վեհացում ապրել առանց կնոջ:[19] Նրա լավագույն հույսը կլինի լինել ուշադիր պատասխանատու գործընկեր երեխաներին սովորեցնելու գործում:

Օրհնություններ ուսուցիչներին

Այժմ, մտածեք այս խոստման մասին.

«Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կուղեկցի ձեզ, որպեսզի դուք ավելի կատարյալ ձևով հրահանգվեք ավետարանի տեսության, սկզբունքի, վարդապետության և օրենքի մեջ, բոլոր բաներում, որոնք վերաբերում են Աստծո արքայությանը, որոնք նպատակահարմար է, որ դուք հասկանաք»:[20]

Նկատեք, որ խոստումը տրվում է ոչ թե ուսանողին, այլ ուսուցչին:

«Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կուղեկցի ձեզ [ով ուսուցանում է ձեր երեխաներին կամ Երեխաների խմբում, Կիրակնօրյա Դպրոցում, Երիտասարդ Կանանց և Տղամարդկանց, քահանայությանը, սեմինարիային, Սփոփող Միությանը]», որպեսզի իմանաք.

«Բաների մասին, որ երկնքում են, և երկրի վրա, և երկրի տակ. բաներ, որոնք եղել են, որոնք կան, որոնք շուտով պիտի լինեն. բաներ, որոնք տանն են, բաներ, որոնք դրսում են. պատերազմներն ու հուզումներն ազգերի, և դատաստանները, որոնք երկրի վրա են. և նաև գիտելիք՝ երկիրների և թագավորությունների մասին, -

Որպեսզի դուք կարողանաք պատրաստ լինել բոլոր բաներում, երբ որ ես կրկին ուղարկեմ ձեզ՝ մեծարելու կոչումը, որին կանչել եմ ձեզ, և առաքելությունը, որով լիազորել եմ ձեզ»:[21]

Պողոսը մարգարեացել է երիտասարդ Տիմոթեոսին, «որ յետի օրերումը չար ժամանակներ կգան»:[22] Նա ասել է. «Բայց չար և խաբեբա մարդիկ առաջ կգնան չարության մեջ, մոլորեցնելով և մոլորելով»:[23]

Սակայն մենք դեռ կարող ենք ապահով լինել: Մեր ապահովությունը երեխաներին սովորեցնելու մեջ է:

«Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից»:[24]

Պողոսը Տիմոթեոսին խորհուրդ է տվել.

«Բայց դու հաստատ կաց նորանցում, որ սովորեցիր և հավատացիր. և գիտենալով թե ումից սովորեցիր.

Եվ որ *մանկությունից դ սուրբ գրքերը գիտես*. որ կարող են քեզ իմաստուն անել փրկության համար այն հավատքի ձեռով, որ Քրիստոս Հիսուսումն է»:[25]

Սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է: Սա Նրա Եկեղեցին է: Նա մեր Օրինակն է, մեր Քավիչը: Մեզ պատվիրված է լինել, «ինչպես նա է»:[26]

Նա երեխաների ուսուցիչն էր: Նա Երուսաղեմի Իր աշակերտներին պատվիրել է «դորանց մի արգելեք ինձ մոտ գալ. որովհետև այդպիսիսներին է երկնքի արքայությունը»:[27]

Նեփիացիների մոտ Փրկչի ծառայության պատմության մեջ մենք ավելի մեծ խորությամբ ենք տեսնում Նրա հոգին, քան որևէ այլ տեղ.

«Եվ եղավ այնպես, որ նա պատվիրեց, որ իրենց փոքր երեխաներին բերեն:

Այսպիսով նրանք բերեցին իրենց փոքր երեխաներին և դրեցին նրանց ներքև՝ գետնի վրա, նրա շուրջը, և Հիսուսը կանգնեց մեջտեղում. և բազմությունը ճանապարհ տվեց, մինչև նրանք բոլորը բերվեցին նրա մոտ: . . .

. . .Նա արտասվեց, և բազմությունը վկայեց դա, և նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

Եվ երբ նա արեց այս, նա կրկին արտասվեց.

Եվ նա խոսեց բազմության հետ, և ասաց նրանց. Նայեք ձեր փոքրիկներին:

Եվ երբ նրանք նայեցին՝ տեսնելու համար, նրանք գցեցին իրենց աչքերը դեպի երկինք, և նրանք տեսան երկինքները բաց, և նրանք տեսան հրեշտակներ՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին. և նրանք իջան վար և աղակեցին այն փոքրիկների շուրջը, և նրանք, շուրջանակի, օղակված էին կրակով, և հրեշտակները սպասավորում էին նրանց:

Եվ բազմությունը տեսավ և լսեց և վկայեց. և նրանք գիտեն, որ իրենց վկայությունը ճիշտ է, քանզի նրանք՝ նրանցից բոլորը տեսան և լսեցին»:[28]

Ես գիտեմ, որ այդ գրությունը ճիշտ է: Ես վկայություն եմ բերում Նրա մասին և օրհնում ձեզ բոլորիդ, ովքեր ուսուցանում են երեխաներին Նրա անունով:

1999 թվականի օգոստոսի 17-ին Բրիգամ Յանգ Համալսարանում Կրթության շաբաթին նվիրված հավաքի ելույթից (տե՛ս *Ensign*, Feb. 2000, 10–17):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ալմա 37.35
2. Վարդապետություն և Ուխտեր 68.25
3. "The Bishop and His Counselors," *Ensign,* May 1999, 57.
4. Վարդապետություն և Ուխտեր 84.85
5. Վարդապետություն և Ուխտեր 84.88
6. Ալմա 37.35
7. Վարդապետություն և Ուխտեր 93.36
8. Վարդապետություն և Ուխտեր 93.40
9. Հովհաննես 14.26; շեղագիրն ավելացված է:
10. "Ode: Intimations of Immortality," stanza 5.
11. Հակոբ 4.14
12. Վարդապետություն և Ուխտեր 43.15–16
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.85
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.89
15. Բ Տիմոթեոս Բ.2
16. Հռովմեացիս Բ.21–22; շեղագիրն ավելացված է:
17. Տես Հովհաննես Զ.60; 1 Նեփի 16.2; 2 Նեփի 9.40; Հելաման 14.10:
18. Մատթեոս Ե.11–12; տե՛ս նաև Ղուկաս ԻԱ.12; Հովհաննես ԺԵ.20; 3 Նեփի 12.12:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.1–4, 132.19–21:
20. Վարդապետություն և Ուխտեր 88.78; շեղագիրն ավելացված է
21. Վարդապետություն և Ուխտեր 88.79–80
22. Բ Տիմոթեոս Գ.1
23. Բ Տիմոթեոս Գ.13
24. Առակաց ԻԲ.6
25. Բ Տիմոթեոս Գ.14–15; շեղագիրն ավելացված է:
26. Ա Հովհաննես Գ.7
27. Մատթեոս ԺԹ.14
28. 3 Նեփի 17.11–12, 21–25:

Առաջնորդել երեխաներին որոշումներ կայացնելիս

15

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Ստորև տրված ընթերցման հանձնարարության մեջ Երեց Մ. Ռասսել Բալլարդը չորս առաջարկություն է անում օգնելու համար մեզ «կառուցել մեր տներում հավատքի ամրոց և . . . պատրաստել մեր երիտասարդներին լինել մաքուր և առաքինի ու անբիծ, լիովին արժանի մտնելու տաճար»: Վերանայեք նրա առաջարկությունները և հատուկ ծրագրեր մշակեք այդ առաջարկություններին ձեր տանը հետևելու համար:
- Մտածեք այն որոշումների մասին, որոնց առաջ ձեր ընտանիքի յուրաքանչյուր երեխա կարող է կանգնել դպրոցում, տանը, կամ այլ վայրում: Մտածեք, թե ինչ կարող եք անել օգնելու համար յուրաքանչյուր երեխային պատրաստվել արդար որոշումներ կայացնելուն:

Ընթերցման հանձնարարություն

Կարդացեք հետևյալ հոդվածը: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածը ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ինչպես անշեջ կրակ

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տաճարային ամուսնության ուրախությունը

Ժամանակ առ ժամանակ ես պատիվ եմ ունենում ծառայել տաճարում, երբ երկու արժանի երիտասարդներ ամուսնանում և կնքվում են Տիրոջ տանը: Դրանք միշտ հատուկ պահեր են ընտանիքի և ընկերների համար: Այդ պահերին արցունքներով լցված մայրերի աչքերում, որոնք իրենց ողջ սրտով աղոթել են այդ օրվա համար, կարելի է երկրային երջանկության և հավերժական ուրախության քաղցր և բավարարող զգացումների խառնուրդ տեսնել: Դուք դա տեսնում եք հայրերի աչքերում, որոնք ամիսների ընթացքում առաջին անգամ բացի ծախսերի մասին մտածելուց, այլ բանի մասին են մտածում: Սակայն ամենաշատը դուք դա տեսնում եք առաքինի հարսնացուի և փեսացուի աչքերում, որոնք հավատարիմ են ապրել ավետարանի ուսմունքներին, հաղթահարելով աշխարհի գայթակղությունները: Կա որոշակի անժխտելի զգացում, որը մատչելի է նրանց, ովքեր մնացել են մաքուր, անարատ և առաքինի:

Բարոյականության չափանիշները բացարձակ են

Մեր երիտասարդ տղամարդկանցից և կանանցից շատերը ճնշման տակ են գտնվում, որը գործադրում է չար ուղերձներով և անբարոյական պահվածքով հագեցած աշխարհը: Լյուցիֆերը դաժան պատերազմ է մղում ինչպես մեծերի, այնպես էլ երիտասարդ հոգիների համար, և զոհերի թիվն աճում է: Աշխարհի չափանիշները փոխվել են, ինչպես քամոտ անապատի ավազները: Այն, ինչ մի ժամանակ չլված կամ անընդունելի էր, այժմ տարածված է: Աշխարհի մտածելակերպը այնպես կտրականապես է փոխվել, որ նրանք, ովքեր ընտրել են հետևել բարոյականության ավանդույթային չափանիշներին, դիտվում են որպես տարօրինակ, կարծես ստիպված են արդարացնել Աստծո պատվիրաններին հետևելու իրենց ցանկությունը:

Սակայն մի բան որոշակի է. պատվիրանները չեն փոխվել: Թող դրա վերաբերյալ ոչ մի սխալմունք չլինի: Ճիշտը միևնույն է, ճիշտ է: Սխալը միևնույն է, սխալ է, անկախ նրանից, թե որքան խելացիորեն է պարուրված հարգանքի և քաղաքականորեն ճիշտ լինելու մեջ: Մենք հավատում ենք մինչամուսնական առաքինությանը և հետամուսնական հավատարմությանը: Դա ճշմարտության բացարձակ չափանիշն է: Դա ոչ հասարակական կարծիքի առարկա է, ոչ էլ կախված է իրավիճակից կամ հանգամանքներից: Կարիք չկա վիճարկելու այդ կամ ավետարանի մյուս չափանիշները:

Հավատքի ամրոց կառուցել տանը

Սակայն մեծ կարիք է զգացվում ծնողների, ղեկավարների և ուսուցիչների, որոնք կարող են օգնել երիտասարդներին սովորել հասկանալ, սիրել, գնահատել և ապրել ավետարանի չափանիշներով: Ծնողներն ու երիտասարդները պետք է միասին լինեն խելացի և չար թշնամու դեմ պայքարում: Մենք պետք է լինենք այնքան նվիրված, արդյունավետ և վճռական ավետարանով ապրելու մեր ջանքերում, որքան նա է մեզ կործանելու իր ջանքերում:

Մեր առջև ծառացած խնդիրը մեծ է: Վտանգի տակ են անմահ հոգիները նրանց, ում մենք սիրում ենք: Թույլ տվեք առաջարկել չորս եղանակ, որոնցով մենք կարող ենք ամրոց կառուցել մեր տներում և հատկապես պատրաստել մեր երիտասարդներին լինել մաքուր և առաքինի, լիովին արժանի մտնելու տաճար:

Երեխաներին սովորեցրեք ավետարանը

Առաջինը ավետարանի մասին տեղեկությունն է: Առավել կարևոր, կյանքը փոխող տեղեկությունը, որի մասին ես տեղյակ եմ, այն գիտելիքն է, որ մենք իսկապես Աստծո՝ մեր Երկնային Հոր զավակներն ենք: Սա ոչ միայն վարդապետորեն է ճիշտ, դա հոգևոր շատ կարևոր նշանակություն ունի: Իր զորավոր միջնորդական աղոթքի մեջ Փրկիչն ասել է. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին» (Հովհ. ԺԷ.3): Իմանալ մեր Երկնային Հորը և հասկանալ Նրա հետ մեր հարաբերությունները որպես մեր Հայր և մեր Աստված, նշանակում է իմաստ գտնել այս կյանքում և հույս՝ գալիք կյանքի համար: Մեր ընտանիքները պետք է իմանան, որ Նա իրական է, որ մենք իրականում Նրա որդիներն ու դուստրերն ենք, և ժառանգորդներն այն ամենի, ինչ Նա ունի, այժմ և հավիտյան: Այդ գիտելիքով ապահով լինելով, ընտանիքի անդամներն ավելի քիչ կնայեն սատանայական զվարճանքներին և ավելի շատ՝ Աստծուն, և կապրեն (տե՛ս Թվոց ԻԱ.8):

Ապրեք ուխտով, ոչ թե հարմարությամբ

Ինչ-որ կերպ մենք պետք է մեր սրտերում ներարկենք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին զորավոր վկայությունը, որն ունեցել են մեր պիոներ նախնիները: Հիշեք, երբ Նավուն ընկավ 1846 թվի սեպտեմբերին և աղքատ ճամբարներում Սրբերի անտանելի պայմանները: Երբ խոսքը հասավ Վինթեր Քուոթերս, Բրիգամ Յանգն անմիջապես հավաքեց եղբայրներին: Իրավիճակը բացատրելով և Նավույի Տաճարում կապած ուխտի մասին հիշեցնելով, նա ասաց, որ ով ցանկանում է գալ, անկախ նրանից, թե որքան աղքատ է, չպետք է մնա ետևում, տալով այս նշանակալից կոչը.

«Այժմ է աշխատելու ժամանակը, - ասում է նա: «Թույլ տվեք, որպեսզի Տիրոջ Տանը կապած *ուխտի կրակը վառվի ձեր սրտերում, ինչպես անշեջ կրակ*» (To the High Council at Council Point, 27 Sept. 1846, Brigham Young Papers, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1; italics added): Մի քանի օրերի ընթացքում, չնայած Վինթեր Քուորթերսի գրեթե անտանելի պայմաններին, շատ սայլակներ շարժվեցին դեպի արևելք Միսսիսիպի գետի երկայնքով՝ Սրբերին աղքատ ճամբարներից փրկելու համար:

Մենք հաճախ ենք լսում առաջին Սրբերի տառապանքների և զոհաբերությունների մասին և հարցնում ենք մեզ. «Ինչպե՞ս էին նրանք անում դա: Ի՞նչն էր նրանց այդքան մեծ զորություն հաղորդում: Պատասխանը մասամբ տրվում է Նախագահ Յանգի հզոր խոսքերում: Այդ առաջին Վերջին Օրերի Սրբերը ուխտեր էին կապել Աստծո հետ, և այդ ուխտերը վառվում էին ինչպես անշեջ կրակ նրանց սրտերում:

Երբեմն մենք գայթակղվում ենք, թույլ տալով որ մեր կյանքն ավելի շուտ առաջնորդվի հարմարավետությամբ, քան ուխտով: Միշտ չէ որ հարմար է ապրել ավետարանի սկզբունքներով և պաշտպանել ճշմարտությունը և վկայել Վերականգնման մասին: Սովորաբար հարմար չէ կիսվել ավետարանով ուրիշների հետ: Միշտ չէ, որ հարմար է արձագանքել կոչմանը Եկեղեցում, հատկապես, երբ այն փորձում է մեր ունակությունները: Ուրիշներին ծառայելու հնարավորությունները, ինչպես մենք ուխտել ենք, հազվադեպ են գալիս հարմարավետ եղանակներով: Հոգևոր զորություն չկա հարմարավետությամբ ապրելու մեջ: Զորությունը գալիս է այն ժամանակ, երբ մենք պահում ենք մեր ուխտերը: Երբ մենք նայում էինք այդ առաջին Սրբերի կյանքին, մենք տեսնում ենք, որ նրանց ուխտերը նրանց կյանքի հիմնական դրդող ուժն են եղել: Նրանց օրինակը և վկայությունը բավականին զորեղ էին, որպեսզի սերնդեսերունդ ազդեցություն գործեին իրենց զավակների վրա:

Բարոյականություն ուսուցանեք երեխաներին

Երբ մեր երեխաները մեծանում են, նրանք տեղեկության կարիք են ունենում, որը ծնողները պետք է տան ուղղակիորեն և պարզ, այն մասին, թե ինչն է պատշաճ, ինչը՝ ոչ: Ծնողները պետք է սովորեցնեն երեխաներին շրջանցել պոռնոգրաֆիկ նկարները կամ պատմությունները: Երեխաները և երիտասարդները պետք է իմանան ծնողներից, որ ցանկացած տեսակի պոռնոգրաֆիան գործիք է սատանայի ձեռքում, և եթե ինչ-որ մեկը խաղ է անում դրանով, այն հակում առաջացնելու, մարդու հոգին թմրեցնելու և անգամ կործանելու զորություն ունի: Նրանց պետք է սովորեցնել չօգտագործել գռեհիկ լեզու և երբեք ապարդյուն չօգտագործել Տիրոջ անունը: Պատահաբար լսված կոպիտ կատակները երբեք չպետք է կրկնել: Ընտանիքի անդամներին սովորեցրեք չլսել այնպիսի երաժշտություն, որը ֆիզիկական շփում է խրախուսում: Նրանց հետ պարզ ձևով խոսեք սեքսի մասին և մաքրոբարոյության վերաբերյալ ավետարանի ուսուցման մասին: Թող որ այս տեղեկությունը գա ծնողներից՝ տանը պատշաճ ձևով: Ընտանիքի բոլոր անդամները պետք է իմանան կանոնները և հոգեպես ամրանան, որպեսզի կարողանան պահել դրանք: Եվ երբ սխալներ են կատարվում, Տեր Հիսուս Քրիստոսի հրաշալի Քավությունը պետք է հասկանալ և ընդունել, որպեսզի ապաշխարության լիակատար և երբեմն դժվար ընթացքի միջոցով ներումն ու ապագայի հանդեպ մշտական հույսը կարելի լինի ձեռք բերել: Մենք երբեք չպետք է թողնենք դեպի հավերժական կյանք տանող մեր անհատական և ընտանեկան ճգտումները:

Դժբախտաբար, այսօր աշխարհում շատ ծնողներ չեն վերցնում իրենց վրա իրենց ընտանիքներում այդ արժեքները և Եկեղեցու այլ վարդապետությունները սովորեցնելու պատասխանատվությունը, մտածելով, որ դա կանեն ուրիշները՝ հասակակիցները, դպրոցը, Եկեղեցու ղեկավարները և ուսուցիչները, անգամ լրատվամիջոցները: Ամեն օր մեր երեխաները սովորում են, լցնելով իրենց մտքերն ու սրտերն այնպիսի փորձառությամբ և մտածելակերպով, որը խորապես ներգործում է անձնական արժեքների համակարգի վրա:

Ամրացրեք միմյանց ամբարշտության դեմ

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք պետք է միմյանց ուսուցանենք և ավելի խորը հավատք սերմանենք մեր սրտերում, որպեսզի ամրացնենք մեզ և խիզախություն ունենանք պահելու պատվիրանները ավելի ու ավելի տարածվող

ամբարշտության աշխարհում: Մենք պետք է այնքան խորը դարձի գանք դեպի Քրիստոսի ավետարանը, որ ուխտի կրակը վառվի մեր սրտերում ինչպես անմար կրակ: Եվ այդպիսի հավատքով մենք կանենք այն, ինչ անհրաժեշտ է ճշմարիտ և արժանի մնալու համար:

Ազատորեն հաղորդակցվեք երեխաների հետ

Երկրորդը հաղորդակցումն է: Չկա ավելի կարևոր պահ ընտանիքի անդամների հարաբերությունների մեջ, քան բաց ու ազնիվ հաղորդակցումը: Սա հատկապես ճիշտ է այն ծնողների համար, որոնք փորձում են իրենց երեխաներին ուսուցանել ավետարանի սկզբունքները և չափանիշները: Մեր երիտասարդների հետ խորհրդակցելու ունակությունը, և երևի թե ավելի կարևորը, նրանց մտահոգություններին իսկապես լսելը, այն հիմքն է, որի վրա կառուցվում են հաջող հարաբերությունները: Հաճախ այն, ինչ մենք տեսնում ենք աչքերում, և այն, ինչ զգում ենք սրտերում, ասում է շատ ավելին, քան այն, ինչ մենք լսում կամ ասում ենք: Մի խոսք ձեր երեխաներին՝ երբեք անարգալից մի վերաբերվեք ձեր ծնողներին: Դուք պետք է նաև սովորեք լսել, հատկապես ձեր մոր և հոր խորհրդին և Հոգու հուշումներին: Մենք պետք է հետևենք և որսանք ուսուցանման հատուկ պահերը, որոնք անընդհատ տեղի են ունենում մեր ընտանեկան հարաբերություններում, և մենք պետք է այժմ վճռենք ամեն երկուշաբթի երեկոյան ընտանեկան երեկո անցկացնել:

Հաղորդակցման զորեղ պահեր են հանդիսանում կանոնավոր ընտանեկան աղոթքը և սուրբ գրությունների ուսումնասիրությունը: Սուրբ գրությունները կօգնեն սահմանել ընտանիքի արժեքները և նպատակները, և դրանց մասին միասին խոսելը կօգնի ընտանիքի անդամներին սովորել դառնալ ավելի ինքնուրույն, հոգեպես ամուր և ինքնավստահ: Սա ժամանակ է պահանջում, և մենք պետք է խորհրդակցենք միմյանց հետ այն մասին, թե որքան ժամանակ պետք է հատկացվի հեռուստացույց, կինոնկարներ, տեսաֆիլմեր դիտելուն, տեսախաղեր խաղալուն, Ինտերնետից օգտվելուն և տանից դուրս միջոցառումներին:

Ծնողները և ղեկավարները պետք է միջամտեն

Երրորդը միջամտությունն է: Ծնողների պարտականությունն է միջամտել, երբ նրանք տեսնում են իրենց երեխաների սխալ ընտրությունները: Դա չի նշանակում, որ ծնողները երեխաներին զրկում են ազատ ընտրության թանկարժեք պարգևից: Քանի որ ընտրության ազատությունը Աստվածատուր պարգև է, ի վերջո նրանց ընտրությունը, նրանց պահվածքը և այն, ինչին նրանք հավատում են, միշտ կլինի իրենցը: Սակայն որպես ծնողներ մենք պետք է հետևենք, որպեսզի նրանք հասկանան, թե որն է պատշաճ պահելաձևը և հետևանքները, եթե նրանք ընտրեն սխալ ուղին: Հիշեք, չկա նման բան, ինչպիսին է անօրինական հսկողություն տանը: Կինոնկարները, ամսագրերը, հեռուստատեսությունը, տեսաֆիլմերը, Ինտերնետը և լրատվական այլ միջոցները միայն հյուր են, և պետք է մուտք գործեն միայն, եթե պատշաճ են ընտանիքի ժամանցի համար: Ձեր տունը դարձրեք խաղաղության և արդարակեցության մի կտոր: Թույլ մի տվեք, որ չար ազդեցությունները թունավորեն ձեր հատուկ հոգևոր միջավայրը: Եղեք բարի, հասկացող, մեղմ և մտածող ամեն ինչում, ինչ ասում եք և ինչպես վերաբերվում եք միմյանց: Այդ ժամանակ ավետարանի չափանիշների վրա հիմնված ընտանեկան նպատակները կօգնեն ճիշտ որոշումներ կայացնել:

Նույն սկզբունքը վերաբերում է ձեզ՝ եպիսկոպոսներ, ուսուցիչներ և Եկեղեցու այլ ղեկավարներ, երբ դուք աշխատում եք օգնել ընտանիքներին: Դուք չպետք է անգործ կանգնեք մի կողմում, մինչդեռ նրանք, ում դուք առաջնորդում եք, բարոյապես ցածր որոշումներ են կայացնում: Երբ մեր երիտասարդներից որևէ մեկը կանգնում է կյանքի բարոյական խաչմերուկին, միշտ կա մեկը, ծնողը, ղեկավարը, կամ ուսուցիչը, որը կարող է փոխել իրավիճակը սիրով և բարությամբ միջամտելով:

Լավ օրինակ եղեք երեխաների համար

Չորրորդը օրինակն է: Որքան որ դժվար է հոգնած նավաստիի համար առանց կողմնացույցի գտնել իր ճանապարհը անգծագիր ծովերում, գրեթե անհնարին է երեխաների և երիտասարդների համար գտնել իրենց ուղին կյանքի ծովերի մեջ առանց լավ օրինակի առաջնորդող լույսի: Մենք չենք կարող ակնկալել, որ նրանք կխուսափեն այն ամենից, ինչ պատշաճ չէ, եթե տեսնեն, որ իրենց ծնողները խախտում են սկզբունքները և չեն ապրում ավետարանով:

Որպես ծնողներ, ուսուցիչներ և ղեկավարներ, մեր լուրջ պարտականությունն է արդար ամրության, խիզախության, զոհաբերության, անեսասեր ծառայության և ինքնատիրապետման զորեղ անձնական օրինակ ծառայել: Դրանք են այն հատկանիշները, որոնք կօգնեն մեր երիտասարդներին բռնվել ավետարանի երկաթե ձողից և մնալ ուղիղ ու նեղ ճանապարհի վրա:

Ավետարանով ապրելն օգնում է խուսափել սխալներից

Ես կցանկանայի ձեզ ասել, որ տեղեկության, հաղորդակցման, միջամտության և օրինակի վրա կենտրոնանալը միշտ արդյունքում կստեղծի կատարյալ ընտանիք կատարյալ երեխաներով, որոնք երբեք չեն շեղվում ավետարանի չափանիշներից: Սակայն, ցավոք սրտի, միշտ այդպես չէ: Սակայն ընտանիքները, որոնք գիտեն, ուսուցանում են և ապրում ավետարանի սկզբունքներով և չափանիշներով ավելի շուտ կշրջանցեն լուրջ սխալների ցավը: Երբ դրական հաղորդակցման և հավատարիմ օրինակի երկարատև սովորույթները գերակշռում են, շատ ավելի հեշտ է միասին խորհրդակցել անձնական խնդիրների մասին և անցնել անհրաժեշտ փոփոխությունների միջով, որոնք կօրհնեն ընտանիքի յուրաքանչյուր անդամին:

Լսեք Բենիամին Թագավորի նշանակալից խորհուրդը.

«Ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել. քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք:

Բայց այսքանը ես կարող եմ ասել ձեզ, եթե դուք չհետևեք ինքներդ ձեզ, և ձեր մտքերին, և ձեր խոսքերին, և

ձեր արարքներին, և չկատարեք Աստծո պատվիրանները, և չշարունակեք հավատքով առ այն, ինչ լսեցիք մեր Տիրոջ գալստի վերաբերյալ, նույնիսկ մինչև ձեր կյանքի վերջը, դուք պիտի կորչեք: Եվ այժմ, ով մարդ, հիշիր և մի կորչիր» (Մոսիա 4.29–30):

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, թող Աստված օրհնի մեզանից յուրաքանչյուրին, որպեսզի մեր ուխտերի կրակը վառվի մեր սրտերում ինչպես անշեջ կրակ: Թող որ մենք հոգեպես պատրաստ լինենք նորոգելու մեր սուրբ ուխտերն ամեն շաբաթ, երբ ընդունում ենք հաղորդությունը: Թող որ մենք հարգենք Տիրոջը և պատրաստակամ անենք մեր մասը այս առավել ոգեշնչող և մեծ օրերին, կառուցելու համար Նրա Եկեղեցին, ամրացնելով մեր ընտանիքները, սա է իմ խոնարհ աղոթքը:

1999 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Բալլարդի ելույթից (տե՛ս Conference Report, Apr. 1999, 111–15; or *Ensign,* May 1999, 85–87):

Ընտանեկան աղոթք, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրություն և ընտանեկան երեկո

16

Մտքեր կիրառման համար

Համաձայն ձեր անձնական կարիքների և պայմանների, հետևեք հետևյալ առաջարկություններից մեկին կամ երկուսին:

- Եթե ձեր ընտանիքը կանոնավոր միասին աղոթում է, ուսումնասիրում է սուրբ գրությունները և ընտանեկան երեկոներ է անցկացնում, աղոթքով մտածեք այն եղանակների մասին, որոնցով կարող եք կատարելագործվել այդ բնագավառներում: Եթե ձեր ընտանիքը չի անում այդ բաները, մտածեք, թե ինչ դուք կանեք, որպեսզի օգնեք հաստատել այդ միջոցառումները ձեր տանը:
- Ընտանիքով պլանավորեք միջոցառում, որը կարող եք անել միասին: Մտածեք օգտագործել *Family Home Evening Resource Book* (31106) ձեռնարկի 265–340 էջերի վրա տրված մտքերը:
- Վերանայեք *Teaching, No Greater Call* (36123) ձեռնարկի 137–139 էջերի նյութերը:

Ընթերցման հանձնարարություն

Ուսումնասիրեք հետևյալ հոդվածները: Եթե ամուսնացած եք, կարդացեք և քննարկեք հոդվածները ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Ընտանեկան աղոթքի օրհնությունները

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Պողոս Առաքյալը Տիմոթեոսին հայտարարել է.

«Սա գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակներ կգան:

Որովհետև մարդիկ կլինին ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ,

Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր,

Մատնիչ, հանդուգն, գոռոզ, ավելի ցանկասեր, քան թե աստվածասեր» (Բ Տիմոթեոս Գ.1–4):

Մեր ժամանակներում պետք է նորացված շեշտ դրվի ազնվության, բնավորության և հետևողականության վրա: Միայն եթե մենք նորից մեր կյանք մտցնենք այն արժեքները, որոնք իսկական քաղաքակրթության էությունն են, մեր ժամանակի ապրելաձևը կփոխվի: Մեր առջև կանգնած հարցը սա է. «Որտեղի՞ց մենք պետք է սկսենք»:

Ես համոզված եմ, որ այն պետք է սկսվի ընդունելուց, որ Աստված մեր Երկնային Հայրն է, որպես Նրա զավակներ Նրա հետ մեր հարաբերություններից, Նրա հետ հաղորդակցվելուց և Նրա անկախ դիրքորոշումը հասկանալուց, և մեր առօրյա գործերում Նրա առաջնորդությունը փնտրելուց:

Ես ընդունում եմ, որ վերադարձը աղոթքի հին ձևին, ընտանեկան աղոթքին տներում, այն ամենահիմնական բուժման եղանակներից է, որը կհանի այն մահացու հիվանդությունը, որը կործանում է մեր հասարակության բնավորությունը: Մենք չենք կարող հրաշք ակնկալել մի օրվա մեջ, սակայն սերունդ անց մենք հրաշք կունենանք:

Մեկ կամ երկու սերունդ առաջ Քրիստոնեա մարդկանց տներում ընտանեկան աղոթքը ողջ աշխարհում առօրյա կյանքի մի մասն էր, ինչպես ուտելը: Երբ այդ սովորույթը վերացավ, Պողոս Առաքյալի քննարկած բարոյական անկումը անխուսափելի էր:

Ես համոզված եմ, որ չկա ավելի պատշաճ փոխարինում առավոտյան և երեկոյան միասին, հոր, մոր և երեխաների հետ, ծնկի իջնելու սովորույթից: Սա ավելին է, քան փափուկ գորգերը, ավելին, քան գեղեցիկ վարագույրները, ճիշտ հավասարակշռված գունային սխեմաները, որը կդարձնի տունը սքանչելի վայր:

Ծնկի գալու դիրքի մեջ արդեն կա մի բան, որը հակասում է Պողոսի նկարագրած հատկություններին՝ «հպարտ . . . հանդուգն, գոռոզ»:

Կա մի բան հոր, մոր և երեխաների ծնկի գալու սովորույթի մեջ, որը վանում է մնացած հատկանիշները, որոնք նա նկարագրել է. «ծնողներին անհնազանդ, . . . անգութ»:

Կա մի բան Աստծուն դիմելու մեջ, որը հակակշիռ է այն միտմանը, որը տանում է դեպի ամբարշտություն և ոչ թե Աստծուն, այլ հաճույքը սիրելուն:

Անսուրբ լինելու միտումը, ինչպես նկարագրել է Պողոսը, անշնորհակալ լինելու միտումը, ջնջվում է, երբ ընտանիքի անդամները միասին շնորհակալություն են հայտնում Տիրոջը կյանքի և խաղաղության և այն ամենի համար, ինչ ունեն: Եվ երբ նրանք շնորհակալություն են հայտնում Տիրոջը միմյանց համար, ընտանիքի ներսում նոր գնահատում են զարգացնում, նոր հարգանք, նոր սեր միմյանց հանդեպ:

Սուրբ գրություններում ասվում է, որ պետք է շնորհակալություն հայտնել Տիրոջը բոլոր բաներում (տե՛ս ՎԿՈՒ 59.7): Եվ կրկին. «Եվ ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն կամ ոչ ոքի հանդեպ նրա ցասումը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը» (ՎԿՈՒ 59.21):

Հիշելով Տիրոջ առաջ աղքատին, կարիքավորին և ճնշվածին, կարելի է անգիտակցաբար, բայց իրականում սեր զարգացնել, որը վեր է ինքնասիրությունից, հարգանք դեպի ուրիշները, ցանկություն հոգալու ուրիշների կարիքները: Ոչ ոք չի կարող խնդրել Աստծուն օգնել հարևանին, որը դժվարության մեջ է, առանց զգալու, որ պետք է մի բան անի հարևանին օգնելու համար: Ինչ հրաշքներ տեղի կունենան աշխարհի զավակների կյանքում, եթե նրանք մի կողմ դնեն իրենց եսասիրությունը և տրվեն ուրիշներին ծառայելուն: Սերմը, որից այս ապաստանը և մրգատու ծառը կարող է աճել, լավագույնս կարելի է ցանել և սնուցել ընտանեկան առօրյայում:

Ես չգիտեմ ավելի լավ ճանապարհ սեր զարգացնելու երկրի հանդեպ, քան ծնողների աղոթքների միջոցով, որոնք ասվում են իրենց երեխաների առաջ այն հողի համար, որի վրա նրանք ապրում են, բերելով Ամենազորի օրհնությունները այդ երկրի վրա, որպեսզի այն պահպանվի ազատության և խաղաղության մեջ: Ես չգիտեմ ավելի լավ ճանապարհ, որով մեր երեխաների սրտերում կարելի է կառուցել այդքան անհրաժեշտ հարգանքը իշխանությունների հանդեպ, քան մեր առօրյա ընտանեկան աղոթքներում հիշելը մեր երկրների ղեկավարներին, որոնք կրում են երկիրը կառավարելու բեռը:

Ես հիշում եմ մի պաստառի վրա գրված խոսքերը. «Աղոթող ազգը խաղաղության մեջ գտնվող ազգ է»: Ես հավատում եմ սրան:

Ես չգիտեմ որևէ բան, որն այդքան շատ կարող է օգնել թեթևացնել ընտանեկան լարումները, քան այն խոնարհ ճանապարհը. որը հարգանք է առաջացնում ծնողների հանդեպ, որը տանում է հնազանդության, որը ներգործում է ապաշխարության ոգու վրա, որը կբուժի կոտրված տների վերքերը, քան միասին աղոթելը, միասին Տիրոջ առաջ թուլությունները խոստովանելը և Տիրոջ օրհնությունները բերելը տուն և նրանց, ովքեր այնտեղ ապրում են:

Ինձ տպավորել են մի մարդու ասած խոսքերը, որն արդեն երկար ժամանակ է, ինչ մահացել է: Ջեյմս Հ. Մոյլը իր թոռներին գրել է իր տանը ընտանեկան աղոթքի վերաբերյալ. «Մենք չէինք գնում քնելու, մինչև որ ծնկի չէինք գալիս աղոթքի մեջ խնդրելու աստվածային առաջնորդությունից և հավանությունից: Տարբերություններ կարող են առաջանալ լավագույն ընտանիքներում, սակայն դրանք կվարատվեն . . . աղոթքի ոգով . . . Դրա ողջ հոգեբանությունը միտված է խրախուսել ավելի արդարակյաց կյանք մարդկանց մեջ: Այն միտված է դեպի միություն, սեր, ներում, ծառայություն»:

1872 թվին Գեներալ Թոմաս Լ. Քեյնը, Այովայում մեր ժողովրդի լավ բարեկամը դժվար պահերին և այն ժամանակ, երբ բանակը գալիս էր Սոլթ Լեյքի Հովիտ, կրկին իր կնոջ և երկու որդիների հետ եկավ արևմուտք: Նրանք Բրիգամ Յանգի հետ ճանապարհորդեցին Սենտ Ջորջ, ճանապարհին ամեն գիշեր կանգ առնելով Եկեղեցու անդամների տներում: Տիկին Քեյնը նամակներ էր գրել իր հորը, որը Ֆիլադելֆիայում էր: Այդ նամակներից մեկում նա ասում է.

«Այս ճանապարհորդության ընթացքում մեր մնացած բոլոր տեղերում մենք աղոթքներ ենք ունեցել անմիջապես ճաշից-ընթրիքից հետո, և աղոթքներ կրկին նախաճաշից առաջ: Ոչ ոք չէր բացակայում: . . . Մորմոնները . . . անմիջապես ծնկի էին իջնում, մինչ տան գլուխը կամ պատվավոր հյուրը բարձրաձայն աղոթում էր: . . . Նրանք շատ քիչ ժամանակ էին տրամադրում փառավորելուն, փոխարենը խնդրում էին այն, ինչի կարիքն ունեին և շնորհակալություն հայտնում նրա համար, ինչ Նա տվել էր: . . .Նրանք համարում էին, որ Աստված գիտի մեր անունները և պաշտոնները, և օրհնություն էին խնդրում առանձին մարդկանց համար, . . . ինձ սա դուր էր գալիս, երբ այն սովորական դարձավ ինձ համար»:

Օ՜հ, թող որ մենք որպես մարդիկ կարողանանք լիովին կիրառել այս սովորույթը, որն այդքան կարևոր էր մեր պիոներ նախնիների համար: Ընտանեկան աղոթքը նրանց երկրպագության մասն էր, ինչպես Թաբերնաքլում անցկացվող ժողովները: Այն հավատքի հետ, որը գալիս էր առօրյա այդ աղոթքների հետ, նրանք վերցնում էին գործիքները, ջրում էին չորացած հողը, ծաղկեցնում էին անապատը, սիրով ղեկավարում իրենց ընտանիքները, միմյանց հետ խաղաղության մեջ էին ապրում և անմահացնում իրենց անունները, իրենց ամբողջովին նվիրելով Աստծուն ծառայելուն:

Ընտանիքը հասարակության հիմնական միավորն է: Աղոթող ընտանիքն ավելի լավ հասարակության հույսն է: «Խնդրեցեք Տիրոջը, քանի որ նա գտնվում է» (Եսայիա ԾԵ.6):

Կարո՞ղ ենք մենք մեր տներն ավելի լավը դարձնել: Այո՛, եթե ընտանիքներով դիմենք ամենայն գեղեցկության Աղբյուրին: Կարո՞ղ ենք մենք ամրացնել հասարակությունը և դարձնել այն ապրելու ավելի լավ վայր: Այո՛, ամրացնելով մեր ընտանիքի արժեքները, միասին ծնկի իջնելով և դիմելով Ամենազորին Նրա Սիրեցյալ Որդու անունով:

Այս սովորույթը, վերադարձը դեպի ընտանեկան երկրպագություն, տարածվելով երկրով և աշխարհով, մի սերունդ անց կվերացնի այն ախտը, որը կործանում է մեզ: Այն կվերականգնի անաչառությունը, փոխադարձ հարգանքը և երախտագիտության ոգին մարդկանց սրտերում:

Վարդապետը հայտարարել է. «Խնդրեցեք և կտրուի ձեզ. որոնեցեք և կգտնեք, դուռը թակեցեք և կբացուի ձեզ» (Մատթեոս Է.7):

Ես տալիս եմ ձեզ իմ վկայությունը, որ եթե դուք անկեղծ կիրառեք ընտանեկան աղոթքը, դուք չեք հեռանա առանց վարձքի: Փոփոխությունները հնարավոր է անմիջապես տեղի չունենան: Դրանք կարող են չափազանց փխրուն լինել: Սակայն դրանք կլինեն իրական, քանզի Աստված «իրան խնդրողներին վարձահատույց կլինի» (Եբրայեցիս ԺԱ.6):

Թող որ մենք լինենք հավատարիմ, օրինակ ծառայելով աշխարհի առաջ այս սովորույթի մեջ և խրախուսելով ուրիշներին վարվել նույն կերպ:

1991 թվականի փետրվարի *Ensign-ից*, էջեր 2–5:

«Այդպիսով ես ուսուցանվեցի»

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորում

Լավ ծնողներ

Մորմոնի Գիրքը սկսվում է հետևյալ խոսքերով. «Ես, Նեփիս, ծնված լինելով լավ ծնողներից, հետևաբար ինչ-որ չափով սովորեցվել էի հորս բոլոր գիտելիքներից» (1 Նեփի 1.1): Ինչպիսի այլ աշխարհ սա կարող էր լինել, եթե մեր Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրի անձնական օրագիրը սկսեր նույն արտահայտությամբ՝ ունենալ լավ ծնողներ և ուսուցանվել նրանց կողմից:

Մենք ապրում ենք պատմության հատուկ ժամանակաշրջանում, մի ժամանակ, երբ Տիրոջ ավետարանը վերականգնվել է իր ամբողջությամբ: Մեր միսիոներական ուժերը մեծանում են որակի և քանակի մեջ, և ավետարանը ուսուցանվում է ավելի շատ լեզուներով ավելի շատ ազգերի և ավելի շատ լսվող ականջների, քան երբևիցե անցյալում: Մինչ ծխերը և ցցերը հիմնվում են աշխարհի բոլոր մասերում, ստեղծագործ ուղեղները ոգեշնչվում են ստեղծել հաղորդակցման այնպիսի գործիքներ, որոնք ի վիճակի են մարգարեների ուսուցումը հասցնել ավելի ու ավելի շատ մարդկանց ականջներին: Ավետարանի բարի լուրը այժմ ավելի արագ կարող է տարածվել, հավերժական խաղաղության հույս բերելով մարդկանց սրտերին:

Ընտանեկան կյանքը ճգնաժամի մեջ

Ավետարանի ամենամեծ ուղերձներից մեկը ընտանեկան միավորի հավերժական բնույթի մասին վարդապետությունն է: Մենք աշխարհին ենք հայտարարում ընտանեկան կյանքի արժեքն ու կարևորությունը, սակայն այսօրվա աշխարհում տիրող խառնաշփոթի և դժվարության պատճառները մենք գտնում ենք ընտանիքի անկման մեջ: Տան փորձառությունները, որտեղ երեխաները սովորում և ուսուցանվում են սիրող ծնողների կողմից, նվազում են:

Ընտանեկան կյանքը, որտեղ երեխաները և զավակները միասին հաղորդակցվում են ուսման, խաղերի և աշխատանքի ժամանակ, փոխարինվել են արագ, անհատական ճաշով և հեռուստացույցի դիմաց անցկացվող երեկոներով: 1991 թվին Շրջանների Ազգային Ասոցիացիան, հանդիպելով Սոլթ Լեյք Սիթիում, եզրակացրեց, որ ընտանեկան ազդեցության պակասը հասել է այնպիսի մակարդակի, որ վերածվել է ճգնաժամի մեր ազգի համար, և ժողովի ժամանակ քննարկում էին իրենց մտահոգությունները: Նրանք առանձնացրեցին հինգ հիմնակետերը, որոնք կարող են մեծացնել յուրաքանչյուր ընտանիքի հաջողության հնարավորությունները:

Առաջին, ամրացրեք հարաբերությունները ընտանեկան միջոցառումների միջոցով; երկրորդ, հիմնեք խելամիտ կանոններ և ակնկալիքներ, երրորդ, կառուցեք ինքնահարգանք, չորրորդ, հասանելի նպատակներ դրեք, և հինգերորդ, պարբերաբար գնահատեք ընտանիքի ուժեղ և թույլ կողմերը:

Հանկարծակի, մեր մարգարեների տագնապալի և նախազգուշացնող ձայնը ժամանակների սկզբից հատկապես մեծ կարևորություն ձեռք բերեց: Երբ խորհուրդ ենք ստանում և խրախուսվում, մենք պետք է ուշադիր լինենք մեր ընտանիքների հանդեպ և ուժեղացնենք մեր միսիոներական ջանքերը, որպեսզի բերենք մյուսներին ճշմարտության գիտելիքին և ընտանիքի միավորի կարևորությանը:

Ադամն ու Եվան սովորում են ծնողական պարտականություններ

Ամենասկզբում Ադամին ու Եվային տրված Տիրոջ հրահանգները հստակություն մտցրեցին որպես ծնողներ նրանց պարտականությունների մեջ: Նրանց դերերը հստակ սահմանվեցին: Նրանից հետո, երբ նրանք հրահանգներ ստացան Տիրոջից, մենք տեսանք, որ նրանք հետևեցին Նրա խորհրդին և ասացին.

«Եվ այդ օրը Ադամն օրհնեց Աստծուն և լցված էր, և սկսեց մարգարեանալ երկրի բոլոր ընտանիքների վերաբերյալ՝ ասելով. Օրհնյալ է Աստծո անունը, քանզի իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են, և այս կյանքում ես ուրախություն կունենամ, և կրկին, մարմնի մեջ, ես կտեսնեմ Աստծուն:

Եվ Եվան՝ նրա կինը, լսեց բոլոր այս բաները, և ուրախացավ՝ ասելով. Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք սերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին:

Եվ Ադամն ու Եվան օրհնեցին Աստծո անունը, և նրանք բոլոր բաները հայտնի դարձրեցին իրենց որդիներին ու դուստրերին» (Մովսես 5.10–12):

Սովորեցրեք և ուսուցանեք երեխաներին

Այո, ամենասկզբից երեխաներին սովորեցնելու ծնողների պարտականությունները այն հրահանգների շարքում էին, որոնք Տերը տվեց մեր առաջին երկնային ծնողներին:

Այն հայտնությունները, որոնք եկան, երբ Եկեղեցին կրկին վերականգնվեց այս օրերին, հորդորում են ծնողներին կատարել երեխաներին սովորեցնելու և ուսուցանելու իրենց պարտականությունը: Վարդապետություն և Ուխտերի հինսուներրորդ բաժնում մենք գտնում ենք, որ Տերը նախատում է որոշ եղբայրներին, որ նրանք ուշադրություն չեն դարձնում իրենց ընտանեկան պարտականություններին: Սուրբ գրություններն ասում են.

«Բայց ես պատվիրել եմ ձեզ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ: . . .

Դու քո երեխաներին լույս և ճշմարտություն չես ուսուցանում՝ պատվիրանների համաձայն. և այն չարագործը դեռևս զորություն ունի քո վրա, և դա է քո չարչարանքի պատճառը:

Եվ այժմ ես տալիս եմ քեզ մի պատվիրան, - եթե դու կամենում ես ազատվել, ապա կարգի բեր քո սեփական

տունը, որովհետև քո տանը շատ բաներ կան, որոնք ճիշտ չեն» (ՎԱՈ 93.40, 42–43):

Ընտանեկան երեկոյի կարևորությունը

Տարիներ առաջ Եկեղեցին բոլոր ծնողներին կոչ է արել ամեն շաբաթ ընտանեկան երեկոներ վարել: Այսօր այդ կոչին հետևում են Եկեղեցու անդամների տներում: Երկուշաբթի երեկոն որոշվել է տրամադրել ընտանիքով միասին հավաքվելուն: Եկեղեցու ոչ մի այլ միջոցառումներ կամ հասարակական հանդիպումներ չպետք է նշանակվեն այդ օրը: Մեզ մեծ օրհնություններ են խոսք տրվել, եթե մեր ընտանիքները հավատարիմ մնան այս հարցում:

Նախագահ Հարոլդ Բ. Լին մի առիթով մեզ խորհուրդ է տվել.

«Այժմ միշտ հիշեք Եղիայի առաքելության ուղերձն այն մասին, որ զավակների սրտերը պետք է շրջվեն դեպի հայրերը, իսկ հայրերի սրտերը դեպի զավակները: Այն կիրառելի է ինչպես վարագույրի այս, այնպես էլ այն կողմում: Եթե մենք անտեսենք այստեղ ընտանեկան երեկո անցկացնելու հարցը և չկատարենք մեր պարտականությունն այստեղ, ինչպես կլինի երկինքը, եթե մենք դրանք կորցնենք մեր անփութության պատճառով: Երկինքը երկինք չի լինի, եթե մենք չանենք ամեն հնարավորինը, փրկելու համար նրանց, ում Տերն ուղարկել է մեր տոհմագծով»:

Նա շարունակում է.

«Այսպիսով, հայրե՛ր և մայրե՛ր, ձեր սրտերը պետք է շրջվեն դեպի ձեր զավակները *հենց հիմա*, եթե դուք ունեք Եղիայի ճշմարիտ ոգին, և չմտածեք, որ դա վերաբերում է միայն նրանց, ովքեր վարագույրի այն կողմն են: Թող որ ձեր սրտերը շրջված լինեն դեպի ձեր զավակները, և ուսուցանեք ձեր երեխաներին, բայց դուք դա պետք է անեք, երբ նրանք շատ փոքր են պատշաճ սովորելու համար: Եվ եթե դուք անտեսում եք ձեր ընտանեկան երեկոները, դուք անտեսում եք Եղիայի առաքելության սկիզբը այնպես, ինչպես անտեսում եք տոհմաբանության ձեր հետազոտական աշխատանքը» (in *Relief Society Courses of Study, 1977–78* [1977], 2; italics added):

Ես հաճախ եմ մտածել այն երջանիկ ժամանակների մասին, երբ մեր ընտանիքը երիտասարդ էր և մեր երեխաները տանն էին: Ես մտավոր վեր եմ հիշում այդ օրերը և մտածում այն փոփոխությունների մասին, որ կանեի մեր ընտանիքի կազմակերպման և կառավարման մեջ, եթե մենք հնարավորություն ունենայինք կրկին վերապրել այդ ժամանակաշրջանը: Ես կցանկանայի բարելավեր երկու բան, եթե ինձ տրվեր տանը փոքր երեխաներ կրկին ունենալու այդ մեծ հնարավորությունը:

Առաջինը, ավելի շատ ժամանակ կանցկացնեինք ամուսիններով ընտանիքի գործադիր ժողովի ժամանակ, սովորելով, հաղորդակցվելով, պլանավորելով և ավելի լավ կազմակերպելով որպես ծնողներ մեր պարտականությունները:

Երկրորդը, եթե կարողանայի նորից ետ բերել այդ տարիները, ես կցանկանայի ավելի շատ ժամանակ անցկացնել ընտանիքով: Սա ներառում է ավելի հետևողական, իմաստալից ընտանեկան երեկոներ:

Երիտասարդները ներդրում ունեն հաջողության մեջ

Ընտանեկան երեկոների պլանավորման և նախապատրաստման լրիվ բեռը չպետք է թողնվի միայն ծնողների ուսերին: Իմ տեսած ամենահաջող ընտանեկան երեկոները նրանք էին, որոնց մեջ ընտանիքի երիտասարդները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում:

Ես կոչ եմ անում ձեզ՝ հարգելի սարկավագներ, ուսուցիչներ և քահանաներ, երիտասարդ աղջիկներ, մեծ ներդրում կատարել ձեր ընտանեկան երեկոների հաջողության մեջ: Շատ տներում դուք կարող եք լինել ձեր ընտանիքի խիղճը: Ի վերջո, դուք ամենաշատն եք օգուտ քաղելու այդ փորձառությունից: Եթե դուք ցանկանում եք ապրել խաղաղության, ապահովության և հնարավորության աշխարհում, ընտանիքը, որտեղ դուք ներդրում եք կատարում, կարող է դեր խաղալ այդ բարեկեցության, անգամ ողջ աշխարհի բարեկեցության ձևավորման գործում:

Ես հիշում եմ մի դեպք, որը տեղի ունեցավ մի տարի Սուրբ Ծննդյան տոներին, երբ մեր թոռները մեզ հետ էին: Որպեսզի իսկապես ընդհանուր ժամանց ունենայինք, մենք միկրոավտոբուս վարձեցինք միասին ճանապարհորդելու համար: Ճանապարհորդում էին պապիկը, տատիկը, որդիս և նրա երեք ավագ երեխաները: Որդուս կինը ընտանիքի ամենափոքր անդամների հետ մնաց տանը: Ես անցնում էի վարելու իմ հերթին, իսկ կինս նստում էր իմ կողքին և ցույց տալիս ճանապարհը: Միկրոավտոբուսի ետևի մասում ես լսում էի, ինչպես էր ավագ դուստրը խորհրդակցում իր հոր հետ: Նա ասում էր. «Հայրի՛կ, այս տարի մեր նպատակներից մեկը ընտանեկան ուսումնասիրության ժամանակ Մորմոնի Գիրքն ավարտելն էր: Այսօր տարվա վերջին օրն է: Վերջացնենք այն այսօր, որպեսզի ժամանակացույցին համընթաց գնանք»:

Ինչպիսի հատուկ փորձառություն էր լսել, թե ինչպես էին իմ որդին ու նրա երեք զավակները հերթով բարձրաձայն կարդում Մորոնիի վերջին գլուխները և իրականացնում ողջ Մորմոնի Գիրքը կարդալու իրենց նպատակը: Հիշեք, որ երիտասարդ աղջիկն արեց այդ առաջարկությունը, ոչ թե ծնողները:

Մարտահրավեր երիտասարդությանը

Դուք ընտրված սերունդ եք, որ պահվել եք մարդկության պատմության այս հատուկ ժամանակի համար: Դուք այնքան շատ ունեք տալու այն ընտանիքների աճի և զարգացման համար, որոնց պատկանում եք: Ես ձեզ կոչ եմ անում առաջ գնալ ձեր ընտանիքի միավորներում ձեր առանձնահատուկ ոգեշնչող երիտասարդ հոգիներով, որպեսզի ավետարանն իսկապես կենդանի լինի ձեր տներում: Հիշեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի խորհուրդը.

«Ես կցանկանայի, որ իմ զավակները և Սիոնի բոլոր զավակները իմանային, որ աշխարհում չկա ոչինչ, որն ավելի արժեքավոր է իրենց համար, քան այն գիտելիքը, որ Ավետարանը վերականգնվել է այս վերջին օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Չկա ոչինչ, ինչ կարող

է համալրել դրա կորուստը: Երկրի վրա չկա ոչինչ, ինչ կարող է համեմատվել Հիսուս Քրիստոսի մասին գիտելիքի բարձրության հետ: Թող, այդպիսով, Սիոնի բոլոր ծնողները հետևեն իրենց զավակներին և ուսուցանեն նրանց Ավետարանի սկզբունքները, և փորձեն որքանով որ հնարավոր է կատարել իրենց պարտականությունը, ոչ թե մեխանիկորեն, որովհետև ստիպված են անելու դա, այլ աշխատելով ներարկել իրենց երեխաների սրտերը ճշմարտության ոգին և Ավետարանի հանդեպ սերը, որ վերջիններս կատարեն իրենց պարտականությունները ոչ թե ծնողներին հաճոյանալու համար, այլ իրենց հաճույք պատճառելու համար» (in Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. [1987–92], 5:436):

Վերակենդանացրեք ընտանեկան երեկոները

Ընտանեկան երեկոները բոլորի համար են, լինի դա ընտանիք երկու ծնողներով, մեկ ծնողով կամ մեկ անդամից բաղկացած: Տնային ուսուցիչնե՛ր, մենք ձեզ կոչ ենք անում կատարել ձեր կանոնավոր այցերը և խրախուսել և վերակենդանացնել ընտանեկան երեկոները:

Մեր ներկա մարգարե Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը մեզ կրկին հիշեցրել է ընտանեկան երեկոներ անցկացնելու անհրաժեշտության և այն բաղկացուցիչների մասին, որոնք այն հաջողակ են դարձնում: Նա ասել է.

«Եկեղեցու ընտանեկան երեկոյի ծրագիրը, որը նախատեսված է ընտանիքը ամրացնելու և պաշտպանելու համար, ամեն շաբաթ մեկ երեկո է առանձնացնում, երբ հայրերը և մայրերը տանը իրենց շուրջն են հավաքում իրենց որդիներին և դուստրերին: Ասվում են աղոթքներ, երգվում են հիմներ և երգեր, ընթերցվում են սուրբ գրություններ, քննարկվում են ընտանեկան թեմաներ, բացվում են տաղանդները, ուսուցանվում են ավետարանի սկզբունքները, հաճախ խաղեր են անցկացվում և տանը պատրաստած ուտեստներ մատուցվում» (in Conference Report, Philippine Islands Area Conference 1975, 10):

Մեր հույսն այն է, որ ձեզանից յուրաքանչյուրը կարող է գրի առնել մարգարեի կողմից առաջարկություններն այն մասին, թե ինչ պետք է պարունակի ընտանեկան երեկոն:

Ապա նա շարունակում է. «Այժմ, ահա այն օրհնությունները, որոնք խոստացվել են Աստծո մարգարեի կողմից նրանց, ովքեր կանցկացնեն ամենշաբաթյա ընտանեկան երեկոներ. «Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կհետևեն: Կավելանա սերը տան մեջ և կմեծանա հնազանդությունը ծնողների հանդեպ: Հավատք կզարգանա Իսրայելի երիտասարդների սրտերում, և նրանք ուժ ձեռք կբերեն դիմակայելու այն չար ազդեցություններին և գայթակղություններին, որոնք շրջապատում են իրենց» (in Conference Report, Philippine Islands Area Conference 1975, 10; see also *Improvement Era,* June 1915, 734):

Մենք ձեզանից յուրաքանչյուրին խրախուսում ենք հետևել մեր մարգարեի խորհրդին: Եկեղեցու բոլոր ընտանեկան միավորներում կրկին գնահատեք այն առաջընթացը, որը դուք ապրում եք, երբ կանոնավոր ընտանեկան երեկոներ եք անցկացնում: Այս ծրագրի կիրառումը վահան և պաշտպանություն կլինի ձեզ համար մեր ժամանակների չարիքների դեմ և ձեզ, անհատապես և հավաքական առումով, կպարգևի ավելի մեծ ու առատ ուրախություն հետագա հավերժություններում:

Թող Աստված օրհնի մեզ, որպեսզի վերակենդանացնենք և ամրացնենք այս ահռելի կարևորություն ունեցող ծրագիրը, երբ մենք խորհրդակցում ենք միասին որպես ընտանիքներ:

1994 թվականի ապրիլի Եկեղեցու գերագույն համաժողովին Երեց Փերիի ելույթից (տե՛ս Conference Report, Apr. 1994, 47–51; or *Ensign,* May 1994, 36–38):

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02363 57201 7
36357 201